

ՍԱՐԳԻՍ Խ. ՏԵՕՎԼԷԹԵԱՆ

Յ Ո Ւ Շ Ե Ր

ՇԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐԷՆ

- Վկայութիւններ
մօտաւոր անցեալի պատմութենէն
- Դէպքեր, դէմքեր
եւ մանրավէպեր
- Տեղական երգեր,
իրենց նօթագրութեամբ
- Բառացանկ
տեղական բառերու

Փ Ա Ր Ի Ջ
— 1954 —

IMPRIMERIE « LE SOLEIL »
4, RUE GIT-LE-CŒUR, PARIS · VI

═══════════ Յ Ո Ի Շ Ե Ր ═══════════

ՇԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐԷՆ

- Վկայութիւններ
մօտաւոր անցեալի պատմութենէն
- Դէպքեր, դէմքեր
եւ ճանրավէպեր
- Տեղական երգեր
իրենց նօթագրութեամբ
- Բառացանկ
տեղական բառերու

Փ Ա Ր Ի Ջ

— 1954 —

Մանուկները հրաժարվում են
և խմբակում. այս պարտքը կարգադրված
լուծվում է. սրբազան շքանշան
արժանի մեղադրանք
փետրվար 26-11-1954


ՍՈՅՆ ՀԱՄԵՍՏ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՍ ԿԸ ՆՈՒԻՐԵՄ

ՔԱԶՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ

ԵՒ ՇԱՊԻՆ-ՔԱՐԱՀԻՍԱՐԻ 1895Ի ՈՒ 1915Ի ՀԵՐՈՍԱՄԱՐՏՆԵՐՈՒ

ՂԵԿԱՎԱՐ ՂՈՒԿԱՍ ԱՂԲՕՐ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



Լեռներն ունին իրենց խորհուրդը: Վեհապանձ արքայի մը պէս, բարձունքներու կատարէն կը նային երկրի վրայ եւ անհուն ներքնաշնչաբանը կը դառնան իրենց հպատակներուն:

Այդպէս է Գարահիսարը:

Արժուէրիբ հայեացքն ուղղած բարձունքներուն, Անդրանիկ շատ կանուխէն զգացած է ազատութեան այն անվկանդ տենչը, որ պիտի բռնկեցնէր ամբողջ Հայաշխարհը սրբազան խեղդութեամբ:

Հրահանգիչ էր Գարահիսարի առիւծին տուած օրինակը: Վեցդարեան գերութեան կապանքներուն տակ հեծող Հայութիւնը, յանկարծ պիտի զգար կրակէ յորձանքի մը խլրտումը իր երակներէն ներս եւ ոտքի պիտի կանգնէր խիզախօրէն: Ժեռուտ լեռներու ազատանի ոգին պիտի կռակէր բազուկը Հայաշխարհի քաջերուն, Զէյթունէն Սասուն, Սասունէն Վասպուրական եւ մինչեւ Արգար թագաւորի հիւնաւորց մայրաքաղաք Եդեսիան: Արժուէրնիչ այդ ոգին պիտի դառնար հաւատք, պիտի դառնար ընդվզումի անշիջելի բոց, պիտի դառնար Թաթուլեան գարկ:



Գարահիսարի վրայ գրելը մուրազ մըն էր անշուշտ այն համեստ գրչամշակին համար, որ իր բնագաւառէն անպայման բան մը ձգելու կիզիչ բաղձանքը կը զգար իր մէջ: Բայց, ինչ որ մեզ կ'երկնէ Սարգիս աղբարը, վստահաբար պարզ յուշերէ աւելի թանկագին վաւերագիր մըն է:

Զտարիւն Հայ մըն է ան, շատ ապրած, շատ բան տեսած եւ շատ կարդացած: Մէկ խօսքով, կեանքի պայքարին մէջ եփած մարդ մը, որմէ ժողովրդական իմաստութիւնը կը նառագայթէ: Բոլոր սրտցաւ Հայերը, որոնք կը բարձրանան Պելվիլի գառիվերէն, դժուարաւ պիտի հրաժարէին իրեն հետ գոյգ մը անուշ խօսք փոխանակելու փորձութենէն: Փիլիսոփայել անցեալին վրայ, ներկայի փոթորիկին մէջէն ընդնշմարել ծիրանի գօտին, գործն է նշմարիտ հայրենասէրին:

Բաժակ մը սուրբի գոլին մէջէն, իբօք իսկական հանոյք մըն է լսել Սարգիս աղբարը: Ամէն մէկ վայրկեան, անպայման բան մը ունի ան մեզի պատմելիք, գաւառական հմայիչ ոգով մը, որուն գաղտնիքը

շատ լաւ գիտէ: Եւ ատեն, ատեն, հայկական տրամն է որ կը փակուի իր այրած սրտէն, էջ առ էջ, հատուած առ հատուած:

Անցեալէն մնացած տիպար մը, որ դեռ կը յամենայ վերակենդանացնել հայկական ոգին, փոքորկոտ աշխարհի մը մէջ: Յամենայն դէպս, պզտիկ բան չէ վերստեղծել մոխրացած կեանքի մը շրջապատն ու աւանդութիւնները, բայց Տէօվլէքեան ընտանիքի այս նահապետը տակաւին կը պահէ շուքը իր նաքալի երկրին:

Աշխարհ եկած արծուերոյնի ապառաժուտ կողերուն վրայ, 1876 Յունուար 28ին, Սարգիս աղբար իր մորթին վրայ կրած է ցեղին տառապանքը: Որպէս մօտաւոր ազգականը Գարահիսարի հերոսին՝ Ղուկաս աղբօր, գարմանալի չէ ուրեմն որ անկուն պայքարող մը եղած է իր բովանդակ կեանքի ընթացքին: Հայրը՝ Խաչիկ Տէօվլէքեան, գաւառակի մը ելեւմուտքի պաշտօնեան, կը կորսնցնէ իր տունը եւ ամբողջ ունեցածը անհաշուագիտութեան երեսէն: Այնուհետեւ, Գարահիսարէն 70 ֆիլովերք հեռուն կերմանիս գաւառակը հաստատուելով, պատանին Սարգիս ստիպուած կիսաւարտ կը թողու ֆաղաքին վարժարանը եւ փոխն ի փոխն կ'ըլլայ դերձակ, շրջուն վաճառորդ, կօշկակարի աշակերտ եւայլն:

Համիտեան նախնիները, 1895ի օրերուն, դարձեալ կը վերիվայրեն գաւառի Հայութեան կեանքը: Երգնկայի մօտակայ այդ կերմանիս գաւառակն իր կարգին կը տեսնէ թրքական եաթաղանին փայլատակումը: Վերստին կողոպտուած, տուն տեղ կորսնցուցած, Տէօվլէքեան ընտանիքը կը վերադառնայ Գարահիսար:

Բոլոր այս հալածանքները, հարստահարութիւնները եւ կոտորածի սարսափները, — որոնք միշտ ալ Գամոկլեան սուրի պէս կախուած կը մնային Հայաշխարհի գլխին, — ծանրօրէն կը հիւանդացնեն Սարգիսի հայրը: 1896ի Ապրիլի վերջին շաբթուն, դժբախտ մարդը կը կանչէ իր երկու գաւակները եւ անոնց հետեւեալ պատուէրը կուտայ.

— Տղա՛քս, ես այս հիւանդութիւնը լաւ չեմ տեսներ, կրնայ ըլլալ որ մեռնիմ: Թող իմ կտակս ձեզի այս ըլլայ, որ դուք չմնաք այս երկրին մէջ. օր մը Թուրքը նորէն մեզի պիտի ջարդէ: Ափսո՛ս, ես ձեզի հօրենական բան մը չեմ կարող թողուլ, որովհետեւ Թուրքերը իմ մուխս մարեցին. եղբօրս երկու տղաքը եւ փեսան ալ գարկին: Ահաւասիկ, այս է իմ վերջին կամքս:

Մայիսի սկիզբի օրերուն, երբոր Սարգիսի հայրը կը փակէր իր աչքերը, ընտանիքի բոլոր անդամները կը հեռանան Գարահիսարէն: Մնացեալը մեկնաբանութեան չի կարօտիր:

Այս հակիրճ կենսագրականէն վերջ, — որ ընթերցողին կը ծանօթացնէ դիմագծութիւնը յուշագրին, — այժմ վերադառնանք իր գործին: Շատ համեստ է Սարգիս աղբար իր առաջադրութիւններուն մէջ, ինչպէս կը վկայէ իր գրքին նախաբանը.

« Գարահիսարի պատմութիւնը գրուած էր ժամանակին, մինչեւ 200 տարուան արձանագրութիւն բռնուած է կ'ըսէին, բայց ինչպէս ուրիշ տեղեր, բոլորն ալ փճացան 1915ի եղեռնի օրերուն: Հիմակ մենք ունէ պաշտօնական վաւերագիր չունինք: Կը մնայ մեր քաղաքի տարեց մարդոց, — որոնք ահանատես եղած են զէպքերուն, — որ իրենց զխոցածը գրի առնեն: Ես այս տեսակէտին վրայ յենլով, 1935ին գործի ձեռնարկեցի իմ տկար գրիչովս եւ սկսայ գրել իմ արժուերոյն հայրենիքիս մասին: Թող ընթերցողը ներողամիտ ըլլայ թերութիւններու համար, որովհետեւ ես գրեթէ զպրոց չեմ տեսած եւ ինչ որ սորված եմ ինքնօգնութեամբ եղած է »:

Ուրիշ տեղ մը, աշուղ Արիստակէսի մասին խօսած պահուն, հետեւեալ տողերը կը սահեցնէ.

« Իմ միտքս ինչ որ մնացած էր գրեցի. թէ ի՞նչու գրեցի, որովհետեւ օր մը Թուրքերը « Սերսերի »ն ալ (այսպէս էր աշուղին կեղծանունը) իրենցմէ պիտի դաւանին, ինչպէս ըրին ճարտարապետ Սինանի համար: Մնաց որ, ես իմ համեստ ուժերովս հրապարակ նետուեցայ, որպէս զի գրիչ ունեցողները ամաչեն, ելլեն իմ մոռցածներս լրացնեն ու իրենց զխոցածները հաւաքելով գիրք մը կազմեն, որ նոր սերունդը կարգայ եւ մեր փառաւոր անցեալին ծանօթանայ »:

Հակառակ այս խոնարհ տողերուն, Սարգիս աղբարը քանկագին նպաստ մը կը բերէ իր հերոսական հայրենիքի պատմութեան: Ոսկիէ կամուրջ մըն է ան, ձգուած ընդմէջ անցեալ եւ ներկայ դարաշրջաններուն, որ մեզի կը փոխանցէ մեր երանելի պապերուն բերնէն քաղուած անսպառ հում նիւթեր: Ժողովրդական նկարագրող ոգով մը, մեր աչքին առաջ փոխն ի փոխն կը պատկերանան Գարահիսարի հիմնարկութիւնը, հայրենի բարբերը, աւանդութիւնները, հայ յեղափոխական շարժումին դրդապատճառները, խնկելի դէմքերը անոր ղեկավարներուն եւ դիւցազնական պայքարները:

Մեր մտքի հորիզոնին առջեւ, օրինակի համար, խորհրդածութեան անսահման հորիզոն մը կը բանան Գարահիսարի աշուղները, երանելի հաշապապը, որ Ս. Սարգիսի հանդէպ իր տածած հաւատքին ուժով առտու մը ինքզինքը կը գտնէ Պոլիս ահաւոր փոթորիկին, հրաշագործն Հեթում Պապ, որ լատին բժիշկներուն փառաւոր դաս մը կուտայ մահուրնէ ազատելով Երուսաղէմի Հայոց Պատրիարքը, անվեհեր Դանիէլ Զավուշը, Յարեթն ու Գալուստը եւ վերջապէս արժուերոյնի երկու հերոսամարտներուն ղեկավար ուղեղը՝ Ղուկաս Տէօվլէթեան, որ քաջն Անդրանիկի կորիւնները պիտի առաջնորդէր « Մահ Իմացեալ »ին:

Զմոռնամ յիշել նաեւ Սուլթան Մահմուտի երազը, որ քիչ մնաց Թուրքիոյ ամբողջ Հայութիւնը պիտի առաջնորդէր սպանդանոց,

տխմար բախտագուշակի մը երեսուն: Այս բուրքին վրայ աւելցուցէ՛ք նաեւ հեղինակին նկարագրած ահաւոր դրուագները, կարսի անկումը, հայաժական այծեամբի իր քափառումները, սարէ սար, գիւղէ գիւղ, քաղաքէ քաղաք, ու վերջապէս իր հանրային գործունէութիւնը կովկասէն մինչեւ Սեւ ծովու ափունքը, որ 1914-1920ի նակատագրական օրերուն գարկերակը պիտի հանդիսանար բուշեիկներու եւ սպիտակ բանակայիններու մահ ու կեանաց պայքարին:

Եւ այստեղ, Սէնի ամերուն վրայ, ան օր մը իր մտերիմներուն հետ անդիմադրելի փափաքը կը զգայ ողջունելու կամստան վարդապետը: Գաղջ ընդունելութիւն մը կ'ընէ իրենց մեծ երաժշտագէտը, բայց երբ կ'իմանայ թէ Գարահիսարցի են, գարմանք կը յայտնէ որ վճարման համար Արք.ը Հայաստան գացած չէ տակաւին: — Մեր տեղը հոն է, բուրքս ալ պիտի մեկնինք, կը պատասխանէ Սարգիս աղբար:

Ընկերակիցներէն մէկը կը միջամտէ, երբեք չի ծածկեր որ ինչքան զգալի է իր պակասը երաժշտական աշխարհի մէջ: Եւ ահա, կարծես դիւրահրաշ տեսիլքէ մը արքեցած, հաննարեղ վարդապետը յանկարծ կ'աղաղակէ.

— ՄԵՍ ԼՈՅՍ ՄԸ ՊԻՏԻ ԾԱԳԻ ՕՐ ՄԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ:


Ճոխ են այս բուրքը, գումագեղ, վերակոչուած արտասովոր յիշողութեամբ մը, որ գարմանք միայն կրնայ շարժել: Թերեւս իր կարգ մը տեսակէտները ոմանց հանելի չթուին, բայց կը խորհիմք է ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ՊԷՏՔ Է ԸՍՈՒԻ ԱՆՊԱՅՄԱՆ:

Դժբախտաբար, Սարգիս աղբար խմորէն մարդիկ հագուագիւտ կը դառնան, տակաւ կ'անհետանան մեր մոայլ երկնակամարէն: Համայնակուլ այս բուրքին մէջ, գերագոյն խիղճը դարձած ցեղին Ոգիին, անոնք են որ դեռ կը նգնին նաւարեկութենէ փրկել հինաւորաց ժողովուրդի մը մնացորդացը: Ահա թէ ի'նչու համար, ես չեմ վարանիր աղաղակել ի խորոց սրտի. — Եթէ իւրաքանչիւր հայկական գաւառ Սարգիս աղբար մը ունենայ, բան չի կորսուիր հայրենի գանձերէն:

Փարիզ, 7 Մարտ 1954

ԱՐԱՄ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ



Պատմական նիկոպոլիսը հիմնուած է հռոմէացի Պոմպէոս զօրավարին կողմէ եւ միջնաբերդն է կապաղովկիոյ աշխարհին : Դարերու փոթորիկը անցած է այդ ժեռուտ ցամաքամասէն, նախնական ցեղերէն մինչեւ Հռոմէական լեզէոնները իրարու զարնուած են իր քառուղիներուն վրայ, բայց Շապին Գարահիսարը անսասան կը մնայ իբրեւ քառաժայռէ խորհրդանիշը Հայուն ազատ ապրելու կամքին :

Նախապատմական դարերուն, Փոքր Ասիոյ մէջ հաստատուած Հաթերը կիսովատնա կը կոչէին Պոնտոս-կապաղովկիոյ շրջանը : Յոյն պատմագիր Հերոդոտոսի համաձայն, կապաղովկիոյ անուանակոչումը տրուած է Պարսից կողմէ եւ ծագում կ'առնէ կապա-Տուխա բառէն, որ կը նշանակէ « կողմն Տուխայ » : Մովսէս Խորենացի իրօք կը յիշէ « Տուհայ գաւառ »ը, որուն ազբիւրը հաւանաբար Սեւ ծովու եզերաբնակ Տուխա ցեղն է, որով ծովափնեայ այդ շրջանը կոչուած է Տայք : Յամենայն դէպս, կապաղովկիան միշտ անկայուն եւ շարժական սահմանագիծ մը ունեցած է : Պատմութեան դանազան շրջաններուն, երկրագունդի այս հնազոյն ցամաքամասը տարածուած է Հելլեսպոնտոսի ափերէն մինչեւ Տաւրոսեան աշխարհը, իր սահմաններուն մէջ առնելով Եօզկատը, Կեսարիան, Սերաստիան և Մելիտինէն (Մալաթիա) :

Քրիստոսէ շուրջ չորս հազար տարի առաջ, Հիթիթները կովկասեան լեռնաշղթայէն վար իջնելով, թագաւորութիւն հաստատած են կապաղովկիոյ մէջ, իրենց մայրաքաղաք ընտրելով Խատտուշատը, որ այժմ Եօզկատի մօտակայ Պօղազքէոյն է :

2500 թուին, նախ քան Քրիստոս, կապաղովկիոյ ցամաքամասը ենթարկուած է Սումեր-Աքքատեան իշխանութեան, ինչպէս կը վկայեն Կեսարիոյ մէկ բարձունքին վրայ երեւան հանուած պնակիտները :

Հիթիթներու պետութեան կործանումէն վերջ, ԺԲ. դարուն (ն. ք. Ք.), կապաղովկիան շատ մը ազդերու արշաւանքին ենթարկուած է եւ Ը. դարուն ինկած Մոսքերու կամ Փոիւզիացիներու տիրապետութեան տակ : Դար մը հազիւ անցած, կովկասէն այդ վայրերը կը հաստատուէին Կիմմերները, որոնց անունով մինչև հիմա հնամեայ կապաղովկիան կը կոչուի Գամիրք կամ Կիմերեան աշխարհ :

Սորենացիի Հայոց պատմութենէն մեզի ծանօթ է թէ՛ Արամ Նահապետ Կապադովկիոյ Պայապիս իշխանին դէմ յաղթական կռիւ մը մղելէ ետք, Կեսարիոյ կուսակալ նշանակեց Մաժակը: Ասորեստանի Սարգոն արքային մէկ արձանագրութիւնը՝ 722-705 թուին (ն. ք. Ք.), ուրիշներու կարգին կը յիշէ այդ անունով քաղաք մը եւ Փռիւզիոյ Միտաս թագաւորին դործերը:

Հիթիթներու պետութեան հետ նոյն ատեն կը կործանէր ասորական կայսրութիւնը: Փոքր Ասիոյ իշխանապետութիւններէն Լիւթիանիը մականին տակ կ'առնէր Ալիս զետի արեւմտեան շրջանը, իսկ արեւելեան կողմի ազգութիւնները կ'իյնային Մարաց իշխանութեան ներքեւ: Քրիստոսէ առաջ 546 թուին՝ Մեծն Կիւրոս կը յարձակէր Լիւթիոյ Կրեսոս թագաւորին վրայ, քար ու քանդ կ'ընէր անոր մայրաքաղաքը Սարգիկէն եւ ամբողջովին տէր կը դառնար Կապադովկիոյ:

Ըստ Ստրապոնի, Պարսիկները աւատապետական դրութիւն մը հաստատած էին Կապադովկիոյ մէջ. առհասարակ հանգիստ կը ձգէին շրջանի թագաւորները եւ միջամուխ չէին ըլլար տեղացի ժողովուրդներուն օրէնքներուն ու բարքերուն: Միայն թէ՛ այդ խեղճ արքաները պարտաւոր էին տուրք վճարել եւ զօրք տրամադրել:

Պարսից Դարեհ թագաւորին օրով, Կապադովկիան կը բաժնուէր երկու սաղրաբութեանց, Ա. — Տաւրոսեան, Բ. — Պոնտական Կապադովկիան, որոնց ընդհ. կառավարիչն էր Միհրդատ անունով իշխան մը (401-400, ն. ք. Ք.): Կը կարծուի թէ՛ Կապադովկիոյ առաջին թագաւորը եղած է Փառնակ, — Մեծն Կիւրոսի հօրաքրոջ Ատոսայի ամուսինը:

Ընդհ. ազգաց պատմութենէն ծանօթ ենք, որ Կապադովկիոյ այդ շրջանի Սաղրաբը՝ Փոքր Կիւրոս, մօրը թելադրութեամբ ապստամբելով քալեց իր երէց եղբօր Պարսից Արտաշէս Բ. Ուշեղ կայսեր դէմ եւ յառաջ խաղաց մինչեւ Բաբելոն. բայց պարտուեցաւ ու ինկաւ Կիւնաքսայի ճակատամարտին մէջ (401 ն. ք. Ք.): Յոյն պատմագիր Քսենոփոն կը գտնուէր Պարսիկ Սաղրաբին բանակին մէջ, որուն քայքայումէն վերջ իր տասը հազար հելլէն զինուորներով անցաւ Հայաստանէն, ինչպէս կը պատմէ իր « Նահանջ Բիւրուն » գործին մէջ:

Մեծն Աղեքսանդրի արշաւանքներու շրջանին, Կապադովկիոյ վրայ կ'իշխէր Հողեփեոնասի որդին Արիարաթ Բ. արքան, որ պարտուեցաւ հռչակաւոր աշխարհակալէն եւ պոնտական ցամաքամասը ինկաւ Մակեդոնացիներու տիրապետութեան տակ (323-282 ն. ք. Ք.): Մեծն Աղեքսանդրի կանխահաս մահէն վերջ, երբ Սելեւկեան զօրավարները իրար կը բզբտէին ի խնդիր իշխանութեան, սպանեալ Արիարաթ Բ.ի որդին Հայաստանի Արտուարդ թագաւորէն ստացած բանակով յառաջ խաղաց դէպի Կապադովկիա եւ զարնելով

Ամինդաս զօրավարը, դուրս վճռեց բռնագրաւիչները ու վերստին տիրացաւ հօրը գահուն: Գոլոնիոյ մօտ (այժմ Գոյլահիսար) գտնուած մակեդոնական դրամները վաւերական ապացոյցներն են Մեծն Աղեքսանդրի տիրապետութեան:

Սուրիոյ արքան Անտիոքոս, երբ Աննիբալի դրդումով դէմ կ'ելլէր Հռոմէական լեզէոններուն եւ Մագնիսիա քաղաքին մօտ կը սարսուէր Սկիպիոն (Ասիացի) զօրավարէն, ի վերջոյ կը ստիպուէր ձեռք քաշել Տաւրոսէն դէպի հիւսիս-արեւմուտք տարածուող հողերէն (190 ն. ք. Ք.): Ճակատագրական այդ օրերուն, Փոքր Ասիոյ մէջ ծնունդ կ'առնէին կարգ մը թագաւորութիւններ, ինչպէս Բիւթանիա, Պերկամա, Պափլակոնիա եւ հիւսիսային Կապադովկիա, որուն արքան էր Պարսիկ իշխան Միհրդատ Կտիւտէս:

Մեծն Անտիոքոսի կողմէ լքուած երկիրներու սահմանին մէջ կ'իյնային Հայաստանի երեք կարեւոր շրջանները. Ա.— ՄԵԾ ՀԱՅՔ, Բ.— ԾՈՓՔ, Գ.— ՓՈՔՐ ՀԱՅՔ, Եփրատի արեւմտեան կողմը, Գայլ գետէն մինչեւ Ալիսի վերին հովիտները: Մեծ Հայքի արքան Արտաշէս կ'ուզէր իր թագին միացնել միւս երկու շրջանները, բայց անոնց թագաւորները համաձայն չըլլալով, Փոքր Հայքը ի վերջոյ կը կապուէր Պոնտոսի վեհապետին:

Կապադովկիան նոյնիսկ ժամանակ մը ինկած է Մեծն Տիգրանի մականին տակ (77 ն. ք. Ք.): Նոյն շրջանին Պոնտոսի Միհրդատ Զ. Եւպատոր թագաւորը գլուխ կը ցցէր եւ կը ձգնէր Փոքր Ասիոյ երկիրներէն կազմել հզօր դաշնակցութիւն մը ընդդէմ Հռոմի: Պիրկ թաթը տարածելով Կապադովկիոյ վրայ, յախուռն արքան երկիրը կը բաժնէ հինգ նահանգներու ու 120 սագրարութեանց եւ Մեծ Հայքի սահմաններուն վրայ, Եփրատի ամբողջ երկայնքին կը կառուցանէ 75 բերդեր:

Հռոմէական բանակը՝ Պոմպէոսի հրամանատարութեան տակ, լեռնային կատարներէն աննշմար յառաջ խաղալով (66 թուին ն. ք. Ք.), Էնտերէսի մօտակայ կիրճին մէջ ծուղակը կը ձգէ իր ուխտեալ թշնամիին բանակը եւ այդ փառահեղ յաղթանակի վայրին վրայ կը կառուցանէ Նիկոպոլիսը: Հռոմէացի հռչակաւոր զօրավարին յաղթակոթողներէն մէկն ալ այն քարաժայռէ բերդն է, որ այնքան ճակատագրական դեր մը պիտի կատարէր 1915ի մեծ Եղեռնի օրերուն:

Մարկոս Անտոնիոս զօրավարը՝ 83-30 ն. ք. Ք., զլիսատել կուտար Արիարաթ Թ. արքան իբր դաւաճան եւ վերջ կուտար Կապադովկիոյ արքայական տոհմին: Կոմանայի Արքեղայոս քրմապետը, — յաջորդ նշանակուած Հռոմի կողմէ սպանեալ թագաւորի դահուն, — Պոլիմնիոյ արքային այրիին հետ կեանքը կապելով, իր իշխանութիւնը կը տարածէր Պոնտոսի ափունքէն Միջերկրական ծովու եզերքները:

Օդոսատոսի իշխանութեան օրով, Կապադովկիոյ շրջանի Կափիրա

քաղաքը բարգաւաճ վիճակի մը կը հասնէր եւ ի պատիւ Կայսեր կը կոչուէր Սեւաստա, որ հիմակուան Սերաստիան է:

Վերջապէս, յաջորդ գահակալը Տիփերիոս ետ կը կանչէր ութսունամեայ քրմապետը եւ Գարահիսարը իր ամբողջ շրջաններով կ'իյնար Հռոմի լուծին տակ, ինչպէս բովանդակ Միջին Արեւելքը եւ Հայաստան աշխարհը:

Մեսիայի գալստեան օրերուն, Պօղոս առաքեալ Կիպրոսէն անցած է Պամփիլիա եւ քարոզած Ազչէհիբի, Իկոնիոյ, Փոխլիոյ եւ Կապադովկիոյ մէջ: Այս մասին յիշատակութիւն կայ իր թուղթերուն մէջ:


Քրիստոսի 528 թուին, երբ Յուստիանոսի մէկ կարգադրութեամբ Փոքր Հայքը երեք գօտիներու կը բաժնուէր, Գարահիսարը կը մտնէր Երկրորդ Հայքի սահմաններուն մէջ, որ կը պատկանէր Գոլոնիոյ աննչան թեմին:

Սաչակիրներու մուտքը ի Պոլիս, 1204 թուականին, ծնունդ կուտար Տրապիզոնի Կոմնենեան կայսրութեան, որուն մաս կը կազմէր Գարահիսարի նահանգը:

Փաթիհ Սուլթանի իշխանութեան օրերուն, երբ Օսմանցիները դէպի արեւելք յառաջ կը խաղային, Գարահիսարը կը գտնուէր Ուզուն Հասանի ձեռքը: Կոմնենեան Յովհաննէս Կայսեր այս յանդուգն փեսան, Երզնկայի մօտ փառաւոր ջարդ մը կուտար Օսմանեան բանակին. բայց 1473ին Դերջանի Օլթուք Պէլի ըսուած տեղը պարտուելով, Գարահիսարը վերջնականապէս կը մտնէր թուրքիոյ սուլթանին գայիստնին տակ:

Իմրանիյէի Գէօզկիրի աշիրէթին ըմբոստութիւնը, մասնակցութեամբ Անդրէասի շրջանի Գղըլպաշներուն, 1921ին դաժանօրէն կը զսպուէր Նուրէտտին փաշայի ձեռքով:

ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ



Տիբեթն լեռան մօտ, բլուրի մը վրայ թառած, Գարահիսարը սքանչելի համայնապատկեր մը կը պարզէ անցորդի աչքին: Փրօթի-Արմէնիի (Փոքր Հայք) այս քարաժայռէ արծուերոյնը Սատաղա ալ կոչուած է անցեալին մէջ: Տարածութիւնն է 14.475 քառ քիլոմեթր: Ահաւասիկ իր աշխարհադրական սահմանները.

Հիւսիսէն եւ արեւելքէն՝ Պոնտոս. հարաւէն՝ Երզնկա եւ Զարայի շրջանները, իսկ արեւմուտքէն՝ Եւզոկիոյ նահանգը: Գարահիսարը կը գտնուի հիւսիսային լայնութեան 39° 49'—40° 32' եւ արեւելեան երկայնութեան 35° 20'—36° 45 աստիճաններուն միջեւ:

Կապաղովկիոյ երկրամասը նախապատմական շրջանէն մինչեւ մեր օրերը ունեցած է բազմաթիւ ազգութիւններէ բաղկացած բնակչութիւն մը, ինչպէս Հիթիթներ, Քալիպներ, Խալդիներ, Կոլքիսացիներ, Մեդացիներ, Պարսիկներ, Փոխլիացիներ, Մակեդոնացիներ, Հռոմէացիներ եւ սեմական ցեղեր: Կեսարիոյ մօտակայ Քիւլթէփէի բարձունքին վրայ, 1925ին Չեխ հռչակաւոր երկրախոյզ Հրոզնիի կողմէ երեւան հանուած յիշատակարաններու եւ կաւէ պնակիտներու Սումերական արձանազրութիւնները կը վկայեն թէ՛ Աքքատներու Սարգոն արքան զօրք ղրկած է շրջանները, հրեայ վաճառականները պաշտպանելու համար տեղական իշխանութեանց ճնշումներուն դէմ:

Նախ քան առաջին աշխարհամարտը, Գարահիսարի նահանգին ընդհ. բնակչութիւնը ըստ Գինէի եղած է 75.000. այսինքն, Թուրք, Չէրքէզ եւ Թիւրքմէն՝ 25.000, Հայ՝ 18.000 (Օրմանեան Պատրիարքի համաձայն 25.000), Գղըլպաշ՝ 12.000 (մեծ մասամբ Իմրանիյէի Գէօզկիրի ցեղախումբէն, մասնաւորաբար Անդրէասի եւ Ալիճորայի շրջաններուն մէջ), Յոյներ՝ 20.000, որոնց լեզուն տեսակ մը խառնուրդ է հին յունարէնի եւ անհետացող ցեղերու բարբառին: Ներկայիս, Թրքաց տեղւոյն բնակչութեան ընդհ. թիւն է 105.000, որոնց մէջ կը հաշուին 300ի մօտ հայ բեկորներ:

Երկրին կլիման ամառուան եւ ձմեռուան եղանակներուն հաւասարապէս տաք ու պաղ է, իսկ համեմատաբար մեղմ՝ Գարահիսարէն հազար մեթր աւելի ցած հովիտներուն մէջ: Ամառ ատեն ջերմութիւնը յաճախ կը հասնի 35 աստիճանի, իսկ ձմեռը զերոյէն մինչեւ 10—15 աստիճան: Լեռնակողերը շատ դուլ են, — ի բաց առեալ Գոյլա-

հիսարի շրջանէն, — օղի հոսանքներուն դէմ պաշտպանուած շրջալուծ:

Անդրէասի հարեւան Աքչարի շրջանը միապաղաղ դաշտագետին մըն է: Մնացեալ ամբողջ երկրամասը, մանաւանդ Տրապիզոն-Կիրասոն ճամբան, Ալպեան կազմութիւն մը ունի, շրջապատուած բարձր լեռներով եւ ակօսուած խորունկ ձորերով: Հիւսիսակողմը կը տարածուին Պոնտական լեռները, ԷՐՄԷՍ, ԿԱՊԱՆ եւ ԿԻԻՄՊԷԹ (2700 մեթր) գագաթներով: Արեւմուտքը՝ ԳԱՐԱԿԷՕԼ լեռ, հարաւակողմը՝ ԳՁԸԼ լեռ (3300 մեթր), ուրկէ ծնունդ կ'առնեն Ալիսը եւ Սենաք սուն: Յետոյ, ՔԷՕՍԷ լեռը, 1950 մեթր բարձրութեամբ, սեպ եւ անդունդներու եզերքը քերող լեռնանցքով մը, որ Զարան հաղորդակցութեան կը դնէ Անդրէասի հետ: Վերջապէս, Գարահիսարի արեւելքը, երկարաձիգ զանգուածը ԳԱՐԱ լեռան:

Երկրին անտառներուն տարածութիւնը 235.000 հեքթար է: Մասնաւորաբար Գարահիսար-Կիրասոն ճամբան օժտուած է նորմէկեան մայրիներու ընդարձակ անտառներով: Լճէսիի մօտ կան հսկայ կաղնիներ եւ փեկոններ: Մօտաւորապէս 18.000 հեքթար ալ շոճիներ եւ թփուտներ, որոնց մէջ ապաստան կը գտնեն կաքաւներ: Վայրի կենդանիներ գրեթէ չկան, այլ միայն աղուէս, կղաքիս եւ նապաստակ: Զին, ոչխարը եւ արջաուր ընտանի կենդանիներն են Գարահիսարի շրջանին: Մասնաւորաբար ձին նշանաւոր էր հին ժամանակներուն եւ Կիլիկիան իբրեւ նուէր կ'ուղարկէր Պարսիկ վեհապետներուն:

Նախապատմական շրջանին՝ Միջերկրական ծովը ըստ աւանդութեան կը տարածուէր մինչեւ Տաւրոսեան լեռներու փէշերը, ու Փոքր Ասիոյ լեռնադաշտը կղզեակ մը կը կազմէր: Դարերու ընթացքին ծովուն ջուրերը քաշուելով, աղի լիճեր դոյացած են շրջակայքը: Կեսարիոյ արեւելքը՝ բլուրի մը վրայ կանգնած Թալաս աւանը, կենդանի վկան է այդ աշխարհագրական երեւոյթին (այս բառը ծով կը նշանակէ յունարէն):

Գարահիսարի գետերէն ամենահամբաւաւորն է ԳԱՅԼԸ (Լիւկոս), որ Եէնիճէի մօտ նահանգը մտնելով, կ'ուղղուի հիւսիս-արեւմուտք եւ զայն կ'ոռոգէ 102 քիլոմեթր երկարութեամբ: Գայլ գետը կը կտրէ կ'անցնի Զաղափան. Տէոնիքի, Գոյլահիսարի երեք քիլոմեթր հարաւէն եւ Մոտասուլէն:

ԳԱՐԱՀԻՍԱՐ գետը, — որ կը կոչուի նաեւ Օրթմուշ կամ Գայատիպի սու, — ունի 45 քիլոմեթր տարածութիւն: Ծնունդը կ'առնէ Ալիճորայի լեռներէն, յետոյ կը դառնայ եւ Գարահիսարէն տասը քիլոմեթր հարաւ-արեւմուտք կը թափի Գայլ գետին մէջ:

ՇՈՒՇԱՐ գետ, կազմուած Սենաք եւ համանուն լեռներէն բղխող Զարտաքլի եւ Զեմէն գետակներէն, Թաշ-Թեմիւրի հիւսիսը կը թափի Գայլ գետին մէջ:

ԳՈՅԼԱՀԻՍԱՐ գետը ծագում կ'առնէ Կիւմայէթ լեռնէն, կ'ոռոգէ ամբողջ շրջանը եւ հարաւակողմը կը թափի Գայլ գետին մէջ:

Պատմական ՄԵԼԱՆՏԻՍԸ, որ իր ակունքը կը ստանայ Գարակէօլ լեռնէն, 55 քիլոմետրի չափ Մելէթի շրջանը ոռոգելէ յետոյ, ի վերջոյ կը մտնէ Պոնտոս եւ Օրտուէն հինգ քիլոմետր արեւելք կը թափի Սեւ ծովուն մէջ:

Վերոյիշեալ բոլոր գետերն ունին բազմաթիւ երկրորդական հոսանքներ:

Պարսկական տիրապետութեան շրջանին, շատ մը « արքունի պողոտա »ներ իրար կը միացնէին Կայսրութեան զանազան կեդրոնները: Գլխաւոր պողոտաներէն մէկը սկիզբ կ'առնէր Լիւթիոյ մայրաքաղաք Սարգիկէէն, կ'անցնէր Կապադովկիոյ մէջէն, ու կարելով Ալիս, Եփրատ, Տիգրիս, մեծ եւ փոքր Չապ գետերը կը յանգէր Շօշի: Ալիս գետին վրայ նետուած էին ամբաղուռ կամուրջներ: Պողոտաներու երկայնքին կառուցուած էին օթեւաններ, 3-5 փարսախ հեռաւորութեամբ (ձիերը փոխելու համար), ինչպէս նաեւ բերդեր եւ պահականոցներ: Կապադովկիոյ պողոտան կ'անցնէր Կեսարիա-Կոմանա-Մելիտինէյի գծով:

Ներկայիս, Գարահիսարի նահանգէն հետեւեալ ճամբաները կ'անցնին. — Գարահիսար-Էնտերէս-Սվազ՝ 75 քիլոմետր, Պէյէիֆթ-լիք-Երզնկա՝ 45 քիլոմետր, Գոյլահիսար-Սվազ՝ 135 քիլոմետր, Գոյլահիսար-Օրտու՝ 65 քիլոմետր, Գարահիսար-Ալիճորա՝ 40 քիլոմետր, Էնտերէս-Գայալը-Պալա՝ 35 քիլոմետր, Գեարուլ-Էլիպէօյիւք՝ 45 քիլոմետր, Գոյլահիսար-Ռեշիտիէ՝ 30 քիլոմետր, Մեսուտիէ-Չամպաշի՝ 25 քիլոմետր, Մեսուտիէ-Աշըք Մուսա՝ 15 քիլոմետր: Իսկ Գարահիսար-Կիրասոն խճուղին՝ 124 քիլոմետր, կ'անցնէր ստորեւ յիշուած արծաթախառն կապարի հանքին քովէն:


Երկիրը աղքատ չէ հանքային մարդին մէջ: Ասարճըքի, Էնտերէսի Կէմին, Գոյլահիսարի Սիս-Օրթա եւ Գարակէօլի Լճէսի շրջաններուն մէջ կայ արծաթախառն կապար (Ժամանակին այս վերջին տեղէն կ'արտածուէր 1.500.000 քիլօ հանածոյ): Սուպաքէն գտան տեսակ մը ոսկիի հանք, բայց մենաշնորհ չտուին: Լիճեսէրէն, Կետեխորէն, Կէոյնիքէն եւ Լճեսիէն պաղլեղ կ'ելլէ: Հանքը քաղաքէն երեք Ժամ հեռու է, ասոր համար Գարահիսարի անունին կցած են Շապին բառը: Իսկ Գարաքէօյէն եւ Երտապէն ածուխ կը հանեն: Կը կարծուի նաեւ թէ պղնձահանքեր կը գտնուին Աղուանիսի մօտակայքը:

Անդրէասի մօտ կայ Աֆնա Աղըն ջերմուկը, որ ունի 38 աստիճան ջերմութիւն եւ կը հոսի երկու աւազաններու մէջ: Իսկ Արծապտերի շրջակայքէն կը բղխի հանքային ջուր մը, որ կը պարունակէ երկաթ, քարպոնաթ տը սուտ եւ ազատ վիճակի մէջ բնածխային:

Գարահիսարի նահանգը քարքարուտ է, բայց ունի լայնատարած դաշտադէտիներ եւ հովիտներ, ուր կ'աճին ցորեն, գարի եւ այլ


հացահատիկներ: Սեւ ծովու եզերքներէն կուզան կը տանին: Իրենք
ալ դգալ եւ լուացքի կամ հացթուխի տաշտ կը շինեն: Երկրին կակուղ
հողը շատ նպաստաւոր է որթատունկի, առուոյտի եւ պտղատու
ծառերու մշակութեան: Սեխը, ծիրանը, ընկոյզը շատ առատ են,
մանաւանդ խաղողը որ ունի իր բազմաթիւ տեսակները:

Ժողովուրդը չարքաշ եւ աշխատասէր է: Վաճառականութիւնը
առհասարակ Հայոց ձեռքն էր: Ժամանակին Հայերն ու Յոյները
ծաղկեցուցած էին գորգաշինութիւնը, մանուսայագործութիւնը եւ
կտաւագործութիւնը: Անոնք ամէն տեսակ գործուածք կը հանէին:
Մեր օրով մինչեւ 1200 տէղկեալի կար. այս էր գլխաւոր զբաղումը:
Մեծ Եղեռնէն ասդին ամէն ինչ քայքայուած, տակնուվրայ եղած է
ու հիմա քանի մը ալիւրի գործարաններ միայն կան:



Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐ (քաղաքին ընդհ. տեսարանը)

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Դ Է Պ Ք Ե Ր



Գարահիսարի պատմութիւնը ատենօք գրի առած էին տեղւոյն Առաջնորդարանի երկու գրագիրները.— Կարապետ Մարկոսեան եւ Աւետիս Սահակեան, որ Շաւարշ վարդապետին հայրն էր: Կ'երեւի թէ այդ թանկագին մասունքները կորած են ընդհ. արեկոծութեան մէջ:

Ինչպէս արդէն յիշեցի, Գարահիսարի նախկին անունը Սատաղայ էր. իր սահմանը կը սկսի Ս. Աստուածածնայ « Խնդրկտուր »-էն (Խնդրակատար) մինչեւ հնձանը, իսկ լայնքէն ալ կ'երթայ մինչեւ Մեռեսէ:

Հիները կը պատմէին թէ Լենկթիմուր մեծ ջարդ տուած է. շատ մը Հայեր փախած են Պոնտոսի ծովեզերքները, հետեւաբար Օրտուի առաջին հայ գաղութը կազմուած է Գարահիսարցիներէ: Այս արշաւանքներէն վերջ մեծ շարժ մը պատահած եւ բաւական տուներ քարուքանդ ըրած է: Կառավարութիւնը դէպի վեր, բերդին արեւ-

մտեան կողմը հաստատուելով, Հայերուն լաած է որ իրենք ալ հոն
դան տեղաւորուին: Առաջին անգամ չորս տուն եկած են. — Հիւսիս-
եան ընտանիք՝ իբր պետական գանձապահ, Մայրամեան ընտանիք՝
իբր զինուորական դերձակ, Ասլանեան ընտանիք՝ իբր գարիի եւ
կորեկի պահեստներու հսկիչ. այսինքն, կառավարութիւնը որոշ
քանակութեամբ արժտիք յատկացուցած էր անոնց, որպէս զի ժողո-
վուրդին բաշխեն սովի շրջանին, իսկ առատութեան տարիներուն
հինգ առ հարիւր աւելի պիտի բերէին: Չորրորդ ընտանիքը Պօզաեան-
ները, ասոնք ալ եղած էին մսի մատակարարները:

Այս վաղեմի ընտանիքներուն տուները փակած էին բերդի ժայռին՝
արեւմտեան կողմէն, ինչպէս մերն ալ:

Հին երանելի օրերուն, քանի մը հողմաղացներ կ'ապրէին բերդին
մէջ (6-7 ընտանիք), որ լաւ վիճակի մէջ է եղեր: Մեծ պահեստներ
կային, որոնցմէ մէկը կ'ըսուէր « Կորեկին ամպարը »: Բերդին կեդ-
րոնը կը նստէր հրամանատար մը: Օր մը կայծակ կը զարնէ, այդ ինը
յարկանի շէնքին մէջ ինչ որ կայ կ'այրի, կը փճանայ, ա'լ երբեք չեն
նորոգեր: Մեր օրով եօթը յարկին տեղերը յայտնի էին. շատ անգամ
վեր կ'ելլէինք քարէ սանդուխներէն: Պարիսպները այնքան հաստ
էին, որ վրան երկու ձիով կառք մը կրնար պատիլ: Պարիսպին մէջ
պղտիկ բաղնիք մը եւ աղօթատեղի կար: Ասիկա բուն բերդն էր,
հարիւր հողի մը կ'առնէր: Գուռը այնքան զեղեցիկ էր, որ կարծես
քարակոփը այսօր տաշած ըլլար:

Միջնաբերդը 800-1000 հողի կրնար պատսպարել: Շինուած
քարաժայռին վրայ, կամարակապ դուռ մը ունէր եւ իր պաշտպանու-
թեան համար չորս կողմը պարիսպներ: Անոնց բարձրութիւնը 100-150
մեթր կար, շրջագիծը մէկուկէս քիլոմեթր, այնպէս որ լաւ քալող մը
հազիւ մէկ ժամէն կրնար շրջանը ընել: Յաղթական կամարի մը պէս
էր մուտքը. ճակատը հռոմէական արձիւով մը, որ կ'ոգեկոչէր
Պոմպէոսի յաղթանակը: 1897ին տեղացի Յոյներ այդ խոշոր արձիւը
զիչերանց տարին. կառավարութիւնը իմացաւ, ասդին անդին խու-
զարկութիւն կատարեց, ի վերջոյ գտաւ ու բերաւ անկիւն մը նետեց:

Բերդին մէջ կային շատ մը ջրամբարներ: Հիւսիսային կողմը՝
եօթը հատ, որոնց « Սառնիք » անունը կուտային: Անոնցմէ մէկը
խոշոր էր, — « Կանանչ կէօլ »: Իսկ հարաւային կողմը գոյութիւն
ունէր « Գլխիվայր սառնիք »ը, ուր կ'իջնէինք քարէ սանդուխներէն:
Գալով « Սառլախ կէօլ »ին, անկէ ջուր կը բխէր ճկոյթ մատի հաս-
տութեամբ: Մեր օրով առաջին պարիսպները փլած էին, հազիւ մէկ
քառորդը մնացած էր: Բերդին հիւսիսակողմը, ժայռին տակ, ջուրի
ակունք մը կը հոսէր ժամանակին, ասոր համար այստեղ դրուած էր
քաղաքին հիմը:

Մեր վերը յիշած չորս ընտանիքներէն զատ, հետզհետէ ուրիշներ
ալ կուզան եւ վերջ ի վերջոյ բերդէն կը քաշուին: Ամէն ինչ կարդ

կանոնի կը մտնէ, նորահաստատ Հայերը Մայր եկեղեցին կը շինեն, իսկ մատակարութիւնը կը փոխադրուի քաղաքին մէջ: Երկար տարիներու առատութեան պատճառաւ, բերդի շտեմարանին կորեկի մթերքը կը մղլոտի եւ Ասլանեան տան պաշտօնին վերջ կը տրուի, մեր դերդաստանին թողլով իբրեւ ժառանգ Տէօվլէթեան մականունը, ինչ որ կը նշանակէ « Կառավարութեան մարդ »ը:

Բերդին հիւսիսակողմի ջուրին երկու կողմերը եկուր Հայերը կէս մէջքի բարձրութեամբ պատ կը քաշեն, իսկ ասոր վրայ ալ կը շարեն քարէ տաշտեր. կիները հոն կ'երթան եւ իրենց լաթը կը լուան: Հողը բաւական բարձր է եղեր, այդ վայրին տեղացիները « Օյնախ » անունը կուտան: Բայց, եկուր տես որ թուրք զօրքեր կամ Ենիշերիներ, — որոնց մեր նախահայրերը « Տելի » անունը կուտային, — կը սկսին հարս ու աղջիկ փախցնել: Ընտանիքի պետերը կ'արդիւնեն կիներուն որ չերթան լաթ լուալու այդ կողմերը, սակայն մտիկ ընող չըլլար եւ առեւանդութիւնները կը շարունակուին:

Մտմտուքը ծայր կուտայ քաղաքին մէջ: Հիւսիսեան ընտանիքին մեծը՝ Մղտեսի Յակօբ աղան, կը խորհի ջուրին աղը շորցնել: Հաստ թաղիք մը կ'առնէ, խողովակի մը ձեւը կուտայ եւ քանի մը օխա սնդիկ բերել տալով, դիշերանց անոր մէջէն կը հոսեցնէ ջուրի աղին բերանը եւ կը ցամքեցնէ եղածին պէս: Բայց թուրք կառավարութիւնը կը կասկածի: Մեր նախնեաց պատմածին համաձայն, հնարագէտ ծերունին իր ամբողջ հարստութիւնը քան ջորիներու վրայ կը բեռցնէ եւ անոնց ոտքերուն ալ թաղիք կ'ապելով, ձայն ծպտուն չհանած դիշերանց կծիկը կը դնէ Եւզոկիա:

Գարահիսար կը նեղուի խմելիքէ, կը ստիպուին ջուր բերել Մեռեսէէն եւ Շիսերէն: Քանի մը տարի վերջ, մեր քաղաքէն մէկ ժամ հեռու, Յունաց Ղզըխ գիւղէն կը սկսին խմելիք ջուր բերել քարէ խողովակներով: Մինչեւ 1897 այս ձեւ կը շարունակուի, բայց եկու տես որ ջուրին կէսը հաղիւ մեր կողմերը կը հասնի: 1899ին արդէն ջուրը մեր քաղաքը կը փոխադրեն Լրկաթէ խողովակներով:

Բերդին տակի ջուրը ցամքելէ ետք, հողը կամաց կամաց 4-5 մեթրի չափ կը կքի մինչեւ Չաթալ Կէօլ եւ ասոր համար մեր վերը յիշած « Օյնախ » անունը կուտան:

Ըստ մեր պատկերու պատմածին, հին բաղնիքը հողին տակն է եղեր, վրան այժ ու ոչխար կը ծախէին ժամանակին: Օրին մէկը, այժի մը ոտքը բաղնիքի գմբեթին կլորակ փոքրիկ բացուածքին մէջ կը խրի եւ դուրս չելլեր: Կ'երթան կ'ազատեն կենդանիին ոտքը, այն ատեն կը տեսնեն որ տակը պարապ է...: Կառավարութիւնը հրաման կ'ընէ, փորել կուտայ եւ ահա բաղնիքը մէջտեղ կ'ելլէ: Նորոգել տալով՝ դայն կը դործածեն մինչեւ մեր օրերը:

Բաղնիքը դանդաղ շրջանին նոյն ատեն հնութիւններ ալ երեւան կ'ելլեն: Այն ժամանակ կը հասկնան թէ նախկինը ներկայ քաղաքին

տեղին վրայ կը գտնուէր: Մեր նախահայրք կ'ըսէին թէ այդ լողա-
րանը « ձինիվիգ » ներէն, այսինքն ձենովացիներէն մնացած է:

Բերդին այդ մեծ « Գլխիվայր սառնին »-ին պատմութիւնը այս-
պէս է: Հայ աղջիկ մը « Փարխան »-ով ջուր առած ատեն, մէջը
կ'իյնայ եւ կը կորսուի: Ութը օր վերջ, խոշոր ամանը ձեռքին կը
գտնեն զինքը Չաթալ Կէօլի մէջ, որ քաղաքէն մէկ ժամ հեռաւորու-
թիւն ունի: Այս արկածին պատճառաւ հանդիպողը քար մը նետած
եւ այդպէս գոցած է ջրհորը:

Չարմանալի է որ բերդը ելլող սեւէ պաշտօնեայ 8-10 օրէն աւելի
չէր կրնար մնալ, միշտ կը հրաժարեցուէր կամ կը մեռնէր...: Շատ
մը ՄիւթեսարըՔներ, նոյնիսկ կուսակալ մը, իրարու ետեւէ եկած ու
գացած են: Կ'երեւի թէ եզիպտական մոմիաներու պէս ահաւոր
զաղտնիք մը կայ այդ վայրերուն մէջ:

1915ին Շապին Գարահիսար տեղւոյն հայութեան գերեզմանը
գարձաւ: Մարտիրոս քաղաքը շատ էր տեսած այդ կարգի արհաւիրք-
ներ, ո՛վ գիտէ մեր նախնիքն ալ ի՛նչ չարչարանքներով զոհ գարձած
էր բարբարոսներու եաթաղանին: Յաճախ կը մտածեմ թէ արդեօք
իրենց անէծքը չէ՞ այդ չարագուշակ երեւոյթը:

Բերդին հարաւային կողմը, Ծիպերք անուն գիւղ մը կայ,
բառասուն տուն թուրք եւ 170 տուն Հայ, որոնց 120 տունը բոշաներ:
Այս գիւղը կէս ժամ հեռու է մեր քաղաքէն, ունի Ս. Յակոբ եկեղեցի
մը, որ Գարահիսարի կիներուն աղօթատեղին է: Մօտակայքը,
բերդին ժայռէն զատուած մասին մէկ կողմը, մօտաւորապէս 130
մեթր բարձրութեամբ կտուրածել դուրս ցցուած քարաժայռին վրայ,
եօթը հսկայ կարասներ կան, բերանները գոցուած կափարիչներով,
որոնք դէմէն լաւ մը կ'երեւին: Թուրք կառավարութիւնը երբեք չէր
հետաքրքրուեր: 1882ին Ս. Յակոբայ եկեղեցին վերանորոգուած
պահուն, հայ վարպետներ ուղած են վեր ելլել լաստափայտերով,
բայց տեղական իշխանութիւնը չէ ձգած: Մնաց որ, այդ Ծիպերք
գիւղի բերդին վրայով Տեվէ Քափուսը ըսուած կտրուկ ճանապարհ
մը կայ, որ շատ գիւր կուգար զէնքի եւ ծխախոտի մաքսանենդու-
թեան: Հայ բոշաները, — որոնց մէջ առիւծի պէս երիտասարդներ
կային, — 1903էն ասդին այլեւս մաղազործութենէ ձեռք քաշած էին:

Բերդին այս մասին մէջ, 1820ին միակ թուրք ընտանիք մը կար,
որուն « Քէջի Փոֆու » կ'ըսէին. ասոնք կորած են արկածի հետեւան-
քով: Գարահիսարի մէջ, Հայոց տուները ամենաբարձր տեղերն էին,
իսկ թուրքերունը ցած: Եւ ասիկա՝ երկու պատճառներով. Ա. — Մենք
բնիկներն էինք, մինչ թուրքերը եկուր: Բ. — Թուրքերը ծոյլ ժողո-
վուրդ, Հայերու ձեռքէն լաւ տեղերը խլած էին բռնութեամբ:

Շխեր ըսուած տեղը, քաղաքէն մէկ քիլոմեթր անդին, Գարահի-
սարի լաւագոյն վայրն է, որուն մէջէն ջուր մը կը վազէ ոտքի
հաստութեամբ: Այս սքանչելի վայրը ժամանակին Հայոց սեփակա-

նութիւնն էր, բայց օրին մէկը շինծու թուղթ մը կը բերեն եւ կ'առնեն մերոնց ձեռքէն, այն պատրուակով որ այնինչ Շէյխին կը պատկանի...: Մեր օրով հազիւ 4-5 տուն Հայեր կային այդտեղ:

Գարահիսարի եկեղեցին մեր նախնիքը անցեալ դարուն սկիզբը շինած են, բայց 1828ին թուրքերը այրած են: Զարմանալի պիտի թուի անշուշտ, որ այդ եկեղեցիին մուտքի դուռը նեղ շինուած եւ վեց սանդխամատ ցած էր: Որովհետեւ, Ենիչերիները օրինակուած Ֆաթիհ Սուլթան Մէհմէտէն, շատ անգամ քրիստոնեայ աղօթատեղիներէն ներս կը մտնէին ձիերով...:

Նոր ժամ մը կը կառուցանեն, ան ալ կ'այրի 1847ին, ինչպէս պիտի տեսնենք:

Յիրաւի, այդ թուականին Գարահիսարի առաջնորդական տեղապահն էր Պետրոս Ծ. Վրդ. Կիւլպէնկեան: Քանի մը տարի պաշտօնավարելէ վերջ, եպիսկոպոսական վկայական կը ստանայ եւ ճամբայ կ'ելլէ Էջմիածին: Զար Նիքոլա Փավլովիչ այդ միջոցին ծանր հիւանդ էր. բժիշկները իրենց յոյսը կտրած էին եւ գործը Աստուծոյ մնացած էր: Ռուս բարձրատիճան հոգեւորականներու կարգին, Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսը կը խնդրէ որ ինքն ալ բժշկութեան աւետարան կարդայ: Այս աղերսը ուրախութեամբ կ'ընդունուի ուս վեհապետին կողմէ եւ հայրապետը կ'երթայ Ս. Փեթերսպուրկ: Հայոց կաթողիկոսին կարգացած աւետարանը բարերար աղղեցութիւն մը կը գործէ Զարին վրայ. կը պատուիրէ որ յաջորդ առտուն եւս դայ եւ այդպէս շարունակաբար երեք օր: Նիքոլա Փավլովիչ Էնքղինքը այնքան լաւ կը զգայ, որ քովէն չի հեռացներ Աշտարակեցին. 10-15 օրէն ոտքի կ'ելլէ եւ պալատ կ'երթայ:

Մինչ այս մինչ այն, Պետրոս Ծ. Վրդ. ուրիշ վարդապետներու հետ կը սպասէ Էջմիածնայ մէջ: Զարը կ'ուզէ աւելի քան մէկ ամիս վար դնել հրաշագործ եկեղեցականը, բայց Ներսէս Աշտարակեցի կը խնդրէ վեհապետէն որ թոյլ տայ իրեն որ վերադառնայ Ս. Աթոռ եւ եպիսկոպոս ձեռնադրէ եօթը վարդապետներ: Ռուսաց Զարը ոչ միայն իր հաւանութիւնը կուտայ, այլ պատուանշան կը շնորհէ թեկնածուներուն: Հայրենասէր կաթողիկոսը կը վերադառնայ Էջմիածին, ձեռնադրութիւնը կը կատարէ եւ եօթը նորընծայ եպիսկոպոսներու վզէն կախելով Սլաւներու վեհապետին պատուանշանները, բոլորն ալ կը ճամբէ իրենց թեմերը:

Պետրոս Եպիսկ. կ'երեւայ թէ քիչ մը փառամոլ է եղեր: Գարահիսար վերադարձին՝ Զարին խաչը կախած կը մտնէ եկեղեցի. նոյնը կ'ընէ կառավարութեան դուռը գացած միջոցին: Այդ շրջանին մեր քաղաքը պարզ դաւառակ մըն էր, կապուած Տրապիզոնի նահանգին, որուն գայմագամն էր Պոնտոսցի Քէհեա-Օղլուն: Մոլի ճնկող մը, շատ ալ հակառակ չէ եղեր քրիստոնեաներուն, ու օր մը իր մտերիմներէն Զօրպաճի Խաչիկին կ'ըսէ.

— Մենք բարեկամներ ենք, ըսէք ձեր Մուրախիասին որ ուսու-
կան նշանով կառավարութեան դուռը չգայ: Ինծի համար կարեւո-
րութիւն չունի, բայց ձեր քաղաքին թուրքերը չեն ուզեր որ ուսու-
կան խաչ տեսնեն:

Այս խօսքը ականջը կը հասնի եպիսկոպոսին, որ վար կը ձգէ
նշանը վիզէն, բայց տեղւոյն թուրքերուն վրայ ձգած ուսասէրի
տպաւորութիւնը չի չքանար:

Քէհեա-Օղլուն ուղղամիտ մարդ մը ըլլալով, շատ կը հալածէր
դող-աւազակները, ինչ որ « խօշ »ին չի դար թուրքերուն: Անոնք
ժողով կ'ընեն, հանրագրութիւն մը կը պատրաստեն, որչափ մեծ
թուրք որ կայ կը ստորագրէ այդ թուղթը: Մետրապոլիտին կ'երթան
որ ան ալ ստորագրէ եւ Գայմազամը հեռացնեն Գարահիսարէն:
Յունաց առաջնորդը կ'ըսէ թէ « Մեր ժողովին մէկ երկու անդամները
բացակայ են, երկու օր վերջը բերէք որ ստորագրեմ »: Եկու տես որ
այդ գիշերն իսկ կը փախի Երզնկայի իր թեմը եւ երկու ամիս վերջը
կուգայ...

Թուրք երեւելիները այս անգամ կ'երթան Հայոց առաջնորդա-
րանը, Պետրոս եպիսկոպոսին կը ներկայացնեն հանրագրութիւնը եւ կը
խնդրեն որ ստորագրէ: Առաջնորդը կ'ըսէ թէ « Նախ պէտք է Մետ-
րապոլիտը ստորագրէ, վերջը մենք՝ Հայերս »: Թուրքերուն այն
խօսքին վրայ, որ Յունաց առաջնորդը վաղը պիտի ստորագրէ,
եպիսկոպոսը կ'առարկէ:

— Մենք Քէհեա-Օղլուէն վնաս մը չտեսանք, ի՞նչ պատրուակով
ստորագրեմ:

Այն ժամանակ քաղաքին մեծահարուստներէն 75 ամեայ Ղըզըլ-
Օղլուն յառաջ կ'անցնի եւ հետեւեալ պատասխանը կուտայ.

— Մուրախիաս էֆէնտի, հեղեղը կ'երթայ, աւազը կը մնայ:
Այս մարդը ձեզի չարութիւն չըրաւ, բայց զիտցած ըլլաք որ յաւիտ-
եան հոս պիտի չմնայ. այսօր կայ, վաղը չկայ: Կրնայ ըլլալ որ ուրիշ
Գայմազամ մը գայ, մեզի լաւ նայի եւ ձեզի հալածէ...

Պետրոս եպիսկոպոսին վերջոյ կը ստորագրէ թուղթը: Պոլիս կ'երթայ
հանրագրութիւնը, Քէհեա-Օղլուն անմիջապէս պաշտօնանկ կ'ըլլայ,
որովհետեւ այն ժամանակ Հայերը մեծ յարգ կը վայելէին եւ
առաջնորդի մը ստորագրութիւնը մեծ կշիռ ունէր:

Գայմազամը Պոլիս կ'երթայ, կը տեսնէ եպիսկոպոսին ստորա-
գրութիւնը հանրագրութեան տակ եւ ամէն ջանք կը թափէ նորէն
տիրանալու համար իր առաջուան պաշտօնին: Վերջապէս, աշխա-
տանքը պարապը չերթար ու այս անգամ քաղաք կը վերադառնայ
որպէս առաջին կառավարիչ Գարահիսար նահանգին:

Քէհեա-Օղլուի պաշտօնը մէկ տարուան համար էր, բայց մերոնք
երբ կը լսեն՝ սաստիկ վախնալ կը սկսին: Դիմաւորելու կ'երթան
եկած օրը. պալատին առջեւ վար կ'իջնէ, հրովարտակը կը հանէ

դրպանէն, կարդալ կուտայ եւ կ'երթայ ներս: Քաղաքին ջոջերը
ետեւէն կ'երթան: Թուրք երեւելիները կը նստին առանց սպասելու
հրաւէրի, — որովհետեւ ՄիւթէսարըՔը ձայն ծպտուն չի հաներ, —
Հայոց առաջնորդն ալ կը բաղմի անոնց մօտ:

Վերջապէս, Քէհեա-Օղլուն ջուր կ'ուզէ ծառաներէն, կը բերեն:
Կը խմէ, նորէն կ'ուզէ. հեղ մը եւս կը բերեն արծաթ գաւաթով:
Չե՞ս ըսեր որ խմածը ճերմակ գինի է եղեր...: Մէկէն խօսք կ'ուզէ
ճեր առաջնորդին.

— Մուրախա'ս, ես ձեզի ի՞նչ ըրի որ այդ հանրագրութեան
տակ ստորագրեցիք...

Յետոյ կը դառնայ դէպի Թուրքերուն կողմը եւ բարկաճայթ
կը դռչէ.

— Ես միայն այս դող-աւազակներուն ըրի, որովհետեւ խեղճ
Ժողովուրդը կը կողոպտէին:

Այս ըսելով ամէնքն ալ կը վռնտէ: Հալածանքը ծայր կուտայ.
Երկու ամիս վերջը առաջնորդարանը կրակ կը ձգէ, եկեղեցին քովն
ըլլալով ան ալ կ'այրի միասին: Խեղճ Եպիսկոպոսը հազիւ հազ կը
պրծի, երեսն ու մօրուքը կ'այրին: Ճարահատ կ'երթայ Թամզա-
րայի Ս. Գէորգ վանքին հիւրանոցը, որպէս զի քիչ մը կազդուրուի,
բայց դեռ չլաւացած, գէշեր մը Թուրքերը ծածուկ մը կուզան,
թէ՛ դինքը եւ թէ՛ Կարապետ Վրդ.ը կը սպաննեն:

Գժբախտ առաջնորդը չարչարանքներով սպաննուած էր, որով-
հետեւ հիւրանոցին պատերը ամբողջ արիւնով ծածկուած էին եւ
չէին սրբեր, որպէս զի Ժողովուրդը տեսնէ: Եպիսկոպոսը սպաննած
ատեն, փոքրաւորը պահուած տեղէն լսեր էր որ Թուրքերը կ'ըսէին
իրեն.

— Խընդը՛ր, դուն ուստական խաչ կը կախես, հանրագրութիւն
կը ստորագրես, անանկ չէ՞, ա՛ռ քեզի...

Պետրոս Եպիսկ. Կիւլպէնկեանի եւ միւս խեղճ վարդապետին
դերեզմանները կը գտնուին Թամզարայի Ս. Գէորգ վանքին դռան
առջեւ: անոնց վրայ խոշոր եւ տափակ դամբանաքարեր դրուած են:

Այս ոճիրներէն տասը ժամ վերջ, ՄիւթէսարըՔը կ'երթայ
Չօրպաճի Խաչիկին տունը եւ օղի կը խմէ: Այդ Խաչիկ Սերճանեանը
մօրս հօրեղբայրն է, իսկ Միրիճան Օղանեանին ալ մօրը մեծ-
հայրը: Խել մը աղաներ կ'ըսէին թէ՛ ինք մատ ունեցած էր այդ
սպանութիւններուն մէջ, դոնէ այդպէս կասկած մը ունեցած էին,
բայց այդ կէտը ստուգուած չէ:

Քէհեա-Օղլուն երկար չապրիր այս բոլորէն ետք, հազիւ չորս
ամիս անցած ինքն ալ կը մեռնէր: Գերեզմանը կը գտնուի Գարա-
հիսար, Ռիւչտիէ դպրոցին վարը. 1900ին իր թոռները ոսկեզրուագ
մարմարիոնէ կոթող մը կանգնեցին իր վրայ: Ժամանակակից աշուղ

մը Արիստակէս, Տէսթան մը յօրինած էր այս դէպքերուն վրայ, որուն մասին յետոյ պիտի խօսինք:

Գարահիսարի այրած եկեղեցիին տեղ այդ ժամանակի ջոջերը կ'ուզեն նոր մը կառուցանել: Միակ աղօթաւայրն էր, ուրիշ մը չունէին եւ մանաւանդ ստիպուած էին շուտ շարժիլ: Անմիջապէս հանգանակութեան կը ձեռնարկեն, բայց եկու տես որ երեւելիներու միջեւ վէճ կը ծագի եկեղեցիի շինուածանիւթի մասին: Վեցիկեան Հաճի Ստեփան եւ Նիկողոս աղաները կը փափաքին կառուցուած տեսնել քարուկիր եկեղեցի մը, միւս աղաներն ալ կը պնդեն որ փայտաշէն ըլլայ դմբեթը:

— Մենք փայտաշէն դմբեթին ստակ չենք տար, կը դռան վեցիկեան ազնիւ եղբայրները: Իսկ եթէ յամառիք ձեր անմիտ որոշման վրայ, մենք երկու եղբայրներս մէյմէկ մատուռ շինել կուտանք:

Եւ այդպէս ալ կ'ըլլայ: Մայր տաճարին աջ կողմը՝ Ս. Նիկողոսի, իսկ ձախ կողմն ալ Ս. Ստեփանոսի քարաշէն մատուռները կը կանգնեն երկաթեայ դուռներով: Զօդուած Ս. Աստուածածնայ եկեղեցիին հետ, առաջնոյն մէջ տեղի կ'ունենային մկրտութիւնները, իսկ երկրորդ մատուռը իբր պահարան կը ծառայէր օտար սուրբերու պատկերներուն, որոնք դուրս կը հանուէին իրենց տօնախմբութեան օրերուն:

Մայր տաճարի դմբեթը, ինչպէս կը հետեւի վերի տողերէն, փայտաշէն կ'ըլլայ: Իւղանկարները կը ներկայացնէին Ս. Մեսրոպը եւ Գրիգոր Լուսաւորիչը: Քահանաներու զգեստաւորումը տեղի կ'ունենար Ս. Ստեփանոսի մատրան մէջ:

Գարահիսարի պարտէզները կեդրոնէն բաւական հեռու ըլլալուն՝ 1858-1860ի շրջանին այդ թաղին մէջն ալ եկեղեցի մը եւ Մուշեղեան վարժարանը կը կառուցանեն, թաղէոս աղա Սերճանեանի նիւթական օժանդակութեամբ: Այդ բարերարը մեծ հայրն էր Միրիճան Օղանեանի, շատ ազդեցիկ մարդ էր եւ երբոր մեռաւ՝ մարմինը թաղեցին իր կանգնել տուած Ս. Փրկիչ եկեղեցւոյ աջակողմի պարտէզին մէջ:

Դժբախտաբար, Գարահիսարի մայր տաճարը հրոյ ճարակ կը դառնայ 1885ին, Երեմիա Թեվեքէլեանի փուռէն ծագած կրակով: Քաղաքին կէսը կ'այրի, իրեն հետ միասին դպրոցները եւ Մէհմէտ Բ.ի կառուցած մեծ մզկիթը: Այս առթիւ մեր նախնիք երգ մըն ալ յօրինած են.

Խաչին աւուր կիրակին,
Արեւ ծագեց ցերեկին.
Գարահիսարցիք էրեցան,
Թեվեքէլեանի կրակէն:

Նոր եկեղեցիի մը շինութեան կը ձեռնարկուի 1886ին, մինչեւ իսկ այս առթիւ հանգանակութիւն կը կատարուի Պոլսոյ եւ Իզմիրի մէջ: Մինչեւ 1891, պատարագը կը մատուցուի Ս. Ստեփաննոսի մատրան մէջ: Նոյն տարուան Սեպտեմբերին կը լրանայ մայր տաճարին կառուցումը, իսկ ջնարակումը հինգ տարի վերջ, որուն իրենց լայն մասնակցութիւնը կը բերեն Սեբաստացի Շիմշիտեան երկու եղբայրները: Այս մասին արձանագրութիւն մըն ալ կար աղօթաւայրին հիւսիսակողմի պատին վրայ:

Մայր տաճարը փառաւոր էր, բարձր դիրքի վրայ կանգնած, չորս սիւներու վրայ հանգչած դմբեթով եւ 18 պատուհաններով: Հիմունքը քարէ էր, ինչպէս յատակը եւ հիանալիօրէն ներկուած ամէն կողմ: Տաճարին հիւսիսակողմը կը բարձրանար հին Թաշխանէն, որ երկյարկանի էր եւ ունէր քառասուն մակազէն: Չոյգ մը դռները երկաթապատ էին. լոյսը կ'առնէր վերէն, որուն մէկ չորրորդը լուսամուտ էր երկաթէ բազրիքով եւ տանիքին շուրջն ալ մօտաւորապէս մէկուկէս մեթր պարիսպով մը: Շէնքին արեւմտեան կողմէն մինչեւ եկեղեցիին շրջափակին դուռը կ'երկարէին այրած դպրոցները:

Մայր տաճարին հետ միասին կը ձեռնարկուի նոր վարժարանի մը շինութեան, մինչ այդ տղաքը կը յաճախեն պարտէզներու թաղին Մուշեղեան դպրոցը:

Նոր վարժարանի տարեկան պիւտճէն 300 ոսկի էր, որուն մօտաւորապէս մէկ չորրորդը Առաջնորդարանին պատկանող Թաշխանէն կ'ելլէր, մնացեալն ալ միւս կալուածներէն, տղոց թոշակներէն եւ անուղղակի նուէրներէն: Չքաւորներէն դրամ չէին առներ եւ գրեական պիտոյքը ձրիաբար կը տրուէր անոնց: Դպրոցը վեց կարգ ունէր. հոգաբարձութիւնը կ'աշխատէր հատ մը եւս աւելցնել, ի զո՛ւր: Հազիւ ծայրը ծայրին կը բերէին: Որչափ որ Գարահիսար չթալանուեցաւ, բայց շատ վաճառականներ ազդուած էին, գիւղերու վրայ իրենց առնելիքները փճացած ըլլալով: Մանաւանդ որ, զինուորական եւ իւրաքանչիւրին կարողութեան համաձայն դրուած յաւելուածական « Հալը Թամիր » ի տուրքերը ծանր կը կշռէին մեր ազբրտիքներուն վրայ:

Դպրոցի պիւտճէին այս ծանր կացութեան դարձան մը տանելու համար, Հիւսիսեան Սերովբէ աղա 1903ին կ'երթայ Առաջնորդարան եւ կը խնդրէ Սմբատ Մ. Վրդ. Սաստիթեանէն որ Թաշխանէն իրեն վարձու տրուի: Ազգասէր մարդը այս նպատակին համար կը խոստանայ 70ի փոխարէն 200 ոսկի եւ դրամն ալ կանխիկ կուտայ: Առաջնորդը երեք օր պայմանաժամ կ'ուզէ:

Յիրաւի, Հայր սուրբը կը կանչէ Թաշխանէի վարձակալները եւ կ'ըսէ. — Ես դպրոցի սիրուն Թաշխանէի մակազէնները Սերովբէի աղային վարձու պիտի տամ »: Չոջերը կասկածի կ'ենթարկեն


ուղղամիտ մարդուն պարկեշտութիւնը եւ պատասխան կուտան .
— Աղային խոստացած 200 ոսկին վճարումը տարիէ մը աւելի չի
կրնար տեւել » : Այս որ կը լսէ, Սերովբէ աղան կրակ կը կտրի,
չունչը կ'առնէ Առաջնորդարան .

— Անխիղճ Փ , կը գոռայ աղաներու երեսն ի վար , ասչափ
տարի է ձրի նստեցաք , դեռ կ'ուղէք շահագործել աղգին մալը :
Առէ՛ք ձեզի , ալ ըսելիք մը ունի՞ք . . .

Եւ կը հանէ հինգ տարուանը , այսինքն հազար ոսկին կանխիկ
կուտայ , որով դպրոցին հինգ շրջաններու տարեկան պիւտճէն
սպահովուած կ'ըլլայ : Միայն թէ՛ աղաներուն տոկոսները չի տար
եւ 230 ոսկին կանխիկ կը դանձեն :

Սերովբէ աղան իսկապէս նշանաւոր մարդ էր . անիկա կը
հետեւէր իր հօր Մղտեսի Մանուկ աղայի ճամբուն , որ եկեղեցւոյ
աէրն ու պաշտպանն էր : Իր եղբօր թոռներէն մէկը հիմա Արժանթին
կը գտնուի : Ծիշդ Արմենակ Համբարձումեանի կը նմանէր դէմքով ,
հոգին էր Հնչակեան կուսակցութեան տեղւոյն մասնաճիւղին եւ
աղաները կը վախնային իրմէ : Գճի կոտորածներէն վերջ , շատ մը
երիտասարդներ անգործ էին . Սերովբէ աղան կ'երթայ 15-20 գիւղ
կը պտտի , « Պետական տասանորդ » կը ժողովէ եւ գիւղերու կա-
պալին վրայ տղաքը դործի կը դնէ : Եկեղեցիին դուռը աղբիւր մը
չինած էր : Միակ թերութիւն մը ունէր . քիչ մը շատ կը սիրէր
ճնկել , գրեթէ մինչեւ իրիկուն գինով էր : Կարծեմ 1906ին մեռաւ ,
հազիւ 50 տարեկանին , այդ օղեմոլութեան երեսէն . կ'ըսուի թէ
բարձին տակէն շիշ մը « կենաց ջուր »էն գտած են . . . : Հոգին
տուած ատեն՝ քովը տարած են ձին , որ մարդու պէս լացած է
կ'ըսէին : Ահա այս տեսակ աղաներ ունեցած է Գարահիսարը
անցեալին մէջ :

ՇՐՋԱԿԱՅ ՎԱՅՐԵՐ ԵՒ ԳԻՒՂԵՐ



Գարահիսարի հիւսիս-արեւմտեան կողմը, բերդին ժայռէն շուրջ երեք քիլոմետր, դրեթէ երկու ապառաժներու մէջ սեղմուած քար մը կայ, երկու հարիւր մետր բարձրութեամբ, զոր մերոնք « Հազին քար » կ'ըսեն, տեղւոյն աղբիւրին անունով: Թուրքերն ալ « Էօֆսիւրիֆ Ղայասը » կը կոչեն իրենց բարբառով: 1850ին, երեք Հայեր, — Արուսթճեան աղա եւ Քեմալեաններ, — կառավարութեան բան մը տալով անոր տէր դարձած էին: Գարնան երեք ամիսներուն, երկու ջրվէժներ « Հազին քար »ին կողերէն կը հոսին վար, ձայնը անուշ մը կը լսուի հեռուէն: Տեղացիք « Գուլավուկ » կը յորջորջեն զանոնք: Մէկը աննշան է, իսկ միւսը՝ 150 մետր բարձրութենէ մը կը գահավիժի լեռն ի վար, մարդու իրանի հաստութեամբ: Հող, Ս. Զատիկի շրջանին կիրակի օրերը ուրախութիւն ընողներ շատ կ'ըլլային:

Վերոյիշեալ քարին հիւսիսակողմը, կէս ժամ հեռու է Թամգարան, որ ամփիթատրոնի ձեւ ունի եւ թառած է ժեռուտ լեռներու լանջքին: Երեք ժամ դէպի հիւսիս Լճէսի գիւղը կայ: Թամգարայի օդը սքանչելի է. անիկա շրջապատուած է պարտէզներով, առուակներով եւ փոքրիկ պուրակով մը՝ գեղատեսիլ հովիտի մը մէջ: Հոն կը գտնուի Ս. Գէորգի վանքը: Քաղաքին Ս. Թագաւոր եկեղեցին շրջապատուած էր դպրոցով ու պարիսպով: Ս. Էհան եւ Ս. Աստուածածին եկեղեցիներուն աւերակները ցրուած են մօտակայքը: Ս. Գէորգի վանքին տակէն կը բխի լայնածիր ձօյնայ աղբ, ուր Գարահիսարցիք կը տօնեն Վարդավառի տօնը:

Թամգարա ժամանակին ունեցած է 6-700 տունի մօտ հայութիւն, իսկ մեծ Եղեռնի օրերուն 400 տուն բնակիչ, որոնց 350 տունը Հայ: Ասոնք եկած էին Անիէն եւ մաս մըն ալ Խոմշոնէն: Աղնիւ ժողովուրդ էր, վարպետ ջուլհակագործ. այս արհեստը Բագրատունեաց մայրաքաղաքէն բերած էին իրենց հետ: Շրջակայ շորս ջրաղացներ կ'աղային տեղւոյն ցօրենը:

Տեղւոյն Ս. Թագաւոր եկեղեցին գաղտնի պահարան մը ունէր, զոր 95ի դէպքերուն Թուրքերը գտած են: 1896ին ես գացած եւ տեսած եմ: Ծիշդ սեղանին տակն էր, 3-4 հողի մը կը մտնէր մէջը: Յաջորդ տարին, Մինտավալ գիւղէն Թուրք մը կ'երթայ կը գտնէ

Հաճի Սուքիաս աղան եւ անոր կ'ըսէ .— «Ձեր Հայերուդ վերաբերեալ եկեղեցական հագուստ մը կը ծախեն կոր, եթէ կ'ուզէք առէք »: Մեր հայրենակիցը կ'երթայ կը տեսնէ, եղելութիւնը կը պատմէ Գարահիսարի առաջնորդ Սմբատ Վրդ.ին, որ շատ կը հետաքրքրուի եւ ոսկերիչ մը կը զրկէ քննութեան համար: Վարպետը կը տեսնէ որ ոսկեթել եպիսկոպոսական պատարագի զգեստ մըն է, միայն չաթալթազը կը պակսէր: Ծախողը կը խոստովանի թէ թամզարայի եկեղեցին դանուած է...

Վերջապէս, 200 ոսկիի կ'առնեն, կը բերեն քաղաք: Շուրջառը կարմիրի վրայ էր, սքանչելիօրէն բանուած, 800 ոսկի տուող եղաւ, բայց ազդը չուզեց ձեռքէ հանել: Առաջնորդ Սմբատ Մ. Վրդ. Սաստէթեան չաթալթազ մըն ալ շինել տուաւ, Չատկի օրերուն կը զգեստաւորուէր այդ ոսկեթել շուրջառով, շատ կը վայլեցնէր: Միւս կողմէ, հաճի Սուքիաս Նալբանտեան հետամուտ կ'ըլլայ ծախողէն հասկնալու թէ՛ եկեղեցական ուրիշ ոեւէ հագուստ կա՞յ: Մարդը պարզապէս ըսած է թէ՛ ինքն ալ թամզարայի եկեղեցին կողոպտող թուրքերէն դնած է, բայց վաճառողները մնացեալը ծախած են Տրապիզոնի Յոյներուն:

Ի՞նչ ազգային հարստութիւններ այս կերպով յափշտակուած եւ կորած են իսպառ: Դեռ անհամար դանձեր ունինք, անժանօթ անկիւններու մէջ թաքուն, ես շատ լաւ գիտեմ: Օրինակի համար, Գարահիսարէն ժամ մը հեռու Աներդի գիւղը կար, որուն վաթսուն տուն հայութիւնը՝ ջորեպան, քարակոփ եւ մանաւանդ երկրագործ էր արհեստով: Գիւղին եկեղեցին ոսկիէ սկիհ մը ունէր, զոր նուիրած էր Աբիկ էֆ. Ունձեան: Չար բերաններ կ'ըսեն թէ թուրքերը՝ խաչեր, սկիհներ եւ եկեղեցական այլ թանկագին սպասներ կողոպտելով, ծախած են հայ ոսկերիչի մը, որ դանոնք հալեցուցած եւ հսկայ հարստութիւն դիզած է, բայց այսօր մեծ յարգ կը վայելէ...

Գարահիսարէն 5-6 քիլոմետր դէպի հիւսիս-արեւելք գոյութիւն ունի խոշոր ժայռ մը, զոր տեղացիք « Խաչին քարը » կ'անուանեն: Այս ալ երկուհարիւր մետր բարձրութիւն ունի: Կիրասոնի հին ճամբան այս ժայռին արեւելեան կողմէն կ'անցնէր:

Իսկ Աստուածածնայ լեռը կ'իյնայ Գարահիսարի արեւելեան կողմը: Բարձունքի քարաժայռերուն միջեւ հաստատուած էր յունական վանքը, որմէ կուգար լեռան անուանակոչումը:

Տիքմէն լեռը, հարաւ-արեւմտեան կողմը Գարահիսարի, 2000 մետր բարձրութիւն ունի: Լեռան ստորոտը ութը դիւղեր կային, որոնցմէ երեքը Հայ, իսկ հինգը թուրք: Մարած հրաբուխ մըն էր պարզապէս այս լեռնային զանգուածը, որովհետեւ չորս կողմը պաղած լաւաներ թափած էին: Մոխրագոյն հիանալի քարեր, զորա

օգտագործած էին քաղաքին տուներուն եւ նոյնպէս տեղւոյն բերդին սրբատաշ դրան շինութեան համար: Այս բերդը Քրիստոսէն առաջ շինուած էր:

Գարահիսարի ո՛ր կողմն ալ որ նայիս, ժայռ ու լեռ պիտի տեսնես, միայն արեւելեան կողմն է որ ընդարձակ դաշտագետին է, որուն շրջագիծը աւելի քան մէկ ժամ կը տեւէ: Հիւսիսային կողմը՝ մեծատարած այգիները եւ թթաստանները կ'երկարէին մինչեւ Թամզարայի ստորոտը, մօտաւորապէս մէկ ժամուան ճանապարհ: Այս բոլորը կ'ուռոգուին Թամզարայի մօտէն անցած գետակով մը, որ նոյն ատեն տեղւոյն չորեքքարեան քանի մը ջրաղացները կը բանեցնէր:

Հին քաղաքը մինչեւ Թագով ազբիւր կ'երկարէր: Քիչ մը վարը հնձանն էր, որ լայնածիր ջուրի ակունք մը ունէր: Մօտաւորապէս 150 քայլ հեռուն, արուեստական լիճ մը կար. ուրիշ օրէն կը լեցուէր եւ վարի պարտէզները կ'ուռոգէր: Հնձանը ատենօք մեր համայնքին կը պատկանէր, այգեկութքի խաղողը հոն կը բերէին եւ կը ճզմէին: Այդտեղ նմանապէս հսկայ թթենիի մը մէկ մասը կը մնար. հիները կը պատմէին որ 800 տարուան հնութիւն ունէր եւ դադրած էր այլեւս պտուղ տալէ:

Գարահիսարի հիւսիս-արեւելեան կողմը՝ « Գէօփրիւ-Պաշի » կամուրջէն անդին, Տեմիրճիլիկ հայ գիւղը կար: Մինչեւ 1895 քարգաւաճ վիճակ ունէր, բայց Համիտեան սարսափներուն բաւական Հայեր սպաննուած են հոն: Վերապրողները ձգած հեռացած են գիւղը եւ բնակութիւն հաստատած քաղաքին մէջ: Երբ 1896ին գացի այդ գիւղը, ամբողջ քարուքանդ եղած էր: Դէպքերէն առաջ, ամառուան կիրակիները կ'երթայի տեղւոյն Ս. Սարգիս եկեղեցին, որմէ, աւա՛ղ, աւերակոյտ մը կը մնար:

Տեմիրճիլիկի շրջակայ լայնատարած այգիներն ու թթաստանները մեծ մասամբ Հայերուն կը պատկանէին ատենօք, բայց Թուրքերը անոնց տէր դարձած էին բռնութեամբ: Այսուհանդերձ, Հայոց կուտային վարձքով. գրեթէ քաղաքին կէսը ամառուան եղանակին տեղւոյն այգիները կ'երթար արձակուրդի: Օդը գեղեցիկ է, հողը բարեբեր. միայն օդի հանելով այգիներուն վարձքը կ'ելլէր: Նշանաւոր էր տեղական խնձորը, հիւթեղ եւ հոտաւէտ: Եւ այդ շրջանի մերոնց աշխատանքով, տուն-դուռ կը լեցուէր տանձով, ընկոյզով, անուշեղէններով եւ հազար տեսակ բարիքներով:

Գարահիսարի շրջակայքը շատ մը հայկական գիւղեր կային 1700ին, բայց դարերու ընթացքին իսլամացած են դէպքերու բերումով: Ժամանակին Աշխարհադաշտի 70 առ հարիւրը Հայ էր, իսկ այս դարուն սկիզբը 25 առ հարիւրը կը մնար: Կարճ խօսքով, Աշխարհադաշտի, — Ծուշարն ալ (Սուչէհիրի) միասին, — 130

գիւղերէն հազիւ 35ը իր հայկական դիմագծութիւնը պահած էր :

Իսլամացած գիւղերը դեռ իրենց անունը կը յիշեն, — անշուշտ քիչ մը աղաւաղուած ձեւով, — ինչպէս Ջէօֆեր (Չովքար), Ծոզեր (Չոնդուռ), Օնարի, Գունտար, Վերի Պարու եւ Վարի Պարու, Աւշար, Քարուլ, Գնտիֆ, Նոխուտ Բերդ (Նորարերդ), Գետափին, Չաղափա, Աննա, Դաշտիկ, Թռչիկ, Կէօզլէ (հայերէն Գողէլի է) եւ Չոպան Թեֆֆէսի, ուր նահատակուած է եղբարբախտ Սահակ Ծ. Վրդ. Օտպաշեանը: Գարահիսարի նահանգը 77 գիւղ ունէր, որոնց ութն հատը եւ ուրիշ մէկ աւանը Հայերէ բաղկացած էր :

Չորս գաւառակ ունի Գարահիսար: Համիտիէն՝ « Մելէտ », 148 գիւղով, Նիկասարի մօտ է: Միակ հայկական գիւղ մը ունէր, իսկ քաղաքին մէջ կար 60-70 հայ տնուր, իսկ 70ի մօտ ալ ամուրիներ:

Աշխարհադաշտը, որ ունի 40 քիլոմետր տարածութիւն՝ վեց քիլոմետր լայնքով, հիանալի դաշտադետին մըն է: Հողերուն 60 առ հարիւրը Հայոց ձեռքն էր. ամէն ընտանիք արտ մը ունէր, որմէ տարին երկու անգամ բերք կը քաղէր: Առաջին հերթին դարի կամ ցորեն, իսկ աշնան ալ լուբիա. կը չորցնեն եւ տուն-դուռ կը լեցնեն: Ամբողջ դաշտը ոռոգուած է: Աշխարհադաշտէն պատուական բամպակ կ'ելլէ. կանայք ձմեռան եղանակին այդ բամպակը կը մանեն, կը դործեն, երկու տեսակ կտաւ կը հանեն: Կարճ խօսքով, վրայի հաստ հագնելիք ու բարակ ներքնազգեստ մէջտեղ կը բերեն: Միայն ներկի համար դրամ կը ծախսեն: Տեղացիք իրենց գլուխը արախչին կը դնեն:

Դաշտին արեւմտեան կողմը՝ Սիս կոչուած մեծ գիւղը կար, որ ունէր հարիւր տուն թուրք եւ 300 տունի չափ ալ հայ բնակչութիւն: Այս գիւղը հիանալի էր, Ս. Առաքելոց վանքը հոն կը գտնուէր իր փառաւոր հիւրանոցով: Մօտերը երկու հայաբնակ գիւղակներ ալ կային:

Վարչականօրէն երկու համայնքներ են Սուշէհիլիին եւ Աշխարհադաշտը (Աշխարհ Օվա): Այս դաշտադետինը կը յանդի Օրթա գիւղին եւ անկէ ծայր կուտայ Սուշէհիլին, որ փակած է Կարնոյ նահանգին կերճանիսով: Այս վերջին համայնքը բարեբեր չէ ինչպէս Աշխարհադաշտը: Շրջանին մէջ կան չորս հայ գիւղեր. — Սելիստիֆ, 250 տուն գուտ Հայ, Իլմուհ, 130 տուն, որոնց 80ը Հայ. Ագսեւիստ, 100 տուն Հայ, նոյնքան ալ թուրք, Ապանա, ընդամէնը 200 տուն, որոնց 150ը Հայ:

Ադուանիս լաւ մշակուած դաշտի մը մէջ է, ոռոգուած ջրանցքներով: Հայ տնուրներուն համրանքն էր հարիւր, իսկ թուրքերունը՝ յիսուն:

Վերի Արծապտերը, միացած վարինին, ընդամէնը ունէր հազար տունի բնակչութիւն մը, որոնց 800ը Հայ: Ծիշդ քաղաքի կը նմանի:

Առեւտրական կեդրոն է. շուկայ, խան, խանութ, սրճարան եւ այլն :
Շարաթ օրը, տեղւոյն պաղարի օրն է. չորս կողմէն կուգան կը
թափին եւ առուծախ կ'ընեն : Այս գիւղին մօտ, բլրան մը վրայ
կանգնած է կարմրորակ Ս. Նշանի վանքը, որուն մօտ թաղուած է
« Պիւլպիւլ վարդապետ » յորջորջուած Աբրահամ Եպիսկ. Նաւա-
սարգեանը : Կարծեմ 1883ին էր, երբ շատ փոքր էի, զիս տարին
քահանայական ձեռնադրութեան մը եւ անգամ մը տեսայ Չորլուցի
այդ փառաւոր եկեղեցականը : Գիւղը ճիշդ վեց ժամ է քաղաքէն,
ասոր համար « Առաջնորդ Գարահիսարի եւ Արծապերի » տիտղոսը
կուտային անոր : Այս գիւղը շատ պողաբեր է. լաւ սեխ ու ձմերուկ
կ'ելլէ : Մասնաւորաբար ընտիր տեսակի գինի կ'արտադրէ. Գարա-
հիսարի գինին Արծապերէն կուգայ :

Գարահիսարի շրջաններէն ամենանշանաւորը Անդրէասն էր,
1079 մեթր բարձունքի վրայ եւ 500 տուն հայ բնակչութեամբ : Յու-
նական հին արձանադրութիւն մը, — ժթ. դարուն գտնուած երկ-
րախոյզներու կողմէ, — կը հաստատէ որ Պոմպէոսի հիմնած
Նիկոպոլիս քաղաքին բուն վայրը Անդրէասն է : Քաղաքը թառած է
Գայլ գետի մէկ գետակցին եզերքը, զառիվայրի մը վրայ, նոնենի-
ներով, կեռասենիններով, կաղամախիններով եւ ուռենիններով զար-
դարուած պարտէզներով : Զմայլելի է հոն՝ բնութիւնը. ջրվէժներու
եւ առուններու կարկաչը հեռուէն լսելի կը դառնայ : Մէկ խօսքով,
մեծ քաղաք մը ըլլալու ամէն յարմարութիւն ունի ապագային :
Արծապերի եւ Աղուանիսի գիւղախումբերով ան իրօք կը կազմէ
140 գիւղնոց կարեւոր գաւառ մը : Լաւ ծխախոտ կ'արտադրէ, մա-
նաւանդ համբաւաւոր է իր ձմերուկը : Գարահիսարի ձմերուկը
Անդրէասէն կ'ելլէ. կուգան եւ Սերաստիա կը տանին մասնաւոր
կառքերով :

Արծապերի մօտակայ Ենի Գիւղը ունէր քսան տուն Հայ, եօթը
տուն ալ մահմեդական : Աֆշերապատը ժամանակին նոյնպէս կա-
րեւոր քաղաք մը եղած է :

Անդրէասէն մէկ ժամ հեռու, դէպի արեւելք կար Մշակոց
գիւղը, որ 350 տունի զուտ հայ բնակչութիւն մը ունէր : Մօտակայ
Աշխար գիւղին բնիկները Գղըլպաշներ էին, որոնց համար կ'ըսուէր
թէ Հայերէ դարձած են : Դա'րձեալ, ասոր մօտակայքը գոյութիւն
ունէր Կթաոց գիւղը, հարիւր տուն թուրք եւ 200 տուն ալ Հայ :

Հայկական գիւղ մըն էր Բիւրքը, վերը յիշուած գիւղէն դէպի
հարաւ, զուտ 450 տուն հայ բնակչութեամբ : Իսկական դրախտավայր
մըն էր այս գիւղը : Չորս ժամ հեռուէն գետակ մը բերած էին, որ
ամբողջ գիւղը կ'ոռոգէր : Չուր բերելու համար կամուրջ մըն ալ
շինած էին հաղար ոսկի ծախքով : 1895ի դէպքերուն, գիւղացիք
լեռները քաշուած ու Դանիէլ Չափուշի ընկերակցութեամբ կուտած
են թուրքերուն դէմ եւ այդպիսով քիչ վնասով դուրս եկած : Այդ

հերոսը նոյնպէս կոուած էր թշնամիին դէմ Անդրէասի մէջ: Առիթէն
օգտուելով, թուրքերը գացած եւ գիւղին կամուրջը օդը հանած են:
Մինչեւ 1896ի Ապրիլը, գիւղացիք կրկին հազար ոսկի հաւաքած,
կամուրջը վերաշինած եւ այդ գուլալ ջուրը բերած են: Խիստ աշ-
խատասէր եւ խելացի ժողովուրդ մը ունէր գիւղը: Ես բաւական
հոռմէական արձանագրութիւններ տեսած եմ այնտեղ: Այս առթիւ
հետեւեալ հետաքրքրական մանրագէտը.—

Ժամանակին երկու Եւրոպացիներ կ'երթան Բիւրք եւ տեղւոյն
տէրտէրին տունը հիւր կ'ըլլան: Ասոնք կը տեսնեն եկեղեցականին
սենեակին առջեւ քարէ գառնուկ մը. կ'առաջարկեն որ ծախէ,
տէրտէրը կ'ընդունի: Մարդիկը գիշերանց իրենց սենեակը կը տանին
գառնուկը, ինչ կայ չկայ կը պարպեն փորին մէջէն, առտուն կա-
նուխ կ'երթան: Տէրտէրը կուգայ, կը տեսնէ որ գառնուկը չեն
տարեր. կ'երթայ գիւղացիներուն կը պատմէ եղածը: Ասոնք կը
վազեն կուգան, կը հաստատեն որ գառնուկը թեթեւ է: Փորին
տակէն քար մը կ'իյնայ... այն ժամանակ կը տեսնեն որ մէջը
դատարկ է: Չե՞ս ըսեր որ խորամանկ Եւրոպացիները մէջի ամբողջ
հարստութիւնը պարպած եւ իրենց հետը տարած էին...

Գարահիսարի շրջակայքը կային նաեւ Ղուան (250 տուն),
Ալամունիկ (300 տուն) եւ Գումէշտուն (75 տուն) հայ բնակչութեամբ:

Կեչէ Եուրտի մէջ ալ բաւական Հայեր կային: Տեղացիք պար-
տէզները ցանկապատելու մասնաւոր ձեւ մը ունէին. ճիւղերը հա-
ւասարապէս կը կտրէին, վրան ալ մայրիները կը պառկեցնէին
հորիզոնական ձեւով: Ալիմորան ունի Մինտավալ գիւղախումբը եւ
65 գիւղ. կեդրոնատեղին փոքրիկ աւան մըն է:

Մեսուտիէ քաղաքը հաստատուած է Գարահիսար գետի փոքրիկ
մէկ գետակցին վրայ: Կեպեմէ գիւղախումբէն դատ ունի 75 գիւղ:
Քաղաքը կ'իյնայ Գարահիսարէն 20 քիլոմէթր դէպի արեւելք եւ
ատենօք ունէր 25-30 հայ տնուոր: Յունական խոշոր գիւղեր ալ կային
այս գաւառին մէջ: Մեսուտիէէն մեր քաղաքը երթալու համար վեց
ժամ պէտք է, որովհետեւ միջանկեալ լեռները կողմնակի ուղիներու
կը մղեն ճամբորդին:


Կիւմիւշխանէի վրայ չեմ ուզեր ծանրանալ, որովհետեւ տեղ-
ւոյն բնակչութեան մէկ մեծ մասը Յոյներէ եւ թուրքերէ կը բաղ-
կանայ եւ ժամանակին ցանցառ թիւով Հայեր միայն կային շրջանին
մէջ: Համբաւաւոր է իր երկաթը. տեղացիք դայն հանքերէն դուրս
կը բերեն նախնական դրութեամբ: Հանածոյ երկաթէն կացին ու
արօրի խոփ կը շինեն եւ զանազան քաղաքներ կը տանին ծախելու:

Գոյլահիսար, պատմական Գոլունիան, ունի Նայիպլի եւ Սիս-
Օրթա գիւղախումբերը: 65 գիւղերէն ոչ մէկը Հայ, որովհետեւ

տեղացի Թուրքերը Յոյներէն դարձած են եւ խիստ ցածոգի: Քաղաքը
կ'իյնայ Գայլ գետէն երկու քիլոմեթր դէպի հիւսիս, 1166 մեթր
սեպ բարձունքի մը վրայ, գետակից ջուրի մը եզերքը. Օրտուէն 108
քիլոմեթր հարաւ ու Գարահիսարէն 43 քիլոմեթր արեւմուտք:
Շրջակաները կան Բիւղանդական հին ամրոցներու աւերակներ,
անտառներ ու արօտատեղիներ:

0

ՏԵՂԱԿԱՆ ՏԻՊԱՐՆԵՐ



Գարահիսարի ամբողջ հայ բնակչութիւնը լուսաւորչական էր: Տարբեր դաւանանքի պատկանող ուէ մէկը իսկոյն հետաքրքրութեան առարկայ կը դառնար քաղաքին մէջ, վրան տարօրինակ կերպով կը նայէին, որպէս թէ քանակաւ մը եղած ըլլար:

1900ին Գարահիսար այցելեց կաթոլիկ ատամնաբոյժ մը: Հայ երիտասարդ մը դացեր տեսեր էր սրճարանը, եկաւ մեզի պատմեց, մենք ալ դացինք: Բա՛հ, տեսանք որ ատ կաթոլիկը մեզի պէս մարդ է. կուշտ ու կուռ խնդացինք:

Բողոքականութիւնը նոր կը սկսէր տարածուիլ այդ երանելի օրերուն: Գարահիսարի մէջ, քանի մը տուն արդէն մտած էին անոնց փարախը, 5-6 տուն ալ թամղարա կար: Պոլսէն պատուելի մը կը ճամբեն, որ բողոքականութիւն քարոզէ, բայց ականջ տուող չըլլար: Այս գալալըն, — որուն անունը Պոսթան դրած էին, — յանկարծ կը մեռնի օրին մէկը: Եկու տես որ հայ երիտասարդները իրենցմէ չեն ընդունիր պատուելին, կ'երթան կառավարութեան կ'ըսեն թէ՛ « այդ մարդը հայ չէ, Փրոտ է, ուստի մենք չենք ձգեր որ մեր գերեզմանատունը թաղուի »:

Յոյներուն կ'երթան, անոնք ալ կը մերժեն. ի վերջոյ կառավարութիւնը կը հրամայէ որ մեռնողը Տեվէ Տիւզին թաղեն: Այդ վայրը քաղաքին հիւսիսակողմը՝ ընդարձակ դաշտ մըն էր, որ վերջէն մեր գերեզմանոցն ալ հող եղաւ:

Բողոքականները՝ ճարահատ, քաղաքէն մէկուկէս քիլոմետր անդին՝ այդ դաշտին մէջ փոս մը կը բանան, որպէս զի այնտեղ թաղեն պատուելին: Այդ շրջանին Գարահիսարի մէջ կար կտրիճ Հայ մը, որուն Գարատալու կ'ըսեն եղեր: Այս երիտասարդը 10-15 հոգի կը հաւաքէ գլխուն եւ կ'ընկերանայ մեռելական փոքրիկ թափօրին: Բողոքականները այս որ կը տեսնեն, կը սկսին դողալ, բայց տղան անոնց կ'ըսէ.

— Մի՛ վախնաք, բան չենք ըներ ձեզի. մենք կ'ուզենք միայն տեսնել թէ բողոքականները ի՛նչպէս կը թաղեն իրենց մեռելները...

Պատուելին փոսը կ'իջեցնեն, երբ հողը վրան պիտի լեցնեն, երիտասարդը կը մօտենայ գերեզմանի եղերքին եւ կը պատուիրէ որ սպասեն, որպէս զի ինքն ալ աղօթք մը ընէ: Եւ կը սկսի սապէս.

Ստամպոլտան կելտի պիր պոսթան,
Տեվէ Տիւզինտէ եափտը մեզարիստան.
Աւրօքանըն ալթընտան չըգտը պիր փրոթեստան:
Հայտէ՛ տղաք, հիմա հողը լեցուցէք...

Հոս տեղին է որ յիշեմ Խաչիկ աղա Լենկիեանի պատմութիւնը:
Այս մարդը արհեստով հին տեսակի դերձակ էր. երբեմն քովը
կ'երթայի եւ ինծի լաւ բաներ կը պատմէր: Օր մը երբ իրեն հան-
դիպած էի, տեսայ որ հոն Ս. Գիրք ծախող բողոքական մը կար,
որուն հետ ինք վէճի բռնուած էր հայ եկեղեցւոյ մասին: Մեր
դերձակը սապէս պարզեց իր թեզը.

— Պատուելի՛, ըստ քրիստոնէական վարդապետութեան, Քրիս-
տոս փեսան է, իսկ եկեղեցին հարսը, այնպէս չէ՞: Է՛հ ուրեմն,
մեր Լուսաւորչական եկեղեցին այն հարսն է, որ դեղեցիկ է եւ
թանկարժէք մետաքսներով զգեստաւորուած: Իսկ ձեր Բողոքական-
ներուդ հարսը թէ՛ տղեղ եւ թէ՛ մօրէ մերկ է...: Դուք բռնած էք
բարեխօսութեան մը պոչը. ատ չէ կարեւորը, բուն հարցը հաւատքին
էութիւնն է:

Օր մըն ալ Պոլսէն անաստուած Թուրք մը կուգայ եւ կը սկսի
վիճարանիլ մեր մարդուն հետ: Թուրքը կ'ըսէ.

— Լա՛ւ, դիցուք թէ Աստուած զոյութիւն ունի, բայց անկէ
առաջ ո՞վ կար:

Խաչիկ աղան համբիշը կուտայ զխմացիներն ձեռքը եւ կը պատ-
ուիրէ որ բարձր ձայնով մինչեւ տասը համրէ, որպէս զի ինքն ալ
տրուած հարցումին պատասխանը տայ: Թուրքը մէկ կը փորձէ,
երկու կը փորձէ, չի յաջողիր. այսպէս չորս հինգ անգամ կը կրկնէ:
Երբ դերձակը կը պնդէ որ շարունակէ, ողորմելին կ'ըսէ թէ « չըլար
կոր »: Ասոր վրայ նրբամիտ Հայը կը թելադրէ որ մէկէն առաջ
համրէ: Տղէտ մարդը կը քրթմնջէ. — « Մէկէն առաջ ի՞նչ կայ որ
համրեմ », կ'ըսէ:

— Քանի որ մէկէն առաջ բան չկայ, Աստուծմէ առաջ ալ ոչի՛նչ
զոյութիւն ունի, պատասխան կուտայ Խաչիկ աղան:

— Յաղթեցի՛ր ինծի, կը խոստովանի Թուրքը դիւսիկոր:

Ներկայ դարուն ի հարկէ կրօնական վէճերը ժամանակավրէպ
բաներ են, բայց յիշեալ մանրադէպերը ցոյց կուտան թէ Գարահի-
սարցին որքա՛ն աւանդապահ է եւ խորապէս կապուած մայր
եկեղեցիին:

Շ. Գարահիսարի մէջ Ծրովրդներ կոչուած ընտանիք մը կ'ապրէր
ատենօք: Այս ընտանիքին նահապետներէն մին կ'ուզէ իր մէկ հատիկ
աղջիկը կարգել: Քիչ շատ բարեկեցիկ էր. հարսանեկան աղուոր
հագուստ մը շինել կուտայ իր ուղածին պէս, բայց եկու տես որ

Փուլլու-Փիւրիկներուն չի հաւնիր: Ասիկա դոյնդոյն շղարշ մըն էր, վրան զանակներ կարուած եւ մինչեւ 1893 հարսերուն գլուխը կը ձգէին պսակի միջոցին: Ծերուկը իր փնտուածը չի գտներ. վերջապէս կ'երթայ մինչեւ Պոլիս (այն ժամանակ առաջաստանաւով երթալ գալը 25 օր կը տեւէր): Քօղը կը գտնէ, կը բերէ եւ ցոյց կուտայ քաղաքին վաճառականներուն, ըսելով որ « Ես ձեր ինքսին համար գացի Ստամպուլ »: Այս դէպքը առակի կարգ անցած է: Օրինակի համար, եթէ մէկը հաւկիթ մը եփելու համար պատուհանին փեղկերը վառէ. — Դո՞ւն ալ Ծըռվըզին Փուլլու-Փիւրիկին հաշիւը դարձուցիր », կ'ըսեն:

*
**

Անցեալ դարու կիսուն, Մովսէս անուն ջուլհակ մը կտաւ գործելէն կը զգուի եւ այդ կեանքէն ազատելու միջոց մը կը գտնէ: Սուտ երազ մը կը պատմէ կնկան, որ իբր թէ Աստուած հրեշտակի մը միջոցաւ խորհուրդ տուած է իրեն որ ճգնութեան նուիրուի: Կինը իրմէ աւելի միամիտ, դիւրաւ կը հաւատայ էրկան շինծու պատմութեան եւ Մովսէս կ'ըլլայ ճգնաւոր: Առտուն կանուխ կ'երթայ Թամզարայէն կէս ժամ հեռուն, Տիշ Ղայա ըսուած ժայռոտ տեղ մը, իսկ գիշերը կամացուկ մը տուն կը մտնէ: Դրացիները երբ կը տեսնեն, կը գայթակղին եւ կ'ըսեն իրեն.

— Ծօ՛, Մովսէս, ասանկ ճգնութի՞ւն կ'ըլլայ. գիշերը գաս կնիկիդ ծոցը պառկիս, ցերեկին ալ երթաս ճգնիս:

— Ձեզի ի՞նչ կ'ըլլայ... Աստուծոյ հրեշտակը երեւցաւ ու ինծի ատանկ հրաման ըրաւ: Ահաւասիկ ես իր կամքին առջեւ գլուխ կը ծռեմ:

— Հը՛մ, գործէն պրծելու համար ատանկ սուտեր կը հնարես. դնա՛ աշխատիր որ զաւակներդ ապրեցնես:

Մովսէս կարեւորութիւն չի տար եւ նորէն կը շարունակէ իր ծոյլ կեանքը: Քանի մը գիտակից երիտասարդներ խորհուրդ կ'ընեն որ լաւ խաղ մը խաղան սուտ ճգնաւորին գլխուն: Տեսակ մը զամբիւղ կը շինեն, անանկ որ կարենայ եօթանասուն քիլօ վերցնել, ու գիշեր մը տանիք կը բարձրանան եւ այդ զամբիւղը լուսամուտէն չուանով կը կախեն: Տղոցմէ մէկը ճերմակ շապիկ հագած, հրեշտակի մը պէս կ'երեւնայ միամիտ ջուլհակի աչքին ու եպիսկոպոսական հանդիսաւոր շեշտով մը կը պատգամէ.

— Ո՛վ երանելի Մովսէս, աղօթքներդ լսելի եղան առաջի Աստուծոյ: Մտիր զամբիւղ եւ համբարձիր:

— Ես արժանի չեմ, կ'ըսէ ջուլհակը լացուկամած ձայնով մը:

— Արժանի ես. մտի՛ր զամբիւղը եւ համբարձիր յերկինս:

— Տէ՛ր, ես արժանի չեմ, կը հեծեծէ խեղճ մարդը կուրծքը ծեծելով:

Վերջապէս, երբ պատուէրը կը կրկնուի, զամբիւղը վար կ'իջնէ ու Մովսէս մէջը կը մտնէ խաչակնքելով.

— Փա՛ռք քեզ, Տէր, փա՛ռք քեզ, որ զիս արժանի ըրիր այս երջանկութեան:

Կնիկը կը սկսի ողբալ.— Մեզ ո՞ւր կը ձգես, սիրելի՛ Մովսէսս, ի՞նչ պիտի ըլլայ մեր վիճակը:

— Քանի որ արժանի եղայ երկինք համբառնալու, ես ձեզի վերէն եղ կը շրկեմ:

— Կաթա՞յ ալ:

— Մինչեւ որ այդ եղը լմնցնէք, ես անուշեղէն ալ կը ճամբեմ երկինքէն:

— Համբարձի՛ր յերկինս, կը հրամայէ կեղծ հրեշտակը ու պարանը կը քաշեն:

Բայց այն ժամանակ որ չուանը խաչերկաթին կը դպնայ, զամբիւղը վար կ'իջեցնեն մինչեւ կէս կանգուն ու մէկէն թող կուտան: Խեղճ Մովսէս յատակին վրայ կը գլորի եւ կողերը օղիկ օղիկ կուզան:

— Եամա՛ն, ես մեռայ, պոռալէն անկողնին վրայ կը վազէ եղկելին, մինչ վերէն զուարճասէր տղաքը կը ճաթին խնդալէն:

**

Ծ. Գարահիսար ժամանակին ունեցած է խեղճ Տէրտէր մը, որ իր այլանդակ բնաւորութեամբ զուարճացուցած է ժողովուրդը: Զարայի Ղարապօղազ գիւղի վարժապետն էր. շատ աշխատած էր քահանայ ըլլալու, բայց մերժուած էր: Վերջապէս յաջողած էր իր յամառութեամբ եւ անունը դրած էին Տէր Մելքիսէթ:

Աբրահամ Ծ. Վրդ. Նաւասարդեան երբոր եպիսկոպոս կը ձեռնադրուի եւ էջմիածնէն Սեբաստիոյ ճանապարհով կը վերադառնայ իր թեմը՝ Գարահիսար, քահանան առաջնորդական Տեղապահը դիմաւորելու կ'երթայ Ղարապօղազի բլուրին գազաթը, միս մինակ, որովհետեւ գիւղին կալի շրջանն էր: Պիւլպիւլ Եպիսկ. երբ հեռուէն կը նշմարէ զայն, որ պատարագւորի հագուստով, մէկ ձեռքին բուրվառ եւ միւսովն ալ քշոց կը շարժէ « Հրաշափառ »ը մրմռալէն, իսկոյն կը պատուիրէ իր փոքրաւորին որ ճամբու դնէ խեղճուկրակ Տէրտէրը:

Տէր Մելքիսէթ հօրեղբօրս քենեկալն էր, մեր տաներէցը, հետեւաբար ինք կատարեց եղբօրս պսակադրութիւնը: Երկու օր վերջ, համաձայն դաւառական սովորութեան, երբոր նարօտը վար կ'առնէր փեսին գլխէն, ահաւասիկ այն խրատականը որ խօսեցաւ.— Պարոն Նիկողոս, դուն ունիս ցորենի ալիւր, Փերուզն ալ ունի բրինձի ալիւր: Դէ՛հ, եկէք համաձայնեցէք, իրարու խառնեցէք ձեր

ալիւրները: Վերջէն չըսէք հա՛, տուր ինձի ալիւրս. հէջ կը տրուի՞ . պրծաւ գնա՛ց... »:

Մենք փոքր էինք այն ատեն, ասով մէկտեղ Տէրտէրին ըսած խօսքերը մեզի շատ զուարճալի երեւցան ու խնդալէն դուրս փախանք:

Տէր Մեւքիսէթի ձեռքը դողալուն, Աբրահամ Եպիսկօփ առաջնորդական տեղապահութեան շրջանին՝ սկիհի գինին զետին թափած էր եւ այդ պատճառաւ թաղականները այրած էին խորանին գորգը: Մինակ խոստովանանք արտօնուած էր իրեն, պատարագ եւ մկրտութիւն կատարելու իրաւունք չունէր: Ժողովուրդը « Տէր Քեւքիսէթին » դրած էր այդ քահանային անունը, որովհետեւ ծայր աստիճան յաւակնոտ էր ու սովորութիւն ունէր քիթը կոխելու ամէն բանի մէջ: Ինչպէս վերը տեսանք, մտաւոր պաշար բնաւ չունէր, բայց դամբանական խօսելու կ'ելլէր: Այն ալ որո՞ւն համար, « Պատուի Մովսէս »-ին, որ դէշ համբաւ մը կը վայելէր հայրենակիցներուն մօտ: Տէրտէրը՝ դերեզմանատան մէջ, դողդոջալէն եւ բառերը շեշտելէն, պատուախնդիր բազուկէ մը զարնուած այդ մարդը Մեծ Խաչեցեալին հետ բաղդատութեան դնելու չափ յառաջ կ'երթար, այսպէս ըսելով. — « Աւագն չորեքշաբթի, Աւագն հինգշաբթի, Աւագն ուրբաթ, ինչպէս որ Տէրն մեր Յիսուս Քրիստոս նահատակուեցաւ խաչին վրայ, այնպէս ալ Մովսէս աղա էրզինկեանեան մարտիրոսացաւ Գարահիսարի մէջ »:

Յատկանշական ուրիշ օրինակ մը, որ ցոյց կուտայ Տէր Մեւքիսէթի մեծամտութիւնը: Դէպքը կը պատահի նորընծայ Նաթան Քհնյ. Տատեանի ապաշխարութեան վախճանին, երբոր հացկերոյթ կը տրուի յիշեալին տունը, մեր Տէրտէրը շերեփի պէս կը մտնէ ամէն բանի մէջ եւ կը փայլի իր անյատակ տգիտութեամբ: Ծարահատ, երբոր առաջնորդ Սմբատ Վրդ. սաստ կ'ուղղէ իրեն, Տէր Մեւքիսէթ կը սպառնայ իր գերադասին. — « Ես այս մօրուքովս շատ մը առաջնորդներ ճամբած եմ, քեզ ալ պիտի ճամբեմ, ձառէ՛լ Քոնթիկ »:

Ասով մէկտեղ, խեղճ Տէրտէրը շատ ալ միամիտ էր, ծիծաղելի ըլլալու աստիճան: 1895ի կոտորածներուն՝ եկեղեցի մտած էր եւ դուրս չէր ուզեր ելլել. — « Միևչեւ որ Հայոց թագաւորը չօծուի, դուրս չեմ գար », կը կրկնէր անդադար:

Բաւական երկար մնալէ վերջ, օրուան առաջնորդական տեղապահ Սմբրոսէոս Վրդ. Ռուբինեան ստիպեց զինքը որ հեռանայ եկեղեցիէն, ըսելով. — « Դո՛ւրս ելիր նայիմ, ատանկ բան չկայ »:

*
**

Ժամանակին Խաչայ Պապ մը կար Գարահիսարի մէջ: Այս մարդը իր երիտասարդութեան օրերուն, կարծեմ 1820ի շրջանին, դէպի Պոլիս ճամբայ կ'ելլէ առաջատանաւով: Մէյ մըն ալ նայիս, Սեւ

ծովը կը կատարի, սոսկալի փոթորիկի մը կը հանդիպին Զոնկուլտաքի առջեւը: Յոյսը կտրած՝ նաւապետը ծով կ'իջեցնէ նաւակ մը եւ իր նաւաստիներուն հետ կը ձգէ ու կը փախչի: Միւս 8-10 հոգին քանի մը տակառներ իրարու կապելով, անոնք ալ դիմաց կ'անցնին, որովհետեւ ցամաքը մօտ էր: Մինակ Ճանիկցի Թուրք մը եւ Խաչայ Պապը կը մնան առազաստանաւին վրայ: Թուրքը կը փորձէ նախախուժ կայմը կտրել, բայց մեր Պապը շատ ուժով ըլլալուն՝ Ճանիկցին կը բռնէ ու պինդ մը կը կապէ ձողին: Յետոյ, ծնկաչոք, աչքերը դէպի երկինք կ'ուղղէ. — « Ո՛վ Ս. Սարգիս, կը մըմնջէ բազկատարած, եթէ իս աղատես այս փոթորիկէն, ութն օր ծոմ պիտի բռնեմ »:

Ժամ մը աղօթելէ ետք, Խաչայ Պապ իւրովի կը փելիստփայէ: — « Քանի որ պիտի մեռնիմ, գոնէ կուշտ փորով մեռնիմ »: Իսկոյն կը մտնէ նաւապետին սենեակը, ինչ որ կ'անցնի ձեռքը, շէնք շնորք փորը կը կշտացնէ: Ասով մէկտեղ, մեր Պապը խելքէն քիչ մը պակաս է եղեր, որովհետեւ կրկին կ'աղօթէ մինչեւ առաւօտ: Նաւը կրակի պէս կը սուրայ. լուսաբացին հրաշք մըն է որ կը պատահի, առազաստանաւը Պոլսոյ նեղուցէն ներս կը մտնէ ինքնիրեն: Գավաքին դէմերը նաւու մը կը հանդիպին. Խաչայ Պապը ձայն կուտայ, Թուրքն ալ նոյնպէս կը սկսի պոռալ: Վերջապէս օգնութեան կը հասնին, նաւը կը տանին Պոլիս: Դէպքը կը պատմեն նաւահանգիստի իշխանութեան: Կառավարութիւնը կը զբաւէ նաւը. բայց եթէ Պապին խելքը տեղը եղած ըլլար, այդ առազաստանաւը իրը եղած պիտի ըլլար:

Խաչայ Պապը հօրեղբօրս կնոջը ազգական ըլլալուն, իր ծերութեան օրերուն մեր տունը կը մնար: Մինչեւ իր մահը ուխտը չզրժեց: Ս. Սարգիսի շարթուն հինգ օր ծոմ կը բռնէր. չորեքշաբթի իրիկուն գաւաթ մը ջուր միայն կը խմէր, իսկ շաբաթ օր ճամբայ կ'ելլէր դէպի ուխտավայր: Մայրս կը պատմէր որ այդ օրը զինքը ձիով կ'ուղէին տանիլ, բայց բարեպաշտ ծերունին երբեք չէր ընդուներ, ըսելով որ « Ուխտս ընդունական չի լինիր »: Ս. Սարգիսի մատուռը քաղաքէն երկուքուկէս քիլոմետր հեռու էր, Ժայռի մը ստորոտը, գեղեցիկ ակի մը մօտ: Փոքրիկ սնտուկի մը ձեւն ունէր. ամբողջովին քարուկիր էր, տանիքն ալ նոյնպէս: Մեր Պապը կ'երթար սրբավայր, մոմ կը վառէր և իր ուխտը կ'ընէր: Տուն վերադարձին՝ եղն ու մեղրը պատրաստած կ'ըլլային մերոնք. կ'ուտէր եւ կը պառկէր: Իրիկունն ալ ապուր մը միայն կը խմէր: Հայրս կ'ըսէր թէ՛ « Այդ Խաչայ Պապն որ մեռաւ, մեր տան պերէֆէթն ալ փախաւ »:

Գարահիսար ունեցած է նաեւ իր « գիժ »ը, Արուսիին ձիվճիվեան, որ անմոռանալի յիշատակ մը ձգած է իր խենթութիւններով: Հայրը լաւ ջութակ կը զարնէր, բայց շատ խման էր. հաւանաբար

ատկէ յառաջ եկած էր իր ծուռ նկարագիրը: Գալով մօրը, որ Եզնեկ կ'ըսուէր, ան ալ ամուսնին մեռնելէն վերջ օղի կը հանէր: Ամէն ազգի մարդիկ կ'ախորժէին իրմէ, շատ ալ կը մեղքնային եւ այդպէսով գէշ աղէկ կը հոգային իր ճաշը, վրան գլուխը եւ դրամ կուտային:

Ոտարոսլիկ, երկար շապիկ մը հագած, ասդին անդին կը դեզերէր ամբողջ օրը: Դեռ ժամերգութիւնը չսկսած, թաղէ թաղ կը պտտէր եւ մօրը դրդումով մեծածայն կ'աղաղակէր. — « Ո՛վ բարի քրիստոնեաներ, ժամ հրամմեցէք. Արուժինին Փեսքիմէթ (պաքսիմատ) տուէք, փերթ մըն ալ ապուխտ տուէք, քիչ մըն ալ կարագ տուէք... »

Յետոյ կը մտնէր եկեղեցին, դաւիթին մէկ անկիւնը կը կենար. անընդհատ ձեռքը կը խփէր կուրծքին, որպէս թէ խաչակնքելու համար: Երբոր տղաքը հետը կ'իյնային, դէմքը կը թթուեցնէր եւ « Քո՛ղ » կը պոռար: Իսկ եթէ բզէզները իրենց մատը տանէին իրենց գլխուն ու « մեռելին ոջիւր » ըսէին, ինքնիրմէ կ'ելլէր եւ կծիկը կը դնէր: Նմանապէս կրակ կը կտրէր, երբոր հայհոյէին օղիին, որ ինչպէս տեսանք մօրը ապրուստի միջոցն էր:

Գիժին ամէնէն սիրած բանը սայլին ճրճոցն էր: Փա՛ռք Աստուծոյ, կիրակի օր այդ կառքերուն համբանքը չկար, որովհետեւ յաջորդ առտուն պազար կ'ըլլար քաղաքին մէջ: Երջանկութենէն գինովցած՝ ամբողջ օրը կը վազէր անոնց ետեւէն, արիւն քրտինք կը մտնէր եզնասայլերը հրելով հրմշտկելով:

Արուժինին ոտքերը շատ խոշոր էին, 52 թիւ կը հագնէր: Տեղացի կօշկակար մը՝ մեղքնալով, մէկ ոտքի եւմէնիին կաղապարը կը հանէր, թաղէ թաղ կը պտտցնէին եւ դրամ կը հաւաքէին: Յետոյ միւսն ալ կը շինէր եւ իրեն կուտար:

Մնաց որ, անգամ մը երբ գիժը գիւղ դացած էր պտղի հաւաքելու, մեր Սերոբիկ աղան, — որուն վրայ խօսած եմ իր տեղին, — երկու պարկ ցորեն նուիրած էր իր մօրը եւ փոխադրութեան ծախքն ալ հոգացած: Այս առթիւ հետեւեալ ղուարձալի դէպքը պատահած է, զոր կ'արժէ որ պատմեմ.

Սերոբիկ աղան վար կը դնէ մեր խենթը, որ գիշերը կը պառկի համեստ խշտեակին վրայ: Եկու տես որ պատուական աղբայինը ուրիշ հիւր մըն ալ կ'ունենայ, որ համր էր դժբախտաբար: Խեղճը վախնալով գիժէն, դողահար կը մերժէ անկողինը բաժնել անոր հետ: Արուժին երբ կ'իմանայ թոթովախօսին ձայնը, մէկէն կ'արթննայ, գլուխը կը ցցէ փանալարի պէս եւ այնպէս կը հայհոյէ դժբախտ մարդուն, որ խելայեղ կը ձգէ կը փախչի:

Մօրը մահուընէն ասդին, Արուժին շատ կը վախնար մեռելներէն, բայց միշտ առաջինը կ'ըլլար եկեղեցին մանող: Յուզարկաւորները անպատճառ բան մը կուտային:

Սրճարանատէր Ռեճէպ աղան օրին մէկը ձայնագրի գործիք մը

կը դնէ եւ զուարճանալու համար կանչել կուտայ մեր գիժը — « Հո՛ս եկուր, Արուժի՛ն, մտիկ ըրէ ուշի ուշով, կ'ըսէ Թուրքը հեղնական քմծիծաղով մը: Հիմա աղջիկ մը պիտի խաղ կանչէ »:

Երգչուհիին ձայնը երբ կ'իմանայ, մեր գիժը կատղած վրան կը վազէ. — « Ուլա՛ն, խաներիս քրգ, չը՛ք տիշարի », կը մոնչէ հայհոյելէն: Ներկաները խնդալէն կը մարին եւ հազիւ կը յաջողին զսպել Արուժինը:

Գիժը սիրական երգ մը ունէր, հազիւ մէկ տուն, որ բերնէն վար չէր ձգեր.

Գարա գոյուն մեկէյոր,
Եափրափլարը տէլիյոր,
Սիմելանին անասը
Ազու եկմիշ էօլիյոր:

Ժողովուրդը Արուժինին խաղ կանչելը երբ իմանար, կը մեղքնար եւ դրամ կուտար:

Գարահիսարի մեր ազգայինները զուարճանալու համար ուրիշ ճամբայ մըն ալ գտած էին, անշուշտ քանի մը տասնոց նետելով դժբախտ մարդուն առջեւ: Անոնք կը դրդէին մեր գիժը, որ Ֆէսին վրայէն ցատկէ եւ յետոյ գոգէ իր ուղած կերպով: Վազրի մը կատաղութեամբ, Արուժին կը խոյանար կարմիր գլխանոցին վրայ եւ բզիկը կը հանէր...

Նուազածու վարդանին Մարիամը, որ շատ հեռու էր փայլելէ իր առաքինութեամբ, օրին մէկը կը կանչէ Արուժինը, լաւ մը փորը կը կշտացնէ հերիսայով եւ գիշերն ալ հետը ժամանակ կ'անցընէ: Այս որ կ'իմանայ Մանուկ Րէյիսը, շէնք շնորհք կը գինովցնէ մեր գիժը սրճարանին մէջ եւ կը յաջողի անոր լեզուին կապանքները քակել: Դժուար չէ երեւակայել թէ ի՛նչ լեզուով Արուժինին տիպարէն խենթ մը կրնայ պատմած ըլլալ իր հեշտալի ապրումները այդ կիսաշխարհիկ կնոջ հետ:

Մանուկ Րէյիզ կատղած՝ դանակը մէջքէն քաշելով կը տնկուի Մարիամի դրան առջեւ եւ հայհոյելէն կը բղաւէ.

— Վա՛ր իջիր քա, վռթկա՛ծ կնիկ, ուրիշ մէկը չես գտած, հիմակ ալ խենթ Արուժինին հետ կ'իյնաս կոր:

1895ի կոտորածին, երբ ամէն ոք ապաստան գտած էր ապահով տեղերու մէջ, Քել Հասան առիթէն օգտուելով կը մտնէ Յ. Նալպանտեանին ախոռը, որ կը գտնուէր քաղաքին ծայրամասին մէջ: Երբ Թուրքը ձեռքը կը դնէր մարդուն ջորիներուն վրայ, որ առնէ տանի, մեր ծուռը նախախը քաշած կը խոյանայ անոր վրայ. — « Ուլա՛ն, եթէ դուն Քել Հասանն ես, ինծի ալ ձիվճիվենց Արուժին կ'ըսեն: Զգէ՛ այդ ջորիները, ես քո խերը մերը... »

Թուրքը լեղապատառ կը փախչի, որովհետեւ մեր գիժը եզան չափ ուժ ունէր եւ կրնար զինքը բզիկ բզիկ ընել: Այս կերպով կը

փրկուին Յարութիւն Նալպանտեանի չորս գրաստները, որոնք այն ժամանակ քառասուն կարմիր ոսկիի արժէք կը ներկայացնէին:

Փելեկենց Սաչիկը ամէնէն աւելի հոգ կը տանէր խենթին. շատ անգամ ձեռքով կը լողցնէր, կը մաքրէր ու կը սրբէր: Միայն թէ՛ վատ սովորութիւն մը ունէր, որուն համար իր ընկերներէն սաստ կ'ընդունէր: Երբ սրճարանը նստած կ'ըլլային, Արութիւնի կ'ըսէր. — « Աստուած, աս տղին մարը ի՞նչու առիր »: Խեղճ տղան կը սկսէր օղիկ օղիկ գալ լացէն:

Մեծ Եղեռնէն քանի մը ամիս առաջ, հռչակաւոր գիժը ծանր կերպով կը հիւանդանայ եւ մարգարէական յայտնատեսութեամբ մը արտասուելէն կ'ըսէ իր խնամատարին. — « Սաչի՛կ աղբար, ես կը մեռնիմ կոր. այս քաղաքը պիտի կործանի... »:

0

ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ՀԱՐՍԱՆԻՔԸ

— 0 —

Արեւելեան սովորութեան մը համաձայն, Շ. Գարահիսարցիներուն աղջիկտեւը կ'ըլլայ առհասարակ բաղնիքին մէջ: Երբ երիտասարդ մը պիտի նշանեն, տղին մայրը կամ մեծ քոյրը այնտեղ կը հետեւի հարսնացու աղջկանց շարժումներուն, չէնք շնորհք քննութենէ կ'անցընէ անոնց մարմնական կազմը, բնաւորութիւնը, ու վերջապէս իր ընտրութիւնը կ'ընէ: Մեծ քրոջ հաւնածին, — եթէ մաւաւանդ ամուսնացած էր, — եղբայրը գլուխ կը ծռէր: Ի չգոյէ քրոջ, երիտասարդին հօրեղբօր կամ մօրաքրոջ աղջիկները այդ դերը կը կատարէին եւ որոշում կուտային:

Զգաստ պէտք էր ըլլար հարսնացուն: Տարեց կանանց առջեւ կուրծքը բաց ձգելու չէր: Առջեւը դենջակ, որուն վերի ծալքերով ալ կուրծքը գոցելու համար, պէտք էր որ ան մեծ զգուշաւորութեամբ լուացուէր:

Շ. Գարահիսարի սինէման ու թատրոնը՝ բաղնիքն էր իրօք: Երկու շաբաթն անգամ մը կ'երթային հոն, այս պատճառաւ ալ կանանց բաղնիքը աժան էր (քսան փարա): Հոն երեւան կուգար հարսնացուին շնորհը, հագուստներու ձեւը, տեսակը, ինքնատպութիւնը եւ կերակուր եփելու կերպերը: Ի՞նչ ուտելիքներ, նախուլներ (գուրապիլէ), կարկանդակներ եւ աղածոներ կանայք իրարու կուտային, մա'նաւանդ աղքատներուն. — « Աղջի՛, փետը (հոտ) ելաւ », ըսելով: Ժամը մէկին անոնք բաղնիք կը մտնէին եւ ութնին ալ դուրս կ'ելլէին: Իսկ եթէ նշանտուքի կամ հարսանեկան օրուան մասին համաձայնութեան մը չգային, նորէն կը ժամադրուէին երկու շաբաթ վերջը:

Հարուստներուն հանուած տեղը զատ էր: Գալով թուրքերուն, 1895ի դէպքերէն ասդին, անոնք ուրիշ օր մը բաղնիք կ'առնէին:

Հարսին բաղնիքը կէս հարսանիք մըն էր: Հոն դափ կը տանէին, կը պարէին եւ կը զուարճանային: Նշանտուքի ձեւակերպութիւնները սապէս տեղի կ'ունենային. —

Նախ աղջկան տունը կը դրկեն քահանայ մը կամ մօտիկ ազգական մը որպէս միջնորդ եւ խօսք տուածին պէս նշանտուքի օրը կ'որոշեն: Նոյն իրիկունը՝ ժամը 9ին, աղջկան տունը կ'երթան: Պզտիկ ձեւակերպութենէ մը ետք, նշանախօսութիւնը կը կատարուի եւ ուրախու-

Թիւնը ծայր կուտայ մինչեւ ժամը երեք: Այնուհետեւ, աղջկան կողմի երիտասարդները, ամէնքն ալ կ'երթան մանչուն տունը եւ այնտեղ ալ կը սկսին զուարճանալ: Այն ատեն փեսան պարտաւոր է օղի մատակարարել հիւրերուն, մասնաւոր ափսէով մը: Լուսարացին ամէն մարդ իր տունը կը քաշուի:

Սովորութիւն եղած էր Շ. Գարահիսար, որ եթէ աւելորդ սենեակ գոյութիւն չունենար տանը մէջ, հարսնցուն ուրիշ ընտանիքի մը քով կը ճամբեն: Նշանտուքէն ամիս մը վերջ, իրենց հաց եփած օրը՝ աղջկան տունէն 12 հատ լաւաշ հաց կը զրկեն փեսին: Այս սովորութիւնը երկու կողմէն է եւ մինչեւ հարսանիք կը շարունակուի: Աղջիկ մը նշանուելէն վերջ պէտք չէ խօսի իր կեսրոջ հետ: Անոնք իրարու կը հանդիպին արդէն բաղնիքը. այն ատեն հարսնցուն պէտք է կեսուրը լուայ, մազերը սանտրէ եւ հազուեցնէ: Մնաց որ, աղջիկը իր նշանածին տարեց ազգականներուն ձեռքը պազնելու է: Իսկ եթէ հարսնցուն իր տալերուն հանդիպի բաղնիքը, անոնց հետ կը խօսի եւ իրար կը լողցնեն:

Պսակադրութենէն մէկ կամ մէկուկէս ամիս առաջ, հարսնցուն կարգաւ իր ազգականներուն մօտ կ'անցընէ: Եւ այսպէս, եթէ 4-5 հողիի մօտ մէյմէկ շաբաթ կենայ, ժամանակաշրջանը ինքնին կը լրանայ: Ինչպէս հայկական բոլոր գաւառներուն մէջ, մեր մօտ ալ հարսին՝ « Թագուհի », իսկ փեսին ալ « Թագաւոր » կը կոչեն:

Նախ քան հարսանիքը, մօտաւորապէս տասն օր առաջ, հրաւիրեալներու ցանկ մը կը սրատրաստեն եւ կը յանձնեն խըլտրկաններուն (խնդրական): Ասոնք քանի մը կ'իներ են, որոնք տղայ մը կ'առնեն իրենց հետը, տուները կը շրջին եւ հարսանիքի կը հրաւիրեն:

Հարսանիք գացող կին մը անպայման ափսէ մը անուշեղէն տանելու պարտաւոր է: Առհասարակ կը տանին փախլաւա, տոլանկեռ (վերջնոյն մէկ տեսակը), պէօրէկ (պանիրով կամ առանց պանիրի), — իսկ միջին դասակարգն ալ նոխուլ, որ ինչպէս ըսի գուրապիյէն է: Մասնաւոր կերակուր եփող կ'իներ կան, որոնք ուրբաթ օրուրնէ գործի կը սկսին: Յաջորդ առտուն վերը յիշուած անուշեղէնները կը հասնին. ընդհանրապէս 25-30 ափսէ, Թուղթի մը վրայ գրուած զրկողին անունը: Իսկ կէսօրէն վերջը կը սկսի հարսանիքը:

Սովորութիւն է որ հարսին կօշիկը տղուն կողմէ զրկուի: Կօշկակար մը 15 օր առաջ կուգայ, աղջկան ոտքին չափը կ'առնէ եւ շաբաթ առտու կը յանձնէ: Կօշիկը ջնարակուած փոթիկ-կալոշ է, վիզը մաքուր թաւիչ, վարդագոյն կամ մանիշակագոյն, իսկ անոր վրայ ալ արծաթաթել ջուրճեր (երիզներ) բանուած:

Ընդհանուր առմամբ հարսանիքը Վարազայ Խաչէն վերջ կը սկսի Շ. Գարահիսարի մէջ: Այդ շրջանին ամէն բան առատ կ'ըլլայ, մա'նաւանդ միսն ու կանանչեղէնները: Շաբաթ իրիկուն տէրտէր եւ տիրացու կուգան, հալաւը կ'օրհնեն: Ափսէի մը վրայ կը դնեն ընտիր

մետաքսէ յեռուած հարսնցուին քողը, նարօտը, երկու մատանի, փեսին վերարկուն եւ թագը: Այս վերջինը ուրիշ բան չէ, բայց եթէ Ֆէս մը, որուն վրայ թագածեւ խաչ մը կ'անցընեն պատուանշանի մեծութեամբ:

Հալաւը օրհնելէ վերջ, մատանին կը դնեն փեսին մատը, վերարկուն կը հագցնեն եւ թագը Ֆէսին կ'անցընեն: Նախ՝ տղան կը պագնէ հօրը մօրը ձեռքը. անոնք ալ կը համբուրեն եւ կ'օրհնեն զինքը: Յետոյ փեսան կը պագնէ մեծերուն ձեռքը: Ասոնք ալ շաբաթ իրիկուրնէ աչքի լուսի կուգան: Այս անգամ փեսան կը տանին կիներուն մէջ. մերձաւոր ազգականները կը մօտենան, կը համբուրեն զինքը, նուէրներ կուտան եւ կը սկսին զուարճութեան:

Տէրտէր տիրացու անոնց հետ ճաշելէ ետք կ'երթան: Տարեցայր ու կիներ սենեակ մը կը հաւաքուին եւ նուագածուներուն կը պատուիրեն որ լաւ կտորներ զարնեն: Կիներուն սենեակը զատ է, նոյնպէս ալ՝ տղամարդոցը. ասոնց նուագը քեմենչէն է:

Կիրակի առաւօտ փեսան եկեղեցի կ'երթայ: Դասը կը կայնի. փեսայի յատուկ շապիկ մը կը հագուեցնեն իրեն եւ երաժշտապետին ետեւէն կը հետեւի պատարագի թափօրին: Ժամուն վերջաւորութեան պատարագիչին ձեռքէն սրբութիւն կ'առնէ եւ իր ընկերներով կուգայ տուն: Այն ժամանակ ճաշի կը նստին եւ կը սկսին ուրախութեան:

Ճաշի համար հարսնեւորները 8-10 խոշոր սեղաններ կ'երթան կը բերեն: Իսկ հարուստները արդէն ամէն ինչ ունին իրենց տան մէջ, դուրսէն բան բերելու պէտքը չեն զգար: Չորս աթոռակներու վրայ լայնաբաց սեղանը կը զետեղեն, վրան ալ ծածկոցը կը փռեն: Կերակուրի անձեռոցը զուտ քթանէ էր եւ 12 կանգուն երկայնութիւն մը կ'ունենար. այսպէս 2-3 հատ սեղանին բոլորտիքը կը դարձնեն եւ չորս կողմը կը նստին: Ժամանակին պատառաքաղ չկար, ձեռքով կ'ուտէին, բայց այդ սովորութիւնը կամաց կամաց վերցաւ: Միայն թէ՛ երեք հոգիի մէկ աման կ'իյնար:

« Կենաց ջուր »ի գլխահոս նախերգանքէն վերջ, հաւատարմօրէն կը գործադրուէր հարսանեկան ճաշացուցակը. նախ՝ մսի ջրով բրնձէ ապուր, ապա յաջորդաբար կարմրած միս՝ դետնախնձորով, որթատունկի տերեւով լիցք, բրնձէ եղինձ՝ խոշոր ափսէի մը մէջ, մէկ թաս չամիչէ խոշապ ու վերջապէս կը բերեն փախլաւան, եթէ շատուր են՝ երկու ափսէ: Հացէն վերջ անխտիր կը լուացուին, իրենց սուրճը կը խմեն եւ կը շարունակեն զուարճանալ:

Հարսանեկան ճաշացուցակը միեւնոյնն է կիներու բաժնին մէջ: Միայն թէ՛ ուզողին սերկելիլէ լիցք կը հրամցնեն, լաւ եփուած: Նոյնպէս փախլաւա կամ տոլլանկեռ կը բերեն: Սպասարկողը կ'ըսէ. — « Այս անուշեղէնը Մարգարիտ խաթունը կապած է »: Ուրիշ մըն ալ այսինչին կամ այնինչին անունը կուտայ: Ծնորհաւորութիւններ, « շատ ապրիս »ներ եւ ուրախութեան ազգականներ իրարու

կը յաջորդեն: Մինչեւ ժամը չորս կը պարեն, փեսան կը բերեն եւ անոր հետ ալ պար կը դառնան:

Հարսը տունէն առնել բերելը Շ. Գարահիսարի կանանց մեծագոյն փառքն է: Ժամը 4ին՝ կէսօրէ վերջ, հագուած սքուած աղջիկը բերելու կ'երթան 10-15 կիներ, որոնց ամէնատարեցը քառասուն տարեկան կ'ըլլայ: Իրենց հետ կ'երթան նաեւ նոյնքան տղամարդիկ:

Խնդրական կիներ՝ հարսին մատանին, կօշիկը եւ քողը ափսէի մը վրայ դրած, այդ խումբին հետ կ'ուղղուի աղջկան տունը: Այս վերջինը իր սենեակը կը քաշուի: Կիներն ու այրերը զատ տեղ կը մնան: Բարի գալստեան ձեւակերպութիւնները լրանալէ վերջ, կնքամայրը եւ փեսին երկու քոյրերը կ'երթան հարսին սենեակը, թեւը կը մտնեն ու կը բերեն:

Կնքամայրը հարսին մատը կ'անցընէ օրհնուած մատանին, նուէր մը կուտայ ոսկեղէն կամ նոյնպէս մատանի մը: Աղջկան կօշիկները կը հաղցնեն, երեսին կը ձգեն մետաքսէ քողը, որ մինչեւ քիթը կը ծածկէ: Նախ կնքամայրը կը համբուրէ հարսը, կը շնորհաւորէ: Յետոյ կարգը կուգայ փեսին քոյրերուն. անոնք ալ կը համբուրեն, նուէրներ կուտան եւ կը շնորհաւորեն: Որչափ հարսներուորներ որ կան, նոյնպէս կը մօտենան եւ կը հետեւին միւսներու օրինակին: Մեծ ափսէով մը վարդէ օշարակ կը բերուի, մէյմէկ գաւաթ խմելէ վերջ, նուազածուները կուգան եւ կը սկսի պարը:

ԱՌԱՋԻՆ ՊԱՐ (մենապար)



Խօսք էր տուած, որ չի տուիմ,

Նուշ աչքերով ջահէլ տղիմ.

Տարիմ տուիմ կէս ծերուկիմ,

Ի՞նչու շառնէր Արմենակիմ:

Քալէ', Արմե'ն, փախի'նիք, փախի'նիք,

Տանը դուռը վրայէն ախտնիք:

Աղջիկները գարմանիք բան է,

Յաւ յայտնեցիմ Հայկանուշիմ.

Աղջի', ի՞նչու ես, որ պիտ' առնես

Այդ դրմդուկած կէս ապուշիմ:

Քալէ', Արմե'ն, փախի'նիք, եւայլն:

Չայն մի' հանէք, ու մի' մոռնալ',

Համբերեցէ'ք որ պիտ' տեսնաք.

Խաղ մը խաղամ այդ ախ'ախիմ,

Երթայ պատմէ հանդիպողիմ:

Քալէ', Արմե'ն, փախի'նիք, եւայլն:

Հարսանիքին ուրբաք գիշեր,
կէս գիշերէն քիչ մը ուշ էր.
Դուռը ակօսեց փախաւ ձորը,
Լուր չի տուաւ նոյնիսկ մօրը:

Քալէ՛, Արմե՛ն, փախի՛նք, *ԵԼԱՅԼՆ՝*:

Հոն կը սպասէր Արմենակը.
Նժոյգ էր ձին եւ մինակը,
Շատ լաւ գտան ժամանակը,
Հարսը դրաւ ձիուն քամակը:

Քալէ՛, Արմե՛ն, փախի՛նք, *ԵԼԱՅԼՆ՝*:

Նժոյգ թռա՛ւ գնաց աւան,
Բարձր փուխ էր, քթան, սաւան.
Հանուէ՛ Հայկուշ, պառկէ վրան,
Թող հոնսեղ լայ, կէս ծեր փեսան:

Պառկէ՛ Հայկուշ, պառկէ՛, պառկէ՛,
Այդ ալ չեղաւ, մէյ մը գրկէ:

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐ (մենապար)



Պեռաւու (***) վարդը բացուեր է,

Նա՛յ, նա՛յ,

Վարդուշն դուտնի հագուեր է,

Նա՛յ, նա՛յ,

Մենախ թառապուլիս գօտին,

Նա՛յ, նա՛յ,

Իւր բարակ մէջքին վայլեր է,

Նա՛յ, նա՛յ:

Ա՛խ դուն վարդուշ,

Զա՛ն, դո՛ւն վարդուշ,

Քո պաշիկը՝

Մեղրէն անուշ:

Ղատիփէ կըլտըրը հագեր է,

Փիլիկն երեսը պագեր է,

Գօտիկը մէջքէն քակուեր է,

Փիլօն սնտուկը պահուեր է:

Ախ, դուն վարդուշ, *ԵԼԱՅԼՆ՝*:

(*) Շ. Գարահիսարի այդիններուն լաւագոյն մէկ թաղը:

Պեռաւով պոսթան ցանեցին,
Փիլօն սրնտուկէն հանեցին,
Թովալ էշուն բերս հեծցուցին,
Ամբողջ թաղը պըտըտցուցին:
Ախ, դուն վարդուշ, եւայլն:

Դուն դրացիք եկան գացին,
Տէրտէր բերին պըսակեցին,
Առեալ բզճեռն վարդուշի,
Ու կապեցին գործն անուշի:
Ախ, դուն վարդուշ, եւայլն:

*Այս մենապարերէն վերջը կը սկսի շուրջպարը: Հարսին հայրն ու
մայրը կը բերեն մէջտեղ. աղջկան մէկ ձեռքը՝ հայրը, միւսն ալ
մայրը կը բռնէ եւ բոլորը մէկ կը սկսին դառնալ հետեւեալ պարը.—*

ՇՈՒՐՋՊԱՐ



ՏՂԱՆ.— Եկո՛ւր, երթա՛նք Պալենց պաղչան,
պգտի՛կ հարս,
Խնձոր քաղեմ, գօտիդ շարեմ,
պգտի՛կ հարս:

ՀԱՐՍԸ.— Զէ՛, ես չեմ գար, Պալենց պաղչան,
չա՛ր տըղայ,
Խնձորը քեզ, կարմիր վարդն ալ,
չա՛ն տըղայ:

ՏՂԱՆ.— Եարըդ մեռաւ, թող նոր եարըդ
ես ըլլամ,
Խօսք տուր ինձի, խօսքիդ դուրպան
ես ըլլամ:

ՀԱՐՍԸ.— Եարես մեռաւ, եարես մ՛ըլլար,
չա՛ր տըղայ,
Խօսքիդ բընաւ չեմ հաւատար,
չա՛ն տըղայ:

ՏՂԱՆ.— Նագ մի՛ աներ, նագիդ մեռնիմ
պգտի՛կ հարս,
Ես քու պոյիդ, խալիդ մեռնիմ,
պգտի՛կ հարս:

ՀԱՐՍԸ.— Ի՞նչ ես ինկեր իմ ետեւէս,
չա՛ր տըղայ,
Իմ հանգիստըս մի խանգարեր,
չա՛ն տըղայ:

ՏՂԱՆ.— Վա՛յ, Աստուծմէն դուն չե՞ս վախնար,
պգտի՛կ հարս,
Ես քեզ ծընող մօրը դուրպան,
պգտի՛կ հարս:

ՀԱՐՍԸ.— Դո՛ւն իմ խելքըս գըլխէս տարիր,
չա՛ր տըղայ,
Ես քու սիրուն տունէս կ'ըլլամ,
Զա՛ն տըղայ:

Այս պարերէն վերջ խնամիներուն սեղանը կը դբուի: Հարսնցուն ալ սեղան կը նստի: Ամէնքին կուտան սփռոցներ, ու քովն ալ անձեռոցներ: Ճաշացուցակին մաս կը կազմէ միտով պամիան: Մէյմէկ դաւաթ Արծպտերի գինի կը հրամցուի կոչնականներուն, նոյնպէս եւ աղջկան. բոլորը կը շնորհաւորեն հարսը: Կանայք այրերէն աւելի ի պատուի են. փախլաւաններուն եւ տոլլանկեռներուն շատը անոնց բաժին կ'ըլնայ: Միւս կողմէ, դա՛րձեալ հոն ալ գովքը կ'ընեն այսինչ կամ այնինչ խաթունին շինած անուշեղէններուն եւ զոր օրինակ հրաւէր կ'ուզէն որ համտեսեն շաքարէ պատրաստուած նոխուլը:

Ճաշը վերջանալուն պէս, կնքամայրն ու փեսին քոյրը հարսին թեւերը մտած՝ կը տանին իր ծնողքին մօտ, որ անոնց ձեռքն համբուրէ: Յուզումը հոս է որ ծայր կուտայ: Հայրը լալով իր հայրենի ժառանգութեան կալուածաթուղթը կամ դրամական մուրհակը կը հանէ եւ աղջկան կը յանձնէ: Մայրն ալ իր նուէրը կուտայ. երկուքը մէկանց կ'օրհնեն իրենց դուստրը: Այն ժամանակ հայրը կը դառնայ իր աղջկան եւ սասպէս խրատական մը կը խօսի.

— Աղջի՛կս, քեզմէն ոչ մէկ բան կ'ուզեմ. մինակ հօրդ եւ մօրդ պատիւին արատ մի բերեր: Ասկից վերջը, քու հայրդ ու մայրդ՝ էրկանդ հայրն ու մայրն է: Ասիկա ըսելով մենք քեզ երբեք չենք լքեր:

Հայրն ու մայրը կրկին կը համբուրեն իրենց աղջիկը: Նախ քան եկեղեցի երթալը, խնամիները կը սկսին պար մըն ալ դառնալ ջութակահարին նուագած հետեւեալ մելամաղձոտ եղանակին վրայ.—

ՀԱՐՍՆԵՒՈՐՆԵՐԸ.— Հա՛րսը, մի՛ լար, մի՛ լար, աչքըդ կը ցաւի,
Քեզ պգտիկ կարգողին տնակն արբւի:

ՀԱՐՍԸ.— Ի՞նչպէս չի լամ, մայրի՛կ, ինձի խաբեցիք.
Սիրածիս չի տուիք, սիրտըս վառեցիք:

ՀԱՐՍՆԵՒՈՐՆԵՐԸ.— Սիրածդ ցահէլ է եւ քէ աղքատ է,
Ո՛չ տուն ունի, ո՛չ տեղ, վիճակը վատ է:

ՀԱՐՍԸ.— Ես ի՞նչ ընեմ տունը, տունը՝ բուն մ'ըլլար,
Զիս սիրածիս տայիք, սիրտըս գոհ ըլլար:

Պարի վերջաւորութեան կնքամայրը եւ փեսին քոյրը կը մտնեն հարսին թեւերը եւ դուրս կը հանեն: Աղջիկը կը հեծցնեն ձիուն վրայ, « տուներնիդ շէն ըլլայ » ըսելով եւ նժոյգը կը սկսի յառաջանալ դէպի եկեղեցի: Ձիուն երկու կողմերէն կ'երթան հարս ու փեսին եղբայրները:

Մինչեւ այդ արեւը մարը մտած կ'ըլլայ արդէն: Այս այն պահն է, որ երկուշաբթիի սկզբնաւորութիւնը կը համարուի: Ստուգիւ, ըստ եկեղեցւոյ կանոնին, օրը կը սկսի արեւը մարը մտնելէն վերջը, ոչ թէ դիշերուան ժամը 12էն անդին: Պսակադրութեան այս ժամուան ընտրութիւնը գլխաւորաբար տնտեսական է, որովհետեւ երկուշաբթի առեւտուրի օր է եւ հարսնիքի շէն կրնար երթալ:

Հարսը ձիէն վար կ'առնեն ժամուն դրան առջեւ: Կրկին թեւերը կը մտնեն, կը տանին մինչեւ դասը: Փեսան կէս ժամ առաջ հոն եղած կ'ըլլայ: Եկեղեցիին ջահերը կը վառեն բոլորը: Եթէ այդ օրը շատ ըլլան հարսնիքները, — ինչպէս սովորաբար կը պատահի, — փեսաներէն մէկը պիտի կարդայ « Մեղա »: Ժողովուրդը ծունկի եկած ականջ կուտայ. ընթերցումը լրացածին պէս ամէնքը ոտքի կ'ելլեն եւ պսակի օրհնութիւնը տեղի կ'ունենայ:

Պսակի խորհուրդին վերջաւորութեան, մոմերը կը վառեն եւ հարսը փեսայի կողքին դուրս կուգայ եկեղեցիէն: Մոմերը իրենց ձեռքը՝ այն ատեն հարսնեւորները կը սկսին հայրենասիրական երգեր կանչել, ինչպէս « Թէ հայրենեաց պսակադիր », « Աղնիւ ընկեր, մեռանում եմ », եւայլն:

Հայկական թաղերէն անցած ատեն, աղջկան կամ փեսին ազգականներէն մէկը կը կտրէ հարսնեւորներուն ճամբան եւ ափսէի մը վրայ շարած օղի կը մատուցանէ անոնց: Իսկ կիներուն ալ դինի կամ օշարակ կը հրամցնէ. անոնք ալ մարդուն աչքը կը լուսեն եւ կը շարունակեն ճանապարհը:

Հարսանեկան թափօրը փեսին տան առջեւ հասած պահուն, դրան սեմին կանգնած կ'ըլլայ կեսուր մայրը, որ կը համբուրէ հարսը, ան ալ խաթունին ձեռքը կը պազնէ: Նոյն միջոցին երեք կիներ կը մօտենան հարսին, իրենց ձեռքը բռնած մէյմէկ ափսէ, որոնց մէջ կան թթխմոր, ասեղ, դերձան եւ նոր կարուած խանձարուր մը: Աղջիկը երեքին վրայ ձեռքը դնելու պարտաւոր է: Յառաջ կուգայ կեսրայրը. հարսը անոր եւ միւս պարագաներուն ձեռքը կը համբուրէ եւ նուէրներ կը ստանայ իւրաքանչիւրէն:

Ե. Գարահիսարի մէկ աւանդութեան համաձայն, հարսին հետ կ'ըլլայ իր 10-11 տարեկան քոյրը որպէս թարգման, որովհետեւ նորապսակ կնոջ արդիւնաւոր է խօսիլը: Եթէ քոյր չունենայ, ազգականուհիներէն մէկը կը կատարէ այդ պաշտօնը: Արդէն դեռատի աղջիկներ պակաս շէն հարսնեւորներուն մէջ:

Հարսը քիչ մը կը հանգստանայ քովնտի սենեակ մը: Իսկ եթէ

ընտանիքը չքաւոր է, թոնրատան մէկ անկիւնը վարագոյր մը կը քաշեն, երկու աթոռ կը դնեն եւ հոն կ'առնէ իր հանգիստը: Այս կարճ դադարէն վերջ, հարս ու փեսայ դէմ դէմի կը պարեն: Յետոյ կեսուրը ու կեսրայրը հարսին ձեռքերէն բռնած քիչ մը կը կաքաւեն: Այնուհետեւ, հարս ու փեսայ ձեռք ձեռքի տուած եւ ծնողքն ալ միասին պար կը դառնան: Վերջապէս, մեծերը կը քաշուին եւ ջահէլներուն կուգայ կարգը: Առհասարակ կէս առ կէս հայկական եւ թրքական պարեր կ'ընեն:

Մեծ սենեակի մը մէջ, սեղանի մը վրայ դրուած կ'ըլլան աղանդերները, ֆիւֆթէ եւ ամէն տեսակ անուշեղէններ: Տարեց այր ու կիներ նստած կ'ըլլան շուրջ բոլորը: Սազ եւ ջութակ կը սկսին նուագել: Պարը, կերուխումը եւ զուարճութիւնները կը տեւեն մինչեւ լուսադէմ, այն ատեն ժողովուրդը կը սկսի կամաց կամաց մեկնիլ: Այդ դիշեր հարսին քոյրերը եւ ուրիշ ազգականուհիներ միասին կը պառկին տան սենեակներէն մէկուն մէջ:

Հարսնիքին երկուշաբթի օրը, նորապսակ կնոջ տունէն խոշոր սնտուկով մը կուգայ հարսին օժիտը, շատ պատուական տեսակէն հալաւներ եւ զարդեղէններ: Զէհէզի սնտուկի բացման՝ դրացիները ներկայ կ'ըլլան:


Նոյն իրիկուն ի պատիւ փեսին խնջոյք կը տրուի աներոջ տունը: Հին օրերուն՝ այդ կոչունքին փեսան միայն կ'երթար իր ընկերներով, բայց 1908էն ասդին շատ բան փոխուած էր եւ կիներն ալ կ'ընկերանար իր ամուսնոյն: Հարսին ազգականները կը բոլորուին մեծ սեղանի մը շուրջ, որուն վրայ կար երչիկ, ապուխտ, կարմրած հաւ եւ նոխուլներ: Փեսան ծերերուն ձեռքը կը համբուրէ, ինչպէս նաեւ զոքանչներուն, որոնց տեսակը կայ...: Երբեմն քենիներուն հետ դէմ առ դէմ եւս կը պարէ: Նորապսակ տղան ափսէն մինչեւ լոյս ձեռքէն չի թողուր եւ զոքանչէն ու քենիներէն կ'ընդունի նուէրներ, ինչպէս մատանի, ժամացոյց, մետալիոն, ծխատուփ, մետաքսէ թաշկինակ եւայլն: Այդ միջոցին բաժակներ կը պարպեն, մաղթանքներ կ'ընեն հարս ու փեսին կենաց եւ կ'ըսեն. — « Փեսա՛յ, վաճառդ շահիս »: Վերջապէս, արշալոյսին կ'երթան տուն եւ այս ձեւակերպութիւններով լրացած կ'ըլլայ հարսանիքը:

Ըստ հնամեայ աւանդութեան, մարդ կեանքին մէջ գոնէ երեք օր թագաւոր ըլլալու է: Եւ այդպէս է որ չորեքշաբթի դիշեր հարս ու փեսայ կը մտնեն « առադաստ »: Նարօտն ու թագը Տէրտէր մը կուգայ թոնիրին վրայ կը հանէ եւ կ'երթայ: Փեսան իր սենեակը կը քաշուի: Անոր մեծ քոյրը կ'առնէ հարսը ու կը տանի իրեն յատուկ սենեակը: Փեսան անպատճառ նուէր մը տալու է իր քրոջ, « առադաստ »ի սենեակը մուտք գործելու համար: Այսպէս էր օրէնքը Շ. Շարահիսարի մէջ:

Ընդհանրապէս աշնան տեղի կ'ունենան պսակադրութիւնները :
Հարսը, — եթէ լուրջ բան մը չպատահի, — Ծաղկազարդէն առաջ
չերթար մօրը քով : Ուրեմն, «Ջարդարդար»ի կիրակի առտուն,
ինչպէս կ'ըսեն մեր երկրի մամիկները, մօրը տունէն մէկը կը դրկեն,
կ'երթայ կը բերէ աղջիկը : 15 օր ծնողքին մօտ մնալէ վերջ, նոր
կիրակիին նուազագոյն 200 գոյնզգոյն հաւկիթներով նորապսակ
հարսը կը վերադառնայ իր ամուսնոյն քով :

0

ՆԱՀԱՆՔԻՆ ԱՇՈՒՂՆԵՐԸ



Հայ աշուղները շատ ու շատ են, բայց ընդհանրապէս թուրքերէն
դրած են, բացի Քուչակէն, Սայաթ-Նովայէն, Միճագէն, Զիւանիէն
և Կովկասցի կարգ մը տաղերգուներէն: Թուրքերէն դրած են,
զոր օրինակ, աշուղներ Նամի, Սերվերի, Էկեա՛հ, Սաֆի, Պէ՛հրի,
Արիստակէս, Պիտարի, Մի՛հրի, Փեսենթի (դերասան Գմբեթեանի
հայրը), Չմշկածագցի Ղուկաս, Երզնկացի Լիսանի, Սէկեա՛հի և
Փերիչան, որ նոյն ատեն երգիծարան էր: Այս տաղասացներու
հիանալի դործերը, դարձեալ կը կրկնեմ, տաճկերէն ըլլալուն համար
շատը մոռցուած և թուրքերը իւրացուցած են: Միայն թէ՛ միաքս
մնացած է նշանաւոր Սաֆիէն Սեմահի մը, որ հայրս կ'երգէր.

Նէ գանէթտին, կէօգիւմին նուրը,

Աշրքիւբ տեվրիշանլիբ տըր.

Էր օլտա նեվսինէ սապր էթ,

Գանահաթ փէհլիվանլիբ տըր:

Ճիհանըն իշի, պիր միւլփի

Տեվլէթի հանլիբ տըր,

Օնըն միւլփիւնտէ պայգուշլար էօթեր

Ախրըր վերանլիբ տըր:

Զըրայի շէմայի սէօնտիւրմէ,

Ճէհտէթ էօլ գարանլիբ տըր.

Տուրաղը մենգիլի փիֆր էթ-մեմէֆ,

Փէֆ դաֆիրանլիբ տըր:

Էլինտէ վարիֆէն ֆրսանթ

Սաֆըն փէֆթ էլլեմէ, հէ՛յ ճան,

Թետարիֆ կէօր պէհէլ խափլէթ

Վելիի կէօշ էթ-մէտէն ֆէվրա՛ն:

Պու տիւնեայ ֆեաֆիրէ նեննէթ

Օլուպ տուր.

Միւմիւնէ գընտան հավայի

Նեվսինէ ույմա,

Օլուրսըն ախրպէթ փիւշման:

Զըրայի շէմայի սէօնտիւրմէ, եւայլն:

Սեմախիին վերջին տունը, որ շատ կը յիշեցնէր Սայաթ-Նովայի տաղերուն կշռոյթը, հետեւեալն էր.

Սաֆիա նամըն նիշանըն
Գալմայա պիր կիւն :
Սենին պիւլպիւ կիպի սէօյլէյէն լիսան
Գալմայա պիր կիւն .
Երիշիննէս էնէլ պապը նանըն չըգար
Գալմայա պիր կիւն :

Սաֆին կարծեմ Պարսկահայ էր : Օր մը, Սէկեահիի պատմածին համաձայն, աշուղը կը լսէ որ իր արուեստակիցներէն էկեահին կը գտնուի կեսարիոյ կողմերը : Տարիքն առած՝ աշուղը իրօք խանութժը բացած, կը զբաղէր ծխախոտի եւ թենպէքիի առեւտուրով :

Դէպի կեսարիա ճամբայ կ'ելլէ Սաֆին, կը մտնէ խանութէն ներս պարզ հագուստով եւ կ'ըսէ ծերունի աշուղին .

— Պանա էլի տիրէմ քենպէքի վեր, սա՛ֆի կէօպէք օլսուն :

էկեահին « փէք էյի » կը մըմնջէ քթին տակէն : Միւս կողմէ, սակայն, ապրանքը կշռած ժամանակ կասկածը փորը կը մտնէ եւ կը մտածէ . — « Զարմանալի է . այս մարդը ինչո՞ւ սաֆի բառը այդչափ երկարեց : Զըլլայ թէ Սաֆին ինքը եղած ըլլայ . . . » :

Մէկէն կշիռքը ձեռքէն վար կը ձգէ, կը դառնայ դէպի Սաֆին ու կ'ըսէ . — « Ես աշուղ էկեահին եմ » :

Երկու տաղասացները յուզիչ սրտազեղումով մը իրարու կը փաթթուին եւ միաբերան կը բացազանչեն .

— Մեր միջեւ մրցում չկայ :

Պետրոս Եպիսկ. Կիւլպէնկեանի սպանութեան վրայ խօսած ատենս, յիշատակած եմ արդէն Արիստակէս Տուրիկեանը, կեղծ անունով « Սերսերի », որ Սուլթան Մահմուտի աշուղը եղած էր : Կ'արժէ որ պատմեմ իր մուտքը թրքական արքունիքէն ներս :

Օր մը Մարփուճճըլարի զառիվարէն իջած միջոցին, Սուլթանը սրճարանի մը անկիւնը կը նշմարէ խումբ մը մարդիկ, որոնք տկանջ կուտային աշուղի մը նուագին : Թագաւորը ինքն ալ կը մօտենայ, մտիկ կ'ընէ պահ մը եւ կը հմայուի հայ տաղասացին ջութակէն : Բայց, եկու տես որ, հակառակ իր տերվիշի ծպտումին, քանի մը հոգիի ուշադրութիւնը կը գրաւեն իր խոշոր աչքերը եւ փսփսուք մը ծայր կուտայ սրահին մէջ : Սուլթանը զգալով որ ճանչցուած է, կամաց մը Արիստակէսին նստած փսիաթին տակ 12 կարմիր ոսկի կը սահեցնէ եւ դուրս կ'ելլէ սրճարանէն : Յետոյ, մարդ կը զրկէ եւ պալատ բերել կուտայ հայ աշուղը :

Նշանաւոր աշուղ մը եղած է Արիստակէսը. շատ մը տաղերու կարգին յօրինած է նաեւ տէսթան մը: Անոնցմէ բաւական մը գրի առած էի, բայց կորսնցուցի 1920ի նահանջի ժամանակ: Շրջանի դէպքերուն վրայ կը խօսի երկարապատում տաղերգութիւնը, որմէ հատուկօրէն մասնիկներ միտքս մնացած են.—

Ալըշար քուքուշար, եանտը քիլիսէ,
Պունու կէօ՞րմէտի մի, հագիրէքի Իսա.
Պէմ պէլլիսիգ օլտու,
Եէրինի իւպատէք:

Նոյնպէս հետեւեալ պարբերութիւնը մտքէս չէ ելած.— Այնուհու պենգեր իտի, էմսալը քերքիս: Ճիշդ կը նմանէր Լուսաւորչին, ըսել կ'ուզէ Պետրոս Եպիսկ.ի համար:

Աշուղ Արիստակէս քառեակներէն մէկուն մէջ կ'ըսէ.— Ռուս գրաւ Նիքոլա Փավլովիչտէն վար իտի պիր նիշանը:

« Տեսթան » ին վերջին տունը սապէս էր.—

Սերսերի չօֆ իտի, տիյէնէֆ քելամ,
Հասըլը հագգ իքրա էքմէտի էննամ.
Սենէ պին իֆի եիւգ ալթմըշ տէօրթ պէյան:

Այս 1264ը արարական տարին է, մեր թուականով կը համապատասխանէ 1847ին:

Սուլթան Մահմուտի քով եղած ատեն, « Սերսերի » ն հագիւ կը պրծի թագաւորին ձեռքէն իր ճարպիկութեամբ: Պատճառն իր մէկ « Ղոշման » էր, որ սա բովանդակութիւնը ունէր.

Ֆիտնէյի գէմանըն տէվրի տէօնէլի,
Արապի քիհանտա նեգէ՞թ մի գալտը.
Պիգտէ շու տիւնեայա կելտիֆ կելիլի,
Չեֆմէտիյիմիգ տէրտի մէհնէ՞թ մի գալտը:

Որոշ է թէ թուրքիոյ Սալիֆայութիւնը արարականին շարունակութիւնն էր, ուստի « Արապի ճիհան » կամ « ճիհանտան » ըսելով կը հասկցուէր թուրքիան, քանի որ այդ շրջանին ամբողջ արարական թերակղզին կը դանուէր Սուլթանին մականին տակ:

Անգամ մը, երբ պետական աւագանիին առաջ կը նուագէր, Սուլթան Մահմուտ ըսած է.— Սերսերին քաղաք քաղաք մարդը կը մեռցնէ, իսկ վեր քաղաք ժամանակ մեռելը կ'ողջնցնէ:

Երբոր Սուլթան Մահմուտ կը մեռնի, աշուղը կուգայ հայրենիք, շատ հարստացած: Շ. Գարահիսարի նշանուէրներուն եւ հարսնիք

ներուն փնտռուած նուագածուն եղած է: Զուարճութիւններուն ժամանակ ջութակ կը զարնէր, բայց երբեք չէր հանդուրժեր որ ձայն ծպտուն հանեն նուագած պահուն: Առանց այլեւայլի գործիքը կը դնէր տուփը եւ կ'ըսէր անկարգներուն երեսն ի վար. — « Անամօթնե՛ր, դուք ջութակին ինչ ըլլալը չէք գիտեր »:

Սոխակը ջութակին վրայ թառած է կ'ըսէին: ԾԱ ամեայ ծերունի մը 1894ին ինծի պատմեց հետեւեալ դէպքը, որուն ականատես եղած էր ինք: Օր մը շատ կը խնդրեն աշուղէն որ « Սոխակին Երգը » նուագէ: Վերջապէս մարդը կը խոստանայ, պայմանաւ որ երթան հոն, որուն այդին շատ վարդ կայ: Գարահիսարի մեծերը որպէս յարմարագոյն վայր Սուշենց այգին ցոյց կուտան: Աշուղը համաձայն կ'ըլլայ: Մայիսեան առաւօտ մը, աղօթարանը հազիւ բացուած, որոշեալ տեղը կ'երթայ եւ կը պատուիրէ մեծամեծներուն որ 25 քայլ հեռուն նստին: Յետոյ կը սկսի նուագել այնպիսի գրաւիչ եւ հոգեխոով եղանակ մը, որ ներկաները կը սկսին տղու մը պէս լալ: Այս նուագածութեան ժամանակ, շատ մը սոխակներ կը դայլայլեն վարդի թուփերուն մէջ. անոնցմէ մէկը կը թառի ջութակին յառաջամասին վրայ...: Աշուղն ալ յուզումէն ինքզինքը կը կորսնցնէ, դետին կ'իյնայ զգայազիրիկ: Կը վազեն, կը դրկեն զինքը եւ հազիւ խելքը գլուխը կը բերեն: Աչքերը բանալէ վերջ, շուրջիներուն կ'ըսէ. — « Այս եղանակը նուագել մի տաք ինծի. ես շատ գէշ կ'ըլլամ եւ նոյնիսկ կը մեռնիմ »:

Աշուղ « Սերսերի »ն կարծեմ իր մահկանացուն կնքած է 1858—1861ի շրջանին: Երեք աղջիկ դաւակ ձգած է. փոքրը առած էր Մանուէլեանց ընտանիքէն մէկը, որուն աղջիկը (քոյր Քաղաքական Ժողովի անդամ Սեդրակ աղային) պիտի դառնար կինը աշուղ Սէկեասին: Միջնեկը՝ Երեմիա Մարկոսեանին, իսկ մեծն ալ հարս գացած էր Անտոնեան ընտանիքին: Մեծահարուստ մարդ մը եղած է անոր տղան « Քոթոթին Անտոնը »: Փոքրիկ աղջիկն ալ ունեցած է Երեմիան, այլ անուամբ « Էրմիկ »: Շատ կը սիրէր կոնծել, բայց ինքն ալ մեծ հօրը պէս նուագածու էր: Ժառանգականօրէն իր որդին նոյնպէս ջութակ կը զարնէր եւ Գարահիսարցիներու կողմէ կը յորջորջուէր « Էրմիկին Գալուստը »:

*
**

Շ. Գարահիսարէն երեք քիլոմետր անդին, Ծիպերք գիւղին մէջ իմ օրով կ'ապրէր Գարբիէլ Էվրենեանը, աշուղական անունով Սէկեասի: Նշանաւոր ջութակահար էր եւ նոյն ատեն սազ եւ ուտ կ'ածէր: Սէկեասին շատ հարուստ էր. ամէն օր իր գործիքներով կուգար Պապէի գետնայարկի սրճարանը եւ ապսպրանքներ կ'ընդունէր նուագարաններու շինութեան համար, որովհետեւ ինք վարպետ էր ամէն տեսակ գործիքներ յօրինելու արհեստին մէջ:

Այս աշուղը շատ կը սիրէր թղթախաղը, բայց նախամեծար կը համարէր որ իր մրցակիցը լաւ խաղացող մը ըլլար: Մենք ալ քանի մը երիտասարդներս, խօսք մէկ ըրած՝ կ'երթայինք վերը յիշուած սրճարանը եւ ասպարէզ կը կարդայինք աշուղին.

— Հաճի՛ աղա, թուղթ խաղալը սորվեցա՞ք:

— Սա՛ « աճեմի »ներուն նայեցէք, կը դոչէր բարկացած, ինծի խաղ սորվեցնելու ելած են: Եկէք որ ձեր դասը տամ:

Սէկեահին գիտէր լաւ խաղացողը զատել մեր մէջէն: Մենք յայտնի չէինք ըներ, դիտմամբ կը տարուէինք, որպէս զի մարդուն ուրախութիւնը տեսնելով զուարճանայինք: Կոկոզավիզ, մէկէն աշուղը կը դառնար սրճարանատէրին եւ կը յոխորտար.

— Ղա՛հվէճի, աւելը բեր ու սա աճէմիները աւլէ տար: Կէօյէ ինծի հետ չափուելու ելեր են...

Այն ժամանակ մէջերնէս մէկը ոտքի կ'ելլէր, պատէն կախուած ուտը կամ Պաղլաման կ'առնէր սեղանին վրայ կը դնէր ու կ'աղաչէր.

— Հաճի՛ աղա, մ'ըներ, մ'ըլլար, մեզի ասչափ վար զարկիր, դոնէ լաւ կտոր մը նուազէ, մենք ալ նուազին ազդեցութեան տակ թուղթ խաղալը սորվինք:

Յանկարծ կը սթափէր եւ կը պոռար մեր երեսն ի վար.

— Ծօ՛, լակոտնե՛ր, չենէ մի դիտմամբ տարուեցաք:

— Չէ՛, հաճի՛ աղա, չէ՛...

Վերջապէս սիրտը չէր տաներ, կ'առնէր պաղլաման եւ կը սկսէր նուազել: Այն ժամանակ որ ճպոտը կը շարժէր, ամբողջ սրճարանը կը լեցուէր եւ ինքն ալ դոհ կը մնար:

ՈւրՓայի մէկ եղանակը կար, զոր Ծիպերքցի Դաւիթը ու Տիտոնին Անդրանիկը շատ լաւ կ'երգէին: Անոնց կանչել կուտար: Այդ կտորը եթէ պաղլամայի վրայ լաւ նուազող մը ըլլայ, ամէնէն քար սիրտն անգամ կը յուզէ եւ արցունք կը բերէ աչքերէն.—

Ես դարիպ եմ, ո՞ւր երթամ,

Ճամբայ չիտեմ, ո՞ւր երթամ.

Ես տուն չունիմ, տուն երթամ,

Ես եար չունիմ, քովն երթամ:

Սէկեահին պատկառելի մարդ էր, ջերմ եկեղեցասէր եւ աւքովի մօտ չէր: Զաւակ չունէր: Կառավարական պաշտօնեաները կը յարգէին զինքը, շատ մը տղամարդիկ իր շնորհիւ բանտէն ազատած են: Իր համբաւը այնչափ տարածուած էր, որ զանազան գաւառներէն աշուղներ կուգային, կը չափուէին իրեն հետ, բայց պարտուած ետ կը դառնային գլխիկոր:

Թուրք մեծ բանաստեղծ Մէհմէտ Էմին պէյը երկար ատեն գտնուած է Գարահիսար: Իր կիներ մեր երկրացի էր, Սուլթան Հա-

Վիտի արքունիքին Պալթաճի Պաշրին աղջիկը, որ դարաչըջանի սկիզբի տարիներուն աքսոր զրկուած էր իր էրկան հետ: Մէհմէտ էմին պէյ, ուրեմն, քաղաքէն երկու քիլոմետր վար Պալթաճիենց տունը կը բնակէր, որ շրջապատուած էր զեղատեսիլ պարտէզներով: Շարաթը քանի մը անգամ Հայոց առաջնորդարանը կը հանդիպէր, բայց աւելի շատ կ'երթար Սէկեահիին մօտ: Միշտ նուագել կուտար անոր, նոյն ատեն կը նոթագրէր իր եւ Գարահիսարի միւս աշուղներուն բանահիւսութիւնները: Շատ բան գրի առած է այսպէս:

Մէհմէտ էմին պէյ մասնաւորաբար կը հետաքրքրուէր աշուղ « Սերսերի » ի գործերով: Ինչպէս ըսի ասկէ առաջ, Սէկեահին կարգուած էր այս վերջնոյն թոռնուհիներէն մէկուն հետ եւ նշանաւոր աշուղին գործերը իր մօտ կը մնային: Օր մը, սրճարանին մէջ, իմ ներկայութեան էմին պէյ գրի առաւ լուսահոգի տաղասացին լաւագոյն քառեակներէն հատուածներ: Թուրք բանաստեղծը չկրցաւ զսպել ինքզինքը եւ հիացած բացազանչեց.

— Առաջին անգամն է, որ ես մեր գրականութեան մէջ, գուտ թուրքերէն, այսպէս սքանչելի քառեակներ կը լսեմ:

Աշուղ « Սերսերի » իր իսկ կեանքին վրայ յօրինած էր այդ քառեակները: Ես ալ ամբողջը գրի առած էի, բայց 1920ի նահանջին ուրիշ շատ մը զիրքերու հետ ձգեցի Սարը-Գամիշի Վերիշան գիւղը: Բարեբախտաբար տակաւին միտքս մնացած են այդ գոհարները, միայն երկու պարբերութիւններ յիշողութենէս կը վրիպին. —

Պենտէ պիլիբիտիմ տահա միւհթեթիմիգ վար,
Լաֆին դահպէ Ֆեյէկ թէգ ալտը կիթտի.
Ֆեյէկ պենտէն նէ ալտը կիթտի,
Եալընըգ իւշ տէօրթ արշըն պէյագտը կիթտի:

Շու պենիմ տէլի կէօյնըմ ֆարըմագ տէրտիմ,
Կէօր նիւնէ ֆարըտը օսանտը կիթտի.
Ալըշտըմ, թուրքուշտըմ եանտըմ պիր գէման,
Օտա պիր սէվտայա նար ըտը կիթտի:

Չըդրըշտը պիւլպիւլեր կելմէտի պաղպան,
Խոյրադ տոսթ պաղընտան կիւլ ալտը կիթտի.
Եիւզ պին մէօհնէթիլէ, պիր պաղ պէսլետիմ,
Պաշը պէն պէսլետիմ, սել ալտը կիթտի:

Սաֆը սէնմիսին, մուրատ ալմայան, սէֆիլ Սերսերի,
Նեչէ աշկու ալար, ֆարըտը կիթտի.
Պէն էօլտիւֆտէն սոնրա, տեսիլներ ֆի
Սերսերի վար իտի, կիթտի:

Սէկեաճին ի հարկէ մեծ աշուղէն շատ տպաւորուած էր, բայց ինքն ալ յղացած էր գեղեցիկ բանաստեղծութիւններ: Ամբողջ 15 տարի բացակայած էր տունէն. Պաղտատէն Իզմիր ճամբայ կտրած՝ երեք անգամ ալ երուսաղէմ ուխտի գացած եւ մահետսի եղած էր: Եւ օր մը, երբ Տերվիշի հագուստով եկած իր տան առջեւ, ջուր մը ուզած է, մայրը չէ ճանչցած զինքը: Բայց, քոյրը հասկցած ու խելայեղ աղաղակած է. — « Մայրի՛կ, ասիկա եղբայրս է... »:

Սէկեաճին լալով մօրը փաթթուած է, ճիշդ այնպէս ինչպէս Աշուղ Ղարիպ իր սիրելի մայրիկին:

Անգամ մը հետը կատակ ըրին, մոռլթը կախեց եւ մէկէն աղաղակեց.

— Ա՛յ, անմի՛տ լակոտներ, դուք գիտէ՞ք ով ըլլալս. ես 12 ժամ արջուն ջութակ նուագած եմ...

Ամէնքս վրան ինկանք. — Ամա՛ն, հաճի՛ աղա, ի՞նչ կ'ըլլայ, մեզի պատմէ:

Սէկեաճին մէկէն կակուղցաւ, շուզեց մեր սիրտը կոտրել եւ մեզի պատմեց հետեւեալը. —

« Ասկէ տարիներ առաջ, ես Մեֆտիւնի անուն մեծ աշուղի մը քով աշակերտ էի: Սուրբի պէս մարդ էր, բայց քիչ մը խեռ բնաւորութեամբ, այնպէս որ եթէ մէկուն նեղանար քաղաքի մը մէջ, իսկոյն կը ձգէր կը հեռանար: Նոյեմբեր ամսոյն մէջն էինք, քանի մը աշուղներ կը նուագէինք Գասթեմունի մէկ սրճարանին մէջ: Վարպետս կռիւ ըրաւ սրճարանատէրին հետ ու սրտնեղած ինծի ըսաւ. — « Ելի՛ր երթանք անմիջապէս. էտէպսիզ մարդ է, եթէ բան մը ըսես, քեզ ալ կը վռնտէ »:

« Մախաղները կոնակնիս զարկինք, ջութակնիս ալ ձեռքերնիս բռնած՝ շուտով ճամբայ ինկանք: Կէսօրը շատոնց անցած, ժամը երեքն էր: Չէի գիտեր ուր երթալս, բայց համարձակութիւն ալ չունէի բան մը հարցնելու վարպետիս. բնաւորութիւնը շատ աղէկ գիտէի, կը բարկանար: Ուստի, ան առջեւէն, ես ալ ետեւէն կը քալէի գլխիկոր: Քեպապճի մը խանութին մօտէն անցած ժամանակս, կրակի պէս ներս մտայ, կէս օխա ֆէպապ եւ չորս հատ ալ փխտէ գնեցի: Երբ իրեն մօտեցայ, երեք ժամ անընդհատ քալած էինք արդէն ու հասած անտառի մը եզերքը: Գետնին վրայ կը տարածուէր բարակ ձիւնի խաւ մը: Մէկէն կանգ առաւ, շուրջ բոլորը գիտեց ու ըսաւ ինծի.

« — Է՛հ, մենք այս գիշեր կ'երեւի թէ դուրսը պիտի մնանք: Գոնէ խոչոր ծառ մը գտնենք անտառին մէջ եւ անոր շուքին տակ անցընենք:

« Բաւական մը ման գալէ ետք, վերջապէս հսկայ ծառի մը վրայ ինկաւ մեր նայուածքը: Մօտեցանք կամաց մը եւ տեսանք որ

մարդու հասակի բարձրութեամբ ծակ մը կայ բունին մէջ: Լուցկի մը զարկի. բացուածքը այնքան լայն էր, որ չորս հողի կ'առնէր մէջը: Մոմ մը հանեցի, վառեցի ու մտանք խոռոչէն ներս: Գուրս քաշեցի քիւֆքէները եւ փիտէն մախաղէս. վարպետս տեսակ մը երջանիկ զարմացումով ընդունեց այդ համեղ ուտելիքները, որովհետեւ չէր նշմարած զանոնք դնելս: Շատ քաղցած էինք. սկսանք մեծ ախորժով ուտել, բայց հազիւ թէ քանի մը պատառ նետած էինք մեր բերանը, խոշոր արջ մը տնկուեցաւ բացուածքին առաջքը...

« Սոսկալի կենդանին ոտքերուն վրայ կանգնած՝ դուխը ներս մտցնել ուզեց, բայց չյաջողեցաւ: Այս անգամ թաթը կոխեց, վար ծռեցանք եւ արդելք եղանք: Գազանը կատղած՝ ասոր վրայ սկսաւ մեր վրայ հող ու քար նետել: Վարպետս ըսաւ ինձի.

« — Ծար չկայ, հոս պիտի մեռնինք: Միայն թէ՛ ես լսած եմ որ արջը սրինգը շատ կը սիրէ: Ուրեմն, փորձ մը ընենք. հանէ՛ ջուրթակդ եւ զապա մը սանկ սրինգի ձայնը կեղծէ:

« Մահուան վտանգը կախուած էր մեր դիտուն: Կամայ ահամայ ջուրթակս ձեռք առի: Նուազէն կախարդուած՝ վայրկեանաբար արջը նստաւ ու սկսաւ մտիկ ընել: Ժամ մը վերջ, երբ յոգնած ուզեցի դադար տալ, գազանը կրկին սկսաւ վրանիս հող ու քար թափել: Մէկ խօսքով, մինչեւ արշալոյս ստիպուեցայ նուազել, որպէս զի քաւոր արջուն քէյֆը տեղը բերեմ:

« Աղօթարանը հազիւ բացուած, կենդանին ձգեց գնաց, բայց մենք մեր վախէն չէինք համարձակեր ծառի խոռոչէն դուրս ելլել: Այն ժամանակ աղօթք մը ըրի եւ ըսի. — « Ո՛վ Աստուած, դուն ինձի ազատէ սա խենդին ձեռքէն... »

« Մէկ ալ նայիս, մարդու խօսակցութիւն մը լսեցի. կ'երեւի չէնք շնորք լուսցած էր: Զայն տուի, օգնութիւն խնդրեցի. ասոր վրայ երեք հողի եկան ու մենք ալ սիրտ առած դուրս եկանք քաւորանէն: Առաջին մեր հանդիսած գիւղաքաղաքը կանգ առինք. ամբողջ օրը աշխատեցանք ինքզինքնիս վերագտնել օթեւանի մը խաղաղութեան մէջ: Յաջորդ առտուն ես կանուխ մը ելայ, պատրաստուեցայ ու ըսի աշուղ Մեֆտիւնի. — « Վարպե՛տ, մնա՛ք բարով, ես այլեւս չեմ կարող մնալ ձեր քովը »:

« Շատ խռովեցաւ, յուզումէն նոյնիսկ սկսաւ լալ ու ինձմէ խնդրեց որ զինքը չլքեմ. — Զեմ կրնար, յամառեցայ ես դեռ մղձաւանջին ազդեցութեան տակ, դուք օր մը զիս գազաններուն կեր պիտի դարձնէք:

« — Գիտե՛մ, ես ալ իմ թեթեւութիւններս ունիմ... Ի՞նչ ընեմ, ձեռքս չէ:

« Աշուղ Մեֆտիւնի օրհնեց զիս եւ ապա աւելցուց.

« — Ես շատ մը աշակերտներ ունեցայ, մինակ դուն լաւ դուրս
եկար: Գնա՛, սիրելի՛ս, բայց զիս մի՛ մոռնար: »

*
**

Օր մը Սէկեաճին Եւզոկիա կ'երթայ, 7-8 աշուղներու հետ, հոն
կը նուագեն սրճարանի մը մէջ: Նոյն օրը տեղացի մը իր տղան կը
կորսնցնէ, ասդին անդին կը փնտռէ ու չի գտներ: Ճարահատ
կուգայ վերը յիշուած սրճարանը եւ կ'աղաչէ աշուղներուն որ իր
սլզտիկ մանչուն ո'ւր ըլլալը ըսեն:

Սէկեաճին թուրք արուեստակիցներէն մէկը ուզելով խաղ մը
խաղալ երեւելի աշուղին, մարդուն կը հասկցնէ թէ այդ հայ
քեմէնչէճին կրնայ մէջտեղ հանել կորուսեալ տղան: Խեղճը կը
հաւատայ եւ ոտքը կ'իյնայ Սէկեաճին, ան ալ ստիպուած կ'ըլլայ
« Իրիկունը հոս ինծի հանդիպէ » ըսել եւ ճամբու դնել դժբախտ
հայրը:

Մտմտուքը ծայր կուտայ հայ աշուղին դանկին տակ.— « Ծօ՛,
աս ի՞նչ ապուր կերար, ի՞նչ պատասխան պիտի տաս մարդուն »,
կ'ըսէ իւրովի:

Իրիկունը դէմ թուրքը կուգայ սրճարան, որպէս զի պատասխան
ստանայ, իսկ անդին զուարճասէր աշուղը գաղտնի կը ծիծաղի:
Ամբողջ օրը խորհելէ վերջ, լոյս մը կը ծագի Սէկեաճին մէջ.—
« Ես կը տեսնեմ տղադ ջուրին մէջ », կը մըթմըթայ քթին տակէն:

Եւ իրօք մարդուն պարտէզին դուփը բաց ձգած են եղեր, ման-
չուկը խաղացած ժամանակ մէջն ինկած եւ վրայէն կափարիչը
ըոցած էին անդիտութեամբ: Աւագանին ջուրը կը պարպեն, երախան
կը գտնեն վերջապէս: Ասոր վրայ Եւզոկիոյ թուրքերը կը վազեն
պագընիին մօտ, որ իրենց բախտը նայի, բայց Սէկեաճին ուշ
դիշերին կծիկը կը դնէ քաղաքէն...

*
**

Սէկեաճին օր մը մեզի ուրիշ բան մըն ալ պատմեց.— « Անգամ
մը, 12 աշուղ եւ աշակերտ հաւաքուած կը նուագէինք Գոնիայի
կողմերը, մեծ սրճարանի մը մէջ: Իրիկունը երբ գացինք հանգստա-
նալու մօտակայքը վարձուած փոքր տան մը մէջ, մեր ընկերներէն
Հաճի Պապա մեզմէ խնդրեց որ սաղ ածենք իրեն համար:

« — Ես այս գիշեր պիտի մեռնիմ, ըսաւ մեզի յուզիչ շեշտով
մը, գոնէ մէկ ժամի չափ քանի մը կտոր մելամաղձոտ եղանակներ
նուագեցէք, որ ես ձեզի մնաք բարով ըսեմ եւ ապա աչքերս խա-
ղաղօրէն փակեմ:

« Մենք բոլորս ալ ծիծաղեցանք թուրք աշուղին վրայ, « Հաճի
Պապան կ'երեւի խենդեցեր է » ըսելով: Խեղճ մարդը երգում պատառ
եղաւ, բայց ինչ որ ըսաւ ականջ չկախեցինք:

« — Քանի որ չէք հաւատար, ես ահա իմ կտակս կ'ընեմ: Յուդարկաւորութեանս ծախքերէն դուրս, ինչ որ ունիմ կը բաժնէք աղքատներուն: Գիտցէ՛ք որ մարմինս գերեզման դրուած ժամանակ, նուազ պիտի ածէք:

« Մենք կատակի տարինք իր ըսածները, ուսերնիս թօթուցինք եւ նորէն խնդացինք:

« — Դուք կը ծիծաղիք, բայց ես դարձեալ ձեզի կ'ըսեմ որ իմ կտակս այս է, վրայ բերաւ ձերունի աշուղը կոտրած սրտով մը: Ինծի անպայման նուազով պիտի թաղէք. իսկ եթէ չկատարէք իմ կտակս, թող Աստուծոյ անէծքը ձեր վրայ ըլլայ: Աւել-պակասը հէլալ ըրէք:

« Վաստակաւոր աշուղը մեզմէ հրաժեշտ առաւ ու դնաց պառկելու իր սենեակը: Յաջորդ առտուն, մենք աշակերտներս կանուխ մը անկողնէն ելլելով, նախաճաշի պատրաստութիւն տեսանք եւ գացինք աշուղին մօտ: Չայն տուինք որ ելլէ եւ թէյը խմէ: Պատասխան տուող չկայ: Յամառեցանք, կրկին ու կրկին ձայն տուինք, բայց միեւնոյն քար լուսթիւնը: Վերջապէս, վերմակը քաշեցինք եւ ի՛նչ տեսնենք. — Հաճի Պապան իրօք մեռա՛ծ էր...

« Բոլորս սկսանք արցունք թափել: Ա՛խ, ի՞նչու խեղճ մարդուն խօսքին չէինք հաւատացած... կը զղջայինք չարաչար: Կառավարութիւնը արգիլած էր նուազածութիւնը գերեզմանատան մէջ: Այսուհանդերձ, յաջողեցանք հազար դժուարութեամբ արտօնութիւն ձեռք բերել եւ լուսահոգին նուազի ընկերակցութեամբ առօք փառօք տարինք մինչեւ իր վերջին հանգստարանը: »

Չէքեաթային կեանք մը ապրած այդ մողական դէմքը, որ աշուղ Սէկեահին էր եղած, ի՛նքն ալ դիւցազնամարտի վերջին ահաւոր օրերուն կը գտնուէր բերդին մէջ: Ըստ Միպերքցի Նազարի մօրը, — որ ներկայ դտնուած էր եւ պատմեց մեզի, — մեռնելէ առաջ տարաբախտ աշուղն իր ամբողջ հարստութիւնը, մօտաւորապէս 2000-3000 կարմիր ոսկի, ժայռերու բարձունքէն կը թափէ անմերձենալի խորխորատներուն մէջ, որպէս զի թուրքերուն ձեռքը չանցնի:

ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ԲԺԻՇԿՆԵՐԸ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ԴԵՂԵՐ ՈՒ ԴԱՐՄԱՆՆԵՐ

ԺԹ. դարու կիսուն, Շ. Գարահիսար երեւելի հայ բժիշկ մը ունեցած է, — Մանասելեանց գերդաստանէն Հէֆիմ Պապը: Մեր մեծերու սլաւամածին համաձայն, անիկա ամուսնացած եւ երկու զաւակներու տէր է եղեր, բայց երբ կինը կը մեռնի, որբեւայրի քենին տուն կը բերէ եւ հետը միասին կ'ապրի: Բամբասանքը ծայր կուտայ քաղաքին մէջ. մեր երկրացիները բացէ ի բաց կ'ըսեն որ այդ կենակցութիւնը ապօրինի է: Բժիշկը երբեք չի ծածկեր, ականջ չի տար եղած չարախօսութիւններուն եւ մեծաձայն կը յայտարարէ. — « Զջմարիտ է, ես ատ բանն ըրած եմ զաւակներուս սիրոյն համար: Գիտցա՛ծ եղէք, եթէ շատ խօսելու որ ըլլաք, կը թողում կը հեռանամ քաղաքէն »:

Հէքիմ Պապը (Վարդապետեան) շատ փնտռուած բժիշկ մը եղած է, ամէն կողմ ձեռքի վրայ կը պտտցնէին այդ շրջանին, հետեւաբար տեղացիք գլուխ կը ծռեն եւ ա՛լ ձայն ծպտուն չեն հաներ:

Օր մը բժիշկը հիւանդտեսի կը տանին շրջակայ գիւղ մը, Պէկի մը տունը, որուն կինը երեք տարեկան մանչը կը բերէ քննութեան:

Հէքիմ Պապ կը տեսնէ որ տղուն ականջը ամբողջովին լեցուած է որդերով. վիճակը ծանր է, հազիւ երկու օրուան կեանք ունի: Մէկէն լոյս մը կը ծագի մտքին մէջ. իսկոյն կը պատուիրէ որ լեղի ծիրանի կուտ բերեն (այդ պտուղը շատ առատ էր գիւղին մէջ): Կաթի մաղ մըն ալ բերել կուտայ, կը լուայ տաք ջուրով: Մանդի մը մէջ լու մը ձեծելէ վերջ, կուտերուն վրայ եռացած ջուր կը հոսեցնէ, կը խառնէ եւ մաղէն կ'անցընէ, մինչեւ որ կաթի պէս ճերմակ հեղուկ մը կ'ըլլայ: Այն ժամանակ, տաքին դիմանալու սատիճան կը վազցնէ տղուն ականջին մէջ, մօտաւորապէս հերիւնի մը հաստութեամբ: Ո՛վ հրաշք, որդերը կը սկսին յանկարծ դուրս ելլել, ոչ մէկ բան կը մնայ այլեւս: Բնականաբար այս նեխանքը ազտոտութենէն յառաջ եկած էր: Բժիշկը հիւանդին ականջը կը սրբէ, մնացորդ սպեղանիէն մաս մը կը քսէ բամպակի մը եւ կը դնէ վրան: Այս դարմանը ամբողջ ութն օր կը փորձուի, իւրաքան-

չիւր անգամուն վերքը դաղջ ջուրով լուարով, մինչեւ որ կատարե-
լապէս կը բուժուի:

*
**

Մայիս ամսուն մէջ, Հէքիմ Պապ անգամ մը Գղըլ լեռ կ'երթայ, բժշկական ծաղիկներ եւ արմատներ ժողվելու դիտաւորութեամբ: Վերադարձի ճամբուն վրայ, գիշեր մը կ'իջեւանի գիւղ մը, ուր կեղծմաշկի հիւանդութիւն ծագած է եղեր: Մահ պատահած ըլլալուն, գիւղացիները սարսափահար կը դիմեն մեր բժիշկին, որ հետեւեալ պատուէրը կուտայ.

— Որչափ հիւանդ որ կայ, ամէնքին կոկորդը կապեցէք իր պէտքը պարունակող պինդ լաթով մը: Իսկ եթէ պէտք չունի, իրեն տարեկից ուրիշինը կարող էք օգտագործել:

Եւ այդպէս ալ կ'ընեն: Վեց ժամ չանցած, հիւանդ տղաքը կը բժշկուին ու ամբողջ գիւղը կը փրկուի մղձաւանջէն:

*
**

Հէքիմ Պապը սովորութիւն ունի եղեր քանի մը տարին անգամ մը երթալու Երուսաղէմ: Ուղեւորութիւնը միշտ ալ տեղի կ'ունենար ցամաքային ճամբով. շրջակայ գիւղերն ամբողջ մաս կը կաղմէին կարաւանին, որուն առաջնորդն էր ջորեպան Թութեանը: Նշանաւոր մարդ էր, Շ. Գարահիսարէն ժամ մը հեռու հայաբնակ Պուսէյիտ գիւղէն, ուրկէ կը մեկնէին առհասարակ կարաւանները:

Ճամբորդութիւնը կը տեւէր հարիւր օր, երթալ գալը միասին հաշուելով: Ընդհանրապէս Ծնունդի յաջորդ օրերուն ճամբայ կ'ելլէին, որպէս զի Ծաղկազարդի նախընթօրին հոն ըլլային: Մինչեւ Նոր Կիրակիին յաջորդ օրը կը մնային Երուսաղէմ, յետոյ կը վերադառնային երկիր:

Հէքիմ Պապն ուրեմն կ'երթայ Ս. Քաղաք կնոջը հետ, սովորականին պէս իր ուխտը կ'ընէ եւ կը պատրաստուի վերադարձի ճամբան բռնել: Այն ժամանակ մեր Գարահիսարի աղաները կ'այցելեն տեղւոյն Պատրիարքարանը, որպէս զի Գարպաստի նուէրը տան, Ս. Յակոբեանց վանքի բարդաւաճման համար:

Օրուան Պատրիարքը հիւանդ է եղեր: Լատինական վանքին բժշկապետը, — որ իր օգնականներուն հետ կը գտնուէր հայ եկեղեցականին մօտ, — բան չի կրնար ընել: Մէկ խօսքով, Պատրիարքին վիճակը ծանր էր եւ շուրջինները իրենց յոյսը կը կտրեն: Այս որ կը տեսնեն մեր աղաները, հարցուփորձ կ'ընեն ու կ'իմանան թէ իրենց բժիշկը մասնագէտ է այդ հիւանդութեան:

— Սրբազա'ն Հայր, կ'ըսեն Պատրիարքին խորին ակնածանքով,

մենք Հէքիմ Պապ մը ունինք, որ հիմակ հոս է. Ձեր ունեցած հիւանդութիւնը շատ լաւ կ'առողջացնէ:

Պատրիարքը կը հրամայէ որ բժիշկը իսկոյն իր մօտ բերեն: Բայց, եկու տես որ Հէքիմ Պապուն քմահաճոյքը կը բռնէ ու կ'ըսէ մեր աղաներուն.

— Բիչ մը համբերեցէք որ սա « տամաս » լրացնեմ, եթէ ոչ քայլ մը չեմ նետեր հոսկից:

Գարահիսարի աղաները ճարահատ կը սպասեն որ մեր բժիշկը իր խաղն աւարտէ: Վերջապէս Հէքիմ Պապը կ'առնեն կը տանին Պատրիարքարան: Հոն վարդապետ մը լուր կուտայ Լատիններուն որ « Հայաստանցի տոքթոր մը մեր Պատրիարքը բժշկելու պիտի գայ »:

Հէքիմ Պապը հիւանդին սենեակէն կը մտնէ ներս: Եւրոպացիք հեղնանքով կը նային այդ տղեղ, երկայնահասակ Տոքթորին, որ վերէն վար վերարկու մը հագած՝ դուրսն ալ խոշոր քիւլալս մը անցուցած էր...

Մեր բժիշկը երբ կը նշմարէ Լատինացոց քմծիծաղը, շատ կ'առնուի եւ կը պատուիրէ որ իրենց յանձնարարած դեղերը վերցնեն: Յետոյ կը դառնայ դէպի Պատրիարքը ու կ'ըսէ.

— Սրբազա'ն Հայր, ես Ձեզ առանց առողջացնելու հոսկից չեմ մեկնիր, միայն թէ 24 ժամ դեղ պիտի չառնէք: Ես վաղը կրկին կը հանդիպիմ:

Յաջորդ օր իրօք կ'երթայ Պատրիարքին մօտ, մասնաւոր դեղեր կուտայ անոր եւ այսպէս շարունակաբար երեք օր: Չորրորդ օրը Ս. Աթոռի գահակալն ինքզինքը լաւ կը զգայ, իսկ ճրդ օրը կը նստի անկողնին մէջ: Վերջապէս, տասներորդ օրը ոտքի է արդէն եւ կարող կ'ըլլայ իր պատիկ գործերը հոգալ:

Հէքիմ Պապ կը հանդիպի Պատրիարքին, վերջին պատուէրը տալու դիտաւորութեամբ եւ կը համբուրէ անոր աջը: Հայ եկեղեցականը կ'ուզէ մեծ նուէր մը տալ, բայց մեր բժիշկը կը մերժէ.

— Շնորհակալ եմ, ես դրամական պարդեւ չեմ ընդունիր. իմ ուզածս լոկ հոգեւոր շնորհ մըն է:

— Ի՞նչ է այդ հոգեւոր շնորհը, օ'րհնած, հարց կուտայ Պատրիարքը դարձացած:

— Սրբազա'ն Հայր, կինս իր կանխահաս մահով վտիտ ուսերուս վրայ թողուց երկու զաւակներու հոգը: Ես ալ այդ փոքրիկները լաւ մը խնամելու համար, ողբացեալ կնոջս որբեւայրի քոյրն առած նստած եմ անպսակ:

— Որդեա'կ իմ, թող ուզածդ այդ ըլլայ, դիւրին է կարգադրել:

Պատրիարքը կը հրամայէ քահանայի մը որ իսկոյն պսակը կատարէ: Ստուգիւ, այդ օրն իսկ տեղի կ'ունենայ հարսանեկան խորհուրդը, մեր երկրի աղաներէն մէկուն կնքահայրութեամբ:

Գալույ՛ Եւրոպացի բժիշկներուն, անշուշտ կը դարձանան Հէքիմ Պապին հրաշագործութիւնը տեսնելով եւ շատ կը խնդրեն որպէս զի այդ դեղին ի՛նչ ըլլալը բացատրէ:

— Հիմակ քովս մնացած է, պատասխան կուտայ երեւելի բժիշկը. մեր քաղաքն որ գալու ըլլաք, տեղւոյն վրայ ձեզի ցոյց կուտամ ի՛նչ ծաղիկի արմատ ըլլալը:

Հէքիմ Պապ իր հնարած դեղերուն վրայ մասնաւոր գիրք մը շինած էր, բոյսերուն, ծաղիկներուն ու արմատներուն անունները, թէ՛ հայերէն եւ թէ՛ թուրքերէն նշանակելով: Երբ հանճարեղ բժիշկը կը մեռնի 1799ին, այդ գործը կը մնայ զաւակներուն, որոնք դժբախտաբար երկար չեն ապրիր: Վերջապէս գիրքը կ'անցնի իր ազգականներուն ձեռքը, բայց ահաւոր հրդեհ մը պատճառ կ'ըլլայ որ իսպառ փճանայ այդ թանկարժէք աշխատութիւնը:

Բարեբախտաբար, Հէքիմ Պապի կիրարկած դեղերէն ու դարմաններէն մաս մը փոխանցուած է մեր մեծերուն: Հատ ու կտոր դեղեր մնացած էին ասոր անոր քով: Հայրս բնականաբար լսած էր իր ծնողքէն, ըսել կ'ուզեմ իմ պապէն, ու այդպէս փրկած է իր եղբօր որդիքը:

Արդարեւ օր մը տուն մտած ժամանակ, մայրս դողահար հայրիկիս ըսաւ, որ « իր եղբօր երկու զաւակները մեկնեցի՞ք թո՛ւնուած են »: Արոշ է թէ այս ուղեղատապը շատ վտանգաւոր տեսակէն հիւանդութիւն մըն է: Ես այն ատեն հազիւ եօթը տարեկան էի, բայց հօրս ետեւէն գացի հօրեղբօրս տունը:

Հիւանդ տղոց քեռայրը սառ դրած էր անոնց գլխին: Այս որ տեսաւ հայրս, մէկէն խլեց, մէկդի շարտեց սառի կտորուանքը ու քեռայրն ալ դուրս վռնտեց սենեակէն: Յետոյ, պատուիրեց որ ջուր տաքցնեն: Ինքն ալ վառեակի մը գլուխը կտրեց, փորը բացաւ, զայն փաթթեց լաթի մը մէջ եւ հիւանդին գլուխը կապեց: Անհրաժեշտ էր որ գլուխը կտրելը եւ փորը ձեղքելը մէկ ըլլար, որպէս զի սիրտը դողացած ժամանակ շինուէր փաթոյթը: Միեւնոյն գործողութիւնը կատարեց միւսին վրայ: Երկուքն ալ տաք ջուրը գրին իրենց ոտքերը:

Հէքիմ Պապի հնարած այս դարձանը յաջորդաբար ի գործ դրաւ հայրս: Երեք ժամ վերջ, կրկին երկու վառեակ մորթեց, փորը բացաւ ու կապեց հիւանդներուն գլուխը: Ձեռուցեալ սենեակին մէջ, տաք ջուրը փոխել տալով, քրտինքը ջուրի պէս անընդհատ վազեց տղոց մարմնէն: Պարտաւորուեցան երկու անգամ ձերմակեղէն փոխել:

Միրոս անշուշտ դողաց այս տեսարանին դիմաց, բայց շատ ու շատ ուրախացայ, երբ վեց ժամը չանցած՝ հիւանդ տղոց լեզուն բացուեցաւ: Մեծը ըսաւ. — « Հաճի աղան (*) եկեր է »:

(*) Հայրս երուսաղէմ ուխտի գացած ըլլալուն համար այդպէս կ'ըսէին:

Ճագարի պէս աչուրները բացած՝ պղտիկն ալ հարց տուաւ զարմանօք. — « Ո՞ւր է, ո՞ւր է, տեսնել կ'ուզեմ » :

**

Գարահիսար 80ական թուականներուն ունեցած է Տոքթ. Հեթումը, որ աւելի կարող էր վիրաբուժութեան մէջ: Այս մարդը, Սուլթան Ազիզի անձնական բժիշկներէն՝ Աւստրիացի Տոքթ. Քոնին հրամանին տակ ծառայած եւ անոր աղջկան հետ ալ կարգուած էր: Միւս երկու աղջիկներն ալ Հայերու տուած էր ան:

Նշանաւոր եղած է այդ օտար բժիշկը, շրջակայ գիւղերէն իրեն կուզային: 1877ի ռուս-թրքական պատերազմին՝ Սուլթանին կողմէ զրկուած կարին որպէս բժշկապետ, յետոյ Տոքթ. Հեթում թովմասեանի հետ հաստատուած Գարահիսար, հոն ալ կը մահանար: Մեր հայրենակիցները իր գերեզմանին վրայ ընկուզենիի ծառ մը տնկած էին առ ի երախտադիտութիւն:

Ժամանակ մըն ալ Գարահիսար գտնուած է Խարբերդցի Տոքթ. Հայկը, որ բաւական բժշկութենէ կը հասկնար, բայց երկար չկեցաւ հոն եւ ի վերջոյ Սամսոն գնաց:

1885ի շրջանին նոյնպէս Օրտուէն եկած է Տոքթ. Ստեփան Շիրինեանը, որ մեծ բան մը չէր արժեր որպէս բժիշկ:

Գալով Տոքթ. Փաշայեանի, քիչ շատ կարող կ'երեւնար ան, բայց միամիտ հարս մը գլխէ հանելով, դժբախտաբար պատճառ եղաւ անոր մահուան:

Մեր օրով քանի մը հայ բժիշկներ կային Գարահիսարի մէջ: Առաջինը Հէքիմ Պէյրոսն (Պետրոս) էր, որուն խելքը բանի մը չէր հասներ, բայց եկու տես որ ինքզինքը մեծ բժիշկի մը տեղ դրած էր: Այն ժամանակ շատ տարածուած էր կուրաղիի խցումը, որմէ բռնուողը երբեք չէր ազատեր: Մահերը մեծ մասամբ այդ հիւանդութենէն յառաջ կուզային: Մեր Հէքիմը պառաւական դեղեր կուտար հիւանդաց. — Հաւլիճան, Չէնճէֆիլ, հնդկական համեմներ եւայլն:

Երկրորդը կը կոչուէր Սվազցի Հէքիմ, իսկական անունով Համբարձում, որ բժշկական վկայական չունէր: Քիչ մը կը հասկնար թիֆոյէն:

Սվազցի Հէքիմին հիւանդ նայելու կերպը շատ զուարճալի էր: Յաճախորդին բազկերակը կը բռնէր, ու երեսին անանկ ձեւեր մը կ'ընէր, որ մեռելը կը խնդացնէր: Յանկարծ տիրական շեշտով մը կը հրամայէր. — « Լեզուդ դուրս հանէ »:

Մարդը անշուշտ կը հնազանդէր: Այն ժամանակ մեր Հէքիմը կը հարցնէր թէ՛ իրիկունը ի՞նչ կերած է: Կը պատահէր որ հիւանդը ըսէր թէ « Մատիմախ կամ նուիկ ճաշակած է », ասոր վրայ խեղճին երեսն ի վար կը պոռար:

— Ք... ուտէիր, տաճա լաւ չէ՞ր լիներ:

Բաներ մը կը գրէր, 15-20 դրուշ կը պահանջէր, մէյ մըն ալ կ'երթար դեղ մը կը բերէր: Երբեմն ձեռք կ'առնէր գրիչը եւ ինքնիրեն կը խօսէր.

— Հինգ կրամ սիւլֆատ տը քինին, երեք կրամ ասիտ քարքարիֆ ԼԼայլն:

Ով որ տեսնէր այս միմոսութիւնները, որչափ որ լուրջ եղած ըլլար, ծիծաղը զսպելու անկարող կը զգար ինքզինքը:

*
**

Կեղծմաշկի դէմ Հէքիմ Պապի կերպէն տարբեր դարման մը կը կիրարկէին Շ. Գարահիսարի մէջ: Շանը փոշիացած կղկղանքը՝ ձագարի ձեւ տրուած թուղթի մը միջոցաւ, ուժով մը կը փչէին հիւանդին բերնին մէջ: Թուղթին վարի ծայրէն, փոշին կը թափանցէր կողորդին մէջ, կը ծակէր ուռեցքը ու վէրքը կը բուժուէր:

Տղոց ջրջրկոտ վէրքերուն համար, մենք ձմերուկի կեղեւը կրակին վրայ կը բռնենք, մինչեւ որ ազէկ մը սեւնայ: Յետոյ կը քերծենք այդ սեւցած մասը, կը խառնենք կարագին հետ ու կը դնենք վէրքերուն վրայ: Երկու հեղ որ քսես այդ սպեղանին, եղածը չէնք շնորք կը մաքրուի, ա՛լ բան չի մնար: Նկատի ունենալով ձմերուկին այս բուժիչ յատկութիւնը, ամբան չըջանին շատ մը տուններ այսպէս կը պատրաստեն ու կը պահեն կեղեւները առ ի նախատեսութիւն:

Գաշտանի անկանոնութեան դէմ կանայք ծոթրինը լաւ մը կ'եփեն եւ ջուրի տեղ կը խմեն: Մնաց որ, Գարահիսարի մեր հարսերը այդ բոյսերը կը հաւաքեն սովորաբար, օղիի պէս զանոնք կ'անցնեն փոքրիկ թորանոցի մը մէջէն եւ կը պահեն խնամքով: Մեր երկրացիք ատոր կ'ըսեն « Ծերխնի Ռախի »:

Գարահիսարի մեր ժողովուրդը նոյնպէս սովորութիւն ունի սպեղանի պատրաստելու մեղրամոմի, սեւ ձիւթի, չէկ խարիի (հաւանիվա օթու) եւ անարատ կարագի կամ ձիթաիւղի տեսակ մը խառնուրդով: Այս բաղադրութիւնը կ'եփեն, պաղելէն վերջը լաւ մը կը տրորեն եւ կը պահեն տուփի մը մէջ: Վէրք մը որ պատահի, բամպակի մը վրայ քիչ մը կը քսեն ու կը դնեն վրան, մէկ երկու օրէն կը բուժուի:

Մարդոց ամորձիքները որ քար դառնան եւ սոսկալի ցաւ պատճառեն, հետեւեալ դարմանը կ'ընեն Գարահիսարի մէջ. — Աղտոտ ջուրերու կամ գետակներու եզերքի քարերուն կպած մամուռը կը հաւաքեն, ու լաթի մը մէջ դնելով լաւ մը կը քամեն, մինչեւ որ բացարձակապէս ջուր չմնայ: Այս տրորուած մամուռը, — որուն Գորտարուրդ կ'ըսեն մերօնք, — դոնէ հաւկիթի մը ծաւալը ունենալու է: Ատիկա կ'եփեն զուտ կտաւատի իւղի մէջ, այնքան ժամա-

նակ որ ջուրը քաշէ : Յետոյ, այդ խիւսը լաթի մը վրան կը փռեն ու մարմինին դիմանալու աստիճան տաք տաք կը կապեն ամորձիքներուն վրայ, ցաւը կը կտրի վայրկենապէս : Տասներկու ժամ վերջ, միեւնոյն դարմանը կը կրկնեն եւ այսպէս երկու անգամէն առողջ մարդոց պէս կ'ըլլայ : Եթէ Գորտաբուրդը չգտնուի, խիւսը կը պատրաստեն ազատքեղով, առ ալ նմանապէս կ'օգնէ, բայց Գորտաբուրդին ազդեցութիւնը չունի բնականաբար :

Աւելորդ կը նկատեմ խօսիլ կոտրած ոսկորը տեղը բերելու համար գործադրուած դարմանին վրայ : Կը կարծեմ թէ՛ ոչխարի դմակը կամ իւղի մէջ պահուած կարմրախայտ ձուկերը խոցուած անգամին վրայ փաթթելու մեթոտը քիչ շատ ծանօթ է իմ ընթերցողներուն :

Ծուռ կողմէն եկող երախաներուն համար ալ հին մեթոտ մը կայ, որուն կիրարկման ականատես եղած եմ Ալլահվերաիի մէջ : Հոն եղած ժամանակս, մեզի հետ եղող հարսերէն մէկուն երկունքի ցաւերը կը բռնեն : Ասդին անդին ինկանք դայեակ մը ճարելու համար, բայց մեր գտած Երզնկացի կինը բանէ մը չէր հասկնար : Վերջապէս լսեցի որ Կողէս գիւղէն յոյն կին մը կար հոն, որ իր հայրենակիցներուն հետ մայր հայրենիք վերադառնալու կը պատրաստուէր : Գացի գտայ այդ խաթունը, որ սիրով ընդունեց երախան սունել : Գիտէ՞ք ինչ ըրաւ վարպետ դայեակը. հարսին ոտքերէն կապել տուաւ հաստ պարանով, գլխիվայր կապեց ձեղունին գերանէն, անանկ մը որ ձեռքերը գետին չդպնան : Յետոյ մեզի հանդիսաւոր կերպով յայտնեց որ « Քիչ ետքը տղին ձայնը պիտի լսենք » : Մենք դուրս ելած ժամանակ, դայեակը կակուղ բարձերով զարկաւ յղացեալին որովայնին չորս կողմը, մինչեւ որ շտկեց ծուռ դիրքով երախան : Շատ շանցած երբ ներս մտանք, տեսանք որ այդ 28 տարեկան Հայուհին իր երկունքի ցաւերէն ազատած կը հանգչէր, քովն ալ կայտառ մանչուկ մը կը խայտար...

Հնդկախտի (քոլեռա) դէմ հետեւեալ մեթոտը ի գործ կը դնեն մեր երկրին մէջ : Երկու լիթր ընտիր օղիի մէջ, 35 կտոր խիստ կծու մանրած պղպեղ կը լեցնեն, կէս ժամ անընդհատ կը խառնեն, յետոյ խոչոր գաւաթով մը կուտան հիւանդին, որ ի մի ումպ խմելու է : Քառորդ ժամէն դարձեալ պէտք է տրուի, ապա կէս ժամ վերջը. մէկէն խիթը կը կտրի : Այն ժամանակ որ փորհարութիւնը շանցնի, նորէն շարունակելու է, վրայէն ալ կ'իտրոնով թէյ մը խմելով :

Դարուս առաջին տասնամեակին, Հնդկախտի սոսկալի համաճարակ մը ծագեցաւ Սեւաստոփոլի մէջ, որմէ ես ալ բռնուեցայ : Եղբայրս ինծի սիրտ տուաւ. — Մի՛ վախնար, ես պէտք եղածը կ'ընեմ, շուտով կ'անցնի » :

Դուրս գնաց, մէկ պիւնլիկ օղի բերաւ, մէջը մանրեց 100 կտորի չափ պղպեղ և ինծի խոչոր գաւաթով մը խմցուց յաջորդաբար : Օղիին

կէսը այսպէս կուլ տուի: Ուժ չկար վրաս, ծունկերս կը դողային.
11 Տեղ ստիպուեցայ հանգստարան երթալ...: Պառկիլ կ'ուզէի,
բայց եղբայրս ինծի այս անգամ կ'իտրոնով թէյ խմցուց, փորհա-
րութիւնս դանակի պէս կտրեցաւ: Յաջորդ օրը ինքզինքս քիչ մը լաւ
զգացի, պիսիքս կերայ. իսկ երրորդ օրը առանց եղի բրինձէ ապուր
խմեցի: Ութն օր վերջ, եղբայրս ալ հնդկախտի բռնուեցաւ, բայց
յաջողեցանք հիւանդութեան առաջքն առնել միեւնոյն դարմանով:

ՆԱՀԱՏԱԿԻՆ ՔԵՐԵԶՄԱՆԸ

Չէքէն թաղին վարը՝ կեղտոտ ձորի մը մէկ եզերքը Գոչալիի
արտն է, միւս կողմն ալ նահատակի մը գերեզմանը կայ: Այս
դժբախտ Հայուն պատմութիւնը մեր նախնիք հետեւեալ ձեւով մեղի
կ'աւանդեն. —

Յովհաննէս անուկով շատ գեղեցիկ երիտասարդ մը, անգամ մը
տաճկական թաղէն անցած միջոցին, խիստ հարուստ եւ ազդեցիկ
թուրքի մը աղջիկը կը տեսնէ զինքը ու կը սիրահարի վրան: Օր մըն
ալ ծածուկ մը կը կանչէ Հայորդին. հազիւ սեմէն ներս ոտքը դրած,
դուռը վրայէն կը գոցէ եւ կը սկսի հաւար փրցնել. — « Այս կեալուրի
տղան պատիւս արատաւորեց, հասէ՛ք Միւսլիմաններ... »:

Թուրքերը կը վազեն կուգան, կը բռնեն հայ երիտասարդը ու
երբոր կը հարցնեն աղջկան, իրենց սա նենգամիտ պատասխանը
կուտայ.

— Այս կեալուրի տղան ինծի ըսաւ որ Միւսլիման պիտի ըլլամ
եւ քեզ պիտի առնեմ, բայց խաբեց զիս ու պատիւս բռնաբարեց:

Այն ատեն թուրքերը կը սպառնան Յովհաննէսին. — « Կամ
կ'իսլամանաս եւ կամ կտոր կտոր կ'ընենք քեզ »:

Խեղճ երիտասարդը որչափ որ կ'աշխատի իր անմեղութիւնը
հոչակել, Տաճիկները ականջ չեն կախեր, կը տանին կը թլփատեն,
բռնի թուրք կը շինեն եւ այդ խորամանկ աղջկան հետ կ'ամուսնացնեն:

Յովհաննէս զրկուած ազատ օդէն, մէկ խօսքով բանտարկուած
թուրք կնկան տանը մէջ, շատ կը նեղուի եւ օր մըն ալ կը յաջողի
փախչիլ: Թուրքերը կը դտնեն, դուրս կը հանեն զինքը պահուած
տեղէն ու չարաչար կը ծեծեն:

Ամիս մը հազիւ անցած, տղան նորէն կը կծկէ իր արգելափակ-
ուած տունէն, բայց դժբախտաբար թուրքերուն ձեռքը կ'անցնի
վերստին: Այս անգամ բարբարոսները բաղնիքի թասը կը տաքցնեն,
խեղճ երիտասարդին գլխին կ'անցընեն ու կը սպառնան. — « Անգամ
մըն ալ որ փախչիս, զքեզ կը բռնենք, մոխիր կը դարձնենք »:

Հայ տղան մտիկ չըներ. դեռ գլխուն այրուցքները չզոցուած,
ինքզինքը դուրս կը նետէ բռնաւոր կնկան երդիքէն եւ կ'ապաստանի

մասադործի խանութ մը: Ակնթարթի մը մէջ, աթոռի մը վրայ կը
ցատկէ եւ ձեղունին օղակէն առկախ չուանը վզին անցընելով, կից
մը կուտայ աթոռին եւ կը ձօճի օդին մէջ:

Միւսլիմանները շատ տրամադիր չեն երեւար սիրահար Թրքուհին
զրկելու « Կեալուր փեսայ »ին ընկերակցութենէն: Շուտով կը
հասնին, վար կ'առնեն չուանէն, բայց խեղճ տղան արդէն մեռած էր:

Սարսափելի կատղած՝ Թուրքերը իրենց վրէժը կը յագեցնեն
նահատակ Հայուն դիակին վրայ: Մարմինը կը խոշտանգեն, ոտքին
ալ չուան մը կը կապեն եւ քաշքշելով կը տանին պոֆլու տերէ ըսուած
տեղը կը ձգեն:

Դէպքը կը պատահի առաւօտուն, Հայերէն ոչ ոք կը համարձակի
մօտենալ: Այն ատեն խելացի քահանայ մը ունինք եղեր: Մօրուքն
առած ափին մէջ, տէրտէրը կը մտմտայ ու կ'երթայ կ'ըսէ կառա-
վարութեան մարդոց.

— Արտօնութիւն տուէք որ դիակը թաղենք, որովհետեւ սպան-
դանոցը մօտ է, շուները կ'ուտեն ու կը կատղին, վերջը փորձանք
կը պատահի...


Բաւական մը վարանելէ ետք, կառավարութիւնը համաձայն կը
դանուի, պայմանով որ ոեւէ կրօնական արարողութիւն չկատարուի
եւ մեռելը թաղուի եղած տեղը:

Երկու սատիկան կուտան տէրտէրին, որ քանի մը հողի կը կանչէ,
փոս մը կը փորեն ու կը թաղեն դժբախտ երիտասարդին մարմինը:

Չարմանալի է որ այդ տեղւոյն հողը ամենուրեք կը խաղայ,
բայց նահատակին հանգստավայրը ամուր կեցած է: Բարեպաշտ
կանայք վրան խաչքար մը դետեղած են, շուրջ բոլորն ալ առանց
չաղախի պատ մը շինած՝ մէկ կանգուն բարձրութեամբ: Փոքրիկ
անեակի մը չափ տեղ է այդ ամբողջ շրջապատը, անկիւնը տեսակ
մը մատուռով, վրան գոց է բնականաբար:

Նահատակին գերեզմանը ուխտավայրն էր կանանց, ամէն շաբաթ
իրիկուն հոն կ'երթային եւ կ'աղօթէին երկիւղածօրէն: Մինչեւ իսկ
ողբերգ մը հիւսուած էր անոր յիշատակին, դժբախտաբար մտքէս
ելած է: 1903ին Մխիթար աբբահօր երկհարիւրամեակին առթիւ
հրատարակուած գրքին մէջ յիշուած էր Ս. Յովհաննէսի մատուռը,
հարց է դիտնալ թէ խօսքը մեր նահատակի^օն կը վերաբերի: Պատ-
մագրին կ'իյնայ անշուշտ լուսաբանել այս պարագան:

Հ Ա Յ Յ Ե Ղ Ա Փ Ո Խ Ո Ի Թ Ե Ա Ն ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ



Մետասաներորդ ժամուն արթնցած իմաստակներ, չարամտօրէն կը մեղադրեն հայ յեղափոխական շարժումը թէ՛ « պատճառ դարձած է մեր ժողովուրդի կոտորման »: Բացարձակապէս սխալ է:

Շատ հեռուները երթալու հարկ չկայ ճշմարտութիւնը դտնելու համար: 1700ին Հայաստանի բնակչութեան 75 առ հարիւրը կը բաղկանար Հայերէ, իսկ երկու հարիւր տարի վերջ այդ համրանքը կ'ըլնէր 25 առ հարիւրի: Ինչպէս իր տեղին յիշած եմ, մինակ Գարահիսարի շրջակայ Աշխարհադաշտի 130 դիւղերէն հարիւրը հայաբնակ եղած է ժամանակին, իսկ մեր օրով ատոնցմէ շատերը թրքացած էին: Ես այդ բոլոր դիւղերը գրեթէ պտտած եմ. դեռ հայկական գերեզմանները յայտնի են Կեալուր մաշատլըք անունով: Շատերուն բերնէն լսած եմ. — « Մենք հինէն Հայեր ենք եղեր... »:

Ի՞նչպէս յաջողած է թուրքը իր համրանքը շատցնել: Վիէնայի պարտութենէն ասդին, տաճկական կառավարութիւնը սկսած է թուրք գաղթականներով լեցնել Հայաստանը, մա'նաւանդ Խրիմի պատերազմին (1854-1855):

Մասնաւոր ծրագրով մը, այս քաղաքականութիւնը շարունակուած է 1877ի շրջանին, երբ թուրք կառավարութիւնը Կովկասէն եկած մէկ միլիոն իսլամ մուհաֆիրներուն տուած է Հայերէն բռնադրուած հողերը:

Տաղստանի ցեղապետ Շամիլի՛ Ռուսաց ձեռքը գերի իյնալէն վերջն ալ, շատ մը Չերքէզներ եկած հաստատուած են հայաբնակ վայրերու մէջ: Ատոնց կարեւոր մէկ մասը տեղաւորուած է Եւգոկիոյ Ուզուն Եայլա ըսուած տեղը, ուրիշներ Ատաբաղարի կողմերը եւ մանաւանդ Սեւ Ծովու ափերուն վրայ (Իւնիա): Այս գաղթականները՝ ծոյլ եւ անոպայ յելուզակներ, աւաղակութեամբ կ'ապրէին ու այսպէս ճշմարիտ պատուհաս մը դարձած էին հայ ժողովրդի գլխուն:

Ի լրումն ամենայնի, դարաշրջանի առաջին տարին, Համիտեան « բարեխնամ » կառավարութիւնը հարիւր հազարի չափ Լեզկի

ասպատակներ կը բերէր եւ կը տեղաւորէր հայկական ստացուածքներու վրայ:

Հայաստանի ժողովուրդը, հողագրկուած եւ շարաշար հարստահարուած այս մահմետական տարրերուն եւ նոյնքան տիրող իշխանութեան կողմէ, ապրելու միջոցներէն բոլորովին կը զրկուէր: Մեր ստացուածքը, մեր պատիւը, մեր կեանքը ու վերջապէս մեր ամէն ինչը սեփականութիւնն էր թուրքին: Հայ գիւղացին իր հողը պիտի ձգէր եւ բեկերուն արտը պիտի վարէր կամ հնձէր: Այս պայմաններուն մէջ, շատ անգամ խեղճ գիւղացիին արտը կը փճանար, որովհետեւ անխնամ կը մնար եւ կամ տեղատարաւ անձրեւները կը վնասէին ցանքերուն:

Գրիգոր Զօհրապ տեղ մը կ'ըսէ. — « Ետ մը ազգեր անհետացեր են, բայց Հայը ապրեր է մինակ իր համակերպող քաղաքականութեամբ »:

Սակայն, ես ալ կ'ըսեմ. համակերպութիւնը սահման մը ունի, եթէ այդ սահմանը անցնի, ստրուկը առիւծ կը կտրի: Եւ այդ սահմանը շատո՞նց դժած անցած էր:

Հայաստանը շատ մը օտար աշխարհակայներու կողմէ բռնագրաւուած, ոտնակոխ եղած է անցեալին մէջ, ինչպէս Պարսիկներէ, Մեգացիներէ, Ասորեստանցիներէ, Յոյներէ եւ Հռոմէացիներէ, բայց այս բոլոր զօրախումբերը ժամանակ մը մնացած, անցած գացած են լեռներէն փրթած հեղեղներուն պէս: Մինչ թուրքերը ուղղակի եկած հաստատուած են մեր հողերուն վրայ, սկսած են մեզի կեղեքել եւ ոչնչացնել:

Դար մը առաջ, յատկանշական դէպք մը պատահած է, որ մտածելու պէտք է մղէ հայ յեղափոխութեան ուխտեալ թշնամիները: Ապանայի Ղոնախ գիւղի Չեչէն օղլուներէն ազգեցիկ բէկ մը, մարդ կը զրկէ շրջակայ հայ գիւղի քահանային, որ քսան էշ հաւաքէ եւ զրկէ իրեն, որպէս զի ցորենը ջաղացք տանին եւ աղան: Խեղճ տէրտէրը ժողովի կը կանչէ գիւղին մեծերը ու կ'ըսէ.

— Խայրի բէկը քսան էշ ուղեր ա. Մինաս քէհեան կուտայ հինգ էշ, Սարգիսը՝ երեք էշ, Մարկոսը՝ երկու էշ, Կիրակոսը՝ հինգ էշ, Յակոբոսը՝ չորս էշ: Ուրեմն, կը մնայ մի հատ. էշ մըն ալ ե՞ս...

Գոնիայի հայ երեւելիներէն մէկը օր մը ինծի շահեկան բան մը պատմեց, որ ընդունակ է կոյրերուն աչքը բանալու: Այս մարդը անգամ մը ի կոնիոյ սրճարաններէն մէկուն մէջ կը հանդիպի էպուղիյա Թէվֆիք պէյի, որ անհանդուրժելի ձեւով մը կեանքը բառին իմաստը մեկնաբանելու ելած էր: Այս որ կը լսէ, տաքզլուխ Հայորդին բուն կերպով կը խարանէ մեր հարեւաններուն մոլեռանդութիւնը: Բայց այդ հրապարակագիրը, — որ ամէն մէկ մեղքիս թէվիտի էփեարի տնօրէնը պիտի ըլլար, — կրակ կը կտրի եւ կը պոռայ հայ երեւելիին երեսն ի վար.

— Բարեկա՛մ, աչքդ տասը բայ եւ ականջ տուր ինծի ուշի ուշով. Թուրքիոյ Հայերը կա՛մ պէտք է մեռնին, կա՛մ պէտք է հաւատափոխ ըլլան եւ կամ պէտք է երթան: (Թիւրքեանըն Էրմէնիլերի եա՛ Էօլմեիի, եա՛ տէօնմեիի, եա՛ կիթմեիի):

Ահաւասիկ թրքական պետութեան ամբողջ քաղաքականութիւնը խտացած էր այս երեք սկզբունքներուն մէջ:

Աչքի առջեւ բերէք անգամ մը, որ 1895ի շրջանին Թուրք մը կրակած էր իր դրացի հայ խանութպանին վրայ: Թէպէտ զնդակը իր նպատակէն վրիպած՝ Ակնեցի այդ բախտաւոր առեւտրականը գլուխը ազատած էր, բայց անզգամ մարդը դէպքերէն ետք իրմէ պահանջած էր վաթսուն փարա: Դիւրին է հետեւցնել թէ՛ հայ ժողովուրդը որպէս նախասահմանուած քաւութեան նոխազ թրքական երանելի աշխարհին մէջ, ստիպուած էր դահիճին արձակած զնդակին փոխարժէքն անգամ հատուցանելու առ ի... երախտադիտութիւն:

Կովկասայ մտաւորական մը, ժամանակին կ'երթայ Պոլիս, հոնկից Եւրոպա անցնելու մտադրութեամբ: Մինչ ճամբայ կ'ելլէ դէպի Իզմիր, նաւուն կամրջակին վրայ կը տեսնէ թուրք պաշտօնեայ մը, որ իր զաւակներով նոյնպէս կ'երթար այդ նաւահանդիստը: Տարտանէլէ անցքին ժամանակ, շողենաւը դանդաղ կը շարժի եւ սողաքը յունական գիւղի մը առաջքը կը տեսնեն մատակ խող մը իր ճագերով:

— Պապա՛, հարց կուտան երախտները, ի՞նչ են ասոնք:

— Իշքէ, խող ըսածնին այս է:

— Աղէ՛կ, պապա էֆէնտի, բայց ասոնք գոյնզգոյն են:

— Տղաքս, կեամբուրներն ալ ասոնց պէս գոյնզգոյն են. մէջերնին Ֆրէնկը կայ, ուլսը կայ, աւստրիացին կայ, հայը կայ, յոյնը կայ, բայց ամէնքն ալ մէկ ք... ենք:

Հայ մտաւորականը ապշած կը մնայ, մանաւանդ երբ կը տեսնէ որ այդ գարշելի խօսքերը ընողը բարձրաստիճան պաշտօնատար մըն է, հապա՛ հասարակ ժողովուրդը ի՞նչ պիտի ըսէր...: Ես ասիկա կարգացած եմ 1910-1913ի շրջանին, Թիֆլիզի հայ թերթերէն մէկուն մէջ, ուրեմն վաւերական պատմութիւն մըն է:

1895ի կոտորածներէն վերջ, թրքական կառավարութիւնը ամբողջ հինգ տարի զինուորական տուրք չառաւ Հայերէն: Սակայն, 1900ին այդ յետնեալ հարկերը պահանջեց, սոսկալի վիճակի մը մատնելով դաւառի հայ ժողովուրդը: Մտածեցէք անգամ մը, որ ութը տղամարդ համբող ընտանիք մը հինգ տարուան մէջ կը բազմապատկուի քառասուն շունչի, ինչ որ երկուականէն հաշուելով պարտքը կը հասնի ութսուն մէծիտի: Աղքատ գիւղացին ո՞ւրկէ պիտի տար այդքան տուրք: Արդէն ինք տէր չէր իր ստացուածքին:

Կառավարութիւնը առանց լուր տալու ձեռք կը դարնէր իր արտին, նոյնիսկ պատահած է որ դայն ծախու հանէ իր արժէքին մէկ հինգերորդ համեմատութեամբ (քսան ոսկի՝ հարիւրի փոխարէն) :

Յաւալի է որ երբեմն Հայերն իսկ օգտուեցան իրենց համադիւղացիներու դժբախտութենէն: Մանուկ Չալղարեանին՝ այլ անուամբ «Պետ Մանուկ»ին այգի մը ծախուեցաւ 180 դրուշի, Շ. Գարահիսարի մէջ: Մէջը մէկ ընկուզենի մը կար, բայց այդ ծառը առանձին 200 դրուշի պտուղ կուտար տարեկան...

1904ի Սեպտեմբերին՝ Քեմախի Հոռոփիլ դիւղէն 250 այծ կը գողնան շրջակայ Սեմացի Քիւրտերը: Հոռոփիլցիք կը հետապնդեն այծերը, եւ հարցուփորձ ընելով կ'իմանան որ Գարահիսար տարած են: Ասոր վրայ, գիւղացիներէն երեք հոգի կուզան քաղաք ու կ'իջեւանին մեր տունը, որովհետեւ եղբայրս իրենց դպրոցը չորս տարի վարժապետութիւն ըրած էր եւ բարեկամ էին անոր:

Ճաշէն վերջ, բոլորս մէկ կ'երթանք կենդանիներու պաղարը, ու քիչ մը հեռուն կը տեսնենք բաւական այծեր: Մեզի ընկերացող հովիւ Սիմոն աղան ըսաւ. — « Ահաւասիկ այսինչին այծը »: Միւս հովիւն ալ ուրիշի մը այծը ձանչցաւ: Վեց հատի մը անունները կանչեցին. այծերը դատուեցան հօտէն, վազեցին եկան հովիւներուն քով...

Ես դացի ոստիկանապետին մօտ, կանչեցի որ տեսնէ բռնուած գողութեան ապրանքները: Այդ պահուն հովիւները զատելու վրայ էին իրենց ծանօթ այծերը: Ոստիկանապետը հարցուց. — « Ինչէ՞ն դիտէք որ այս կենդանիները ձերն են »:

— Անուն ունին, պատասխան տուաւ Սիմոն աղան, 7-8ը հատը ձանչցան մեր հովիւները:

Ոստիկանապետը այծերը խառնեց հօտին, բայց անունները կանչած ժամանակ, անոնք բաժնուեցան հօտէն եւ նորէն եկան հովիւներուն քով:

— Ձեր գողցուած այծերուն թիւը ո՞րչափ էր, հարցուց կրկին ոստիկանապետը:

Մերոնք ըսին 250 հատ: Կառավարութեան պաշտօնեան հրաման տուաւ որ զատեն իրենց սեփական ոչխարները: Երկու հովիւները ջոկեցին 75 հատ: Ասոր վրայ, երբ ոստիկանապետը ստուգեց որ ուրիշ չկայ 300 գլուխներէ բաղկացած հօտին մէջ, գտնուած այծերը յանձնեց Ղաթբնը Շէյխի կոչուած մարմնի մը:

Հոռոփիլցիք 72 օր վերջ կանչուեցան, բայց յիշեալ կաղմակերպութեան կողմէ հետեւեալ պատասխանը ստացան.

— Հաստատուեցաւ որ ձերն են այծերը, միայն թէ այծ գլուխ 72 դրուշ պէտք է տաք մեզի, իբրեւ արածողչէք:

Մէկ այծին դինն էր 35-40 դրուշ: Տեղին էր ուրեմն թրքական

առածը. — « Աստառը կերպասէն աւելի սուղ կ'արժէր »: Գիւղացիք ճարահատ թողուցին դացին: Ճամբան հարցուցի հովիւին.

— Սիմոն աղա, աւելի լաւ չէ՞ր ըլլար որ չհետապնդէիք այծերը, քանի որ ամէն դիմում անօգուտ էր:

— Բա՛, այսպէս ըլլալը քաջ դիտէինք, բայց այս գործը շատ սուղի նստաւ թալանձի Քիւրտերուն եւ մե'նք նստեցուցինք...

Թուրք Սուլթաններուն թուրը շատ ալ կտրուկ չէ եղած հզօր թշնամիներու դէմ եւ երբոր անոնցմէ պարտուած են չարաչար, սիշտ իրենց վրէժը լուծած են իրենց անձար քրիստոնեայ հպատակներէն:

Մեր ծերերը կը պատմէին, որ 1820ի տեսները Սուլթանէն հրովարտակ մը ելած էր, որպէսզի Հայաստանի բոլոր հաւերը կոտորեն: Պատճառը այդ կենդանեաց մէջ ծագած մէկ հիւանդութիւնն է եղեր, որ իբր թէ հնդկախտի համաճարակ կրնար ստեղծել ամէն կողմ: Ասոր վրայ, կառավարութեան մարդիկը տունէ տուն պտտած, հաւերը ժողված եւ փճացուցած են Գարահիսարի մէջ:

Հօրս մեծ մայրը, որ շատ ճարպիկ կին մըն էր, քաջութիւնը ունեցած է մէկ աքլոր եւ ութը հաւ պահելու գաղտնի պահարանի մը մէջ: Ինչպէս ըսած եմ գրքիս սկիզբին, մեր տունը կպած էր բերդի ժայռին եւ այդ պահարանն ալ հող կը գտնուէր: Բաւական խոշոր էր. ժամանակին նոյնիսկ հարս ու աղջիկներ թաքնուած են եղեր, թուրքերու ճանկը չիյնալու համար:

Գաղտնիք չէ որ երբ աքլորը հաւու երես տեսնէ, սոնքալէն կը կանչուրուտէ: Մեծ մամս մինչեւ մարդոց երթալը՝ կենդանիին գլուխը թեւին տակ առած է, որպէս զի ձայն չհանէ եւ փորձանքը չիյնան: Վերջապէս, հալածանքը դադրած է երկու ամսուան ընթացքին. գաղտնի հաւ պահած ուրիշ ընտանիքներ մեծ մամիս մօտ երթալով հաւկիթ դնած կամ փոխանակած են:

Հիմա, սիրելի՛ ընթերցողներ, դուք ինծի հարց պիտի տաք թէ՛ այս պատմութիւնը ի՞նչ կապ ունի բուն նիւթին հետ: Բայց, երբոր ձեզի պարզեմ իրողութիւնը, պիտի համոզուիք թէ սոսկալի խորհուրդ մը կայ անոր մէջ:

1915-1916ի շրջանին, Թիֆլիզի Մշակին մէջ լոյս տեսաւ խիստ ուշագրաւ յօդուած մը, որուն հեղինակին անունը մտքէս ելած է, բայց շատ լաւ կը յիշեմ պարունակութիւնը, որ հետեւեալն է. —

Սուլթան Մահմուտ երբ կը յաղթուի Ռուսերէն, կը խորհի թէ ինչպէս կ'ըլլայ որ պարտուած է, միթէ թուրքիոյ ուժը տկա՞ր է...: Այսպէս երկար մտմտալէ վերջ, առաւօտեան դէմ քունը կը տանի եւ սոսկալի երազ մը կը տեսնէ.

« Պոլսոյ չորս կողմէն մըրիկ կ'ելլէ ու այս մըրիկը ամբողջ

փոշիները հաւաքելով կը վերածուի ահռելի թաթառի մը, որ հսկայ վիշապ մը առած կ'ելլէ օդը: Վիշապին բոլորտիքը արծիւներ եւ ագռաւներ կը շրջին:

« Վիթխարի թաթառը դեւը կը քչէ Մարմարայի վրայ. այդտեղ վիշապին իրանէն կը դատուի գլուխը եւ կ'իյնայ ծովուն մէջ, Իշխանաց կղզիներուն բացերը ու անյայտ կ'ըլլայ: Այն ժամանակ արծիւները կը փախչին, իսկ ագռաւները կը կոնչեն:

« Վիշապին իրանը քամին կը քչէ կը տանի Եփրատ գետին եզերքը, դաշտի մը մէջ եւ հոն կ'իյնայ: Բաւական ատեն այդտեղ մնալէ վերջ, կը նեխի. շրջակայ հաւերը կը թափին առասպելական կենդանիին գիակին վրայ ու զայն կտցահարելով կը լմնցնեն »:

Սուլթան Մահմուտ սարսափահար կ'արթննայ, պաղ քրտինքը կը վազէ ամբողջ մարմինէն: Անմիջապէս կը կանչէ երազահանները, անոնց կը պատմէ իր տեսիլքը ու կ'ըսէ. — « Այս երազս պէտք է մեկնէք »:

Այն ժամանակ, արքային լաւագոյն երազահանը առաջ կուգայ եւ տրամադիր կ'ըլլայ գոհացում տալու թուրքիոյ վեհապետին, պայմանով որ եթէ ինք շիտակը խօսի՝ չբարկանայ:

— Չեմ բարկանար, կը խոստանայ Սուլթանը, միայն թէ ճշմարտութիւնը ըսէ:

— Տէ՛ր արքայ, վիշապը մեր կայսրութիւնն է, մերիկն ալ կը նշանակէ մեծ պատերազմ, թէ՛ արեւելքէն, թէ՛ արեւմուտքէն, թէ՛ հիւսիսէն եւ թէ՛ հարաւէն: Վիշապին շուրջի արծիւները մեր դաշնակիցներն են, իսկ ագռաւներն ալ մեր պետութեան նախարարութիւնները: Վիշապին գլուխը՝ եւրոպական թուրքիան, մինչ իրանը՝ ասիականն է: Օրին մէկը ընդհ. պատերազմ պիտի ծագի, մենք ալ պիտի մտնենք: Եւրոպական թուրքիան պիտի կորսնցնենք. արծիւները՝ որ մեր դաշնակիցներն են, այն ատեն պիտի փախչին, իսկ մեր նախարարութիւնները պիտի ողբան: Գալով իրանին, որ գնաց ինկաւ Եփրատի ափին, ատ ալ կը նշանակէ որ մենք պիտի ըլլանք Եփրատեան պետութիւն մը, անորոշ ժամանակով եւ օր մը պիտի նեխինք: Ու այդ օրը, գետեզերքի հաւերը, որ Հայերն են, մեզ կտցահարելով վերջ պիտի տան օսմանեան պետութեան:

Սուլթան Մահմուտ զայրացած կը կանչէ իր աւագ քարտուղարը ու իսկոյն հրովարտակ մը դրել կուտայ, որ Հայաստանի ամբողջ Հայերը ջարդեն: Բարեբախտաբար կը գտնուի խելացի նախարար մը, որ երազին ծուռ մեկնարանութիւնը քաջ գիտնալով, անմիջապէս Արթուր Յարութիւն Պէղճեանի մօտ ու կ'ըսէ.

— Փուճ երազի մը համար, Սուլթանը կոտորել պիտի տայ Հայերը. հրովարտակ մը կը խմբագրուի կոր...

Այս որ կ'իմանայ, բարեյիշատակ Ամիրան կ'երթայ ուսական եւ անդլիական դեսպաններուն, խնդիրը կը պարզէ անոնց ու կը խնդրէ որ առաջքն առնեն: Այդ մեծ պետութեանց ներկայացուցիչները կ'երթան սրալատ, կը պահանջեն որ հրովարտակը ցոյց տայ: Սուլթանը կ'աշխատի խաբել դեսպանները:

— Անատուրի արեւելեան կողմը հաւերու հիւանդութիւն մը ծագած է, կ'ըսէ թուրք վեհապետը ինքզինքը արդարացնելու համար, ես ալ հրաման րրի որ հաւերը ջարդեն...

Բանէն դուրս կուգայ որ խնդիրը ո'չ թէ այդ անմիտ կենդանիներուն, այլ Հայերուն կը վերաբերի...: Երբոր Սուլթանին դիտողութիւն կ'ընեն, ան ալ մեղքը կը ձգէ իր աւագ քարտուղարին վզին, որպէս թէ հաւը շփոթած ըլլար Հայուն հետ եւ մարդը բանտ կը նետուի: Գալով հրովարտակին, բնականաբար այդ կայսերական հրամանագիրը կը սրբագրուի եւ կը զրկուի Հայաստան, որպէս զի հաւերը ջարդեն...

Ակներեւ ճշմարտութիւն մըն է, որ Եփրատի շրջանի բնակչութիւնը Հայերէ աւելի Քիւրտերէ կը բաղկանար մեծ մասամբ: Եթէ թուրքը այդ վաշկատուն ցեղին նախապէս խնայած է, որովհետեւ կը հետապնդէր դիւային նպատակ մը, որ մեկնաբանութեան չի կարօտիր երբեք:

Յամենայն դէպս, Սուլթան Մահմուտի հրովարտակին մէկ պատճէնը կը դտնուի էջմիածնի թանգարանը եւ մեր մեծերուն կը մնայ ստուգել: Մշակի յօդուածագիրը անձամբ տեսած է այդ փաստաթուղթը, որ ցոյց կուտայ թէ՛ Ալ Օսմանի դահուն վրայ նստող ունէ Սուլթանի մէկ քմահաճոյքէն կախում ունէր թուրքիոյ ամբողջ Հայերուն բնաջնջումը...

Ի՞նչ կը մնար մեզի ընել: Գլո՞ւխ ծռել թուրքին առջեւ, ուրանալ մեր բազմադարեան քաղաքակրթութիւնը, մեր ինքնութիւնը, ընդունիլ կրօնքը եւ ազգութիւնը անողոք իշխանաւորին. կամ թէ վատաբար թողուլ հեռանալ մեր պապենական հողերէն, ու վերջապէս որպէս ճակատագրական լուծում ոտքի կանգնիլ, յեղափոխի՛լ:

Հայ ժողովուրդը ընտրեց այս վերջին ճանապարհը:

Բացայայտ իրողութիւն մըն է, որ երբ ժողովուրդ մը կ'ընդվզի, յեղափոխութեան դրօշը կը պարզէ, անպայման դանակը ոսկորին հասած ըլլալու է: Յեղափոխութիւնը շատ իրաւացի էր, բայց կը կարծեմ թէ սխալ էր տեղի ընտրութիւնը: Նախընտրելի պիտի ըլլար շարժումը սկսիլ հարաւարեւմտեան կողմէն քան թէ հիւսիսարեւելեան շրջաններէն: Չեմ ուզեր մտնել քննադատի դերին մէջ, որովհետեւ 1887ին տարբեր մտածելակերպ կար:

Հայկական առածը կ'ըսէ. — « Աւանակը ցելսը ձգող մարդուն

խրատ տուողը շատ կ'ըլլայ » : Եթէ մարդս գիտնայ թէ վերջը ի՛նչ պիտի ըլլայ, տարբեր կերպով կը շարժի : Նոյնպէս, եթէ Աղասի Խանճեանը մտքէն անցընէր որ Պերիայի վրէժխնդրութեան գոհ պիտի դառնար, մինակը չէր երթար արիւնարբու հրէշին ոտքը : Վերջապէս, ո՞վ կրնար դուշակել թէ օր մը Ռուսաստանը համայնա-վար պիտի դառնար : Շատ հաւանական է, որ եթէ քիչ մը աւելի համբերող ըլլայինք, նուազագոյն վնասով դուրս կուգայինք... : Բայց այս կէտն ալ տակաւին վիճելի է :

Մէկ բան որոշ է, — դոնէ կարելի է վերը յիշուած առածը արդարացնել այս պարագային, — որ մեր իմաստակներուն խելքը դլուխը տակաւին չէ եկած : Հայկական դատին էութիւնը կարծուածէն աւելի խոր է : Շատ բան դրուած է մեր զուլումներուն վրայ, այս հատորիս մէջն ալ բաւական ճոխ նիւթեր պիտի գտնուին, բայց ի՛նչ օգուտ : Մօտէն կը ճանչնամ այդ մարդոց տիպարը՝ անոնց արիւնը ցեղին դէմ դարձած է : Ոչխարն իսկ մորթուած պահուն ոտքերը կը շարժուի, իսկ այդ թշուառականները շատ կը տեսնեն բռնաւորին դէմ բարձրացող վրէժխնդիր բազուկը : Անոնք ամէն բանի կարող են, դեղիս կեանքի մը պարտադրած իրենց վատ բնազդներուն գոհա-ցում տալու համար : Զարմանալի չէ, ուրեմն, որ կ'այրեն իրենց երէկի պաշտածը, ամէն փշած հովի ուղղութեան կ'երթան ու շնա-կանօրէն հայ սրբազան յեղափոխութեան լեզու երկարելու կ'ելլեն :


Միեւնոյն այլասերած մարդիկը, միքրօպներու պէս կը մտնեն ամէն տեսակ կազմակերպութիւններէն ներս, երկպառակութիւն կը սերմանեն : Դժբախտաբար իրենց սրսկած թոյնը շատ վատ ազդե-ցութիւն գործած է, եղբայր եղբօր դէմ լարած ու հայրենակցական միութիւններու դիմաց « Վերաշինաց » ներ բուսած են, որոնք դարձած են խոռվութեան մէյմէկ հնոցներ :

Պատիկ բան չէր գիտակցութեան մղել, յեղափոխե՛լ ժողովուրդ մը, որ երեք խոշոր պետութիւններու միջեւ բաժան բաժան եղած էր դարերէ ի վեր : Հարիւր տարուան դերութիւնն անգամ բաւ պիտի ըլլար խառնակութիւն ստեղծելու հզօր պետութեան մը ծոցին մէջ : Որոշ է որ՝ եթէ յեղափոխական շարժումը մերթ եղած է անկար-գապահ, ատիկա վեցհարիւր տարուան ստրկութեան հետեւանքն է :

Յեղափոխութիւնը անհրաժեշտ պահանջ մըն էր. բայց միակ սխալը որ գործուած է, կրօնքին դէմ մղուած հալածանքն է : Լուրջ եւ գիտակից ղեկավարներ պիտի խորհէին որ զմեզ ազդին կապող ամէնէն ամուր շաղախը Հայ Առաքելական Եկեղեցին է : Աւելի քան տասնըվեց դարեր, այս շաղախը քանդելու աշխատած են Պարսիկներ, Յոյներ, Արաբներ, Թուրքեր, Լատիններ, Ռուսեր եւ Ամերիկացիներ, բայց հազիւ յաջողած են մէյմէկ կտոր փրցնել : Յաւելով կ'ըսեմ որ մեր եկեղեցին բաւական տուժած է կարգ մը հայ կուսակցութեանց երեսէն :

Լուսաւորչական եկեղեցին փա՛ռքն է Հայուն: Ով որ չի տեսներ լոյսը հաւատքին, իրաւունք չունի բռնանալու ուրիշին խղճին վրայ, ո՛չ մեր երկրին եւ ո՛չ ալ գաղութներուն մէջ: Դիցուք թէ չունենայինք մեր ազգային եկեղեցին, ի՞նչ պիտի ըլլար վեցդարեան դերութեան մատնուած մեզի պէս ժողովուրդի մը վիճակը: Մէջտեղն է կենդանի օրինակը. Հայ-Հոռոմները ժամանակին մաքուր ազգայիններ եղած էին, բայց ի վերջոյ յարեցան օրթոտոքս եկեղեցիին, յունական բաժնին մէջ: Մոլի Յոյներ դարձած, այսօր այդ Հայերը դէմ կը դառնան իրենց ցեղին: Ու եթէ խորհելու ըլլանք, որ մինչեւ անոնց Յունաստան մեկնումը՝ տարեց կիները հայերէն կը խօսէին իրենց տան մէջ, մեր սրտէն արիւն կ'երթայ:

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ



ԴԵՄՔԵՐ, ԴԵՊՔԵՐ ԵՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊՈՌԹԿՈՒՄՆԵՐ

1887ին, Հնչակեան կուսակցութեան հիմնարկութենէն հազիւ վեց ամիս անցած, կարեւոր մասնաճիւղի մը հիմը կը դրուէր Շ. Գարահիսարի մէջ: Նախաձեռնողներն էին Վոսաճապուհ քահ. Քիւպարեան, Աւագ էֆ. Տուրիկեան, Սիմոն Ճգնաւորեան, Չմշկածագցի Սարգիս Քաջունի (բոլորն ալ դասատու): Մասնաճիւղին կ'անդամակցէին Անդրանիկ Օզանեան (ապագայ հերոսը), Ղուկաս աղբար, Մկրտիչ Թացեան, Մրտա Ոսկի Աւետիսը, Հաճի Յակոբը, Յարութիւն եւ Պաղտատար Ղարիպեանները, Յարութիւն Օզանեանը (Գազիկ) ու եղբայրը, Նիկողոս Այնաճեան եւ ուրիշներ: Տարին չլրացած քաղա-



ԳԱԳԻԿ ՕԶԱՆԵԱՆ

քին երեսուն առ հարիւրը անդամ կ'արձանագրուէր նորակազմ կուսակցութեան :

Կիրասոնի ճանապարհին վրայ, մեր քաղաքէն երեք ժամ հեռու, անգլիացի դրամատէրերու խումբի մը կողմէ շահագործուած արծաթախառն կապարի հանք մը կար, որուն մասին արդէն խօսած եմ դրքիս սկիզբը : Այս հանքին մէջ կը բանէին երկու հարիւրի չափ Հայեր, Շ. Գարահիսարէն եւ Սեբաստիոյ շրջակայ գիւղերէն : Տարի մը վերջ, բանուորներուն կէսը կ'անդամագրուէր Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան եւ հանքային շրջանը կը դառնար օճախը հայ յեղափոխութեան :

Անգլիական ընկերութիւնը կանոնաւոր թղթակցութիւն մը հաստատած էր կեդրոնին հետ : Այս խողովակով, մասնաւորաբար Հնչակեան կուսակցութեան Լոնտոն փոխադրուելէն յետոյ, ամէն շաբաթ մեր երկրի մասնաճիւղը բնականօրէն յարաբերութեան մէջ էր կեդրոնին հետ : Գարահիսար-Կիրասոն գիծը Պոլսոյ ճանապարհին վրայ գտնուելուն համար, բնականաբար մեր քաղաքը օճախը կը դառնար Փոքր-Հայքի յեղափոխական շարժման : Ըսել կ'ուզեմ, Ակնայ, Արաբկիրի, Տիվրիկի, Քեմախի, Արմտանի, մասամբ մըն ալ Պարբերդի : Մալաթիացիք ամբողջ եղանակին երբեմն վերել յիշուած գիծով կը ճանապարհորդէին Թուրքիոյ մայրաքաղաքը :


Գանիէլ Չափուշի հայդուկները թրծուած են այս յեղափոխական քուրային մէջ : Առաջին առթիւ, խումբին համանուն ղեկավարը, Թէօտերկիցի Բարսեղ եւ Սեդրակ, ինչպէս նաեւ Գալուստ Անդրէասեանը (յեղափոխական անունով « Յակոբ »), որ եղերական վախճան մը ունեցաւ Պարբերդի մէջ :

Արծաթախառն հանքը, — արդէն ըսած եմ իր ատենին, — Լճէսէ կը կոչուէր մօտակայ յոյն գիւղին անունով : Մինչեւ 1896 անգլիական ընկերութիւնը շահագործեց այս հանքը. յաջորդ տարին դոցուեցաւ : 1882ին երբ հաղիւ վեց տարեկան էի, հանքին մօտէն էյրիպելի կողմը ճամբայ շինեցին : Ես կը կարծեմ թէ նախընտրելի պիտի ըլլար օգտագործել վաղեմի գիծը, որ Գարահիսար-Կիրասոն ճանապարհը աւելի պիտի կարճեցնէր :

Լճէսէի հանքէն ելած նիւթը « ձիւհէր » ըսուած փոշին էր, որ վերը յիշուած ճանապարհով կը տարուէր ծովեզերք, Լոնտոն դրկուելու համար : Այս փոխադրութիւնները առհասարակ կը կատարէին մեր կուսակցական տղաքը : Չորիներու վրայ բեռցուած ապրանքները Կիրասոն հասած ժամանակ, Հնչակեան երիտասարդները նամակներ ու յեղափոխական թերթեր կուտային հայ ճամբորդներուն, որոնք կը փոխանցէին Փոքր-Հայքի մասնաճիւղերուն :

Չորեպան Ղուկաս աղբարը, — այն որուն մեծ հայրը Հէքիմ Պապը տարած էր Երուսաղէմ հսկայ կարաւանով մը, — իր նախահօր արժանի դէմք մըն էր : Ժամանակին մինչեւ 50-60 ընտիր տեսակի

Ղորի ունեցած էր այս ընտանիքը, Պուսէյիտէն դէպի Ս. Երկիր
 աւխտաւորներու երթն ապահովելու համար: Մեր օրով այս թիւն
 իջած էր քսանի, բայց եւ այնպէս Ղուկաս աղբարը բաւական գործ
 տեսած է թէ՛ թղթատարի եւ թէ՛ զէնքի փո-
 խադրութեան մէջ: Զօր. Անդրանիկի բանա-
 կին մէջ ծառայող Յարութիւն եւ Արամ
 Թութեանները այս երեւելի գործիչին զա-
 ւակներն էին:



Գ. ԱՐԽԱՆԵԱՆ

Հաճի Գալուստ Արխանեանը քանի մը հեղ
 տեսած եմ: Արմտան դացած ժամանակ տու-
 նը կ'իջեւանէր նոյն երկրացի Մարտիրոս
 աղային, որ մեզի շատ մօտիկ էր: Նոյնիսկ
 պատահած է որ մեր այս դրացին զէնք պահէ
 մեր տան մէջ: 1889ին անդամ մըն ալ հան-
 դիպած եմ Ռուբէն Շիշմանեանին (Երզնկացի
 նշանաւոր «Քեռի»), — երբոր ձիուն վրայ
 ուսպ բեռցած դուրս կ'ելլէր Գարահիսարէն,
 որպէս Քեմախցի վաճառական...

Որոշ է ուրեմն որ Շ. Գարահիսար հզօր
 ազդեցութիւն մը ունեցած է Փոքր-Հայքի
 յեղափոխութեան դարբնումին մէջ: Շրջակայքի Աներզի, Պու-
 սէյիտ, Զրաուք եւ Աշխարհադաշտի խոշոր գիւղերը՝ Բիւրք՝
 Արծալտեր, Կթանոց, Անդրէաս, Մշակնոց, Ալամոնիկ, Սեւինտիք
 եւայլն կը սկսին անդամադրուիլ Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան,
 հետզհետէ զինուել եւ խումբեր կազմել:

Առաջին դէպքը հետեւեալ կերպով պատահած է. — Ղոյնիկ
 Տէրտէրին տղան հաճի Կարապետ դասատու կը կարգուի Պուսէյիտ
 գիւղի վարժարանին: Այս մարդը ծանօթանալով Ղուկաս Թութեա-
 նին, վերահասու կ'ըլլայ անոր գործունէութեան եւ ինքզինքը
 համակիր կը ձեւացնէ Հնչակեան կուսակցութեան:

Տարին կը լրանայ, գիւղացիները կ'երեւի գոհ չեն մնար Հաճի
 Կարապետէն ու կը ճամբեն: Սակայն, վարժապետը 5-6 ոսկիի
 պահանջ կ'ունենայ. հողաբարձուները կը խոստանան ամիսէ մը
 վճարել: Ասոր վրայ, մարդը կ'երթայ կը գտնէ Հաճի Յակոբ աղան,
 որ զինքը պաշտօնի կոչած էր գիւղին վարժարանին մէջ: Այս ազ-
 դայինը, — անդամ Գարահիսարի դատարանին, — լսելէ վերջ
 դասատուին գանդատը, « հոգ չէ » կը մըթմըթայ զթին տակէն:

Ամսոյն վերջաւորութեան, գիւղացիք նորէն չէին դորձադրեր
 իրենց խոստումը, առարկելով թէ « Հաճի Կարապետ տղոց բան չէ
 ոտրվեցուցած »: Վէճը կը մեծնայ այս պատճառով: Դասատուն
 կրկին ափ կ'առնէ հայ դատաւորին դուռը եւ կ'ըսէ. — « Ինչպէս

որ դուն զիս վարժապետ կարգեցիր Պուսէյիտի դպրոցին, անանկ
ալ դրամը ա՛ն եւ տուր ինձի »:

Հաճի Յակոբ Ղարիպեան « բան մը կ'ընեմ » ըսելով ճամբու կը
դնէ մարդը: Կարապետ աղան երթալ գալէն կը զգուի, կը կրքոտի
ու մատնութեան սպառնալիք կ'ընէ Ղուկաս աղբօր: Որոչ է թէ՛ ո՛չ
ինքը, ո՛չ ալ հայ դատաւորը այնչափ լուրջ եւ հեռատես չեն եղեր,
որ պատճառ դարձան գործին այս վիճակին հասնելուն: Այս սպառ-
նալիքէն վերջ, կազմակերպութիւնը լրտես կը ձգէ վարժապետին
ետեւէն եւ կը տեսնէ որ գիշերանց թրքական թաղէն կուգայ:

Հաճի Կարապետ իրօք կառավարութեան գացած եւ լուր տուած
էր թէ՛ « ջորեպան թութեանը հայ գաղտնի ընկերութեան կը
պատկանի եւ զէնք կը փոխադրէ »:

Յաջորդ օր, Ղուկաս աղբարը կը տանին, երկար բարակ հարցու-
փորձ կ'ընեն, տունը կը խուզարկեն, բայց ոչ մէկ կասկածելի բան
գտնելով ազատ կ'արձակեն:

Վերջապէս, յեղափոխական մարմինը Կարապետ աղան ահաբե-
կելու վճիռ կուտայ եւ կիրասոն կը ճամբէ Ղուկաս աղբարը մաս-
նաւոր առաքելութեամբ: Երկու օր վերջ, քաղաքին ներքեւը, Թեք
զավախ ըսուած տեղը, վարժապետը սպաննուած կը գտնեն, լեզուն
ալ կտրուած...

Կառավարութեան մարդիկը կուգան կը քննեն մատնիչին դիակը:
Յետոյ հարցուփորձի կ'ենթարկեն իր կինը, որ գիտցածին պէս կը
բարբառի. — « Ամուսինս իրիկունը ինձի ըսաւ որ Հաճի Յակոբ
աղային կ'երթամ »:

Գարահիսարի « մահքեմէ »ի աղան իսկոյն կը ձերբակալուի,
իրեն հետ միասին շատ մը մսագործներ, որովհետեւ արիւնոտ
դանակը անութին քովը քսուած էր, ինչ որ յատուկ էր Գարահիսարի
զենումի մասնագէտներուն: Երկար բարակ դատավարութիւններէ
վերջ, կալանաւորներէն շատերը ազատ կ'արձակուին, բայց ան-
խուսեմ մէկ քայլով վեցի տեղ 600 ոսկիի կը պայթի մեր աղբրանց
զլխուն...:

Հաճի Յակոբի եղբօր տղան՝ Գրիգոր Ղարիպեանը (« Հրաչեայ
Մարալ » յեղափոխական անուանակոչումով), Շ. Գարահիսարէն
իսկոյն կը հեռանայ, որովհետեւ իր վրայ կասկած կար: Սակայն,
կառավարութիւնը պինդ կը բռնէ իր հօրեղբօր օձիքէն եւ թող չի
սար: Այս դէպքը կը պատահէր 1892ին: Աչքի առջեւ բերէք, որ
ամբողջ 16 տարի խեղճ Հաճի Յակոբ Ղարիպեանը բանտէ բանտ
քշեցին. Գարահիսարէն Սեբաստիա, Սեբաստիայէն Տիգրանակերտ:
Սահմանադրութեան տարին, երբոր ազատ կ'արձակեն վերջապէս,
այդ յաղթանգամ մարդը բոլորովին ծերացած էր:

Այս դէպքը ուշադրութիւնը կը գրաւէ կառավարութեան, որ
կը սկսի խուզարկութիւններ կատարել եւ նեղել Հայերը: Նորակազմ

կոմիտէն ալ կը պրկէ իր ուժերը եւ կազմակերպութիւնը առաջ կը տանի: Չէնք ձեռք բերելու համար մեծ գումարի պէտք կար, որովհետեւ ուսական մէկ սիւրմէլի հրացանը 10-12 կարմիր ոսկի կ'արժէր այդ շրջանին: Միմիայն հարուստները կրնային այդ ծախքին տակ մտնել, բայց անոնցմէ շատ քիչերը ինքնապաշտպանութեան գործին նուիրուելու տրամադրութիւն ցոյց կուտային: Մինչ անդին երկու հարիւր երիտասարդները զինելու խոշոր հարցականը կը ներկայանար սրտցաւ ազգայիններու խղճին առջեւ:

Հնչակեան կուսակցութիւնը կ'որոշէ դրամ պահանջել ունեւոր Հայերէն, ի հարկին սպառնալիքով եւ խստութիւն բանեցնելով: Մեծ մասը բան մը կուտայ, բայց Աբգար Ղուկասեան եւ Բղուկենց ազգատոհմէն Սիմոն Օղանեան կը մերժեն: Յեղափոխական Կոմիտէն երբոր կ'իմանայ թէ այս մարդիկը ուխտի պիտի երթան Երուսաղէմ, վեց հոգի կը նշանակէ, որպէս զի ճամբան կողոպտեն:

Տղաքը դարանակալ կը սպասեն Կիրասոնի ճամբուն վրայ եւ այն ժամանակ որ այդ ուխտաւորները անկէ կ'անցնին, անոնց քսակը կը թռցնեն: Երիտասարդներէն Արամ Չախառեան լաւ ծպտուած չըլլալուն համար կը ճանչցուի Աբգար աղայէն, որ կ'ըսէ երեսին. — « Ծօ՛, Արամ, դո՞ւն ես... »

Տղան կը զգուշանայ հայերէն խօսելէ, ինքզինքը օտար կը ձեւացնէ եւ թուրքերէն պատասխան կուտայ, բայց ի՛նչ օգուտ: Անսիրտ աղաները Գարահիսար վերադառնալով, իսկոյն լուր կուտան կառավարութեան, որ այդ վեց հոգին կը ձերբակալէ եւ կը բանտարկէ: Ասոնք հետեւեալներն էին. — Արամը, Արմտանցի Գասպարը (որուն « Ծըչըճի » կ'ըսէին իր արհեստին համար), Ամբակում Բամպուքճեանը, ինչպէս նաեւ Սարբերդցի երկու երիտասարդներ, երկուքին ալ անունը Յովհաննէս: Վեցերորդ տղուն անունը միտքէս ելած է:

Իրաւ է թէ Սարբերդցիները չէին մասնակցած « գործողութեան », բայց զանոնք ալ կը կալանաւորեն իբրեւ զրգիչներ, մանաւանդ որ իրենց վրայ կարեւոր նպատակներ կը բռնեն: Այս դէպքը կը պատահէր 1893ի աշնան: Բանտարկեալները շղթայի կը զարնեն եւ կը ձեռնարկեն դատավարութեան, որ շատ երկար կը տեւէ:

Ես այն ժամանակ 18 տարեկան պատանի մըն էի: Միշտ ինձի դրամ կուտային, շուկայէն գնումներ կ'ընէի ու կը տանէի բանտ Արամ Չախառեանին, որ մեր կնքահայրն էր: 1894 Յունիս 13ին, զեռ դատավարութիւնը չվերջացած, մեր տղաքը կը յաջողին բանտէն փախչիլ: Տարաբախտաբար զինով են եղեր. փոխանակ պահակներուն զէնքերն առնելու եւ պրծելու, անխոհեմութիւնը կը գործեն կռիւի բռնուելու անոնց հետ ու զանոնք մեռցնելու շափ առաջ կ'երթան: Չէնքի ձայներէն ոստիկանները ու շրջակայ թուրքերը կը

վազեն կուզան, այդ կտրիճ տղաքը կը խողխողեն եւ անոնց մարմինները կը ձգեն փոսի մը մէջ:

Այս սոսկալի դէպքէն վեց օր առաջ, այսինքն 1894 Յունիս 7ին, բարեբախտաբար կերճանիս գացած էի, եթէ ոչ զիս ալ բռնած պիտի ըլլային, որպէս բանտը դէնք եւ խարտոց տանող: Եւ ասիկա պարապ մտաւախութիւն մը չէր, որովհետեւ ինծի տարեկից Գառնիկ Մազմանեանը բռնած ու բաւական չարչարած էին: Այս բոլորը պատճառ դարձան որ 4-5 հոգի ծուարած ապրին:

Փոքր-Հայքի Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչը՝ Արամ Աշրքպաշեան, 1894ի Մայիսին կը հասնէր Ե. Գարա-



հիսար: Այնպէս կ'երեւի թէ Պոլսէն ուղղուած հեռագրով մը մատնուած էր ան, որովհետեւ կառավարութեան մարդիկը անմիջապէս ձէնլէթցոնց խանի տիրոջ մօտ իր վրայ տեղեկութիւն առնելու կ'երթան: Յեղափոխական գործիչը արդէն գացած էր հայկական թաղը, ուստի պանդոկապետը խիստ հարցուփորձերու վրայ իրականութիւնը կ'ըսէ, բայց կ'աւելցնէ թէ « Արամին քովը ոչ ոք եկած է »: Այդ թուականէն մինչեւ 1906ի Յունիս ամիսը, միշտ կը հետապնդուէր թրքական իշխանութենէն:

ԱՉԸՔՊԱՇԵԱՆ

Արամ Աշրքպաշեան բոլոր ցրուած ուժերը կը հաւաքէ եւ կը կեդրոնացնէ միակ ղեկավարութեան մը տակ: Այս վարչազէտ ու խիղախ գործիչը կազմակերպչական սքանչելի աշխատանք տարաւ շրջաններն ու ամէն կողմ յեղափոխական բջիջներ ստեղծելով, բայց պակասաւոր էր բարոյապէս: Հայկական այն մթնոլորտին մէջ, — ուր պատուախնդրութիւնը գերազոյն առաքինութիւն մը կը նկատուի, — յեղափոխական մարդուն սանձարձակութիւնները ընտանեկան յարկերէն ներս, շատ դժուր ձգեցին ժողովուրդը: Յանուն ճշմարտութեան, այսչափը հերիք է նահատակ յեղափոխականի մը համար:

Հնչակեան անդրանիկ գործիչին ներկայութիւնը պատճառ կ'ըլլայ որ կառավարութիւնը աւելի խստացնէ իր հետապնդումները հայ փախստականներուն հանդէպ: Կիրասոնի ճանապարհին վրայ երկու « քորտոն » (պահականոց) կը հաստատէ, նոյնպէս քաղաքին զոյգ մը թաշխանէներուն մէջ:

Արծապտեր առեւտրական կարեւոր աւան մըն էր, աչքառու իր հոծ հայութեամբ եւ յեղափոխական գործունէութեամբ: Կառավարութիւնը լուր ունէր. շարժումը զսպելու համար կը նշանակէ սրիկայ միւտիւր մը, — էսէթ էֆէնտի: Այս մարդը ոչ միայն անսովոր բռնութիւններ ի գործ կը դնէ հայ զիւղերուն վրայ, այլ մեր հարսերը բռնաբարելու հետամուտ կ'ըլլայ եւ մասամբ մըն ալ կը հասնի իր

չնական նպատակին: Միևտիւրը ունէր Եփրեմ անունով համբալ մը, որ ամէն տեսակ ստորնութեան կը զիջանի վարպետին աչքը մտնելու համար:

Վերջապէս, Էսէթ Էֆէնտիի հայաստանացի քաղաքականութիւնը անտանելի չափերու կը հասնի եւ կուսակցութիւնը կը վճռէ երկու զազանները մէջտեղէն վերցնել:

Հնչական մարմինը Ֆետայիներու խումբ մը կը կազմէ Գալուստ Անդրէասեանի գլխաւորութեամբ: Խումբին կը մասնակցէին Ղուկաս Տէօվլէթեան, Թէօտերկիցի Բարսեղ, Մկրտիչ Թացեան եւ ուրիշ 15 երիտասարդներ: Այս Ֆետայիներու խումբին ընդհ. ղեկավարն էր Ռուբէն Շիշմանեան: Մեծ համբաւ չահած էր ան, դարձած աս ու սարսափը շրջակայ Թուրքերուն, որոնք զինքը Դանիէլ Չավուշ անունով կը ճանչնային:

1894ի վերջերը, յարմար ժամանակ մը զիշերանց կը մաքրեն Եփրեմը ու Արծալտերի միևտիւր Էսէթ Էֆէնտին: Այս ահաբեկումը շատ ծանր հետեւանքներ կ'ունենայ Շ. Գարահիսարի եւ շրջակայ գիւղերուն համար: Բազմաթիւ Հայեր կը ձերբակալուին, խոչտան-գումներու կ'ենթարկուին եւ տեղի կ'ունենան շոնդալից դատավարութիւններ:

Թրքական ատեանի ընդհ. դատախազ Մահմուտ Նէճիպ չափէն աւելի աչքբացութիւն ցոյց կուտայ եւ անիրաւորէն կը դատապարտէ անմեղ Հայեր: Մահուան դատապարտուածներուն մէջն էին Աւագ Տուրիկեան, Սիմոն Ճզնաւորեան (Սիմոն Պարզեւ), Պուսէյիտցի Յակոբ Փափաղեան, Աներդիցի Վարդան Շահինեան, Գրիգոր Տօնիկեան, Միսաք Ճէօպէլէկեան եւ Արամ Պարոնվարդեան:

Չերբակալեալներէն ներկարար Միսաք Ճէօպէլէկեանին միտերը աքծանով կ'ոլորեն, բան չի խօսիր: Նմանապէս, քանամեայ Տիգրան Հիւսիսեանը եւ Յարեթ Թեվէքէլեանը շատ կը տանջեն, անոնք ալ դադտնիք դուրս չեն տար: Սակայն, խանութպան Արամ Պարոնվարդեանը, որ շատ լաւ մարդ էր, սոսկալի ծեծին չի դիմանար եւ ընկերները կը մատնէ:

Վերը յիշուած դատապարտեալներէն զատ ընդհ. դատախազը ի բացակայութեան մահուան վճիռ կուտայ Ղուկաս աղբօր, Դանիէլ Չավուշի, Մկրտիչ Թացեանի եւ այլոց մասին: Դատավարութիւնը 5-6 ամիս կը տեւէ: Ի վերջոյ եօթը դատապարտեալները ճամբայ կը հանեն Պոլիս, հոն կախելու համար Համիտի հրամանով: Դժբախտ տղոց տարուած ժամանակ, այնպիսի սրտաչարժ տեսարան մը կը ստեղծուի անոնց ընտանիքներու լաց ու կոծով, որ ամէնէն անգութ մարդուն սիրտը պիտի բզբտէր:

Բայց, Աստուած հետն էր այդ անձնանուէր յեղափոխականներուն, որոնք վասն իրենց անիրաւեալ եղբայրներուն, իրենց մատաղ կեանքը վտանգի մէջ դրած էին: Անոնց Պոլիս հասնելէն օր մը առաջ,

կախաղանը արդիլուած է եղեր հետեւեալ պարագաներուն տակ .
առաւօտ մը, Քրանսական դեսպանին աղջիկը, հրապարակէ մը
անցած ատեն՝ կը տեսնէ կառափնատ բարձրացած Հայեր եւ յուզու-
մէն կը մարի: Անմիջապէս դեսպանատուն կը փոխադրեն, դեղ
դարման կ'ընեն եւ երբոր խեղճը ուշքի կուգայ, պատճառը կը
հարցնեն: Աղջիկը լալով տեսածը կը պատմէ հօրը, որ զայրացած
Երլտըղի պալատը կ'առնէ շունչը եւ կ'ազդարարէ Կարմիր Սուլթանին .
— « Հեղ մըն ալ ասանկ կախաղան չտեսնեմ Պոլսոյ մէջ, եթէ ոչ
պատասխանատու չեմ հետեւանքներուն »: Ասիկա գոնէ իմ լսածն
է, չեմ գիտեր թէ որչափ ուզիղ է:

Միւս կողմէ, Օրմանեան Պատրիարք դիմումներ կ'ընէ Երլտըղի
բռնաւորին (նոյնիսկ կ'ըսեն ոուս դեսպանն ալ կը միջամտէ) եւ
յաջորդ օր այդ եօթը դատապարտեալներու մահապատժի ուր ցկեանս
աքսորի կը վերածուի ի Շամ Թարապլուս: Հինգ տարին լրացած,
կայսերական ներումով երեք հոգին վերադարձան Շ. Գարահիսար,
իսկ միւսներէն Արամ Պարոնվարդեան՝ Եգիպտոս, Սիմոն Ճգնաւոր-
եան՝ Ամերիկա, Յակոբ Փափաղեան՝ Յունաստան եւ Վարդան Շա-
հինեան՝ կարծեմ Ռուսմանիա գացին իրենց ազատ արձակուելէն վերջ:

1892ի շրջանին Գարահիսարի միւթեսարըՓն էր Մուսթաֆա
պէյ, որ յետոյ Իրիզէի կառավարիչ եղաւ: Այս հայատեաց մարդը
իր աղջիկը տուած էր Անդրէասի գայմազամ Ճավիտ պէյի (Սուլէհիբի
Չեչէն օղլու գերդաստանէն), որ երբեք վար չէր մնար իր աներհօր-
մէն: Երկուքը մէկ եղած՝ մեր աղբրտիքը անընդհատ հալածեցին
եւ անտանելի դարձուցին կեանքը Գարահիսարի մէջ:

Միջանկեալ դէպք մըն ալ պատմեմ, որ տեղի ունեցած է 1895ի
գարնան: Նարդոս անունով հայ կին մը, օր մը քաղաքէն Թամզարա
գացած ժամանակ, կ'անպատուուի թուրք ոստիկաններու կողմէ:
Նոյն շրջանին, Համիտեան կառավարութիւնը հայատեաց միւտիւր
մը տեղաւորած էր վերոյիշեալ գիւղաւանին մէջ, միաժամանակ
կրկնապատկած ոստիկանութեան թիւը, ինչպէս ըրած էր միւս
հայաբնակ վայրերուն մէջ: Այդ թշուառականը կարեւորութիւն չի
տար եղածին, այնչափ կը չարչարէ Հայերը՝ իր արբանեակներուն
հետ, որ ա'լ անկարելի կ'ըլլայ համբերելը, ուստի անիրաւեալները
կուգան քաղաք եւ կը բողոքեն: ՄիւթէսարըՓին կը ներկայանայ
պատգամաւորութիւն մը, առաջնորդ հայր սուրբին գլխաւորու-
թեամբ, խնդրելով կառավարիչէն որ արդար պատիժ մը տնօրինէ
անբարոյական ոստիկաններուն: Այս վերջինը, Հասան Ազմի պէյ,
ընթացք չի տար եղած դիմումներուն, կացութիւնը աւելի կը վատ-
թարանայ եւ Թամզարայի միւտիւրը՝ կատղած, սարսափելի կերպով
կը ծեծէ դանգատողները: Ուրիշ Հայեր ալ կը միջամտեն, ասոնք
ալ հալածանքի կ'ենթարկուին եւ կը խոչտանգուին չարաչար: Գործը

կը մեծնայ, բաւական վիրաւոր ազդայիններ կուզան Գարահիսար
ու կ'ըսեն առաջնորդին. — « Ահաւասի'կ, մեր վիճակը այս է » :

Առաջնորդ հայր սուրբը կրկին ազդու բողոքազիր կուտայ միւ-
թէսարըՔին, ահանջ կախող չըլլար: Ասոր վրայ, քաղաքին ազաները
ժողովի կը նստին առաջնորդարանին մէջ եւ որոշում կուտան որ
ամբողջ Թամզարան գայ Շապին Գարահիսար եւ բնակութիւն հաս-
տատէ գերեզմաննոցին մէջ, ի ցոյց կառավարութեան անտարբերու-
թեան իրենց չարչարանքներուն հանդէպ:

Թամզարայի հայ ազգաբնակչութիւնը իրօք մէկ մարդու պէս
ոտքի կ'ելլէ, կը թափուի քաղաք եւ վրան կը զարնէ գերեզմանատան
մէջ: Շուկան կը գոցուի, առեւտուր տեղի չունենար: Այս խաղաղ
ցոյցը կ'երկարաձգուի 48 օր. ամբողջ այդ շրջանին Գարահիսարի
հայութիւնը կը հոգայ Թամզարայի իր դժբախտ հայրենակիցները,
նիւթապէս, բարոյապէս եւ մա'նաւանդ ուտելիքով: Այդ միջոցին
քսանէ աւելի հեռագիրներ կը տեղացնեն Պոլիս, Սուլթան Համիտին,
ներքին գործոց նախարարին, Ազգ. Պատրիարքարանին եւ Սերաստիոյ
կուսակալին: Վերջին օրերուն կուզայ պատասխան մը, որ հետեւ-
եալը կ'ըսէ. — « Տեղերնիդ դացէք, մենք պէտք եղածը կ'ընենք »:

Խեղճ մարդիկը կը խորհին որ օգուտ չկայ, որովհետեւ այդ
օրերուն Պապը Ալիի դէպքն ալ պատահած էր: Ճարը կտրած՝ ժողո-
վուրդը կը վերադառնայ Թամզարա եւ ամէն մարդ իր գործին կը
սկսի:

Մահմուտ Նէճիպի վրայ խօսած ատեն, յիշեցի թէ այդ ընդհ.՝
դատախազը ինչքան խիստ էր իր վճիռներուն մէջ: Բազմաթիւ
Հայեր ի բացակայութեան մահուան դատապարտած էր, իսկ իր
տուած ամենաթեթեւ պատիժը 15 տարի կ'ըլլար: Ակներեւ իրողու-
թիւն մըն է, որ մեր եղբայրները գէնք վերցուցած էին առաւելապէս
ինքնապաշտպանութեան համար եւ չէին կրնար անպատիժ ձգել
հայաստանի պաշտօնատարները: Եւ յարմար ժամանակը կը հասնի
իրաւամբ:

Ընդհ. դատախազը « ի վարձ իր բարւոք ծառայութեանց » պաշ-
տօնի բարձրացում կը ստանայ համիտեան կառավարութենէն: Եւ
փառաւոր « լանտօ » ի մը մէջ բազմած՝ իր գեղանի կնոջ կողքին,
չորս ձիաւոր ոստիկաններու ուղեկցութեամբ, կարծեմ 1895ի Մա-
յիսին, ճամբայ կ'ելլէ դէպի իր նոր պաշտօնատեղին, Սերաստիա:
Անդրէասէն անցած ժամանակ, հայ տղաքը կը տեսնեն եւ կ'երթան
լուր կուտան տեղւոյն գործօն մարմնին, որ անմիջապէս ժողովի
կը նստի Գրիգոր Պարոնեանի նախագահութեամբ: Բոլորը համա-
ձայն կ'ըլլան որ գազանը պէտք է մէջտեղէն վերցուի, որպէս զի
չերթայ ուրիշ անմեղ Հայեր դատապարտէ այլուր, բայց կ'էսէն
աւելին Գալուստ Անդրէասեանի դիխաւորութեամբ կ'ուզէ նախապէս
կեդրոնէն հրահանգ ստանալ եւ ըստ այնմ գործել: Շատ երկար կը

տեւեն վիճարանութիւնները, ի վերջոյ Ղուկաս աղբար ընդվզելով
ոտքի կ'ելլէ ու կ'ըսէ .

— Անդրէասէն մինչեւ քաղաք եօթը ժամ է . եթէ մենք ձիաւոր
մը զրկենք կեդրոն ու ըսենք թէ չորս ժամէն հասնի այնտեղ, մինչեւ
որ կուսակցական ժողով գումարուի եւ վճիռ տայ, երկու ժամ ալ
ան կը տեւէ . նոյնպէս վերադարձը չորս ժամ հաշուելով կ'ընէ տասը
ժամ : Մինչդեռ մենք հազիւ ութը ժամ ունինք, որպէս զի ժամա-
նակին մեր դիրքերը դրաւենք եւ դորձը գլուխ հանենք :

Ղուկաս Տէօվլէթեան հետզհետէ աւելի բորբոքելով, հրեղէն
աչքերը կ'ուզղէ իր ծրագրի հակառակորդներուն եւ կը դուռայ անոնց
երեսն ի վար .

— Ընկերներ՛ր, ես կեդրոն մեդրոն չեմ ձանձնար . ըսել է մենք
դատողութիւն չունինք եւ այնչափ անճարակ ենք, որ ի վիճակի
չենք տերոր մը կատարելու մեր սեփական պատասխանատուութեամբ :
Այս դորձը յետաձգելու չի դար, բնաւ չեմ ուզեր առիթը ձեռքէ
փախցնել : Ես հիմա պիտի երթամ, ո՛վ որ ինձի պիտի ընկերանայ՝
թող հրամմէ՛ :

Այս խօսքին վրայ, խումբը մէկ մարդու պէս ոտքի կը կանգնի
եւ պատրաստուելով կը հետեւի հերոսին : Ճամբան տղաքը մտքերու
փոխանակութիւն կ'ընեն, կ'որոշեն դորձողութեան վայրը ու ահա-
բեկման ծրագիր մը կը մշակեն :

Լուսածաղին՝ հայդուկային խումբը արդէն հասած է Անդրէասի
եւ Չարայի միջեւ գտնուող Չօպան Տերէսի ըսուած կիրճին բերանը :
Տղաքը կրկին խորհուրդի կը նստին ու տեղւոյն վրայ վերջնական
կարգադրութիւններ կ'ընեն : Յետոյ, քիչ մը բան կ'ուտեն, ամէն
մարդ կ'անցնի իր դիրքին գլուխը : Մինչ, լուռ եւ ուրախ տրա-
մադրութեամբ կը սպասեն դաղանին, դժբախտաբար ան բաւական
կ'ուշանայ, որովհետեւ Անդրէասէն մինչեւ հող մօտաւորապէս 25-30
քիլոմէթր ճամբայ է :

Վերջապէս, հեռուէն կ'երեւայ լախոս կառքը եւ երբ կը մօտե-
նայ ձիաւորներուն հետ, տղաքը ահաւոր համազարկ մը կը բանան
անոնց վրայ, « անձնատուր եղէք » գոռալով : Ոստիկան-զինուորները
պահ մը սարսափի կը մատնուին յանկարծական կրակէն, յետոյ
կ'ուզեն դիմադարձել, բայց խմբապետը կը հրամայէ զէնքերը վար
ձգել, վախնալով որ այդ պարագային կը սպաննուին :

Ղուկաս աղբար քանի մը հողիի հետ դուրս կը նետուի դիրքէն,
զինաթափ կ'ընէ չորս ոստիկան-զինուորները եւ տղաքը պահակ կը
կեցնէ անոնց մօտ : Յանդուզն յեղափոխականը ապա կ'երթայ
լախոսին դուռը կը բանայ ու կ'ըսէ դատախազին . — « Էֆէ՛նտի,
հետս եկէք, ձեզի հարցում մը պիտի ընեմ » :

Գազանը կը սմքի, սարսափէն լեղուն կը կասուի եւ կը դողայ

չան պէս: Իսկ կինը, որ շատ դեղեցիկ չերքէզուհի մըն էր, կուրծքը
կը բանայ ու կը պաղատի.

— Ինչ որ կ'ուզէք ինձի ըրէք, ահաւասիկ պատիւս ալ ձեզի.
մինակ էֆէնտիս ազատեցէք, մի՛ տանիք:

Չերքէզուհին պինդ կը փաթթուի ամուսնոյն եւ չի ձգեր: Բայց,
Ղուկաս աղբար կը մնայ հանդարտ ու մեղմօրէն կը սաստէ.

— Հանը՛մ, ծածկէ կուրծքդ. մենք հայ Փետայի ենք, ինչպէս
որ մեր կանանց պատիւը կը պաշտպանենք, այդպէս ալ մեր թշնա-
միներուն կանանց պատիւը դիտենք պաշտպանել: Չեր էֆէնտիին
բան պիտի չընենք. մինակ հարցում մը ունինք եւ երկու օր վերջը
կը վերադարձենք...

Այս ըսելով, մարդուն թեւէն բռնածին պէս դուրս կը քաշէ
կառքէն եւ կը տանի որոշուած տեղը: Լեռնային դատարանը խոր-
հուրդի կը նստի, ու ինչպէս որ Մահմուտ Նեճիպ անչափ Հայեր
մահուան գիրկը դրկած էր, այնպէս ալ գաղտնի դատը կը տեսնեն
հող եւ գինքը մահուան կը դատապարտեն: Ղուկաս աղբար ատրճա-
նակը քաշելով սրտին կը դամէ, ու անդուժ դատախազը վայրկե-
նապէս անչնչացած՝ կը տապալի գետին:

Վճիռին գործադրութենէն վերջ, անմիջապէս կուզան, ոստիկան-
գինուորներուն զէնքերը կը վերադարձնեն ու կ'ազդարարեն.

— Այս հանրմը մինչեւ Չարա անվնաս պիտի տանիք: Վա՛յ ձեզ,
եթէ լսենք որ գլխուն ոեւէ փորձանք եկած է, ձեզի ողջ չենք թողուր:

Ղուկաս աղբար չերքէզուհիին կրկին հաւաստելէ վերջ թէ՛ « Մի
քանի օրէն էֆէնտին անվնաս կը հասնի իր մօտ », կը հրամայէ
կառապանին որ շուտով քշէ ձիերը, ինչ որ մարդը կը գործադրէ
վայրկենաբար:

Ոստիկան-գինուորները առանց տեղ մը կանգ առնելու կը հասնին
Չարա եւ եղելութիւնը կը պատմեն կառավարութեան: Տեղւոյն
իշխանութիւնը չորս կողմ հեռագիր կը տեղացնէ, նոյն ատեն որչափ
ձիաւոր ոստիկան որ ունի իր տրամադրութեան տակ, ճամբայ կը
հանէ դէպի Չօպան Տերէսի: Անդրէասէն եւ Գարահիսարի շրջակայ-
քէն կուզան կը լեցունին, որպէս զի պաշարեն հայդուկային խումբը,
բայց ո՞ւր պիտի գտնեն: Միակ բանը որ երեւան կը հանեն, դատա-
խազին դիակը կ'ըլլայ, զոր քանի մը օր վերջ կը դրկեն իր ընտա-
նիքին, համաձայն Ղուկաս աղբոր տուած խոստման...: Մահմուտ
Նեճիպի գրպանէն սապէս գրուած թուղթ մը կը գտնեն. — « Անմեղ
մարդոց զրպարտելով մահուան վճիռ տուող պաշտօնեային վերջը
այս է »:

Թուրք ոստիկանները սոսկալի խժգժութիւններ ի գործ կը դնեն
հայ գիւղերուն մէջ: Խուզարկութիւններ, ձերբակալութիւններ,

ծեծ, բանտ, աննկարագրելի հալածանքներ, բայց ոչ մէկ հետք չեն
կրնար գտնել, որովհետեւ յեղափոխական շարժումը լաւ կազմա-
կերպուած էր: Կառավարութիւնը ձեռք կը դնէր նաեւ թղթատարա-
տուններու վրայ, խիստ գրաքննութենէ կ'անցընէր նամակները:
Օրինակի համար, եթէ ոեւէ ազգային գրէր իր նամակին մէջ.
« Գործը լաւ պիտի ըլլայ », գիրն ընդունողը իսկոյն կը ձերբակալէին
ու կը բանտարկէին: Հակառակ այս բռնութիւններուն, հայ ժողո-
վուրդը ուրախ էր, անոր համար որ « Մայիսեան ծրագիր »ը մէջ-
տեղն էր եւ միշտ այն յոյսը կար որ մօտ էր փրկութեան ժամը:

ՍԵՒ ՕՐԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

1895Ի ՋԱՐԴԵՐԸ

ԵՒ ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՒՒՆԵՐԸ

Համիտեան կառավարութիւնը Սեպտ. 28ին կը կոտորէ Տրապիզոնի հայութիւնը, բայց լուրը Գարահիսար կը հասնի չորս օր վերջ, ապինքն 1895 Հոկտ. 2ին (հին տոմարով): Այս գոյժը կը բերէ Քեմալեանի յոյն կտրիճներէն Գարա Եորկին: Քաղաքին կուսակցական կոմիտէն ստիպողական ժողով կը գումարէ եւ սեղանի վրայ կը բերէ հետեւեալ հարցը. — « Եթէ կոտորած սարքուի Գարահիսարի մէջ, ի՞նչ դիրք պէտք է բռնել »:

Ճակատագրական խնդիր մըն էր, որ վիճարանութիւն չէր վերցնէր. բոլոր ժողովականները առանց բացառութեան կուուելու որոշում կուտան: Սակայն, գործը լրիւ գլուխ հանելու համար, անհրաժեշտ էր լաւ կազմակերպել ռազմամեքենան: Ուստի, անմիջապէս հաշուեկշիւր կ'ընեն ամէն տեսակ զէնքերուն ու մարտի ընդունակ ուժերուն, կը ցուցակագրեն եւ կը պատրաստեն ինքնապաշտպանութեան ծրագիր մը:

Տրապիզոնի կոտորածին կը յաջորդէ Բարերդինը, 1895 Հոկտ. 5ին, որուն գոյժը երեք օր վերջ կը հասնի քաղաք: Այս բոլորը անշուշտ արթնութեան կը մղէ ինքնապաշտպանութեան կոմիտէն, որ անյապաղ Գարահիսար կը հրաւիրէ Դանիէլ Չավուշի խումբէն Գալուստ Անդրէասեանը, Ղուկաս Տէօվլէթեանը եւ Թէօտերկիցի Բարսեղը: Այս մարտիկները գալուն պէս, հսկողութիւնը կը կրկնապատկուի եւ գիշերները պահակներ կը դրուին կարեւոր դիրքերու վրայ:

Միւս կողմէ, նոյն խումբէն երեք հայդուկներ կը զրկուին Բիւրք, որպէսզի կազմակերպեն Աշխարհազաշտի ինքնապաշտպանութիւնը:

Հոկտ. 9ին, երկուշաբթի օր, Համիտեան կառավարութիւնը Երզնկայի հայութիւնն ալ կը կոտորէ: Գարահիսարցիք ի՞նչպէս կ'իմանան լուրը, կ'արժէ որ ատ ալ պատմեմ սիրելի ընթերցողներուս:

Մեր հայրենակիցներէն մին կ'երթայ քաղաքին նամակատունը, որպէսզի հեռագիր մը ճամբէ իր բարեկամներէն մէկուն: Շէնքը կը գտնուէր շուկայէն հեռու, զուտ թուրքերէ բնակուած թաղի մը մէջ, հետեւաբար ոեւէ Հայ պիտի վարանէր գիշերուան ժամը 10ին այդ յանդուզն քայլն առնել: Մարդ չի տեսներ հոն. օդն անձրեւոտ

ըլլալուն, մութին մէջ կը մօտենայ փոքրիկ պատուհանին, որպէսզի մատնահարէ ու իր գործը կարգադրեն: Այն ժամանակ ականջին կը հասնի խօսակցութիւն մը: Ասոր վրայ, կամաց մը մէկ կողմ կը քաշուի եւ մտիկ կ'ընէ: «Մէմուր» ներէն մին իր նոր պաշտօնակցին կ'ըսէր. — Պու կիւն էրգիւննանտա էրմէնիլերի գըրմըշլար:

Պատուական Հայը երբ այս կը լսէ, յաջորդ առտուան կը թողու հեռագիրը եւ առանց վայրկեան մը կորսնցնելու կ'երթայ Նիկողոս էֆ. Այնաճեանին կը պատմէ եղածը: Գիշերանց կուսակցական ժողով կը դումարուի, իսկ յաջորդ օրն ալ խառն ժողով (1895 Հոկտ. 10ին):

Տրապիզոնի, Բաբերդի եւ Երզնկայի կոտորածներէն վերջ, մեր ազգայինները առաւել քան երբեք վճռեցին պրկել ուժերը եւ զօրացնել ինքնապաշտպանութեան մեքենան: Մարտական ծրագրին մաս կը կազմէր ծերերը, կիներն ու մանուկները տեղաւորել եկեղեցին եւ երկու թաշխանէներուն մէջ, որպէսզի իրենց լաց ու կոծով կռուողներուն գործը չխանդարեն:

Հին թաշխանէին վրայ խօսած եմ իր ատենին: Իբրեւ յաւելուածական տեղեկութիւն, միայն սա ըսեմ որ այս երկյարկանի շէնքը ունէր 42 բանալի, Մայր Եկեղեցիին ներքեւ կը տարածուէր ու իր տանիքը կը յանգէր սրբավայրի մուտքին:

Գալով նոր թաշխանէին, եռայարկ էր եւ կը գտնուէր միւսէն յիսուն քայլ հեռաւորութեան վրայ: Շէնքը ունէր երեք երկաթեայ դուռներ, 130 բանալի եւ դուրսը քսանի չափ խանութներ (հինը ատոնցմէ դուրկ էր): Ինչպէս միւսին մէջ, ներքին քսան մակազէնները եկեղեցապատկան կալուածներ էին: Յամենայն դէպս, այս երկու ազգային ստացուածքները իրենց դիրքով եւ զօրեղ կառուցմամբ, ամրաշէն բերդի մը պէս տոկուն էին եւ Մայր Եկեղեցիին հետ աղէկ գործ տեսան 1895ի սարսափի օրերուն:

Չորեքշաբթի, 11 Հոկտ.ի լուսածագին, թուրքերը կոտորեցին Երզնկայի գաւառակներէն Կերճանիսը, որ Գարահիսարէն 70 քիլոմէթր հեռու է: Ես ալ այնտեղ կը գտնուէի հօրս հետ: Այս գիւղը քառասուն տուն հայ բնակչութիւն ունէր, քաղաքին կապուած էր առեւտրական տեսակէտով եւ ջորեպաններ կ'երթային կուգային: Մենք 123 Հայեր էինք, 14 հոգին կոտորեցին վերոյիշեալ գաւառակին մէջ, որոնցմէ ինը հոգին քաղաքէն էին:

Կերճանիսի կոտորածէն վերջ, Հայերը լեցուցին տեղւոյն հազարապետին եւ գայմազամին տուններուն մէջ: 92 հոգի էինք այս վերջնոյն բնակարանին մէջ, ջարդուկոտոր եւ թալանուած: Կէսօրին մեզի ձաւարէ եղինձ բերին ու արտօնութիւն տուին, որ խուժանին չթալանած տուններէն երթանք անկողին բերենք, ոստիկաններու ընկերակցութեամբ: Երզնկացի Գրիգոր աղա մը կար, հնչակեան, ինձմէ խնդրուեցաւ որ թիթեղի մը մէջ դրուած ծխախոտը, տղուն

չորերը ու անկողինը պարկի մը մէջ տեղաւորեմ եւ իրեն տանիմ : Այդպէս ալ ըրի, բայց դայմադամին բնակարանը վերադարձած ատենս, ճամբան խանութներուն առջեւ լեցուն սիկառի թուղթ թափուած էր : Երբ ծռեցայ որ ժողվեմ, մէկէն Հնչակ թերթը տեսայ կարմիր տառերով, իսկոյն վերցուցի եւ դրի պարկին մէջ :

Քիչ մը անդին, Արտաշիկ Պուռնազեանին խանութին առջեւ երկու հատ եւս սեւատառ Հնչակ թերթեր գտայ, կամաց մը տարի իրեն տուի, շատ գոհ մնաց : Այս անգամ, ան ինծի պատուիրեց որ իր թալանուած խանութը մտնեմ եւ ղննապով կապուած թուղթերու տրցակը բերեմ . — « Ամա՛ն, Սարգի՛սս, եթէ ատոնք յաջողիս ձեռքս հասցնել, փրկուա՛ծ ենք », աւելցուց պատուական բարեկամս մտահոգութեամբ :

Անհոգ, արձակ-համարձակ ուղղուեցայ մարդուն խանութը, իբր թէ սիկառի թուղթ հաւաքելու դացած ըլլայի : Իրօք, կապոցը գտայ առանց դժուարութեան, ծոցս կոխեցի եւ ճամբան նոյնիսկ ապտակ կերայ թուրք ոստիկանէ մը : Է՛հ, որո՞ւն հոգը . ես այդ թուղթերը տուի Պուռնազեանին, որ ուրախութենէն աղաղակեց . — « Փա՛ռք Աստուծոյ, ազատեցանք փորձանքէն . կուսակցութեան ծրագիր-կանոնագիրը եւ անուանացանկը կար, ես ալ մէջը, երկու ամսուան Հնչակեան արձանագրուած . . . » : Ամբողջ թուղթերը վառեցին :

Կերճանիսի փողոցներէն պատահաբար հաւաքուած վաւերագրերը կառավարութիւնը կարդացնել տուած էր Երզնկացի փաստաբան Սիմոն Էֆէնտիի, յետոյ ուրիշ մէկու մը, ինչպէս իրենք պատմեցին :

Գիշերը եկան, մեր մէջէն տարին ու սպաննեցին Երզնկացի յեղափոխական Գրիգոր Պէնկլեանը : Յետոյ, դարձեալ եկան եւ ուզեցին տանիլ Արտաշիկ Պուռնազեանը եւ Յովսէփ Յունանեանը, բայց ըսինք թէ հազարապետին մօտն են, մինչդեռ մենք պահած էինք : Այդպէս անցուցինք առաջին գիշերը :

Յաջորդ առտուն, 12 Հոկտ. հինգշաբթի, ոստիկան մը եկաւ Գարահիսարէն, որ հօրս լաւ բարեկամն էր : Կէս օխա ծխախոտ ու կարգ մը ուտելիքներ բերաւ եւ ցաւակցութիւն յայտնեց եղածներուն համար : Միեւնոյն ատեն, ոստիկանը տրամադիր եղաւ մեզի ունէ կերպով օգտակար ըլլալու : Ասոր վրայ, հայրս ըսաւ իրեն .

— Իմ ազգականներէս երկու երիտասարդներ կան հոս . քանի որ Գարահիսար պիտի երթաս, միասին տար : Շատ շնորհակալ կ'ըլլամ :

Թուրք պաշտօնեան սիրով ընդունեց այս առաջարկը : Ուրբաթ առտուն, հայրս վտանգուած երիտասարդները առաջնորդեց Քէօր Օղլու ըսուած ձորին բերանը եւ յանձնեց ոստիկանին՝ ըսելով . — « Այս տղաքը ձեզի, դուք ալ Աստուծոյ » :

Նոյն առտուն Գարահիսարէն 7-8 հեռագիր եկաւ, որոնք տեղեկութիւն կ'ուզէին Կերճանիս մնացած այս կամ այն հայրենակցին

մասին: Անոնց որ դիտուն փորձանք չէր պատահած՝ իսկոյն իրենց ողջ ըլլալը հազորդեցին իրենց ազգականներուն, որպէսզի հոգ չընեն պարապ տեղը:

Գալով երկու փախստականներուն, շաբաթ առտուն ողջ առողջ կը հասնին քաղաք եւ ոչ միայն դորձօն մարմնին կը պատմեն կերճանիսի դէպքերը, այլ ճամբուն վրայ թուրքերուն համախումբ դէպի Գարահիսար ուղղուիլը:

Գարահիսար կազմ ու պատրաստ կը սպասէր արդէն: Տեղ տեղ քաղաքացիք ալ կը տեսնեն թուրքերուն համախումբը: Կեդրոնական կոմիտէն կ'արգիլէ ժողովուրդին երթելէկը դիւղերուն հետ եւ կը պատուիրէ հայ ընտանիքներուն, որպէսզի 8-10 օրուան ուտելիք պատրաստեն ու միասին բերեն եկեղեցին կամ թաշխանէները ապաստանած ատեն: Միւս կողմէ, ինքնապաշտպանութեան պայքարին սահմանուած երիտասարդները կամաց մը կ'երթան իրենց համար որոշուած դիրքերը եւ հոն կը սպասեն:

Համիտեան կառավարութեան դիտաւորութիւնը աւելի որոշ կը դառնայ, որովհետեւ կը գտնուին խղճամիտ թուրքեր, որոնք կ'ըսեն իրենց մտերիմ բարեկամներուն.

— Զգուշացէ՛ք, Հայե՛ր, այս օրերս լաւ չենք տեսներ: Կարգ մը պաշտօնեաներ կ'ուզեն հոս ալ Պապը Ալիի եւ Տրապիզոնի վիճակին հասցնել...

— Զէ՞ կարելի սեւէ ձեւով առաջին առնել, հարց կուտան մեր աղբրտիքը, տեսակ մը մտավախութեամբ: Այս մասին ձեր միջնորդութիւնը կը խնդրենք. եթէ կարելի է բան մը ըրէք, որպէսզի մեր ընտանիքները փրկուին հուրէն եւ սուրէն:

Հոս տեղին է որ քանի մը խօսք ընեմ թրքական կառավարութեան ջարդի եղանակներուն վրայ, որ երկար տարիներէ ի վեր կը շարունակուի Պալքաններէն մինչեւ Քիւրտիստան (բնաջնջման վերջին հանգրուանը): Վերէն հրամանը կը տրուէր, ու այդ հրամանը կ'երթար կուսակալներուն, գաւառապետներուն և դիւղապետներուն: Հրովարտակը դրուած կ'ըլլար գոց եւ զմուսուած պահարանի մէջ ու կը բխէր կրօնական եւ աշխարհական բարձրագոյն իշխանութիւններէն:

Պատուէր կը տրուէր, որ դիւղացիները այնինչ օրը երթային մզկիթ, որպէսզի լսէին Սուլթանին եւ Շէյխ-իւլ-Իսլամին Փէրմանը: Պայման էր որ թուրք զանգուածները զինուած ըլլային, իսկ զէնք չունեցած պարագային իրենց հետ բերէին կացին կամ բահ ու բրիչ...

Տեղական իշխանութեան կողմէ որոշուած օրը, երբոր խուռն բազմութիւն մը հաւաքուած կ'ըլլար մզկիթին մէջ, շրջանի միւլթին համբուրելով կը բանար հրովարտակը.— Հագիրէթի փատիշահը մըզըն վէ հագիրէթի Շէյխ-իւլ-Իսլամըմըզըն գըլլը հիւլեթիին էմրի պու տըր, ըսելով:

Ալլահին շուքը եղող բարձեալն Սուլթանը ու կրօնապետը հե-
տեւեալ պատուէրը կուտային միւսլիման հաւատացեալներուն .

« Նկատի ունենալով որ այսինչ ազգի կեալուրները ոտքի ելած
են , որպէսզի իսլամները ոչնչացնեն , մեր սուրբ Ղուրանը այսպէս
կը հրամայէ . — Ով որ կ'ապստամբի միւսլիմաններուն դէմ , պէտք
է անխնայ կոտորել եօթնէն մինչեւ եօթանասուն տարեկան : Անոնց
ինչքը ձեզի հէլա՛լ է : Ով որ անհաւատ մը մեռցնէ կազի (յաղթող)
է , իսկ ով որ զարնուի շէհիտ (նահատակ) կը համարուի : Հա՛յտէ ,
ձեզի տեսնենք , դացէք ու այդ քեաֆիրները մաքրեցէք » . . . :

Գարերէ ի վեր այս է եղած թուրքին քաղաքականութիւնը :
Այսպէս ալ ջարդած է Յոյնը , Պուլկարը , Ռուսիան , Գարատաղ-
ցին , Սերպը , Խրուաթը եւ վերջապէս Հայն ու Քիւրտը : Որոշ իրօ-
ղութիւն մըն է , որ թուրքը առաւելապէս քաջալերուած է Եւրոպա-
յէն , որ միշտ կ'ապրեցնէ այդ բարբարոս ցեղը իր դձուձ շահերուն
համար :

Հիմա , վերադառնանք մեր պատմութեան , որուն համար ճամբայ
ելած ենք : Չորս հայկական թաղեր կային Շ . Գարահիսարի մէջ .
Քիլիսէ , Օրթա , Չեքէն եւ Պիւլպիւլ : Իսկ սակաւաթիւ հայ բնակ-
չութիւն մը կար իսլամական Օրթա թաղին մէջ : Այս թաղերուն
ամէնէն կարեւոր կէտերը կը զբոսնէին զէնք եւ ուտելիք : Դիրք
զբաւոյ տղաքը լուսնի լոյսին շնորհիւ կը տեսնեն շրջակայ թուրքերը ,
որոնք դէպի քաղաք կը յառաջանան : Այդ շարաթ դիշեր , 14 Հոկտ .
1895 , մեր երիտասարդները աչալուրջ կը հսկեն մինչեւ լոյս , բայց
ոչ մէկ յարձակում կը պատահի :

Գարահիսարի ժողովուրդին կէսը , որ մասամբ միայն տեղաւոր-
ուած էր , կիրակի առաւօտ ամբողջովին կ'ապստամբի եկեղեցին եւ
երկու թաշխանէներուն մէջ : Հինգ ժամուան ընթացքին ամէն ինչ
կարգադրուած , տղաքն ալ կազմ ու պատրաստ կը սպասեն իրենց
դիրքերուն մէջ : Մայր տաճարը կ'ըլլայ կեդրոնը հրամանատարական
կազմին , որուն մաս կը կազմեն Արամ Աչըքպաշեան , Նիկողոս
Այնաճեան , Նազարէթ Պուռնաղեան , Յարութիւն Ղարիպեան , Համ-
բարձում Պարոնվարդեան (Չեկէն) եւ Յարութիւն Օզանեան , որ
եղբայրն էր Գազիկին : Իսկ Աւետիս Սահակեան կը դառնայ
մատակարար :

Չմոռնամ այստեղ յիշել , որ մեր միւլթէսարըֆը այս դէպքերէն
ամիս մը առաջ գիշերով դացած էր Իրիզէ եւ տեղւոյն կառավարիչ
ընտրուած : Այդ գիտով եւ հայահալած միւլթէսարըֆին կը փոխա-
նորդէր 90 ամեայ պահեստի զինուորական հրամանատար զնդ .
Եոսուֆ էֆէնտին , որուն « Սալլապաշ » կ'ըսէին :

Միւս կողմէ , մեր հայր սուրբը Խորէն Մ . Վրդ . Կիւրոյեան ,
Բաբերդի առաջնորդ նշանակուած ըլլալով , մեկնած էր իր նոր
պաշտօնատեղին եւ հոն ալ սպաննուած թուրքերուն կողմէ : Ուրեմն ,

քաղաքը կը մնար Ռեթէոս քահ. Տէր Գէորգեանը, որպէս առաջնորդական փոխանորդ Շ. Գարահիսարի թեմին:

Թուրքերուն աչքէն անշուշտ չէր վրիպած մերոնց տեղաւորումը եկեղեցիին եւ միւս վայրերուն մէջ: Ռեթէոս քահ. ու Գարահիսարի ջոջերէն երկու հոգի կը կանչուին Սայիպ էֆ.ի տունը: Ու երբ թուրք երեւելին Հայերու հաւաքման պատճառը կը հարցնէ, մեր պատգամաւորները կ'ըսեն.

— Ձէ՞ք տեսներ, թուրք ժողովուրդը չորս կողմէն կացիններով կը լեցուի Գարահիսար, մենք ալ կը վախնանք, ու ատոր համար հաւաքուեցանք եկեղեցին եւ թաշխանէներուն մէջ:

Թուրք մեծամեծները հաւաստիքներ կուտան եւ կը պատուիրեն մերոնց որ չմտահոգուին ու խաղաղօրէն տուն դառնան, խոստանալով որ իրենք առաջը կ'առնեն: Ասոր վրայ, մեր ներկայացուցիչները կը պատասխանեն.

— Շատ շնորհակալ ենք: Դուք որ այդ բարիքը ընէք, մենք մեր պարտականութեան մէջ երբեք չենք թերանար. երթանք եւ ժողովուրդին լուր տանք:

Ճանապարհին թուրքերը Տէր հայրը կը հրաւիրեն կառավարութեան դուռը: Հոն թապուռ աղասին, Ղարաիւղպաշին, ոստիկանները եւ իրենց պետը կը համոզեն Ռեթէոս քահանան, որ « Վախնալու բան չկայ, բան չի պատահիր, թող ամէն Հայ իր բնակարանը վերադառնայ սրտի անդորրութեամբ »:

Մեր առաջնորդական փոխանորդին կը մնար շնորհակալութիւն յայտնել կառավարութեան մարդոց: Ասոնք կրկին խել մը հաւաստիքներ կուտան, տէրտէրն ալ իր կողմէ կը խոստանայ որ ժողովուրդին պէտք եղածը կը խօսի եւ այսպէս ճամբու կը դնեն զինքը:

Այսուհանդերձ, այս բոլորը մերոնց աչքին ոսկի փոշի փչել էր պարզապէս, որովհետեւ քահանան իսլամական թաղերէն անցած ժամանակ կը տեսնէ գետինը նստած թուրքերու մեծ համրանք մը:

Տէր հայրը եղելութիւնը կուզայ կը պատմէ հրամանատարական կազմին, որ ոչ իսկ հարկ կը զգայ պատասխանելու կառավարութեան առաջարկին: Այիճորա գաւառակէն եկող թուրքերու հոծ բազմութիւնը, որ այդիներու կողմէն կը թափուէր Գարահիսար, շատ պերճախօս էր ամէն պատրանք փարատելու համար...

Որոշ իրողութիւն մըն է, որ փոխ-միւթէսարըֆ գնդ. Եուսուֆ էֆէնտին բոլորովին հակառակ էր Գարահիսարի Հայոց կոտորումին, ինչպէս ինծի պատմեցին կարգ մը իրազեկ բարեկամներ: Ասոնք էին Տոքթ. Հեթում թովմասեան, ժամագործ Գէորգ, լուծայափոխ Ղազար աղա եւ թորոս ու Պետրոս Յնձալեանները, որոնք դրացի էին բարի ծերունիին եւ դէպքի օրերուն անոր տունը ապաստանած իրենց ընտանիքներով:

Հոկտեմբեր 13ին, Եուսուֆ էֆ. ուրեմն կայսերական ֆերմանը

կը ստանայ Պոլսէն, քաղաքին թուրք երեւելիները կը կանչէ իր քով եւ անոնց կը կարգայ.

— Եարապալի՛մ Ալլահ, կը բացագանչէ աղնիւ պաշտօնատարը, Սուլթանին գլխուն զազէպ եկած ըլլալու է: Անպայման սխալմունք մը կայ գործին մէջ...

Բայց, թուրք մեծամեծները իրենց կարգին հեռագիրներ կը ստանան Պոլսէն եւ Սերաստիայէն, որոնք իրենց կ'իմացնէին թէ՛ « Զարդի հրովարտակը ընդհանուր Հայերուն համար է »: Ասոր վրայ, Հայոց արեան ծարաւի այդ վաթանտաշները չորս կողմէ թուրքեր կը բերեն եւ կը պահեն քաղաքին մօտերը:

Հոկտ. 14ի շաբաթ գիշերը, ծանր վէճ մը կը ծագի Եուսուֆ էֆ.ի եւ խուժանավարներուն միջեւ: Միւթէսարըֆին փոխանորդը թոյլ չի տար որ քաղաքը կոտորեն: Արիւնարբու մեծերը կը պնդեն ա՛յն աստիճան, որ կ'որոշեն յաջորդ առտուան մութնուլուսուն գործի սկսիլ, բայց ընդդիմութեան կը հանդիպին նորէն: Բնաջնջման ծրագիրն այսպէս ութը ժամ կը յետաձգուի, ինչ որ բարերար դեր մը կ'ունենայ Հայոց ինքնապաշտպանութեան տեսակէտով:

Դիմագրական ուժերը հետեւեալ ձեւով դասաւորուած էին Գարահիսարի մէջ. — Այգիներուն կողմը, էրտէվիւլեան Սահակ աղայի երգիքին տակ, տանուտէրը, Թէօտերկիցի Բարսեղը, Խոտիկեան Նազարէթը, Արսէն Չեքէնեանը, Վէհրէտին Փիլիկը, Հաճի Ղեւոնդը, իր փեսան եւ քսանի չափ ուրիշներ:

Սահակ աղային բնակարանէն քիչ մը վեր, Մարկոսեան Յարութիւն աղային տանը մէջ. Արմենակը, Հմայեակը, Խոտիկեան Թորիկը, Ալթը-Փարմաքենց մսագործ Անդրանիկը եւ տասնի չափ ալ ուրիշներ:

Յունաց հին թաղին կողմը. Թիւթիւնճեան Կարապետ, Համբարձում, Տիվրիկեան Պողոս եւ ամբողջ այդ ընտանիքին անդամները:

Շիտակենց տանը մէջ՝ Ղոճամաթոսին Արչակը եւ Թոփուղեան եղբայրները:

Օյնախին կողմը՝ Չենչէնին Համբարձում էֆ.ին, փեսան Անդրանիկը եւ Նազարէթենց երեք եղբայրները:

Խոհարար Յովհաննէսին տանը մէջ՝ Ալեքսան եւ Գառնիկ Քէչիշեան եղբայրները:

Բաւական վերը, Տէր Մեսրոպեան Գասպար աղային տանը մէջ՝ Գարեգին Թաշճեան, Մկրտիչ եւ Առաքել Էքմէքճեան, Մխիթար աղան, իր տղան Մկրտիչ (հայրն ու եղբայրը « Հայրենիք »ի խմբագրապետ Պ. Գ. Մխիթարեանի), փեսան՝ Մանուկ Չոթուլեանի եւ 4-5 ուրիշ երիտասարդներ:

Ղարիպեաններու երգիքին տակ՝ տանուտէր Կիւրեղ եւ Պաղտասար աղաները իրենց զաւակներով, Հմայեակ Շահրիման եւ թաղեցիներէն վեց հոգի:

Հարեւան Խանարեաններու տանը մէջ, որ շատ կարեւոր դերք մըն էր, տանուտէրէն եւ իր պարագաներէն դատ, նշանաւոր Ղասապ Էջըլը (Համբարձում էթեէմէգեան), Խնկիկի Յարութիւնը, Հախալմաղ Համբարձումը եւ ուրիշներ:

Խանարեաններէն վեր, Սահակեաններու տանը մէջ՝ երեք եղբայրներ եւ ուրիշներ:

Մսազործ Ասատուրին տանը մէջ՝ ինքը, Մելտոնեան Քերովբէն, Փուստուլի Երեմիան, Տրապիզոնցի Ռափայէլը, Յովհաննէսը ու իր եղբայր Նազարէթը եւ ուրիշներ: Իսկ Կուլասեաններու տունը՝ երկու եղբայրներ:

Թամզարայի ուղղութեամբ, նախ՝ Քեմալեանց տանը մէջ՝ հռչակաւոր մարտիկ Տիգրան Չիվիեանը, Թէոսին Գէորգը, եղբայրը՝ Մատաթեան, Ֆելէկեան Խաչիկը, Թորոս Բէյիգեանը, Միսաք, Խեչո ու Գառնիկ Քեմալեանները եւ ուրիշներ:

Քիչ մը վերը, Ղուկասեաններու բնակարանին մէջ, տանուտէր Գրիգոր աղան եւ իր պարագաները: Իսկ իրենց դէմը՝ Ալթունեաններու ամբողջ ընտանիքը:

Լումայափոխ Գասպար աղային տանը մէջ, ինքը՝ մսազործ Ստեփանը եւ իր երկու զաւակները՝ Մանուկ եւ Ստեփան:

Հարեւան Քէօթէնէճեան Կարապետ աղային տանը մէջ, ինքը՝ հօրեղբայր Մելքոն աղան եւ իր զաւակները Պետրոս ու Յակոբ: Այս կողմէն Թամզարայի եւ յունական նոր թաղին ճանապարհն է:

Թեվէքէլեաններու տանը մէջ, Անդրանիկ աղան եւ եղբայրները Սեդրակ, Միսաք, Յաբեթ, Յարութիւն ու Մնացական եւ Սողոմոն Թաշճեան: Իսկ Վարդապետեաններու տանը մէջ, Երեմիան եւ Գալուստը:

Թացեաններու տանը մէջ, Կարապետը, Աւետիսը, Առաքելը եւ նոյնիսկ իրենց ծերունի հայրը կը մասնակցի կռիւներուն:

Մանուկ եւ Երեմիա Ղուկասեանները նոյնպէս իրենց տունէն կը մասնակցին պայքարին, ինչպէս Սիմոն, Աբրահամ եւ Սողոմոն Օզանեանները:

Հաննիկեաններու տանը մէջ, Հաճի Մնացականը, եղբայրը՝ Յովհաննէս եւ Սերովբէն, Գալուստ Սերճանեանը եւ Միհրան Սահակեանը:

Տիրացուենց կողմը, որ շատ կարեւոր դերք մըն էր, Սեդրակ եւ Միսաք Թաշճեանները, Սարգիս Գուլումճեանը, Համբարձում Խաթունիկեանը եւ տասնի չափ ուրիշներ: Իսկ բաւական վարը, Պուռնապետներու տանը մէջ, իրենք, Գալուստ եւ Աբղար Պուռնապետ եղբայրները:

Քաղաքին արեւմտակողմը, Քիրէճճիին մարզէն, Օզանեան Յակոբ աղան, եղբայրը՝ Նազարէթ, Պետրոս, Գրիգոր եւ ուրիշներ:

Թիւթիւնճեաններու տանը մէջ, Ասատուրը, Մանուկը, Մկրտիչը եւ Տիգրանը:

Մանասելեաններու տանը մէջ, Մելքոնը, Յակոբը, Գրիգորը, Կիւրեղը, Ոսկիանը եւ Թաղէօսը (Հէքիմ Պապուն շառաւիղներէն), իսլամ Օրթա Թաղէն խուժողներուն համար:

Հարեւան տանը մէջ, Չենչէնին Պաղտասար աղան եւ եղբայրը Գրիգոր, Արտաշ Մարկոսեանը, Գառնիկը եւ ուրիշներ: Միւս մասին մէջ, Պարոնվարդեան Անդրանիկ աղան, եղբայրը՝ Տիգրան ու Միրիճան եւ ուրիշներ:

Այնաճեաններու տունը, որ ուղղակի կառավարութեան շէնքերուն վրայ կը նայէր, դիրք բռնած էին Համբարձում, Գառնիկ, Աւետիս Օղանեան (ղեկավարը խումբին, որ շատ լաւ կուռած է) եւ տասնի չափ ուրիշներ: Իսկ Նիկողեան Մարտիրոս աղային տունն ալ Թաղեցի 3-4 երիտասարդներ կը դնեն:

Բերդին կողմը, Օղանեան Ռափայէլ էֆ.ին տունը, Ստեփան եւ Անդրանիկ Օղանեանները, Պզտի Նիկողոսը, Ղուչին Սերոբը եւ ուրիշներ:

Նոր Թաշխանէին ուժերուն հրամանատարութիւնը կը յանձնուի Ղարապօղազցի Գալուստ աղբօրը, իր կողքին ունենալով մսաղործ Երեմիան, Սուտիկի Ալեքսանը, Ղաթրան Թաղէօսը եւ քսանի չափ ուրիշ երիտասարդներ: Ասոնք դիրք կը բռնեն երրորդ յարկի պատուհաններուն առջեւ, որովհետեւ շատ յարմար էր ջարդարար ամբօխին վրայ կրակելու համար, մասամբ մըն ալ Թախըլ Պաղարի կողմէն:

Հին Թաշխանէին ուժերուն ղեկավարութիւնը կը յանձնուի Ղուկաս աղբօր: Հերոսին հետ են Տէօվլէթեան Մանուկ, Կէօնտ Նշան, մեծ Նիկողոս, Նշան Մանկասարեան, Տիւրկեար Բարսեղ, Նշան Պարոնվարդեան (« ձիուն գողը » անունով ճանչցուած) եւ քառասունի չափ ալ ուրիշներ: Տղոց պաշտօն յանձնուած է հսկել շուկայի կողմէն եկող արիւնարբու խուժանին վրայ: Հրամանատարութիւնը պատուիրած էր ինքնապաշտպանութեան բոլոր ուժերուն, որ « մինչեւ որ նեղը չմնան, մարդ չզարնեն, այլ աւելի գոհանան դուրու փաթըրտըյով:

Իսկ Թուրքերը երբ կը տեսնեն որ Հայերը քաշուած են եւ դուրս չեն ելլեր, 1895 Հոկտ. 15ի ճիշդ կէսօրին, այգիներու կողմէն կը խուժեն քաղաք, « Ալլա՛հ, Ալլա՛հ » աղաղակելով: Մերոնք այս ահարկու ճայներուն վրայ պահ մը կը մտահոգուին, բայց շուտով իրենք զիրենք կը հաւաքեն եւ երբ խուժանը կ'անցնի Խաչերեսին կամուրջը, հրտէվիւլեան Սահակ աղային տունէն սոսկալի կրակ մըն է կը բացուի:

Թուրքերը այդ տան չորս կողմէն տեղացող կրակէն յանկարծակիի կուգան, ու տակաւին իրենք զիրենք չգտած՝ ահա երկրորդ

համազարկ մըն է որ կը բացուի եւ գնդակները ուղղակի անոնց առաջը կը թափին, փողի ամպ մը բարձրացնելով մթնոլորտին մէջ:

Արիւնածարաւ խուժանը ետ կը քաշուի ու այս անգամ թեք Ղափախի կողմէն կը փորձէ մտնել քաղաք: Դարձեալ բուռն համազարկի մը կը հանդիպի: Խառնիճաղանճ գէնքերու ձայնը թնդանօթներու ունմբերու պայթիւններուն պէս օդը կը թնդացնէ, որովհետեւ հարիւր տարի առաջուան տունը մնացած չախմախլըները, չէչխանաները եւ ատրճանակները կ'օգտագործուին մեր տղոց կողմէ:

Թուրքերը ճարահատ փախուստի դիմելով, Պէյլերեաններու տունը կը մտնեն, լաւ մը կը թալլեն եւ երկու հոգի կը սպաննեն: Այս տունը հեռու ըլլալով Հայոց թաղէն, բնաւ պաշտպանուած չէր եւ նոյնիսկ իր բնակիչներէն Արշակ, Յարութիւն ու Մելքոն եկեղեցին գացած եւ Ղուկաս աղբօր կողքին կուռած էին:

Խառնիճաղանճ ամբոխը կ'անցնի պարտէզին թաղը, բայց անկէ բացուած սաստիկ կրակը չի թողուր որ ոչ մէկ կողմէն ան մուտք գործէ հայարնակ վայրերը: Մասնաւորաբար Քեմալեաններու տան ինքնապաշտպանութեան ուժերը ուսական լաւորակ սիւրմէլիներով այնպիսի անաւոր համազարկ մը կը բանան պաշրպօզուէներուն վրայ, որ անարեկ փախուստ կուտան, աղաղակելով. — Ուլա՛ն, պու ֆըզ աւաւմըն օնաղը պաթըրըր:

Այս անգամ, խուժանը Հագին Քարին կողմէն կ'երթայ քաղաքէն երկու քիլոմէթր հեռու, թրքախառն Քիւփելի թաղը ու կը սկսի թալանել: Հոս ալ մնացած էր անպաշտպան: Կիրակի օր, թուրքերը գիշերանց յառաջանալով այս թաղը, նախ կը փորձեն մտնել Սերճանեան Քերովբէ աղային տունը, բայց չեն յաջողիր: Ասոր վրայ, « Դանիէլ Չավուշ » ի խումբէն Մկրտիչ Թացեանի աներհօր տունը կրակի կուտան: Այս լուճայափոխ Ղազար աղային բնակարանէն ելած հրդեհին լոյսը մեծ օգուտ կ'ունենայ մեր տղոց, որոնք ուր որ խուժանին ուղղութիւնը կը տեսնեն, անընդհատ կրակ կը տեղացնեն եւ Տաճիկները սոսկալի խուճապի կը մատնեն:

Հոկտ. 15ի այդ անաւոր գիշերուան մէջ, թուրքերու կողոպուտին կ'ենթարկուին Սամուէլեաններու, Էօքսիւղենց, Թանչուտենց Սարգիս աղային, Տէր Մեսրոպեան Կարապետ աղային եւ Եղիա քահ. Տիվրիկեանի տուները: Բարբարոսները չեն խնայեր տանուտէրներուն եւ անխնայ կը սպաննեն: Տէր հայրը, Կարապետ աղան, Էօքսիւղեանին աղջիկը, ոսկերիչներէն չորս հոգի եւ Սամուէլեան երկու եղբայրները զոհ կը դառնան կատղած խուժանին: Այս կերպով, կիրակիէն մինչեւ երկուշաբթի անոնք 51 հայկական տուներ թալանի կուտան, իսկ նահատակներուն ընդհ. գումարը կը հասնի 25 հոգիի, քաղաքի շրջանակներուն մէջ:

Յաջորդ առաւօտուն, թուրքերը աւելի մեծ ուժեր համախմբած, Սալավաթ կանչելէն դարձեալ գրոհ կուտան այգիներու կողմէն:

Այս անգամ կռիւը այն աստիճան կատաղի հանգամանք մը կը ստանայ, որ հրամանատարական կազմը կը ստիպուի փոխել իր ուղղութիւնը: Ահաւասիկ Ղուկաս աղբօր բամբ ձայնը, որ լսելի կը դառնայ Թաշխանէի երգիքէն. — « Մի՛ խնայէք, տղա՛ք, ուղղակի կրակեցէք յարձակողներուն վրայ »:

Տաճիկները թուրի պէս կը թափին գետին: Լեղապատառ խուճապի մը մատնուած, անոնք ինկած վիրաւորները ու մեռելները կը հաւաքեն եւ կորակոր փախուստ կուտան: Մինչեւ այս վիճակին հասնիլը կէսօր կ'ըլլայ:

Գիշախանձ խուժանը « Ալլա՛հ, Ալլա՛հ »ի նաղարան արձակելէն նորէն կ'ուղղուի պարտէզին թաղը, բայց անկարելի կ'ըլլայ: Այս անգամ կը փորձէ Եանուխի տան կողմէն, դարձեալ կը ձախողի չարաչար: Երկու ժամուան կատաղի կռիւները ոչ մէկ արդիւնք կուտան. Թուրքերը քայլ մը յառաջ չեն կրնար ելթալ եւ ամօթահար նահանջի ճամբան կը բռնեն:

Այս թաղային կռիւներուն ժամանակ, Թուրքերը մինարէէն կը կրակեն եւ խանին երգիքին վրայ կը վիրաւորեն մեր տղոցմէ մէկը: Ասոր վրայ, Թաշխանէին հրամանատարութիւնը մասնաւորաբար հոն կը կեցնէ երիտասարդ մը, որ անդադար կը հարուածէ եւ նոյնիսկ չի ձգեր որ իմամը իր էզանը կարգայ:

Վերջապէս, Թուրքերը կը յուսահատին այդ օրը եւ գիշերով կ'երթան Եուսուֆ էֆ.ին մօտ, որպէսզի զինուոր տայ եւ քաղաքին Հայերը ջարդեն անոնց օգնութեամբ: Ազնիւ հրամանատարը բացարձակապէս կը մերժէ խուժանավարներուն առաջարկը: Այն ժամանակ անոնք կը տրտնջան.

— Կեավուրները մեզմէ այսչափ մարդ սպաննեցին եւ դեռ նոյնչափ ալ վիրաւոր կայ: Մենք ի՞նչու չսպաննենք քեաֆիքները:

— Գացէ՛ք սպաննեցէք, զօրք չեմ տար, կ'ըլլայ Եուսուֆ էֆ.ին պատասխանը: Ես ձեզի խորհուրդ տուի որ այդ քայլը չառնէք, որովհետեւ քաջ գիտէի այս քաղաքի կեավուրներուն ինչ ըլլալը: Մարդիկը իրաւունք ունին: Դուն կ'երթաս զինքը սպաննելու, միթէ անիկա իրաւունք չունի՞. հարկաւ ան ալ մարդ է, ի վերջոյ ինքզինքը կը պաշտպանէ:

Արիւնարբու մարդիկը դարձեալ կը պնդեն ու կ'ըսեն թէ « Սուլթանին հրամանն է, կը խնդրենք որ գործադրուի անոր հրամանը »:

— Սուլթանի հրովարտակին մէջ զօրքով կոտորել չկայ, ժողովուրդն է որ պիտի ջարդէ Հայերը, կը յամառի ծերունի հրամանատարը: Դուք երբոր դացիք զիրենք կոտորելու, ես ձեզի ընդդիմացած, ո՛չ. այլ մինակ պէտք եղած խրատը տուի: Ես 90 տարեկան եմ, մէկ ոտքս դերեղմանը. ես թոյլ չեմ տար ինձի որ պատճառ դառնամ այդ զուլումին: Դէ՛հ, դացի՛ք, ինչ որ կ'ուզէք ան ըրէք:

Թուրքերը կ'երթան ժողով կ'ընեն եւ այս անգամ ուղղակի հե-

ուագիր կը քաշեն Սերաստիա, Մեհրալի կոչուած հայատեաց ցեղապետին, որ ժամ առաջ ճամբայ ելլէ դէպի Գարահիսար: Պատասխանը այն կ'ըլլայ որ 9-10 օրէն հոն կը հասնի իր մարդոցմով:

Միւս կողմէ, մեր հրամանատարական կազմն ալ խորհուրդի կը նստի եւ հաշիւ կ'ընեն որ եթէ այսպէս կռիւը շարունակուի, 4-5 օր հազիւ կրնան դիմանալ: Վերջապէս, որոշում կուտան որ դրամ խաղցնեն եւ այդ գիշեր 500 ոսկիի չափ գումար մը կը ժողվեն եկեղեցիին ու երկու թաշխանէներուն մէջ: Յաջորդ օր Տէր Ռեթէոսը պէտք է դրամը յանձնէ, բայց թուրքերը իրենք կուգան եւ քահանան կը տանին Սայիպ էֆ.ին տունը: Հոն հաւաքուած թուրք մեծերը երբ կը տեսնեն Տէր հայրը, կը սկսին պոռալ կանչել ու սպառնալ. — « Հայե՛ր, այս ի՞նչ է որ կ'ընէք. ձեզ սապէս պիտի ընեն, նապէս պիտի ընեն »:

Տէր Ռեթէոս պաղարիւնութիւնը չի կորսնցնելու բնաւ եւ սախելացի պատասխանը կուտայ. — Պէնի պիլէն գուրտ եէսին, որ թարգմանի « ինծի գիտցող դայլը՝ թող զիս ուտէ »:

— Եթէ մեզի պիտի կողոպտեն, վրայ կը բերէ իմաստուն քահանան, թող մեր դրացիները կողոպտեն: Ի՞նչ է այս, աշխարհի չորս կողմէն եկած պաշրպօղութենք մեզ պիտի թալլեն երթան ու մեր հարստութիւնը հոս պիտի չմնայ...: Դուք եթէ մեզի կը սիրէք ու կը խղճաք, այդ խուժանը ցրուեցէք. այս որ տեսնենք, մենք մեր պարտականութիւնը կը կատարենք:

Սայիպ էֆէնտին կը բարեխօսէ եւ կարգ մը պատուէրներով կը ճամբէ Տէր հայրը, որ պատասխանը երկու ժամէն բերէ: Ստուգիւ, այդ օրը Ռեթէոս քահանան երեք անգամ հոն կ'երթայ եւ օրհնած դրամը կը խաղայ:

Ասով մէկտեղ, խուժանը վար չի դնելու զէնքը ու բաղմաթիւ անգամներ յարձակում կը գործէ այգիներու արեւելեան կողմէն (Օյնախի շրջան) եւ Յունաց հին թաղէն: Այս բոլոր դրոհները մեր դիմադրական ուժերուն բուն համազարկին կը բախին, մինչեւ որ օրն իրիկուն կ'ըլլայ եւ թուրքերը կ'երթան իրենց շարաշար պարտութեան վրէժը շուծել շրջակայ դիւղերէն:

Հոկտ. 17ի այդ գիշերը, ուրեմն, արիւնածարաւ խուժանը իր ամբողջ կատաղութիւնը կը թափէ քաղաքին արուարձաններէն Աներդիի, Պուսէյիտի, Զրտուքի եւ մանաւանդ թամզարայի վրայ: Այս կարեւոր աւանին վրայ խօսած ժամանակս, արդէն բաւական ծանրացած եմ Հայոց արհեստագիտութեան, հարստութեան եւ բարքերուն վրայ: Մասնաւորաբար պատմած եմ թալանը Ս. Թագաւոր եկեղեցիի գաղտնի պահարանին, որ ունէր Անի քաղաքէն բերուած այնքան թանկագին գանձեր, որոնց գոյութեանը նոյնիսկ տեղւոյն հայութիւնը տեղեակ չէր: Այս կոտորածէն վերջն է որ թամզարացիք սկսան գաղթել օտար երկիրներ:

Թուրքերը կամաց կամաց կը համախմբուին նորէն: Մերոնք կը տեսնեն Կիրասունի, Աւուստուշի եւ Ճանիկի ծովեղերքներուն թուրքերը, զինուած նաճախներով եւ այլ զէնքերով:

Չորեքշաբթի, Հոկտեմբեր 18ին, իրօք « Ալլա՛հ, Ալլա՛հ » ի սովորական նաղարան արձակելէն, այդ խառնիճաղանճը թախըլ Պազարի թրքական թաղերու կողմէն բուռն յարձակումի մը կը ձեռնարկէ: Այս անգամ, նոր թաշխանէէն, Այնաճեաններու եւ Պարոնվարդեաններու տուներէն կրակէ կարկուտ մը կը տեղայ բարբարոս խաժամուժին վրայ: Այս կռիւը մինչեւ իրիկուն կը տեւէ. թուրքերը բացարձակապէս չեն յաջողիր մուտք գործել հայկական թաղերէն ներս եւ մութը իջնելուն կը հեռանան կորակոր: Յաջորդ առաւօտուն կը քաշուին զօրանոցին կողմերը:

Մեր առաջնորդական փոխանորդը կրկին կը տանին կառավարութեան դուռը: Նախ՝ կեղծ ու պատիր խօսքերով կը փորձեն անանկ ցոյց տալ թէ չեն յաջողած ճամբու դնել խուժանը, որովհետեւ ծովեղերքներէն եկած ըլլալով, իրենց բացարձակապէս անձանօթ էին այդ մարդիկը: Յետոյ, ըստ իրենց նենգամիտ սովորութեան, թուրքերը կը պահանջեն զէնքերը յանձնել: Մասնաւորաբար ոստիկան-զօրաց հրամանատարը, Ղարաիւղպաշին եւ իր օգնականը ճնշում կը բանեցնեն Տէր հօր վրայ: Վեց ժամ պայմանաժամ կուտան առաջնորդական փոխանորդին, հակառակ պարագային կը սպառնան զօրաց հրաման տալ, որպէսզի իրենք ալ մասնակցին Հայոց կոտորման:


Տէր Ռեթէոս կուզայ եւ կը պատմէ երեւելիներուն կառավարութեան մարդոց դրած պայմանը: Քաղաքին աղաները հրամանատարական կազմին հետ խորհուրդի կը նստին եկեղեցիին եւ թաշխանէներուն մէջ: Կարգ մը ազգայիններ զէնքերը տալու համաձայն կ'ըլլան, բայց Նիկողոս էֆ. Այնաճեան կը կանգնի ու բարկաճայթ կը գոռայ.

— Հայրենակիցներ՝, եթէ զէնքերը յանձնենք, մենք կոտորուած ենք: Չենք յանձներ մեր զէնքերը. ինչ որ կ'ուզեն թող ան ընեն:

Սակայն կը խորհին որ վերջապէս բան մը տալ պէտք է, ուստի կը ժողվեն անպէտք եւ անգործածելի հարիւրի չափ զէնքեր, կուտան տասը թուրքերու, որոնք կը տանին կառավարութեան մարդոց կը յանձնեն: Այս որ կը տեսնեն, թուրքերը կրակ կը կտրին ու կը պոռան քահանային երեսն ի վար.

— Ասոնք ի՞նչ է որ կը բերէք: Հը՛մ, քեաֆի՛ր, միլլէթ խայիւլարը... չո՛ւտ դացէք ուսական սիւրմէլիները բերէք:

Տէր Ռեթէոսը այդ օրը 4-5 անգամ կը տանին կը բերեն: Կառավարութեան մարդիկը Տէր հօրը զլիւին սոսկալի լուտանքներ կը թափեն: Թապուռ աղասըն այնչափ առաջ կ'երթայ որ նոյնիսկ



ՇԱՊԻՆ ԳԱՐԱՀԻՍԱՐԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ

կ'ապտակէ քահանան եւ կատրած կը բղաւէ . — « Խընգը՛ր կեալուր-
ներ, դուք մեզի հետ խաղի՞ ելեր էք » . . .

— Պէ՛յ էֆէնտի, իմ ձեռքէս ի՞նչ կուզայ, կը մըմնջէ խեղճ
Տէր հայրը: Հոս ինչպէս դուք ինծի կը նեղէք, հոն ալ Հայերը ինծի
կը նեղեն: Ձեր հետը շատ դիւրին է խօսիլ, բայց մեր Հայերը խեն-
թեցա՛ծ են, ես չեմ կրնար այդ խենթերուն խօսք հասկնել . . .

Երբոր հրամանատարը կ'ուզէ այդ « խենթ »երուն ո՛վ ըլլալը
հասկնալ, Տէր Ռեթէոս կը պատասխանէ . — « Ամբողջն ալ »:

Հոկտ. 19ին գրեթէ կուիւ չի պատահիր: Յաջորդ օր, ուրբաթ,
Թուրքերը կը հետամտին ամէն գնով հայկական թաղերէն ներս
թափանցել: Բարբարոս խուժանին ամէն ուղղութեամբ կատարած
գրոհները ձախողութեան կը մատնուին, որովհետեւ նախորդ գիշեր
տկար դիրք մը ամբացուցած էին մերոնք: Այդ դիրքը կը գտնուէր
Տարտաղանեան « ճորթ »ին տան կողմերը: Մինչեւ մութը իջնելուն՝
անկէ փառաւոր կուիւ մը կը մղեն Նշան Մարկոսեան (Կէօնթ), Մա-
նուկ Բէյիզ, Տիգրան Ճիվճիվեան, Մանուկ Վեհրէտեան եւ քսանի
չափ տղաք:

Առով մէկտեղ, Հայերը կը խորհին որ քանի մը օր հազիւ կրնան
դիմանալ, որովհետեւ իրենց ռազմամթերքը հատած էր: Մնաց որ,
ջուրի պակասութիւն կար, շատ կը նեղուին Թաշխանէներուն մէջ:
Այդ գիշեր կ'որոշեն կրկին գրամ հաւաքել, որպէսզի հեղ մըն ալ
կաշառեն Թապուռ աղասըն, Ղարաիւզպաշին եւ Ղարա Քիւրտ-Օղլու
Հաճի Խալիլը:

Վերջապէս, շարաթ առտուան լուսաբացին, Տէրտէրը կուզան
կը տանին նորէն: Թէպէտ երբեք չեն ըսեր շէհիտներուն թիւը, բայց
որոշ էր թէ Թուրքերը քանի մը զոհ տուած էին եւ իրենց զայրոյթը
կը թափեն խեղճ եկեղեցականին գլխուն: Թապուռ աղասըն հեղ մըն
ալ ձեռք կը վերցնէ Տէր Ռեթէոսի վրայ եւ երկու ապտակ կը զարնէ:
Այսուհանդերձ, իմաստուն քահանան կը յաջողի զայն եւ Ղարաիւզ-
պաշին կաշառել. ասոնք իրենց հերթին շատ մը թուրք երեւելիներու
կրծօն մը կը նետեն:

Մինչ այսպէս հայ մեծամեծները հետամուտ կ'ըլլան քաղաքի
Թուրքերուն ջարդի մոլուցքը զօպելու, անդին կ'իմանան կառավա-
րութեան մարդոցմէն որ նոր միւթէսարըֆը ժամը երեքին կուզայ
Կիրառոնի ճամբով: Եւ որ յոռեգոյնն է, նոյն օրը Գարահիսար կը
հասնէր Սերաստիոյ հայահալած ցեղապետներէն Մեհրալին . . .

Տէր Ռեթէոս կուզայ եւ կը պատմէ իր ձեռնարկին արդիւնքը,
որ բարեյաջող եղած էր, շնորհիւ օրհնեալ մամոնային: Սակայն,
Մեհրալիի երեւումը ռազմաբեմին վրայ, 500 զինեալ ձիաւորներով,
անշուշտ մտահոգութեան կը մատնէ հրամանատարական կազմը,
մասնաւորապէս ռազմանիւթի սակաւութեան պատճառով: Ճակա-

տաղրական այդ բոլորին, Ղուկաս աղբար կը կանգնի եւ փայլակնա-
ցայտ կը գոռայ:

— Մի՛ վախնաք, եղբա՛յրք: մենք նախ այդ Մեհրալիի ճիւղոր-
ները շան պէս գետին կը փռենք: Մահ մը չէ՞, լաւ է պատուով մեռնիլ
քան թէ ոչխարի պէս մորթուիլ:

Ժողովի պահուն, Սերաստիոյ ճանապարհէն ճիւղորներ կուգան
եւ կամաց կամաց կ'ուղղուին զօրանոցին մերձակայ Զօպան Տիւղ
ըսուած դաշտը, թուրքերուն կողմէ դիմաւորուելով: Խուժանը հոն
կը հաւաքուի, հետզհետէ կը բազմանայ ու մարդկային ծով մը
կը դառնայ:

Հայերը հին թաշխանէի տանիքէն ու Այնաճեաններու տունէն
ուշադիր կը հետեւին արիւնածարաւ խաժամուժին շարժումներուն:
Դիմաղբական շարժման ղեկավարութիւնը ժողովի կը նստի, վերջ-
նական պատրաստութիւնները կ'ամբողջացնէ եւ որոշում կուտայ ոչ
մէկ պարապ գնդակ արձակել: Բարեբախտաբար քաղաքի մեր տու-
ները մէկզմէկու շատ մօտ էին: Մասնաւորապէս, եկեղեցիին հիւ-
սիսակողմը պատին վրայ հաստատուած սանդուխով կարելի էր
հաղորդակցութիւն պահել հայկական թաղերուն հետ, առանց
տեսանելի ըլլալու թուրքերէն: Այս կերպով, ինքնապաշտպանութեան
վերին կոմիտէին հրահանգը տունէ տուն իրար ձայնելով, կէս ժամէն
կը հասնի մինչեւ Էրտէվիլեան Սահակ աղային դիրքը: Դժուար էր
անշուշտ հաղորդակցութիւն պահել պարտէզի թաղին հետ, ուստի
մերոնք ստիպուած էին մարդ զրկել զիշերուան մութին:

Կիրակի, Հոկտ. 22 ժամը 3ին, նոր միւթէսարըՖ Իպրահիմ
Հազգը փաշա կը հասնի Գարահիսար: Նախ քան քաղաք մտնելը,
Թամզարայի մէջէն կ'անցնի եւ ժամ մը կը մնայ այնտեղ:

Վերապրող Հայերը փաշային ոտքը ինկած եւ զթութիւն հայցած
են իրենց վիճակին վրայ: Այս որ տեսած է, նոր կառավարիչը տղու
մը պէս արտասուելով, հրամայած է որ խուժանը ցրուի եւ մինչեւ
յաջորդ առտուն բացարձակապէս դոյութիւն չունենայ:

Իպրահիմ Հազգը փաշան նոյն հրահանգը կուտայ քաղաք մտած
ատեն: Երբոր արիւնածարաւ խաժամուժը կը քաշուի, անմիջապէս
8-10 ոստիկան կը զրկէ եւ քաղաքին հայ երեւելիները կը կանչէ
կառավարչատուն: Հրաւերին կը պատասխանեն Տէր Ռեթէոս քահա-
նան եւ Նիկողոս էՓ. Այնաճեան, որոնք բարիզալուստ մաղթելով
միւթէսարըՖին, կ'աւելցնեն,

— Մենք երբեք ասիկեր (*) չենք. պարզապէս անձնական պաշտ-
պանութենէ մղուած դէմ կը դնենք, որովհետեւ թուրքերը մեզի պիտի
ջարդեն: Փառիշախիս գլխուն համար, մեզի ազատեցէք այս կացու-
թենէն:

(*) Ըմբոստներ:

Այս անգամ կաշառք ուտող երեւելիները կը բարեխօսեն: Այս միջամտութիւնը ա'լ աւելի բարեբար ազդեցութիւն կը գործէ փաշային վրայ, որ վճռականօրէն կ'ըսէ.

— Գացէ՛ք, ժողովուրդին իմ կողմէս հաղորդեցէք, որ հանգիստ ըլլայ եւ նոյնիսկ այս գիշեր տուն վերադառնայ: Քանի ես այս քաղաքին կառավարիչն եմ, ոչ մէկ Հայու քիթ պիտի արիւնի:

Հայ պատգամաւորները կուզան եւ աւետիս կուտան ժողովուրդին, բայց հաւատացող չըլլար, որովհետեւ անոնց սիրտը շատ այրած էր: Միշտ ծուղակէ մը վախնալով, ինքնապաշտպանութեան կոմիտէն միւթէսարըֆին խոստումը տեղեկացնելով հանդերձ թաղային դիմադրական ուժերուն, խստիւ հրահանգ կուտայ անոնց պատրաստ գտնուիլ: Օրն իրիկուն կ'ըլլայ առանց ոեւէ միջադէպի: Գիշերն ալ շատ խաղաղ կ'անցնի:

Հոկտ. 23ի երկուշաբթին, ոստիկանները լրջօրէն գործի ձեռնարկելով կը ցրուեն մարդկային տականքները: Մերոնք կը տեսնեն մուկետիկները, որոնք մեծաձայն կը ծանուցանեն շուկաներուն մէջ. — « Սուլթանը հրաման ըրած է որ ժողովուրդը ցրուի »:

Տէր Ռեթէոս եւ 8-10 հայ երեւելիներ այդ օրը նորէն կ'երթան կառավարական պալատ ոստիկաններու ընկերակցութեամբ: Մեր պատգամաւորները մաղթանքներ կը շայլեն Սուլթանին, թուրք ազգին եւ միւթէսարըֆին արեւշատութեան համար: Նոր կառավարիչը կրկին ազնիւ խօսք կուտայ, որ իր պաշտօնավարութեան օրով ոեւէ վնաս պիտի չպատահի Հայոց ու կ'աւելցնէ.

— Ժողովուրդը տուն ղրկեցէք: Գացէ՛ք, պատուիրեցէք ձեր գործի մարդոց որ վաղն իսկ խանութները բանան եւ թաղաւորին աղօթք ըրէք:

Մեր պատգամաւորները կը վերադառնան եւ խորհուրդի կը նստին դիմադրական ուժերու ղեկավարներուն հետ: Նախ եւ առաջ, ժողովը որոշում կուտայ նոր թաշխանէի կանայքն ու երախաները տուն ղրկել: Այսուհանդերձ, հրահանգ կը տրուի բոլոր դիրքերուն, որպէսզի կազմ ու պատրաստ սպասեն, անախորժ անակնկալ մը կանխելու դիտաւորութեամբ:

Բայց, նոր միւթէսարըֆը ճիշդ կը խօսէր, որովհետեւ մերոնք կը տեսնեն որ Մեհրալիի հեծելազօրքը կը հեռանայ քաղաքէն Սերաստիոյ ճանապարհով: Այդ օրը գրեթէ խուժան չի մնար:

Յաջորդ օր, երեքշաբթի, 24 Հոկտեմբեր, պատուէր կուզայ Իպրահիմ Հազըր փաշայէն, որ եկեղեցին եւ հին թաշխանէն ապաստանած ամբողջ Հայերը տուն վերադառնան:


Հայ պատգամաւորները դարձեալ կը ներկայանան կառավարական պալատ եւ սիրալիբ ընդունելութիւն կը գտնեն: Միւթէսարըֆին մօտ կ'ըլլայ ղինուորական հրամանատար Եուսուֆ էֆէնտին, որուն

մեր ներկայացուցիչները իրենց երախտագիտութիւնը կը յայտնեն եւ փայլուն խոստումներով հրաժեշտ կ'անեն :

Դիմադրական ուժերու ղեկավարութիւնը իրենց տուները կը զրկէ բոլոր ընտանիքները, բայց առ ի զգուշութիւն հրահանգ կուտայ սղոց որ դիրքերը չլքեն :

Միւս կողմէ, խառնիճաղանճ խուժանին վերջին մնացորդները կը ցրուին, ա'լ մարդ չի մնար մինչեւ իրիկուն ու Հայերը կամաց կամաց կը սկսին հաւատք ընծայել միւթէսարըՔին բարեացակամութեան : Վախն ի վախն, կարգ մը ծերեր այդ օրը քանի մը ժամ կը բանան իրենց խանութը, միւս օրն ալ խել մը արհեստաւորներ, բայց ժողովուրդը վերջնականապէս գործի կը սկսի Հոկտեմբեր 30ի երկուշաբթին : Այս կերպով վերջ կը գտնէ 1895ի ջարդի մղձաւանջը, որ գրեթէ քսան օր սարսափի տակ պահած էր Գարահիսարի ամբողջ հայ բնակչութիւնը :

ԴԱՆԻԷԼ ԶԱՎՈՒՇԻ ՀԵՐՈՍԱԿԱՆ ՄԱՀԸ



Աշխարհադաշտի շրջանին մէջ, մինակ Բիւրքն է որ լաւ դիմադրութիւն ցոյց տուած է ջարդարար խաժամութիւն: Դանիէլ Զավուշի խումբը չորս օր դէմ դրած է Թուրքերուն, բայց ի վերջոյ երբոր տեսած է որ պիտի չկարենայ երկար տոկալ, քաշուած է գիւղին Եայլան իր մարդոց հետ: Գալով գիւղացիներուն, անոնք ալ ելած են բարձունքները եւ անառիկ դիրքերէն ինքնապաշտպանութեան կռիւ մղած: Բիւրքը շատ քիչ վնաս կրած է այս կերպով:

Միւս գիւղերուն մէջ, Հայերը նոյնպէս մեծ կորուստ չեն տուած, որովհետեւ խուժանը առաւելապէս յարձակում գործած է հարուստ գիւղացիները կողոպտելու դիտաւորութեամբ: Զոհերուն մէջ եղած են Բիւրքի նշանաւոր Տէր Ահարոնը եւ Անդրէասէն Գրիգոր էֆ. Պարոնեանը: Վերջապէս, տեղւոյն միւթէսարըՔին ազդու հրամաններուն շնորհիւ, խաղաղութիւն հաստատուած է Աշխարհադաշտի շրջանին մէջ: Այսուհանդերձ, կառավարութիւնը խստիւ հետապնդելու ելած է Դանիէլ Զավուշի խումբը, 4-5 գաւառակներու հեծեալ ոստիկաններով եւ գինեալ պաշրպօզուֆներով:

Թուրք կառավարութիւնը Հայերը կոտորելու յերկրածոյ պատրուակ մը դրած էր: Հայաստանի ոեւէ մէկ գաւառէն, օրինակի համար ըսե՛նք Քեմախէն կամ Սերաստիայէն, կարգ մը ցեղապետներ կեղծ հեռագիր մը կուտային Պոլիս, որ այսինչ յեղափոխականը խել մը Փետայիներով եկած է այնինչ թրքական գիւղը կոտորելու: Միեւնոյն զրպարտութիւնը կ'ընէին Քեռիին (Երզնկացի Ռուբէն) համար: Ասոր վրայ, Սուլթան Համիտ հրաման կ'ընէր որ գաւառի հայութիւնը բնաջնջեն: Եւ եթէ պատահէր որ եւրոպական պետութիւններէն մէկը հարց տար թէ՛ ի՞նչու Հայաստանի խաղաղ ժողովուրդը կը կոտորէք, այն ժամանակ Երլտրղի բռնաւորը իբրեւ փաստ կը ներկայացնէր այդ շինծու հեռագիրները: Մենք ասոնցմէ բազմաթիւ օրինակներ կը տեսնենք Նազրմ փաշայի յիշատակներուն մէջ:

Պէտք է ըսեմ թէ ես կարդացած եմ անոր յուշերու գիրքը, — եթէ չեմ սխալիր 1931ին — ան լեցուն է այդ տեսակ սուտերով: Օրինակի համար, տեղ մը կը յիշէ որ Ռեֆահիէէն իր ստացած մէկ հեռագիրը կը ծանուցանէր թէ՛ « Դանիէլ Զավուշ կոխած է այդ շրջանը 500 ձիաւորներով »:

Համիտի տխրահռչակ ոստիկանապետին յիշած այդ թուականին, այսինքն 1895 Հոկտ. 14ին, ես կը գտնուէի Կերճանիս, որ Ռեֆահիէ ըսել է: Կոտորածի այդ ահաւոր գիշերը, Ճոնուրցի կաղ թուրք մը իր քառամբակ ձին կեցուց զիւզին առջեւ եւ Նազըմ փաշայի յիշած լուրը տարածեց մեծաձայն, բայց էլմալըյի համար...: Բացայայտ ճշմարտութիւն մըն է, որ Դանիէլ Չալուշ քսանէ աւելի Փետայի չէր ունեցած իր հրամանին տակ: Սակայն, թուրք կառավարութեան



ԴԱՆԻԷԼ ՉԱՎՈՒՇ

հաշւոյն այնպէս կուգար, որ վայրագ զանգուածները շարամիտ տարածայնութիւններով գրգռէ եւ ջարդի մղէ Հայոց դէմ:

Աշխարհադաշտի Հայերուն նուազագոյն վնասով դուրս գալուն գլխաւոր պատճառներէն մէկն ալ Դանիէլ Չավուշի խումբին ազգած սարսափն էր: Ես թուրքերու բերնէն լսած եմ տարօրինակ բաներ այդ Ֆետայիներու պետին վրայ: Օրինակի համար, անոնք կը պատմէին թէ Դանիէլ Չավուշ կարաս մը ունի, որուն վրայ եթէ նստելու ըլլայ՝ ուզած տեղը կրնայ երթալ...: Ահա այսպէս առասպելներ շինած էր թուրք գիւղացին այդ հերոսին վրայ:


Մեհրալին քաղաքէն հեռանալէն վերջ, անցած է Աշխարհադաշտէն եւ ուզած է ջարդէն ազատուածները կոտորել, բայց Դանիէլ Չավուշի ազգած երկիւղը զինքը ետ կեցուցած է: Թող որ տեղւոյն միւթէսարըֆն ալ համաձայն չէ գտնուած: Ասոր վրայ, Հոկտ. 31ին գացած է Եւզոկիա եւ իր 500 ձիաւորներով կոտորած է այնտեղի հայութիւնը: Գոնէ այդպէս կը պատմէին Գարահիսարի մէջ, ու եթէ հաւատարու ըլլանք այդ գրոյցներուն, այդ քաղաքին ջարդը ամենավերջինն է Ծիւնի նախճիրներուն:

Թուրքերը ամէն կերպով աշխատած են, որ Դանիէլ Չավուշ սեւէ կապ չունենայ քաղաքի հայդուկներուն հետ եւ յաջողած են իրենց նպատակին մէջ: Քաղաքին ինքնապաշտպանութեան նուիրուած յիշեալ խումբին երեք առիւծները՝ Ղուկաս, Գալուստ եւ Թէօտերկիցի Բարսեղ, խաղաղութիւն հաստատուելէն վերջն ալ, Գարահիսարի իրենց դիրքերը չեն լքած, որովհետեւ բացարձակապէս վստահութիւն չունէին թուրքերուն վրայ: Ես այն ժամանակ հազիւ 19 տարեկան էի, դեռ նոր անդամագրուած Հնչակեան կուսակցութեան, 1896ի Յունուարէն մինչեւ Դեկտեմբերի վերջերը Մանասեւեան Կիւրեղի հետ պահակ կեցած եմ դիրքի վրայ, չեչխանա հրացանով մը:

Դանիէլ Չավուշի խումբը ա՛լ անկարող կ'ըլլայ մնալու հայկական գիւղերը, ուստի կը քաշուի Փոլատ Տերէսի ըսուած յունական շրջանը, մէկ երկու օր հանգիստ առնելու համար: Բայց, եկու տես որ տեղացիք լուր կը ղրկեն կառավարութեան. երբոր թուրքերը կուգան, խումբը լեռ կը բարձրանայ: Պայքարը ծայր կուտայ. Դանիէլ Չավուշ յաղթական կռիւ մը մղելէ վերջ, կը հեռանայ: Եւ այսպէս լեռնէ լեռ, երկու օրն անգամ մը, միշտ շարժական ու անհաւասար կռիւր կը շարունակուի թուրքերուն եւ հայ Ֆետայիներուն միջեւ: Պաշարման օղակը հետզհետէ կը սեղմուի, դադար չի տար հայդուկներուն, բայց եւ այնպէս անոնք բաւական կորուստ կը պատճառեն թշնամիին: Սոսկալի կատղած՝ թուրքերը շարժման մէջ կը դնեն շրջակայ իսլամ գիւղացիները. ասոնք տղաքը կը հետապնդեն կառավարական ուժերուն հետ եւ հետամուտ կ'ըլլան զանոնք մէջտեղէն վերցնելու ամէն գնով:


Ֆետայիներու խումբը կը սկսի նեղուիլ ռազմանիւթի պակասէն

եւ անկարելի կ'ըլլայ ուրիշ տեղէ ճարել: Միւս կողմէ, աշնան ճիւնախառն անձրեւներն ալ վրայ կը հասնին եւ շատ գէշ կացութեան մը կը մատնեն տղաքը: Վերջապէս, 1895ի Նոյեմբերի վախճանին, ճիւնամբրիկէն կոծուած չարաշուք գիշեր մը, այդ հայդուկները ամէն կողմէ կը պաշարուին Աղպայիը կոչուած վայրը, որ Անդրէասի եւ Զարայի մէջտեղ կ'իյնայ: Դժբախտաբար, մեր կորիւններուն մօտ ոչ մէկ փամփուշտ մնացած էր եւ հող կը կոտորուին թշնամիէն, սոսկալի տանջանքներով: Ըստ Թուրքերու պատմածին, Դանիէլ Չավուշի գլուխը զրկուած է Սեբաստիոյ կուսակալին, բայց ետ չկրցայ ստուգել այդ պարագան: Միայն սա որոշ է, որ անմոռանալի հայդուկին մահը մեծ ուրախութիւն պատճառեց իր թշնամեաց եւ չորս կողմը հեռագրով միւծտէ տուին իրարու:



ԴԵՊՔԵՐԸ ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ՄԷՋ

(1896-1908)



Հնչակեան կուսակցութիւնը այլեւս հրաժարեցաւ այս կարգի հայդուկային խումբեր ստեղծելէ, այլ որոշեց ներքնապէս կազմակերպուիլ եւ յարմար ժամանակին սպասել: Մնաց որ, այս տեսակի ձեռնարկ մը շատ դիւրին էր դիուխ հանել Գարահիսարի մէջ, Ղուկաս աղբօր, Թէօտերկիցի Բարսեղի եւ խմբապետ Գալուստ Անդրէասեանի պէս փորձ յեղափոխականներու ղեկավարութեամբ: Ուրիշ երեք փախստականներ ալ կային քաղաքին մէջ. կառավարութիւնը տեղեակ էր եւ խստիւ կը հետապնդէր զանոնք:

1896ի Փետրուարին, Ամբրոսէոս Մ. վրդ. Ռուբինեանը կը զրկուի Գարահիսար, որպէս առաջնորդական փոխանորդ տեղւոյն թեմին: Այս վարդապետը փոխանակ զբաղելու կոտորուած դիւղերու ցաւերու ամոքումով, դպրոցներու բարեկարգութեամբ եւ այլ կարեւոր գործերով, ապօրէն ամուսնութեան մը շուրջ ահագին դայթակղութիւն կը յարուցանէ եւ պատճառ կ'ըլլայ հայ ընտանիքի մը իսլամացման: Տարին չլրացած՝ Ամբրոսէոս վրդ. փախուստ կուտայ Պոլիս, կարգ մը եկեղեցական դոյքեր հետը տանելով: Բայց, դեռ հոն չհասած՝ մեր քաղաքին աղաները հեռագիր կը քաշեն Պատրիարքարան եւ վարդապետը նաւէն դուրս ելած ժամանակ ետ կ'առնեն այդ դոյքերը ու կը վերադարձնեն առաջնորդարան:

Գարահիսար կամաց կամաց իր առջի վիճակը կը դառնէր: 1896ի Մարտին, Եուսուֆ էֆ.ի մահը շատ ցաւ կը պատճառէր մեր հայրենակիցներուն: Սեւ օրերուն, աղնիւ հրամանատարը ոչ միայն բաւական Հայեր պահած էր իր երդիքին տակ, այլ ձեռքէն եկածը չէր խնայած խուժանին դիշախանձ ախորժակները զսպելու համար: Եւ տասնի չափ աղաներ, մինչեւ գերեզմանատուն իր դագաղին ընկերանալով, ցոյց տուած էին մեր հարեւաններուն, որ եթէ Հայը գիտէ խորտակել ջարդարար բաղուկը, առաւել քան երբեք երախտագէտ է իր ճշմարիտ բարեկամներուն հանդէպ: Տարակոյս չկայ որ սովորութենէ դուրս էր մեզի համար թրքական գերեզմանոցը երթալ, — թող որ անոնք ալ մերինը չէին յաճախեր, — բայց մեր երեւելի ազգայինները այդ քայլը առած էին ի յարգանս պատուական ծերունիին յիշատակին եւ նոյնիսկ կարեւոր գումար մը նուիրած իր ընտանիքին:

Ապրիլ ամսոյն մէջ, Գարահիսարի հայութիւնը ծանր հարուած

մը կը կրէր Ղուկաս աղբոր ձերբակալութեամբ. այս մասին իր տեղին պիտի խօսիմ :

Նոյն օրերուն, միւթէսարըՔ Իպրահիմ Հագգը փաշա ուրիշ տեղ կուսակալ կ'անուանուէր, հագլիւ հինգ ամիս պաշտօնավարելէ վերջ: Մեր ազգայինները անմիջապէս հեռագիր կը դարնեն Պոլիս ու Սերաստիա, որպէսզի միւթէսարըՔը մնայ Գարահիսար, բայց ոչ մէկ օգուտ կ'ունենայ, որովհետեւ փաշան պաշտօնի բարձրացումով կոչուած էր Մուսուլի կուսակալութեան: Ազնիւ մարդուն տեղ միւթէսարըՔ կ'ընտրեն նիհարակազմ, ցածոգի Թուրք մը, որ կը սկսի Հայերը հալածել: Զարդի վախը կրկին կը սկսի սաւառնիլ Գարահիսարի վրայ:

Պոլսէն երկիր աքսորուած քանի մը հայրենակիցներ, 1896ի շրջանին Իաշնակցական կուսակցութեան մասնաճիւղի մը հիմը կը դնէին Գարահիսարի մէջ: Տոքթ. Կարապետ Փաշայեան անգրանիկ զեկավարը կ'ըլլայ այդ շարժման, որ կը մնայ իր սաղմին մէջ, որովհետեւ շատ շանցած բժիշկը կը կալանաւորուի եւ կը ճամբուի մայրաքաղաք: Պանքայի ցոյցին օրերէն՝ 15-20 հոգիէ բաղկացած այդ մասնաճիւղը, Հաճի Միսաք Օզանեանի ղլխաւորութեամբ, յաճախ իրական գործունէութենէ աւելի իր գոյութիւնը զգալի կ'ընէ դադափարական պայքարով:

Փախստական տղոց համրանքը տասը հոգիի ելած էր Գարահիսարի մէջ: Հնչակեան Կոմիտէն կ'որոշէ տղաքը Ռուսիա դրկել եւ այդ նպատակաւ պատրաստութիւններ կը տեսնեն, նոյնիսկ ճանապարհին անոնց պառկելու տեղին վրայ կը խորհուի: Այդ յեղափոխականները կը մնային քաղաքէն մէկ քիլոմէթր անդին, Մելքոն Պէյլերեանի պարտէզին կից տուն մը: Այս մարդը կը գիտնայ եւ կը խօսի իր փեսայ Հաննիկին, յետոյ կը պատմէ իր ազգականներէն Հաճի Յարութիւն Պէյլերեանին. այս որ կը լսէ կ'երթայ կառավարութեան լուր կուտայ: Այս անզգամին փորի ցաւն այն էր, որ կուսակցութիւնը իրմէ քսան ոսկի առած էր զէնքերու գնման հաշւոյն: Մատնութիւնը կատարելէ առաջ, նոյնիսկ կարգ մը պայմաններ առաջարկած էր կառավարութեան: Եւ Թրքական իշխանութիւնը, այդ անձնուէր հայդուկները անպայման ձեռք ձգելու իր դիւային ցանկութեամբ, Հաճի Յարութիւնին Իզմիր երթալու արտօնագիր շնորհած էր:

Պարզ է թէ այդ տասը յեղափոխականները կառավարութեան ճանկը ինկան: Իժուար չէ երեւակայել սաղայելական ուրախութիւնը Թուրքերուն, որոնք սկսան մերոնց անդադար ջարդի սպառնալիքներ ընել: Տղաքը շատ տանջեցին, բայց բախտը այնպէս բերաւ որ 5-6 ամիսէն ազատուին:

Արդարեւ, երջանկայիշատակ Մաղաքիա արք. Օրմանեան, Պոլսոյ պատրիարք ընտրուելուն պէս, առաջին գործը կ'ըլլար ազգու

գիմում կատարել եւ ընդհանուր ներում ձեռք բերել Կարմիր Սուլթանէն: 1896 Նոյեմբեր 28էն մինչեւ 10 Դեկտեմբեր, այս կերպով մահուան ճիրաններէն կ'ազատէին երեսուն հոգի եւ 1200 հայ բանտարկեալներ:

Կալանաւորներու արձակումը բաւական հանդարտեցուց մթնոլորտը, բայց Հայերը երբեք չէին հաւատար այդ երեւութական խաղաղութեան, որովհետեւ կառավարութիւնը սկսած էր մեր գիւղացիներուն հողերը գրաւել սիւթեմաթիք կերպով: Ճնշուած ժողովուրդը միակ յոյս մը ունէր, այն է անդադար կազմակերպուիլ եւ ստեղծել յեղափոխական պոռթկում մը, որ յաշս իրեն մօտալուտ ազատագրութեան մը հօրիզոնը կը բանար եւրոպական միջամտութեամբ: Այս գաղափարը ծիծաղելի կը թուի ներկայ օրերուն, բայց այն ժամանակ յեղափոխական գործիչներուն խելքի մօտ կ'երեւէր:

Ձէնք պէտք էր այս գործը գլուխ հանելու համար, ինչպէս Հայաստանի բոլոր գաւառներուն, նոյնպէս եւ Շ. Գարահիսարի մէջ:

Առաջին առթիւ պահանջը կը զգացուէր 300 լաւորակ հրացանի եւ մեծ քանակութեամբ փամփուշտի: Երկու հազար ոսկի անհրաժեշտ էր այս զէնքերը ձեռք բերելու համար: Կոմիտէն վճռած էր հարուստներէն հաւաքել այս գումարին խոշոր մէկ մասը, մնացեալն ալ ձարել կուսակցական հանդանակութեամբ: Այս որոշման վրայ, Գարահիսարի մեր ունեւոր ազաները անտրտունջ վճարած են իրենց կարողութեան համաձայն պահանջուած գումարները: Մինակ մէկ հարուստ գտնուած է, որ եղբօրը Հաճի Կարապետին պատմած ու ան ալ կառավարութեան լուր տուած է:

Այդ մարդը Նազարէթ Հիւսիսեանն էր:

Գարահիսարի ամէնէն հարուստ ազաներէն էր եւ այնպէս կը կարծէր, — ինչպէս առհասարակ միւս բախտաւորները, — որ յեղափոխականները իրմէ 60 ոսկի կը պահանջեն, իրե'նք ուտելու համար: Որոշ է թէ հաւաքուած գումարները միմիայն սահմանուած էին զէնքերու գնման, որ պիտի ծառայէր հայ ժողովուրդի բոլոր տարրերուն կեանքի, ինչքի եւ պատիւի պաշտպանութեան: Մեր հարուստներէն կարեւոր մաս մը երբեք չկամեցաւ ըմբռնել այս բանը:

Անզգամ ջոջէն դրամ ուզողները կ'ըլլան Թորիկ Խոտեան, Ֆելէկեան Թորոս, Ստեփան Պէրպէրեան եւ անոնց պետը Գէորգ Պօղոսեան (Թէոսին): Թրքական իշխանութիւնը նախ չի յաջողիր զանոնք ձերբակալել, որովհետեւ տղաքը կը պահուին, բայց կը սկսի տուները խուզարկել եւ շատ նեղել մեր աղբրաթիքը: Վերջապէս, երբոր այդ հանդանակիչները կը կալանաւորուին, կառավարական քննիչներուն կ'ըսեն.


— Այս Նազարէթ ազան վախուն մեղի պահեց իր տան մէջ ու զէնք գնեց, որպէսզի իր կեանքն եւ հարստութիւնը պաշտպանենք:

Մեր ամսականները չէր ուզեր տալ, մենք ալ իրիկուն մը դացինք առինք այդ 60 ոսկին, որ մեր արդար իրաւունքն էր...

Կառավարութեան ուզածն ալ ատ էր արդէն: Նազարէթ աղան կը բռնեն, կը կոխեն ծակը եւ չէնք շնորք կը քամեն: Բաւական ատեն բանտը պառկելէ վերջ, երբոր դուրս կուգայ, կը սկսի խորհրդածել: Օր մը նոյնիսկ իր մէկ բարեկամին ըսած էր. — « Պատճառը եղբայրս է »: Երեսէ շատ ինկած էր. երբոր փողոցէն կ'անցնէր, դպրոցականները ետեւէն « Մատնի՛չ » կը պոռային:

Հնչակեան կուսակցութիւնը վճռած էր տեոորի ենթարկել Պէյլերեանը, ինչպէս նաեւ Նազարէթ Հիւսիսեանը, բայց երբոր Օրմանեան պատրիարք յաջողեցաւ ընդհ. ներում ստանալ բանտարկեալներուն համար, ահաբեկման խնդիրը մէկ կողմ դրին, վրէժի յարմար ժամանակին սպասելով: Այդ երկու աղաները գիտէին որ այդպէս է, ուստի 1897ին նորակազմ Դաշնակցական կոնսակցութեան մէջ մտան, իրենց կաշին փրկելու համար: Մնաց որ, Հաճի Յարութիւն Պէյլերեան ուրիշ խելացի գործ մըն ալ տեսաւ, Պանքայի դէպքին Պոլսէն փախած Աւետիս Ճըլտըրեան անուն դաշնակցականի մը տալով իր աղջիկը...: Արդար ըլլալու համար ըսեմ թէ՛ ոչ մէկ լուրջ տարակարծութիւն գոյութիւն ունէր երկու կուսակցութեանց միջեւ. Հնչակեանները մասնաւորապէս դժգոհ էին Դաշնակցականներէն, որովհետեւ անոնք երես կուտային այս կարգի մատնիչներուն:

Յ Ա Բ Ե Թ Ի Ե Ի Գ Ա Լ Ո Ի Ս Տ Ի Ն Ա Շ Ա Տ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն Ը



Հնչակեան կուսակցութիւնը, որ երկու հազար հոգիի պատկառելի համրանքին հասած էր Գարահիսարի մէջ, հետզհետէ կ'ընդլայնէ իր գործունէութիւնը:

Նախ՝ փախստականներուն, բանտարկեալներուն եւ իրենց ընտանիքներուն ապրուստի յարաճուն կարիքներուն հասնելու համար, գաղտնի դրամ կը կտրէ: Այս գործը կը յանձնուի ոսկերիչ Աւետիս Գուլումճեանի, որ քառասուն հազար թրքական Մեճիտիէ կը կոխէ եւ այդ ստակը կը ծառայէ քաղաքին ու շրջակայ գաւառներու պահանջներուն:

Երկրորդ, 30-35 ջորիներ կը գնէ ու այդ գրաստներուն միջոցաւ կ'ապահովէ հազորդակցութիւնը եւ զինումը հայկական գաւառներուն: Հնչակեան կոմիտէն այս գործին ղեկավարութիւնը կը վստահի Յակոբի (Գալուստ Անդրէասեան) եւ Յարեթ Թեվէքէլեանի: Քանի մը տարի այս երթեւեկը կը շարունակուի անընդհատ, կիրասունէն-Պարբերդ ճանապարհին վրայ գտնուող հայաբնակ գիւղերու եւ քաղաքներու սպառազինումով, մինչեւ որ շարադէտ պատահար մը վերջ կուտայ այս գործունէութեան, որ ճակատագրական կարեւորութիւն ունէր Հայաստանի ժողովուրդին ինքնապաշտպանութեան տեսակէտով:

Վերջին անգամ որ Պարբերդ կ'երթան, կարծեմ 1904ին, Յակոբ եւ Յարեթ բաւական զէնքեր կը պահեն վստահելի հայ համետագործի մը տունը: Այս ընկերը թուրք դրացի մը ունէր, որ ամէն տարի գիւղ կ'երթար ու իր բնակարանին բանալին կուտար իրեն: Այնպէս կ'երեւի թէ կը կասկածին Հայէն, որ փորձանքի մը առաջքն առնելու համար, այդ զէնքերը կը տանի հարեւանին տունը կը պահէ:

Չար բախտէն, թուրքը յաջորդ օրն իսկ կուգայ, մինչդեռ անկէ առաջ հազիւ մէկ անգամ քաղաք կ'իջնէր: Համետագործը հոն չկար, այլ իր միամիտ կինը. խեղճը բանէ մը տեղեակ չէր ու առանց այլեւայլի բանալին կուտայ տիրոջ:

Մարդը կը մտնէ տուն, ու երբոր կը տեսնէ զէնքերը, Հայուն բան մը չըսած կը վազէ լուր տալու իշխանութեան: Թուրքը չի մոռնար նաեւ ըսել կառավարութեան մարդոց որ « Ես ամէն տարի տանս բանալին հայ դրացիիս քովը կը ձգեմ »:

Չէնքերը իսկոյն թուրքին տունէն կը վերցնեն կը տանին: Միեւ-

նոյն ատեն, ոստիկանները խանութէն կը ձերբակալեն համետազործը ու կը քշեն բանտ: Այս որ կը լսեն, Յարեթ եւ Գալուստ կը պահուին, որպէսզի անակնկալի չգան:

Հայը սոսկալի կը ծեծեն. միշտ կ'ուրանայ, լուր չի տար: Այսպէս երեք օր կը տանջեն, դարձեալ կը յամառի լռութիւն պահել: Վերջին դիշերը այնչափ կը խոշտանգեն, որ չարչարանքի տակ կը մարի ու այն ժամանակ երկյարկանի շէնքին պատուհանէն դուրս կը նետեն: Յետոյ, մարդ կը զրկեն առաջնորդարան եւ կ'ըսեն. — « Հայ մը մեռած է բանտին մէջ, թող քահանայ մը գայ տանի մեռելը »:

Տէրտէրը երբ կը մօտենայ, համետազործը յուշիկ մը կը շնջայ. — « Տէ՛ր հայր, ես մեռած չեմ, կամաց մը ինծի ասկից տար »:

Անգգամ քահանան փոխանակ համետազործին կեանքը փրկելու, ի չարս կը դործածէ իր հողեւոր պաշտօնը ու կ'երթայ լուր կուտայ թրքական իշխանութեան թէ՛ « Մարդը ողջ է »:

Կառավարութեան մարդիկը կուգան, իրօք կը տեսնեն որ կենդանի է ան, բայց ի՛նչ վիճակի մէջ. խեղճ համետազործին ոտքի ոսկորները կտոր կտոր եղած էին...: Սակայն, խի՞ղճ կը փնտռես թուրքերու մօտ. դժբախտ մարդուն չեն մեղքնար ու այս անգամ կը սկսին ոտքերը դարձնել այդ դրութեան մէջ, որպէսզի խոստովանի թէ « Ո՞վ բերաւ զէնքերը »: Վերջապէս, համետազործը ա՛լ չի դիմանար այդ տանջանքին եւ կուտայ անունները:

Թուրքերը երբ կը լսեն, Յարեթն ու Գալուստը կը սկսին հետապնդել փութոյ պնդութեամբ: Նոյն ատեն, չորս կողմը հեռագիր կը դարնեն, որպէսզի ոստիկան-զինուորներ պահակ սպասեն ճանապարհներուն վրայ, մանաւանդ Եփրատի կամուրջին գլուխը:

Երկու յեղափոխականները կը փախչին Գարահիսարի ուղղութեամբ: Ճանապարհին՝ Գալուստ եղբայրը « Թիֆօ »ի կը բռնուի եւ այդ վիճակով Եփրատի եզերքը կը հասնին դիշերանց: Քաջ լուղորդ, Յարեթ կը կտրէ կ'անցնի գետը փորձի համար ու կը վերադառնայ: Եփրատի անցքը այսպէս ուսումնասիրած՝ այս անգամ կ'ուղէ Գալուստ եղբոր թեւը մտնելով դիմաց անցընել, բայց անկարելի կ'ըլլայ: Նախ, դժբախտ մարդը հիւանդ է, երկրորդ՝ լողալ չի գիտեր, ու երրորդ՝ գետը շատ խոր էր: Որչափ որ կ'աշխատին՝ չեն յաջողիր, ուստի Գալուստ եղբայր կ'ըսէ.

— Յարեթ, դուն ինծի հոս ձգէ ու անցիր դնա. այնպէս կ'երեւի որ ա՛լ ինձմէ օգուտ չկայ...

Ազնիւ մարդը երբ այս կ'իմանայ՝ սրտնեղած կը բողոքէ.

— Գալուստ եղբայր, եթէ մահ մը կայ, երկուքս մէկ: Իսկ եթէ ազատուիլ կայ, դա՛րձեալ երկուքս մէկ:

Այսպէս մինչեւ առտուն իրար համոզելով չեն կրնար եզրակացութեան մը գալ: Կուսադէմին կ'երթան կը պահուին մացառներուն

մէջ: Անօթի, յոգնած, պարտասած, Գալուստին հիւանդութիւնը
այդ օրը աւելի կը ծանրանայ: Գիշերը կրկին գետեղերք կը յառա-
ջանան. այն ժամանակ Յարեթ քանի մը տեղերէ կը փորձէ, քիչ շատ
յարմար չըջան մը կը գտնէ, բայց անկարելի կ'ըլլայ հիւանդը դէմն
անցընել: Այս անգամ, բոլորովին յուսահատած, Գալուստ կ'աղաչէ
անձնուէր ընկերոջ.

— Յարեթ, լուրջ կ'ըսեմ քեզի, դուն դնա՛. ի՞նչու համար
երկուքս մէկ կորսուինք, թող մինակ ես զոհուիմ: Ազգը պէտք ունի
քեզ նմաններուն. ի սէ՛ր Աստուծոյ, ի սէ՛ր հայ ժողովուրդին, ի սէ՛ր
մեր կուսակցութեան, ձգէ՛ զիս ու հեռացիր:

— Գալուստ եղբայր, պատասխան կուտայ անմահ յեղափոխա-
կանը, ճիշդ է այդ ըսածդ, սակայն ինձ համար անկարելի է քեզի
պէս ընկեր մը՝ այն ալ ծանր հիւանդ, երեսի վրայ ձգել ու երթալ:
Հարազատ Հայու մը համար, ատիկա ստորնութեան ստորնագոյնն
է: Դարձեալ կ'ըսեմ, եթէ մահ կայ, երկուսս մէկ, իսկ եթէ ազատ-
ուիլ, դարձեալ երկուքս մէկ: Մի՛ պնդեր ինձ այլեւս:

Տաժանելի գիշեր մը կ'անցընեն: Այդ պայմաններուն մէջ,
հիւանդին վիճակը աւելի կը վատթարանայ մինչեւ լոյս: Ճարահատ,
Յարեթ ընկերը կոնակն առած՝ մօտակայ թրքական գիւղ մը կը տանի
մեծ դժուարութեամբ: Սենեակ մը կը վարձէ, կը հանգստացնէ
հիւանդը. յետոյ կ'երթայ հաց եւ կաթ կը բերէ, կը խմցնէ
հոգածութեամբ:

Մինչ այդ տեղացի թուրքերը անմիջապէս լուր կը ղրկեն չըջա-
կայ գիւղ մը, ուր յատկապէս Յարեթն ու Գալուստը հետապնդող
ոստիկաններ կը գտնուին եղեր: Հեծեալ 15-20 հոգի մը անոնցմէ
կուգան, գիւղը կը պաշարեն ու հող կռիւր կը սկսի Յարեթի եւ
ոստիկաններուն միջեւ: Մահ ու կենաց պայքարը կը տեւէ երկու
ժամ. անոնցմէ 3-4 հոգի կը սպաննուին, մինչեւ որ Յարեթին փամ-
փուշտը կը հատնի եւ կուգան կը ձերբակալեն: Գիւղացիք եւ ոս-
տիկանները կը յարձակին տղոց վրայ, որպէսզի կտոր կտոր ընեն,
բայց հրամանատարը չի ձգեր ու անոնց կ'ըսէ. — « Հրաման ելած է
որ ողջ բռնենք ու տանինք յանձնենք Խարբերդ »:

Մեծ դատավարութիւն մը եղաւ: Այս առթիւ, մօտաւորապէս
15 քաղաքներէ Հայեր կալանաւորեցին ու ճամբեցին Խարբերդ: Մէկ
խօսքով, զգայացունց տեսարաններ պարզուեցան դատի ժամանակ
եւ յեղափոխական այդ կարեւոր դործին թնձուկը շղթայի պէս
քակուեցաւ: Թրքական դատարանին վճիռը այն եղաւ, որ 15 հոգի
3-7 տարուան պատիժ կերան, համետադործն ալ 15 տարուան բան-
տարկութեան դատապարտուեցաւ: Գալով Յարեթի եւ Գալուստ
Անդրէասեանի, անոնք ալ մահապատիժ ստացան ու գլխատուեցան
Խարբերդի հրասարակին վրայ:

Շատ մելան սպառած է ժամանակին այս դատը, որ մաս կը


կազմէր հայկական ողբերգութեան: Մահավճիռը ցնցող տպաւորութիւն գործեց մասնաւորաբար Գարահիսարի մէջ: Մինչեւ իր մահը, 1915ի ինքնապաշտպանութեան կռիւներուն, Յարեթի մայրը երբեք չգիտցաւ իր հողեհատորին եղերական վախճանը:

Ճշմարիտ հայրենասէրներուն համար, մինչեւ հիմա այդ երկու հերոսներուն գլխատումը ահաւոր խոց մըն է, որ կ'արիւնէ իրենց սիրտը: Ու եթէ իմ համեստ գրիչովս, ես այս քանի մը տողերը նուիրեցի Յարեթի եւ Գալուստի անմահ յիշատակին, որպէսզի մեր մատաղ սերունդը գիտնայ որ այս տեսակ վսեմ յեղափոխականներ տուող ազգի մը հաւաքականութեան կը պատկանի ինք:

Դէպքէն հազիւ տարի մը անցած, 1906 Յունիս 7ին, Աչըքպաշեան հեռացաւ Գարահիսարէն, չորս գինեալ ընկերներու ուղեկցութեամբ: Մօտաւորապէս 12 տարի ապրած էր այդ շրջաններուն մէջ, որ յոյժ արդիւնաւոր եղած էր կազմակերպչական տեսակէտով: Մահմանադրութեան ինքն ալ Պոլիս էր եւ կը մնար այնտեղ մինչեւ 1915 Յունիս 3ի օրը, որ այնչափ չարաղէտ պիտի ըլլար իր եւ Հնչակեան 19 ընկերներուն համար:

ՂՈՒԿԱՍ ԱՂԲԱՐ

ՀԵՐՈՍԱՄԱՐՏՆԵՐՈՒՆ ՂԵԿԱՎԱՐ ՈՒՂԵՂԸ



Թրքական կառավարութիւնը Ղուկաս աղբարը մեռած կը կարծէր իր միւս երկու ընկերներուն հետ, Աղպայի թրհասական կոիւն մէջ, որ այնքան աղետալի եղած էր Գանիէլ Չավուչի խումբին համար: Բայց, եկու տես որ ձմեռը Թուրքերը կ'իմանան թէ ողջ է եւ ի վերջոյ կը կալանաւորուի տղու մը անխոհեմութեան երեսէն:

1896ի Ապրիլ ամսոյն մէջ, հերոսին ազգականներէն Գարեգին Խոտիկեանի խելքին կը փչէ, « չարչաֆ » մը կը ձգէ գլխուն ու կը մտնէ Ղուկաս աղբոր տունը: Հոնկէ անցնող Թուրք մը կը նկատէ որ այսպէս կոչուած այդ « կնկան » ոտքը մարդու կօշիկ կայ, քալուածքն ալ էրիկմարդու քալուածք...: Կը վազէ կառավարութեան լուր կուտայ: Վայրկենապէս, 30-40 ոստիկաններ կուգան, կը պաշարեն բնակարանը, կը բռնեն յեղափոխական գործիչը ու կը տանին բանտ:

Ղուկաս աղբարը հազիւ ամիս մը կը պահեն Գարահիսար, յետոյ կը փոխադրեն Սերաստիա, որովհետեւ իր կողմէ տեւորի ենթարկուած Մահմուտ Նեճիպի կիներ հոն կը գտնուէր: Հարցաքննութիւնը անձամբ կը կատարէ տեղւոյն կուսակալը: Կը բերեն սպանեալին կիներ, որ կը ճանչնայ հերոսը ու կ'ըսէ. — « Ահաւասիկ այս մարդն է որ ամուսինս տարաւ սպաննեց »:

Չերքէզուհին նկարագրութիւնը կ'ընէ դէպքին եւ կ'աւելցնէ. — Այս մարդն է որ ըսաւ. « Մենք Փետայի ենք, Թուրք կնոջ պատիւն ալ մերն է »:

— Ղուկաս, տղաս, ի՞նչու այս հանրմին էֆէնտին դարկիր, հարց կուտայ կուսակալը:

— Չեր խելօք կարծած էֆէնտին 15 անմեղ Հայեր դատապարտած է, կը պատասխանէ անվեհեր յեղափոխականը: Ոչ մէկ յանցանք ունեցած տեղս, ինծի ալ տասներհինգ տարուան վճիռ տուած եւ այս կերպով պատճառ եղած է որ Փետայի ըլլամ, ինչպէս շատ շատեր, որոնք այսօր փճացած են: Մեղքը չե՞ն. ներկայիս 15-20 օճախներ մարած են այդ էֆէնտիին երեսէն: Այս տեսակ մարդ մը արժանի չէր ապրելու. ու ինք ինչպէս վճիռ կուտար անմեղ Հայերուն, մենք ալ այդպէս դատարան կազմեցինք ու մահուան դատապարտեցինք այդ անարդար դատախազը:

— Չեր մէջէն ո՞վ սպաննեց:

— Ե՛ս դարկի, այն հրացանով որ այսօր ձեր քովն է :

— Աֆէրի՛ն, դուն որ ամէն բան ուղիղ խօսեցար, ես ալ քու մահուան վճիռը բանտարկութեան փոխել պիտի տամ, կը խոստանայ կուսակալը :

Իրաւ ալ, ութն օր վերջ, հերոսը կ'առնեն կը տանին թուրք պաշտօնատարին, որ ժպտերես կ'ըսէ .

— Տղա՛ս, Ղուկաս, թաղաւորին աղօթք ըրէ . քեզ մահուընէն ազատեցի, մինակ շիտակ խօսելուդ եւ քեզի սիրելու համար : Մահավճիռդ վերածուած է ցկեանս բանտարկութեան :

Ղուկաս աղբար շնորհակալութիւն կը յայտնէ կուսակալին : Գատախազին կնոջ եղբայրները շատ անգամ իրեն կ'այցելեն Սերաստիոյ բանտը, դրամ եւ ծխախոտ կուտան ու կ'ըսեն .

— Մենք Ձերքէզներս կարիճ մարդը կը սիրենք : Գուք որ մեր քրոջ պատիւը պաշտպանեցիք, հելա՛լ ըլլայ ձեզի մահացեալին արիւնը :

Ամբողջ տասներկու տարի Ղուկաս աղբար տէրն ու տիրականը եղած էր Սերաստիոյ բանտին, կռածը կռած, կապածը կապած : Երբոր 1908ի Սահմանադրութեան օրերուն կ'ազատի, Գարահիսար կը վերադառնայ եւ քաղաքին ամբողջ բնակչութիւնը խոր յարգանք կ'ընծայէ իրեն : Մասնաւորաբար Հայերուն աչքի լոյսը կը դառնայ :

Կարճահասակ, շիկահեր եւ կապոյտ աչքերով, միշտ առաջին դժին վրայ կը դռնուէր խիզախ գործիչը, երբ անհրաժեշտ էր վտանգաւոր ձեռնարկ մը գլուխ հանել : Մենք այդ տեսանք 1895ի սեւ օրերուն :

Գարահիսարի մէջ, երբոր փոքրիկները չարութիւն ընէին, շատ մը մայրեր սովորութիւն ունէին ըսելու իրենց .— « Չա՛յնդ կտրէ հիմա Օլանը կուգայ » :

Ղուկաս աղբար հազիւ տասը տարեկան՝ երբոր չափը կ'անցընէ անառակութեան, մայրը շատ անգամ կը դիմէ միեւնոյն հնարքին, աչքը վախցնելու համար : Սակայն ուշիմ տղան շատ ալ խաղի գալու տրամադիր չերեւիր եւ կ'ուզէ խելամուտ ըլլալ .

— Մայրի՛կ, այդ Օլանը ո՞վ է, հարց կուտայ անհամբեր :

— Սպասէ՛, որդի՛ս, թէ որ մեծնաս, ամէն բան կ'իմանաս :

Քանի մը տարի վերջ, երբ 14 տարեկան կ'ըլլայ, օր մը այգիներէն սերկելիլի ծառի մը վրայէն ճպոտ մը կը կտրէ, վրայի կեղեւն ալ ոլորապտոյտ կը հանէ : Հոս տեղն է ըսել, որ մեր քաղաքը սովորութիւն կար կովու մաղը հաւաքելով պնդացնելու եւ գնդակ շինելու : Այնպէս կը պատահի, որ երբ Ղուկաս այդ գաւազանը առած գնդակ խաղալու կ'երթայ տուն, ճամբան թուրք լամուկները մերօնց կը ծեծեն ու հայ տղու մը գլուխը կը պատռեն : Այս որ կը տեսնէ, խիզախ պատանին կը վերցնէ ճպոտը ու կ'իջեցնէ լակոտին երեսին, որ սաստիկ կ'ուռի : Յետոյ, երբոր հերթը կուգայ միւս թուրք

տղաներուն, ասոնք սարսափած կը փախչին, հակառակ որ շատուոր են եղեր: Ասոր վրայ, տարեց թուրք մը կը յարձակի Ղուկասի վրայ, բայց անիկա կծիկը կը դնէ: Գործը հող չի վերջանար. ամէն կիրակի կը շարունակուի կռիւը փողոցի թուրք լամուկներուն հետ ու մի'շտ մեր ապագայ հերոսը կ'ըլլայ յաղթականը: Վերջապէս, այս խնդիրը այնչափ կը ծանրանայ, որ օր մը թուրքին մէկը կ'ըսէ անոր հօրեղբօր.

— Եղբօրդ տղան հեռացուր, եթէ ոչ պիտի սպաննեն... դուն իմ բարեկամս ես, ատոր համար չեմ ուզեր սեւէ վնաս պատահի իրեն:

Հօրեղբայրը այս որ կ'իմանայ, Ղուկասը կը տանի քաղաքէն երեք ժամ հեռու Լճէսի շրջանը: Պատուական մարդուն խանութին մէջ, ըմբոստ պատանին տրեխ շինել կը սորվի ու կը մնայ այնտեղ մինչեւ իր Ֆետայի դառնալը:

Ղուկաս աղբօր համոզումը այն էր, որ թշնամին սպաննելէ աւելի պէտք է վախցնել: ԳՏի ինքնապաշտպանութեան կռիւներուն, Գարահիսարցիք հողիւ 80-90 լաւորակ զէնք ունեցած էին ձեռքի տակ, մնացեալը դաւալ, չէջխանա, որսի եւ այլ տեսակի հին հրացաններ էին պարզապէս: Խուժանը յարձակած ժամանակ, ան հրահանգ տուած էր տղոց, մէկի տեղ երեք բաժին վառօղ լեցնել զէնքերուն մէջ եւ յիսուն հողի մէկանց կրակել:

Դժուար չէ երեւակայել, որ միանուագ արձակուած այդ հրացանները թնդանօթի մը որոտին չափ կը ցնցէին երկինքն ու երկիրը: Երբօր կը տեսնէր թուրքերուն լեղապատառ փախուստը, Ղուկաս աղբար կը դառնար դէպի իր ընկերները ու ծիծաղելէն կ'ըսէր.

— Հը՛, կը տեսնէ՞ք, շունը ծեծելէն լաւագոյն է աչքը վախցնել...

1908 Օգոստոսի սկիզբը, Գարահիսար կը վերադառնար նախկին Հնչակեան Գրիգոր Ղարիպեանը, որ այս անգամ Դաշնակցութեան յարած էր: Այս երիտասարդ գործիչին, — Հրաչեայ Մարալ անունով ճանչցուած հայ յեղափոխութեան պատմութեան մէջ, — փառաւոր ընդունելութիւն մը ըրաւ քաղաքին ժողովուրդը: Բարձրաստիճան եկեղեցականի մը պէս, ան մայր եկեղեցիին խորանը ելաւ ու ժամ մը բանախօսեց: Ամբողջ այդ ճառին միտ բանին այն էր, որ Սահմանադրութիւնը գլուխ հանուած էր շնորհիւ Հ. Յ. Դաշնակցութեան, որուն անունը բազմիցս անգամ յիշեց:

Որոչ է թէ՛ այս յամառ եւ հետեւողական փրփականտը մեծ ազդեցութիւն գործեց եւ Հնչակեան կուսակցութեան անդամներուն գրեթէ կէսը դաւանափոխ եղաւ: Մինչեւ իսկ տաք գլուխ երիտասարդներ այնչափ ծայրայեղութեան դացին, որ անգամ մը կռիւ ծագեցաւ Պէյլերեաններու պարտէզին մէջ եւ քանի մը դաշնակցականներ վիրաւորուեցան: Այս ամօթալի պայքարին վերջ տալու համար, երբ խառն ժողով կը գումարուի, Ղուկաս աղբար կը պոռթկայ.

— Ծօ՛, ի՞նչ է երկուսիդ ուղածը, որ այսպէս անախորժ կռիւներ
կը ստեղծէք: Մենք զեռ ազատուած չենք. կ'ուզէք ուրեմն որ թշնամին
մեր վրա՞ խնդացնէք: Հնչակ, Դաշնակ եւայլն լոկ անուններ են,
որոնց չարժեր կարեւորութիւն տալ: Մեր ամէնքիս նպատակը հայ
ազգը ազատել է. թո՛ղ մենք ազատինք, ո՛ր կուսակցութիւնը որ
կ'ուզէ թող ազատէ: Մինակ՝ մենք ազատինք...

Ղուկաս աղբար այնչափ մեծ յարգանք կը վայելէր, որ իր խօսքը
պատգամ էր. անկէ վերջ հեղ մըն ալ կուսակցական պայքար չեղաւ
Գարահիսարի մէջ:

Մեծ Եղեռնի ճակատադրական օրերուն, ի՛նքն էր որ պիտի փո-
խարինէր զօր. Անդրանիկը, անգամ մը եւս պանծացնելով Գարա-
հիսարի մարտական հանճարը: Անմահ հերոսին սիրտը անշուշտ
արիւնած էր իր սիրելի ազգին կոտորակման համար. շատ հպարտ
էր սակայն որ Ղուկաս աղբար յաջողած էր արժուեբոյնի ժողովուրդը
առաջնորդելու փառահեղ մահուան ճանապարհը: Ապացոյց ա՛յն,
որ ի կենդանութեան յուզիչ կոչ մը ուղղած էր թերթերուն, որպէսզի
կարենայ ձեռք բերել անոր նկարը, բայց իր բոլոր ջանքերը
ի դերեւ ելան:

Սահմանադրութեան օրերուն, երբ Ղուկաս աղբար բանտէն
ազատելով կը գտնուէր Իզմիթի Օվաճըք գիւղը իր կնոջ Տիկ-
Սրբուհիի հետ, այնտեղ իր աներորդին Տէր Աբսէն քահ. Յարու-
թիւնեան գրի կ'առնէր գովերք մը: Անվեհեր հայդուկին ձօնուած
այդ համեստ բանաստեղծութիւնը, — եղանակաւորուած Օվաճըքցի
Միհրան Փափաղեանի կողմէ, — աղնուօրէն մեզի տրամադրած է
նոյն երկրացի Պ. Կարապետ Գարակէօղեան: Ահա՛ այդ երգը. —

Փա՛ո՛ւ ազատութեան որ տուաւ մեզ բախտ,
Վայելի կրկին քաջն ողջ ու անյաղթ.

Գարահիսարի հայորդին արի,

Որմէ գուրկ էի տասներկու տարի:

Լփեցիր տուն-տեղ, գործդ շահաւէտ,

Կախեցիր սուրբ, մարթիւնք թելէդ՝

Լուծելու վրէժն թափուած հայ արեան,

Որուն հազարներ անմեղ գոհ եղան:

Կայծակի մը պէս կը հասնէիր միշտ,

Հոն ուր կ'ըսուէր թէ թուրքեր ամբարիշտ,

Կը կողոպտէին հայ ժողովուրդն անգէն,

Կամ անոր բերնի հացը կը կորգեն:

Ա՛լ Հայը ազա՛տ է, ազատ ես եւ դուն,

Ապրէ ասկէ վերջ կեանք մը գուարթուն.

Որպէսզի բանտին սեւ օրերդ մոռնաս,

Ո՛վ դուն անվեհեր Տէօվլէթեան Ղուկաս:

Թէպէտ ԳՅԻ ինքնապաշտպանութեան կռիւները յաջող ելքի մը յանդած էին, բայց կար եւ մետալին միւս կողմը, որ խոշոր հարցականի մը առջեւ կը դնէր Գարահիսարի հայութեան դոյութիւնը պահպանելու կոչուած կոմիտէն: Քաղաքին հայ բնակչութիւնը իրօք ազատած էր Համիտեան նախճիրներէն, զէնքով, դրամով եւ իմաստութեամբ: Սակայն, ի՞նչ պիտի ըլլար իր վիճակը, եթէ այդ անհաւասար պայքարը քանի մը օր եւս երկարաձգուէր: Մարդարէ ըլլալու պէտք չկայ գիտնալու համար թէ՛ ի վերջոյ բոլորս թուրքերու ճանկը իյնալով, անխնայ պիտի հնձուէինք, որովհետեւ լաւ տեսակի գէնֆ չունէինք:

Ամբողջ թուրքիոյ վրայէն խաղաղութեան հով մը կը փչէր « Հուրիէթ » ի շրջանին: Մարդիկը ազա՛տ էին, խանդավառութենէն զինովցած. հայ տէրտէրը կը պագտուէր մոլլային հետ: Բայց, Ղուկաս աղբօր խելքը կը կտրէր որ այս բոլորը երեւութական էր. դորշ Գայլը երբեք հանգիստ պիտի չթողուր Հայուն...


Մինչեւ 1895 խորանալու պէտք չկար ամբողջ ճշմարտութեան վերահասու ըլլալու համար: Սահմանադրութեան օրերուն, ասա՛ իթթիհատական իշխանութիւնը, որ մէկ օրէն միւսը կը սարքէր Կիլիկիոյ կոտորածը: Արի՛ւն, հրդե՛հ, մոխի՛ր, ամբողջ Տաւրոսեան Հայաշխարհին վրայ: Մենք որ վայրկեան մը միամտութիւնն ունեցած էինք հաւատալու որ « Ժէօն թիւրք »ը աւելի բան մը կ'արժէր Համիտեան տիպարէն, ասաւասիկ ան դիմակը վար կ'առնէր ու դարձեալ երեւան կուգար իր գիշատիչ ժանիքներով:

Ի՞նչ կը սորվեցնէին մեզի այս բոլոր դէպքերը: Արթուն կենալ, պրկել ուժերը եւ միշտ զինուի՛լ, զինուի՛լ, զինուի՛լ:

Ղուկաս աղբար՝ ի նախատեսութիւն անհաւոր Գալիքին, յարածուն եռանդով մը կը շարունակէ սկսուած գործը: Միակ կարգախօս մը ունէր, հատու եւ վճռական. — « Ծախեցէք ձեր շապիկները եւ զէնք գնեցէք »: Ամէն տուն, մէկ երկու հրացան ձեռք բերելու կ'աշխատէր իր ընտանիքի պաշտպանութեան համար, որովհետեւ Կիլիկիոյ Եղեռնը ա՛լ ոչ մէկ տարակոյս կը թողուր Իթթիհատի իսկապա նպատակի մասին:

Դանիէլ Չավուշի խումբին այդ ամէնէն կարկառուն դէմքը, շատ կարեւոր դեր մը խաղացած էր արդէն ԳՅԻ սարսափի օրերուն: Բախտը այնպէս տնօրինած էր, որ այդ երկաթեայ մարդը զեկավար ուղեղը դառնար նաեւ Գարահիսարի հերոսամարտին եւ պիրկ թաթով մը վարէր ինքնապաշտպանութեան բարդ մեքենականութիւնը: Ճակատագիրն անշուշտ անգութ եղաւ հանդէպ արժուերոյնի ժողովուրդին, Մուրատէն սպասուած օգնութիւնը յօդս ցնդելով, բայց դոնէ Ղուկաս աղբար գիտցաւ քաջն Անդրանիկի կորիւններն առաջնորդելու մահ իմացեալին, որ յաւերժ իր փառքը պիտի կերտէր հայ յեղափոխութեան անմահներու Պանթէոնին մէջ:

ՄԵԾ ԶՈՀԱԲԵՐՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ



Զարմանալի մթնոլորտ մը ստեղծուած էր ամբողջ Հայաշխարհին մէջ, ա՛յն երանելի շրջանին, որ կ'երկարաձգուէր Սահմանադրութենէն մինչեւ 1915ի եղերական օրերը:

Մէկ կողմէ, երկար տարիներէ ի վեր ծանր կապանքի տակ հեծող դժբախտ ժողովուրդի մը ազատ խոյանքը, երջանիկ գինովութեան մը հորիզոնը կը բանար բոլորին առջեւ: Հնամեայ ազգի մը ստեղծագործ աշխատանքն էր, որ սանձարձակ ասպարէզ կը գտնէր եւ կը հիմնէր դպրոցներ, եկեղեցիներ եւ մշակութային օճախներ: 1912ին Գարահիսար կուզար Հրաչ Երուանդ ու հին Հնչակեանները ի մի խմբելով կը կազմէր Վերակազմեալ Հնչակեան կուսակցութիւնը: Անկից վերջ, հանրային երեւելի դէմքեր, ինչպէս Սերաստացի Մուրատ, Շահրիկեան, Աւօն, Միսակ Նալպանտեան ու այնքան ուրիշներ, մէկը միւսին ետեւէն կ'անցնէին մեր քաղաքէն:

Միւս կողմէ, Իթթիհատի պարագլուխներուն նիւթած դաւը մութին մէջ, զգուշութեան կը մղէր մեր հեռատես վարիչները: Արթուն էր մանաւանդ Գարահիսարի պահապան հրեշտակը՝ Ղուկաս աղբար. իր արծիւի հայեացքը կը ձեղքէր Սահմանադրութեան կախարդական շրջագիծը եւ ամպրոպներու մէջէն կը լսէր որոտը Մեծ Փոթորիկին:

Ընդհ. պատերազմին բացարձակ յայտնի կ'ըլլայ որ Թուրքերը մեր ազգը պիտի բնաջնջեն: Գարահիսարցիք չեն ուզեր որ մեր տղաքը գինուոր երթան: Նախ՝ անոր համար որ շատ դէշ եւ անպատուաբեր վերաբերում ունէին անոնց հանդէպ: Երկրորդ՝ 20-40 տարեկան այդ երիտասարդ եւ կոռուող ուժերէն ձեռք քաշելով, քաղաքին հայ բնակչութիւնը պիտի մատնէին մահամետական խուժանին կատաղութեան: Այս պատճառով, անոնք զօրակոչին մեծ մասամբ չեն պատասխաներ ու կ'ըլլան փախստական:

Թրքական կառավարութիւնը կը սկսի խուզարկութիւններ կատարել, յետոյ ճնշում կը բանեցնէ Հայոց վրայ եւ նոյնիսկ փախստական գինուորի մը հայրը զնդակահարելու հետամուտ կ'ըլլայ: Ասոր վրայ, մեր կուսակցական վարիչները ժողովի կը նստին եւ որոշում կուտան՝ յանձնել որչափ փախստական զօրք որ կայ: Թող անգամ մը գրուին Գարահիսարի մայր տոմարին մէջ, յետոյ ո՛ւր որ ճամբեն՝

հոն ալ արձանագրուելէ վերջ, թող միջոցը գտնեն ու զինեալ փախին
գան :

Ժողովին որոշումը իսկոյն կը գործադրուի : Մօտ 400 զինուոր-
ներ ուղղակի Երզնկա կը տանին , լաւ մը կը մարզեն ու այն ժամանակ
որ կարին պիտի ուղարկեն , ամբողջ կը կծկեն եւ այնտեղէն մինչեւ
մեր քաղաքը՝ 150 քիլոմետր ճամբան կը կտրեն ու ողջ առողջ կը
հասնին :

Կառավարութիւնը կը հասկնայ որ տղաքը Գարահիսար եկած են ,
բայց ձեռքը որեւէ փաստ չունի ու կը սկսի խուզարկութեան : Ամէն
տուն իր թագստոցն ու գաղտնի ճամբան ունենալուն համար ,
թրքական իշխանութիւնը մեծ արդիւնք մը չի յաջողիր ձեռք բերել :
Այս անգամ , երբոր կը սկսին հայ զինուորներուն ծնողները նեղել ,
անոնք իրենք զիրենք կ'արդարացնեն հետեւեալ ձեւով .

— Մենք մեր զաւակները ձեզի յանձնեցինք , մեզմէն ի՞նչ կ'ուզէք :

Գարահիսարի կուսակցական վարիչները գաղտնի ժողով կ'ընեն
եւ այն եզրակացութեան կը հասնին որ կռուելէն տարբեր ճամբայ
չկայ : Հաշիւ կ'ընեն եւ կը տեսնեն որ 700 հոգի կռուող ունին : Որո-
շում կուտան որ մարդ ճամբեն Մուրատին մօտ , որպէսզի միանուազ
ուժերով գործեն :

Երկու պատգամաւորներ իրօք կը յաջողին գտնել Կովտունցի
հերոսը , որ մտադիր էր լեռ բարձրանալ եւ սարսափ ազդել Հայոց
ջարդարարներուն : Այն ժամանակ որ կ'իմանայ մեր պատգամաւոր-
ներուն առաջարկը , Մուրատ նամակով մը կը խոստանայ որ 20-25
օրէն Գարահիսար կ'ըլլայ հինգհարիւր Փետայիներով , թող ուրեմն
պատրաստ ըլլան :

Ղուկաս աղբար մտադիր չէր բերդ բարձրանալ , որովհետեւ
ատիկա սխալ կը գտնէր ռազմական տեսակէտով : Հազիւ 18 օր
անցած՝ երբ հերոսամարտը կը պայթէր եւ ի վերջոյ կը ստիպուէր
այդ միջոցին դիմել , նպատակը Մուրատին սպասել էր այնտեղ : Որոշ
է թէ՛ Կովտունցի խմբապետը չկարողացաւ իր խոստումը գործադրել ,
հետեւաբար Գարահիսարի քաջերը շատ գէշ կացութեան մը
մատնուեցան :

Ինքնապաշտպանութեան յաջող կռիւ մղելու համար , անշուշտ
շատ աւելի նախընտրելի էր լեռները քաշուիլ եւ անկէ դարնել
հայ ժողովուրդի թշնամիներուն : Իմադրական ուժերը ազատ եւ
անկաշկանդ , հոն պիտի կարողանային գործունէութեան աւելի լայն
գաշտ մը գտնել եւ ի հարկին Պոնտոսեան լեռներէն անցնիլ Կովկաս :

Հրոսակային այս ռազմավարութիւնը , — որուն հիմա Կերիյեա
անունը կուտան Եւրոպայի ազգութիւնները , — շատ անգամ յաջող
արդիւնք տուած է : Աչքի առաջ բերէք , որ 1906էն սկսեալ , Գարահի-
սարցիք հասկացողութեան եկած էին Օրտուի յոյն ձկնորսներուն հետ

եւ մինչեւ Սահմանադրութիւն բաւական հայ փախստականներ ճամբեցին Ռուսաստան :

Արդարեւ, մեր քաղաքէն մինչեւ Օրտու, Ղարա Կէօլ եւ Սարու-Չիչէք ըսուած եայլաներէն 100-120 քիլոմետր կ'երկարաձգուի Պոնտոսի լեռնաշղթան : Շուրջ-բոլորը կան հսկայ անտառներ, որոնք մինչեւ զինադադար ապաւէնը եղած էին յոյն, թուրք եւ նոյնիսկ հայ զինուորական փախստականներուն :

Մնաց որ, մեր կտրիճ ուղմիկները այդ բարձրաբերձ լեռներուն վրայ դիրք գրաւելով, ճշմարիտ փորձանք մը պիտի կրնային դառնալ արիւնածարաւ թշնամիներու գլխուն : Ապացոյց ա'յն, որ ծովեզերեայ Իւնեայի, Փաթսայի եւ Չարչամպայի շրջաններէն հայ քաջերու կարեւոր համրանք մը լեռները ելած եւ շատ լաւ կռուած էր : Մինչեւ զինադադար, դեռ անոնցմէ ցանուցիր ուժեր կը մնային այդ բարձունքներուն վրայ :

Հոս տեղն է ըսել, որ 1916ին Սոչիցի 25 հայ կտրիճներ ուսական թորփիլահալածով մը ուղղակի գացին Իւնեա ցամաք ելան : Նաւը վերադարձաւ իր տեղը, իսկ այդ երիտասարդները լեռները ելան, հայ փախստականները ժողվեցին ու կռուելէն հասան Տրապիզոն, որ այն ժամանակ գրաւուած էր ձարական բանակին կողմէ :

« Նահանջ Բիւրուն »ը յիշեցնող այս դէպքը պատահած միջոցին, ես կը գտնուէի Սոչիէն 28 քիլոմետր անդին Լօ անուն հայ գիւղի մը կայանը եւ այդ բոլոր տղաքը շատ լաւ կը ճանչնամ : Ընդհանրապէս Տրապիզոնի Շանա (*) գիւղէն էին, մաս մըն ալ հայդուկները վաղեմի Մինաս Օղլու խումբին, որուն ղլխաւոր գէմքերէն մէկն էր Իւնեայի Իւչ Քէօփրիւ գիւղացի Գրիգոր Թահմազեանը : Այս խումբէն Յարութիւն անունով երիտասարդ մը մեռաւ այդ օրերուն :

Ակներեւ իրողութիւն մըն է, որ Ռուսերը 1916 Ապրիլ 3ին (հին տոմար) առին Տրապիզոնը, Չօր. Լիախովի հրամանատարութեամբ (Վրացիք 1920ի Յունիսին սպաննեցին այս քաջ զօրականը) : Աւելի յետոյ գրաւեցին Կիւմիւլիսանան ու Շէյրանը : Մայիս ամսոյն, ըսել է Գարահիսարի հերոսամարտէն տարի մը վերջը, Ռուսաց զօրքը հասած էր շրջանի Քիւրթիւն կոչուած գիւղախումբը (73 քիլոմետր մեր քաղաքէն) : Նոյնիսկ այդ բանակին ուրիշ մէկ թեւը յառաջացած էր մինչեւ Ղարղա Գալէսի ըսուած տեղը, որ յիսուն քիլոմետր հեռու կը գտնուի Գարահիսարէն :

Ուրեմն, Գարահիսարի քաջերը լեռնային կռիւ մղելով, պիտի կարողանային գոնէ տարի մը դիմանալ ու ի վերջոյ միանալ ուսական բանակին : Այս ճանապարհով իրենց կեանքը փրկեցին մեր հայրենակիցներէն Երուանդ Էրզրումեան, Յարեթ Էվրենեան, Յարութիւն

(*) Երկրորդ Ձէլթունը, ծննդավայր Միսաք Թորլազեանի եւ Վահան քահ. Խոյեանի :

Գաղանճեան եւ քանի մը հողի ալ գիւղերէն: Վերապրողներէն առաջինը եղած է Գարահիսարի մարտիկներէն Գ. Հիւսիսեան, որ գացած պատմած է Անդրանիկին ու ան ալ հերոսամարտին ամբողջ դրուագը:



ԱՆԴՐԱՆԻԿ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՏԱՐԱԶՈՎ

ները գրի առնել տուած է Կարնեցի Տէր Յակոբեանի: Գրիգոր Հիւսիսեան լաւ պաղլամա կը զարնէր: Ազգային հերոսը շատ կ'ախորժէր իրմէ եւ յաճախ նուագել կուտար:

Անգամ մը մեծ ժողով կ'ըլլայ Թիֆլիզի մէջ: Շ. Գարահիսարի զէպքերու մասին երկար կը խօսի Հիւսիսեան. բազմութիւնը զեկուցանողին բերնէն կախուած մտիկ կ'ընէ երկիւղած լուրթեամբ: Յանկարծ, ետեւի կարգէն մէկը կ'ելլէ եւ մէջտեղ կը նետէ հետեւեալ հարցումը. — Ո՞ր կուսակցութիւնը զեկավարեց հերոսամարտը:

- Հնչակեան կուսակցութիւնը, կ'ըսէ տղոցմէ մէկը:
- Բարեկա'մ, եթէ մենք կուսակցութիւն խաղցնէինք, այդ հերոսամարտը չէինք կրնար ընել, վրայ կը բերէ Հիւսիսեան սրտնեղած:

Անդրանիկ կը խնդայ քթին տակէն : Վերջը, երբ տուն կ'երթան, հերոսը կը հարցնէ իր հայրենակցին .

— Գրիգոր, այդ մարդը կը ճանչնա՞ս, գիտե՞ս թէ ով է :

— Ո՛չ :

— Գաշնակցութեան մեծն է, Ռոստոմը :

Մեր վերապրող հայրենակիցը իրաւունք ունէր : Անշո՛ւշտ, եթէ մենք զիրար չզգէինք կուսակցական վէճերով, շատ մը հերոսամարտներ կ'ունենայինք Վանի, Գարահիսարի եւ Եղեւիոյ պէս :

Մեծ Եղեւնի նահատակներէն Փրօֆ. Յովհ. Պուճիքանեան անտիպ գրութիւն մը ունի, որ լոյս տեսած է « Հասկ »ի անցեալ տարուան Յուլիսի թիւին մէջ : Սարբերոցի ուսուցչապետը այնտեղ կ'ըսէ .

« Հայրենիքին շահը աւելի բարձր է եւ հրամայական, քան որեւէ կուսակցութեան շահը, ինչպէս կ'ըսէր անմահն Պղատոն : Թերեւս ձեզմէ ոմանց զգացումները կը վիրաւորեմ այս խօսքերովս, բայց պարտական եմ ճշմարտութիւնը խօսիլ : Ես կը պատկանիմ ճշմարտասիրաց կուսակցութեան եւ իմ հաստատ համոզումս է թէ՛ հայրենիքի մը անսասան հիմը նշմարտութիւնն է, ուրիշ ոչի՛նչ » :

Թիֆլիզ գտնուած ժամանակս, Մուրատն ալ հոն եկաւ եւ Գարահիսարի առիւծը հարցուց իր զէնքի ընկերոջ .

— Մուրա՛տ, քանի որ պիտի չկրնայիր Գարահիսար երթալ, ի՞նչու համար այդպէս նամակ գրեցիր տղոց : Եթէ դուն այդ նամակը չուզարկէիր, այսօր առնուաղն մի քանի հարիւր քաջեր ազատած կ'ըլլային, չըսեմ աւելին :

— Զօրավա՛ր, ճիշդ է որ ես այդպէս նամակ մը գրեցի, որովհետեւ Սերաստացիք ինձի խօսք տուին . բայց երբ հարցը գործնականին եկաւ, խօսքերնին դրժեցին : Հազիւ քսան հոգի էինք, ես ի՞նչ կրնայի ընել . . .

Վիճակը նետուա՛ծ էր : Պէտք էր արիարար ընդունիլ ճակատագիրը այնպէս ինչպէս կը ներկայանար եւ իր անագորոյն վճիռը պսակել փառքի դափնիներով :


Գարահիսարի արիարանց քաջերը, պատմական բերդին սեղմ պարիսպներու բարձունքէն, այսպէս պիտի բռնադատուէին խիզախօրէն կուրծք տալ գիշախանձ վոհմակներու հուրին, սուրին եւ թնդանօթի ոռւմբերուն, ու անէանա՛լ արծուերոյնի ծխարձակ փլատակներուն տակ, ինչպէս անմահ դիւցազունները Տրովադայի մարտին :

Gloria Victis !



ՍՄԲԱՏ Ծ. ՎՐԴ. ՍԱՍՏԷԹԵԱՆ
(Առաջնորդ Շ. Գարահիսարի 1897-1906, յետոյ ալ Կարնոյ
Քեմիկն, որուն վրայ եպիսկոպոս ձեռնադրուեցաւ)

Հ Ե Ր Ո Ս Ա Մ Ա Ր Տ Ը



« Թամզարայի փոլիս Իպրասիմը օրը օրին լուրեր կը հաղորդէր կառավարական նենգ ծրագիրներու մասին: Անոր շնորհիւ էր, որ ձերբակալուելէ զերծ մնացին դաշնակցական ղեկավարները: Մինչդեռ հետագային, հետզհետէ ձեռք անցան հնչակեան աչքի զարնող անձերը:

Պաշտօնական եւ բացարձակ կերպով արգելուեցաւ քաղաքէն հեռանալ եւ կապ հաստատել շրջանի հետ: Թէեւ ամէն օր շրջանի գիւղերէն երիտասարդ հայ փախստականներ կուգային պատմելու գիւղերու մէջ տեղի ունեցող սպանութիւնները եւ ալան-թալանը:

Լուր հասաւ որ, Կարնոյ ճամբուն վրայ, Սերաստիոյ կուսակալ Մուամմէրի հրահանգով, եւ Չարացի Մահիր պէյի ու իր ընկերներուն ձեռքով, խժոժօրէն սպաննուած էր Սահակ Ծ. վրդ. Օտապաշեան:

Ռազմաճակատ մեկնող 10.000 զինուորները (Սերաստիոյ զօրաբանակը) քարուքանդ կ'ընէին իրենց ճամբուն վրայ ինկած հայկ. գիւղերը:

Ոստիկաններու խումբ մը կռուի կը բռնուի Ծիպերցի փախստական քանի մը Հայերու հետ եւ անոնցմէ մէկը կը սպաննէ դաժանօրէն յօշոտելով:

Մայիս ամսու վերջերը, Բիւրք գիւղին մէջ քար քարի վրայ չէր մնացած: Սարսափի տակ էին բոլոր հայ գիւղերը:

Բիւրքի մէջ երիտասարդ նկարիչի մը խոստովանութիւններուն հետեւանքով կառավարութեան ձեռքը անցաւ զէնք ունեցողներու եւ ղեկավարներու անունները, որոնք անմիջապէս ստիպուած եղան փախստական դառնալ: Կառավարութիւնը սակայն ձերբակալեց Ն. Հիւսիսեանը (Վահանիկին հայրը):

Իրարու ետեւէ ձերբակալուեցան Թիւթիւնճեան, Պուռնագեաններ, Տագեսեան, Օտապաշեան, Կարմիրեան, Էրզրումցեան եղբայրներ եւայլն, բոլորն ալ Գարահիսարի մէջ աչքի ինկող զէմքեր:

Կառավարութիւնը հետզհետէ աւելի յանդուզն ու խստապահանջ դարձաւ: Յայտարարուեցաւ պատերազմական վիճակ քաղաքին մէջ: Եւ պահանջուեցաւ անյասպող յանձնել բոլոր տեսակի զէնքերը:

Այդ օրերուն ռազմաճակատէն աննպաստ լուրեր կը հասնէին, ու ճակատի վրայ կրած պարտութեան կատաղութիւնը, Թուրքերը Հա-




ՍԱՀԱԿ ՎՐԴ. ՕՏԱՊԱՇԵԱՆ

յոց գլխուն պիտի թափէին: Խուղարկութիւնները մեծ թափով յառաջ
կը տարուէին: Մեծ, կողոպուտ, սպանալիք, սովորական դարձան:

Օր մըն ալ, կառավարութեան մօտ կը հրաւիրուի թեմին առաջ-
նորդ Վաղինակ վրդ. Թորիկեան, որ կ'երթայ ա'լ չվերադառնալու
համար: Ան գիտակցաբար զնաց մեռնելու, ընդունելու անհատներու
զոհաբերութիւնը զանդուածներու փրկութեան համար: Շատ սրտա-
ճմլիկ եղած է անոր սպանութիւնը: Բանտի բակին մէջ կը հրամայուի

իրեն ձի նստիլ ու շարժուիլ: Անմիջապէս 25 ոստիկաններ զինքը շրջապատելով կը տանին: Ճանապարհին, Անդրէաս զիւղի մօտ, զինքը կը սպաննեն եւ դիակը կը թողուն աւաղի վրայ անթաղ, արեւին տակ ձենձերելու:

1915 Յունիս 2ին, երկուշաբթի, կէսօրէն վերջ, շրջապատեցին հին ու նոր թաշխանէները եւ ձեռք ինկող բոլոր Հայերը ձերբակալելով, սուիններու սպաննալիքին տակ, բանտ առաջնորդեցին անխնայ:



ՎԱՂԻՆԱԿ ՎՐԴ. ԹՈՐԻԿԵԱՆ

փախստականներ որոնելու: Արդէն երեք ժամուան մէջ ձերբակալած էր 15-20 հողի, որոնք ենթարկուեցան սարսափելի խոչտանդումներու: Միւս կողմէն, ոստիկանութիւնը ամբողջ շուկան տակնուվրայ կ'ընէր, կոտրելով գանձարկղներն ու բոլոր պահարանները: Կը հասնի նաեւ Անդրէասի դժբախտութեան լուրը: Մեծերն ու աղաները սպաննուած, իսկ բնակչութիւնը կոտորուած եւ տեղահանուած:

Սաւարը իջաւ: Բանտարկեալներուն պարագաները անկողին կամ ուտելիք տանելու ետեւէ ինկան: Սակայն ջարդի ու սարսափի ուրուականը կը թեւածէր ոչ միայն բանտին, այլ ամբողջ Գարահիսարի վրայ: Փողոցները լուռ եւ ամայացած էին: Ամէն մարդ իր երդիքին տակ կձկուած, առանց լոյսի կը սպասէր առաջին զնդակի որոտումին:

Գիշերը լուսացաւ:

Յունիս 3ին արեւը բաւական բարձրացած էր հորիզոնին վրայ, երբ Միջին Թաղէն զնդակ մը որոտաց, այնուհետեւ երկրորդ, երրորդ եւ ահա ահաւոր համազարկ մը ծայր տուաւ ամբողջ քաղաքին մէջ:

Ահա թէ ինչպէս կը պատմէ դէպքին ահանատես Արամ Հայկազ.—

« Լուսաբացին Քէլ Հասանը իր մարդոցմով կը շրջապատէ Սինսին Սահակի տունը: Խուզարկութիւնը արդիւնք չի տար: Թուրքերը կը սկսին տանջել փոքրերն ու կիները: Այրերը, որոնք զինուած ու թագնուած էին տան մէջ, չկրնալով համբերել թուրքերու վայրագութեանց, դուրս կը ցատկեն եւ կռուի կը բռնուին անոնց հետ, որոնք փախուստի դիմելով, կը հետապնդուին ու կը սպաննուին Հայերու ձեռքով: Փոլիս թէվիք, որ այդ պահուն ապտեսք առնելով էր

զբաղած, դէպի հրացանաձգութեան վայրը վազած ատեն կը սպաննուի մեր պարտէզին պատին տակ, թեւերն ու դլուխը բաց...

« Եկեղեցւոյ թաղին ամբողջ հայութիւնը՝ հրացանաձգութեան աղմուկը լսելով, թագստոցներէն կը հանեն հրացանները ու դրաւելով թաղին իշխող դիրքերը, կրակ կը տեղան շուկայի թուրքերուն վրայ, որոնք սարսափահար կը փախչին դէպի իրենց թաղերը:

« Բերդի թաղը, իբրեւ ամէնէն անխոցելին, կը վարակուի անմիջապէս, որով կ'ամբողջանայ քաղաքին ինքնապաշտպանութեան դործը իր գլխաւոր թաղերուն մէջ: »

Ազդանշանը տրուած էր: Ամէն մարդ այլեւս դէպի ուէէ դիրք կը վազէր, նախապէս թագստոցէն հանելով իր հրացանը:

Դէպի բե'րդ, դէպի բե'րդ...: Այս էր կարդախօսը: Շուտով դէպի բերդ բարձրացաւ Գարեգին Պարոնվարդեանը (Յաթախ) տասնեակ մը զինուած տղաներով:

Խանդավառութիւնը մեծ էր: Փողոցներուն մէջ ամէն տեղ սկսեան դիրքեր եւ պատնէշներ կանգնեցնել: Կին, երախայ բոլորը դործի լծուեցան: Եւ դրաւուեցան հետեւեալ կարեւոր դիրքերը.—

Ա.— Պարոնվարդեան Անդրանիկի տունը, որ կը ծեծէր թրքական թաղը:

Բ.— Այնաճեաններու տունը, որ կը ծեծէր զօրանոցն ու իր ճամբան, ինչպէս նաեւ թրքական թաղի խոշոր մէկ մասն ու մղկիթը:

Գ.— Քիպարեաններու տունը, որ կը ծեծէր շուկային բերանը, միակ մուտքը դէպի եկեղեցին եւ եկեղեցւոյ հայկական թաղը:

Դ.— Օտապաշեաններու տունը, որ կը պաշտպանէր Միջին թաղը:

Յունաց կից Հայոց թաղի հեռաւոր մասերը կը պաշտպանէին երկու նշանաւոր կռուողներ՝ Ղուկաս աղբար եւ Օզանեան Շապուհ: Վերջինս կռուի առաջին օրը ընդունեց հերոսական մահը՝ յարձակումի պահուն:

Պարտէզի թաղը կը պաշտպանէր Վահան Հիւսիսեանը, չըջապատի զինուած ուժերուն հետ միասին, որ թէեւ երիտասարդ, բայց բոլորէն ալ սիրուած ու յարգուած էր անխտիր:

Այսպէսով կազմուած էր ուրեմն հայկական պաշտպանողական դրութիւնը, որ իր առաւելութիւններուն հետ ունէր եւ տկար կողմեր: Ջուրի կեղրոնական աւազանը թրքական թաղին կողքը կը գտնուէր եւ ենթակայ էր միշտ կտրուելու թուրքերուն կողմէ: Յետոյ, բոլոր տունները փայտէ շինուած ըլլալուն համար, կրակը կարող էր մոխիրի վերածել ամբողջ քաղաքը:

Այս արդար եւ օրհասական պայքարին շուրջ համախմբուած էին ազգային, հասարակական եւ կուսակցական բոլոր ուժերը, եղբայրական եւ համերաշխ ոգիով:

Փոքրիկ յոյսեր ալ դրուած էին արտաքին օժանդակութեան վրայ:

Ամէնէն առաջ ժողովուրդը կը հաշուէր Սերաստացի Մուրատի օժանդակութեան վրայ: Յետոյ յոյս կար որ ուսական բանակը կը յառաջանար դէպի խորերը եւ Անդրանիկը՝ կամաւորներուն գլուխն անցած, օգնութեան կը հասնէր իր հպարտ եւ խիզախ ծննդավայրին:

Աւա՛ղ, երկուքն ալ չեկան...:

Կամաց կամաց խաւարը իջաւ կռիւի առաջին օրուան վրայ: Երեկոյեան կողմը, հազիւ հազ հատուկտոր հրացանի ձայներ միայն կը լսուէին:

Գիշերուան դադարէն օգտուելով, խումբերը իրենց դրաւած դիրքերը ամբողջացուցին, որոնց մեծ չափով կ'օգնէին կանայք: Որոշուեցաւ նոյնպէս աւելի ամփոփուիլ: Ու խաւարէն օգտուելով, ծայրագոյն թաղերու ամբողջ բնակչութիւնը հաւաքուեցաւ բերդի եւ Միջին Թաղերուն մէջ:

Կռուի երկրորդ օրը լուսցաւ առանց հրացանածգութեան: Թուրքերը որեւէ յարձակման նշան ցոյց չէին տար: Սակայն իրենց գաղանութիւնը ի գործ դրած էին անդէն բանտարկեալներուն վրայ:

Գիշերանց Թուրքերը հրացանի դնդակի տակ եւ կացինով կոտորեր էին բանտարկեալներուն մէկ մասը: Իսկ միւս մասն ալ դռները բանալով դուրս, բակը հանուած ատեն, դնդակներու տարափին տակ, իրարու վրայ կը լեցուին դիտապաստ: Կը պատմուի հերոսական դէպք մը՝ բանտարկեալներէն Գառնիկ Պէյլերեանի մասին: Իբր թէ՛ անիկա մեռնելէ առաջ կը յարձակի ոստիկաններու հարիւրապետին վրայ եւ անոր պրաունինկ ատրճանակը խլելով կը սպաննէ զայն, եւ աջ ու ձախ կրակելով կը յաջողի հասնիլ մինչեւ բակին մեծ դուռը, ու այնտեղ անշունչ կ'իյնայ դիակներու կոյտին վրայ:

Յունիս Ծի դիշերը խաղաղ անցաւ: Արշալոյսին հետ հրացանածգութիւնը վերսկսաւ: Լուր կը տրուի թէ Թուրքերը կը փորձեն զանազան ուղղութեամբ բերդը բարձրանալ: Կը հրահանգուի իսկոյն զանազան խումբերով քշել դէպի բերդը: Ինքնաբերաբար արդէն երեւան եկած է կռուի ընդհանուր ղեկավարը: Ղուկաս աղբարն է ան: Մօտ երեսուն տարուան հին յեղափոխական, հին հայդուկ, լաւ նշանառու, ու բոլոր տարրերու վստահութիւնը վայելող: Իր կողքին կազմուած էր արդէն զինուորական մարմին մը (Վահան Հիւսիսեան, Գարակէօզեան, Մարկոսեան, Պարոնվարդեան եւ Տաքէսեան):

Սակայն քաղաքին զանազան մասերէն սկսաւ ծուխն ու կրակը բարձրանալ: Հիւսիսեաններու տունը եւ ազդ. վարժարանը բոցերու մէջ էին: Բրուտանոց եւ Չեքէն թաղը նոյնպէս:

Կրակը դանդաղօրէն կը յառաջանար: Բոցերը կը հասնէին Միջին Թաղին եւ ժողովուրդը շնչահեղձ կ'ըլլար, ամառնային տաքին հետ միասին:

Ձին. մարմնին որոշումը պարզ էր. ամբողջ զինամթերքով, պաշարով ու կռուողներով բերդը բարձրանալ ամէն գնով:

Երեկոյեան կողմը երբ ծուխն ու մուխը վարագուրեց բերդի ճամբան, վերելքը սկսաւ: Այնուհետեւ ուժգին հով մը կրակն ու բոցը դարձուց դէպի թրքական թաղերը, կրակի վրայ նստեցնելով նաեւ դիրենք:

Փայտաշէն քաղաքը կը վառէ՛ր: Բոցեղէն լեզուները սանձարձակ կերպով կը լիզէին գեղեցիկ Գարահիսարը...:

Ամբողջ գիշերը բերդ փոխադրուեցաւ ինչ որ կարելի եղած էր փրկել կրակէն: Լուսաբացին ամբողջ ժողովուրդը բերդն էր արդէն, ու քաղաքը վերածուած մոխրակոյտի:

Ժողովուրդը եւ խումբերը ամբողջ գիշերը եւ այնուհետեւ դրա-դեցան նորոգելով կամ կառուցանելով պատնէշներ, դիրքեր եւ ապաստանարաններ: Այս բոլոր աշխատանքներուն կը հսկէր Ղուկաս աղ-բարը: Կազմուեցաւ յանձնախումբ մը որ պաշտօն ստացաւ համա-խմբելու եւ կեդրոնացնելու բոլոր ուտեստեղէնը: Ստեղծուեցան երեք գլխաւոր սննդակայաններ: Ըստ Արամ Հայկազի, բերդը հաւաքուած էին Ծիպերցիներու մօտ 300 ոչխարները, յիսունի չափ կով, քանի մը այծ, երեք ձի, էշ մը եւ ջորի մը: Բաւականաչափ ալիւր, կաղին, հաւկիթ, իւղ, պանիր, պղղուր, գարի, ոսպ, սիսեռ, ընկոյզ եւայլն: Այս բոլորը ի հարկէ անցան բերդ ապաստանողներու կոկորդը: Եղան մարդիկ որ օձեր ալ ճաշակեցին: Մանուկ Րէյիզը նշանաւոր դարձաւ պոչն ու գլուխը կտրուած եւ կրակը ձգուած օձեր ուտելու իր ախորժակով:

Կատարուած մարդահամարէն կ'երեւայ թէ բերդը ապաստանող-ներուն թիւն էր 5062 մարդ: Ասոնցմէ հազիւ 1500ը արական սեռէ էր եւ անոնց ալ 250ը միայն ընդունակ կռուելու:

Թուրք կառավարութիւնը յաջողած էր կոտորակել մեր երիտա-սարդութիւնը: Վերջին մէկ ամսուան ընթացքին կորսնցուցած էինք առնուազն 400 հոգի:

Բերդին մէջ աշխատանքը մեծ եռանդով յառաջ կը տարուի: Խո-չոր եւ երկար պատ մը կը քաշուի գլխաւոր Սառնիճէն մինչեւ Շիմալը: Այսպէսով յարաբերութիւնը դիւրաւ կը կատարուի բերդի դրան, Շիմալիի եւ Գլխիվայր Սառնիճի հետ:

Դիրքերը կ'որոշուին եւ ամէն դիրքի վրայ, 8-25 հոգի դիրքա-պահներ կը նշանակուին, համաձայն իրենց կարեւորութեան:

Գլխիվայր Սառնիճի խորը, Չնդանը կը վերածուի սաղմամ թերքի պահեստի:

Մէկ երկու օրէն, Կանաչ Կէօլերու ջուրը շորցուց բերդի ժողո-վուրդը: Կը մնար օգտուիլ Սրա Սառնիճի եօթը լիճերէն, որոնք սակայն թուրքերու կրակին տակ էին: Միմիայն գիշերով եւ շատ դժուարութեամբ կարելի էր օգտուիլ: Միտք ծագեցաւ այն ատեն, Գլխիվայր Սառնիճի յատակը լեցուած քարերը պարպել եւ անոր ջրամբարէն օգտուիլ, ինչ որ աւանդաբար գիտէր Գարահիսարի

տարեց սերունդը: Քանի մը հարիւր հոգի գործի լծուեցան եւ մէկ քանի ժամուան յամառ աշխատանքէ յետոյ պատուական պաղ ջուրը երեւան եկաւ: Ժողովուրդը կուշտ ու կուռ խմեց:

Կռիւր եւ հրացանաձգութիւնը կը շարունակուէր բոլոր դիրքերուն վրայ: Թուրքերը ամէն կողմէն նոր օգնական ուժեր կը ստանային: Հայերը ունէին մօտ 150ի չափ տաճկական մալգէր, նոր ձեւի հրացան, յիսուն գարապիկէ եւ այնալը: Կային նաեւ յունական եւ պուլկարական հրացաններ, ինչպէս նաեւ 40է աւելի բազմահարուածեան ատրճանակներ եւ 80ի չափ ձեռնառումբեր:

Վառելանիւթը հատաւ: Պէտք կ'ըլլար յաճախ, դիշերով վար իջնել եւ հրդեհէն մնացած դերանները վեր հանել:

Բերդին մէջ կար նաեւ դեղարան մը, երկու բժիշկ եւ եկեղեցի մը, ուր ամբողջ ժողովուրդը բազկատարած կ'աղօթէր:

Բերդը մտնելէ շաբաթ մը ետք, Թուրքերը Հայերու մօտ կ'ուղարկէն պատգամաբեր հայ կին մը, պահանջելով բացարձակ անձնատուութիւն եւ զէնքերու յանձնում, հակառակ պարագային սպառնալով հիմնայատակ քանդել բերդը թնդանօթներով:

Բնականաբար Հայերը կը նախընտրեն պատուաւոր մահը, որովհետեւ ոչ մէկ կերպով կարելի էր հաւատալ նենդամիտ եւ դաւադիր Թուրքերուն:

Յաջորդ օրը, առտուն կանուխ որոտաց թնդանօթի առաջին ուղմբը. իրարու ետեւէ երեք ուղղութեամբ սկսան ուղմբեր թափիլ բերդին մէջ, առանց սակայն լուրջ վնաս տալու: Մինչդեռ Ղուկասը լուրթեան դատապարտեց թնդանօթներէն մին, խփելով թնդանօթածիդ զինուորը:

Սակայն յաջորդ օրը առաւօտեան, երեք թնդանօթներու անդադար կրակի պաշտպանութեան տակ, թշնամին անցաւ յարձակողականի: Կատաղի հրացանաձգութեան երբեք չպատասխանեցին Հայոց դիրքերը: Ասկէ երես առած Թուրքերը սկսան դէպի վեր յառաջանալ, երբ ուժգին եւ յանկարծակի կրակ մը ետ շարտեց զիրենք ու կացութիւնը փրկուեցաւ:

Բայց ահա դարձեալ նոր փորձ մը եւս: Այս անգամ թուրք կանոնաւոր զինուորները թիկունքը պահեցին եւ խուժանը քշեցին հայկական դիրքերուն վրայ: Անօգուտ, խայտառակ կերպով նորէն նահանջեցին:

Քանի մը օր յետոյ դարձեալ, ճերմակ դրօշակով կին բանազնացը եկաւ: Նոյն պահանջը եւ խաբերայ խոստումները կուսակալին կողմէ, ինչպէս նաեւ մերժում Հայերու կողմէ:

Կացութիւնը երթալով կը ծանրանար: Ուտելիքը եւ զինամթերքը կը սկսէր սպառիլ: Ու ոչ մէկ տեղէ օգնութիւն ստանալու յոյս կար:

Օր մը, արշալոյսին, տեսնուեցաւ որ Տեմէ Գափուսիի ստորոտը երկար պատնէշ մը կանգնած էին Թուրքերը, օգտուելով զիշերային

անթափանցելի մշուշէն : Այս լաւ պատրաստուած դիրքէն , թուրքերը միշտ կրակի տակ կրնային պահել Գլխիվայր Սառնիճի ճակատը , ուր ասազին բազմութիւն մը կար ապաստանած եւ անկէ պէտք էր անցնել միշտ , ուտեստ եւ ջուր առնելու համար : Թնդանօթներն ալ անդադար կ'որոտային եւ անոր տուած զոհերը հետզհետէ կը շատնային :

Ժողովուրդին մէջ յուսալքումը սկսած էր արդէն : Ոմանց մէջ տրամադրութիւն ստեղծուած էր վար իջնել եւ յանձնուիլ , բայց զինուորական մարմինը արգիլեց :

Երրորդ անգամ եկաւ բանազնաց կիներ : Ու Հայերը պատասխանեցին , որ ուխտած են կռուիլ մինչեւ իրենց վերջին փամփուշտը :

Յունիս 20ին , վաղ առաւօտեան , հրացաններու եւ թնդանօթներու կատաղի որոտը վերսկսաւ , ու անոնց պաշտպանութեան տակ թուրք խուժանը յառաջացաւ դէպի բերդը : Փոխադարձ կերպով հայկական բոլոր դիրքերը կրակ կը ժայթքէին : Սակայն թշնամին յենած էր իր գերազանց միջոցներուն եւ քանակին վրայ , ու հետզհետէ կը մօտենար հայկական դիրքերուն :

Հայերը դիմեցին ձեռնառում բերուն : Առաջին ուժքը պայթեցաւ Շիմալիի տակ : Իրարու ետեւէ պայթեցան ուրիշ ուժքեր եւս , ու թշնամին կը մագլցէր դէպի բարձունքները : Թշնամի մեծ խումբ մը խաբելով մեր մարտիկները , Սառնիճներու դիրքէն համարձակ կը յառաջանար : Կատաղի եւ անհաւասար կռուին մէջ հերոսաբար կ'իյնան հայ մարտիկները : Կ'ազատին միայն Ազատ Օզանեանը եւ Սուրէն Օտպաչեանը , որոնք լուրը կը հաղորդեն զին . մարմնին :

Միւս կողմէն թուրքերը կը գրաւեն բերդին դուռը եւ պատը քանդելով ներս մտնելու ճիգ կ'ընեն , սակայն կը պայթի փրկարար ուժքը : Ռմբաձիգ Գ . Կարմիրեանը ոռ'ւմբ , ոռ'ւմբ կ'աղաղակէ եւ ասա 14 տարեկան Կ . Թեվէքէլեանը , մահն աչք առած կը հասցնէ ուժքը : Ապառաժէ մը կախուած Կարմիրեանը կը թնդացնէ երկրորդ ուժքը ու ասա իրարու վրայ կ'իյնան 5-6 թուրքեր եւ թշնամին սարսափած տեղւոյն վրայ կը դամուի : Դուրս կը թռչին հայ ռազմիկները իրենց դիրքերէն եւ կը յարձակին : Թշնամին խուճապի մատնուած կը փախչի սարսափահար , զիրար գլտորելով ու զիականեր թողելով ճամբու երկայնքին :

Իերդը փրկուած էր այդ օրը ի գին 25 հայ մարտիկ հերոսներու :

Այնուհետեւ քանի մը խաղաղ օրեր անցան : Թշնամին դուրս չէր դար այլեւս , բայց անընդհատ կը գործէին հրացանն ու թնդանօթը , քարուքանդ ընելով հայկական դիրքերը :

Ոչ մէկ տեղէ օգնութեան յոյս կար այլեւս : Զինամթերքը եւ ուտեստը սպառած , բոլո մը հայութիւն հինաւուրց բերդի ապառաժներուն վրայ դամուած , ձգուած էր կոտորուելու եւ տրորուելու չար բախտին :

Զին . խորհուրդ տեղի կ'ունենայ Գլխիվայր Սառնիճին առջեւ :

Մտախոհ եւ դառն կսկիծը սրտին, Ղուկաս աղբար կը պարզէ օրուան կացութիւնը. — « Հազիւ երեք օրուան պաշար է մնացած բերդին մէջ: Ուրիշ ոչ մէկ ճար, բացի ուժդին հարուածով մը պատուել թշնամու շղթան եւ դուրս գալ բերդէն »: Կը հրահանդէ յաջորդ գիշերը՝ միեւնոյն ժամուն, նոյն տեղը դանուիլ, որոշումը գործադրելու համար:

Յարձակման կէտը կ'ընտրուի Գլխիվայր Սառնիճը: Տեվէ Գափուարէն անցնելով, պէտք էր համախմբուիլ Թամզարայի վանքը: Սակայն, գիշերանց, Սերաստացի երկու ստոր դաւաճաններ վար կ'իջնեն բերդէն ու ծրագիրը կը հաղորդեն թուրքերուն:

Կ'որոշուի ծրագիրը փոխել եւ այս անգամ յարձակիլ բերդի դռնէն: Պահեստի պաշարը կը բաժնուի մեկնող խումբին, մօտ հազար հոգի:

Բերդը ամբողջ սուգի մէջ է: Լացն ու կոծը աննկարագրելի է: Մնացողներէն շատերը այդ գիշերն իսկ թոյն առին ու նախընտրեցին այդպէս մեռնիլ, քան թէ բարբարոս թուրքին ձեռքն իյնալ:

Գիշեր է:

Մահուան լեզէոնը հաւաքուած է բերդին դրան առջեւի հարթավայրը: Տեղի կ'ունենայ հարազատներու բաժանման վերջին համբոյրը սրտամորմոք:


Կը յառաջանան առանց աղմուկի: Թուրքերու դիրքերուն առջեւն են: Կը սկսի գիրկընդխառն, կոկորդ կոկորդի կռիւր: Այս վերջին կատաղի փորձին մէջ, աւելի քան հարիւր հայ մարտիկներ ինկան արիւնլուայ...: Ու այնուհետեւ լեռներու ամայութեան մէջ, ամբողջ երկու սարի, Գարահիսարի այդ յանդուզն եւ պատուախնդիր զաւակները զարկին, զարնուեցան, մինչեւ որ բոլորն ալ ինկան հերոսի մահով:

Յաջորդ օրը, Յունիս 28, բերդին ժողովուրդը զոհ դարձաւ թրքական անանուն զազանութեան եւ բարբարոսութեան...: »

Քաղեց՝ ԽԱՆ

«Ռազմիկ»ի բացառիկ թիւէն, 15 Դեկտ. 1937

ԱՐԾՈՒԱԲԵՐԴԻ ՄԸ ԱՆԿՈՒՄԸ



« Վեհափառ հանդարտութեամբ արեւը մարը կը մտնէ Դիքմէնի ետին: Աներդի գիւղի ծխացող աւերակները հանդեր են ու նախկին շէն գիւղէն կը մնան կիսակործան պատեր, ածխացած գերաններ, կաղկանձող շուներ ու ահաւոր ամայութիւն մը, որ լեզու ունի, որ կը պատմէ գիւղին ապրած արհաւիրքը: Կամաց կամաց ցերեկը փէշերը կը հաւաքէ, շրջակայ գիւղերու ճամբաները կը ստուերոտին ու գիշերուան խաւարը սաւանի նման կը տարածուի երկրի վրայ:

Երեք տարբեր գիրքերէ գոռացող թնդանօթները ամբողջ ցերեկը ուռմբ ու մահ տեղայէ յետոյ, թանձրացող գիշերին հետ իրենց երախը կը փակեն, առաւօտեան լոյսին սպասելով: Երկշարք խրամատներէն երկնցած հրացանները անվերջ գոռալով կրակ կը փսխեն, առանց վայրկեան մը դադար առնելու:

Օղակաձեւ կրակէ հսկայ շրջան մը, փոթորկային անձրեւի նման տեղացող գնդակներու տեղատարափ մը, հիմնովին այրուած ամբողջ քաղաք մը, համատարած ծուխի կծու հոտ մը ամէն կողմ, կիսաքանդ տուններ, խորտակուած պատեր, ածխացած գերաններով անանցանելի ճամբաներ, տխուր մնացորդը երբեմնի փողոցներուն ու այս բոլորէն վեր, խաւարի մէջ կորած հսկայ քարաժայռ մը, ամբարտաւան գլուխը դէպի երկինք ցցած, գերեզմանի չափ լուռ, հէքեաթունակ եօթգլխանի դեւի նման ահաւոր շոքած է երկրի կրծքին ծանր հեւքով մը:

Խաւարի մէջէն բարձրացող այդ անձեւ զանդուածը, Շապին Գարահիսարի բերդն է:


Սրբազան խորհուրդ մըն է արծիւներու արժանի այդ բերդը, իմացական կամք մը, անհասանելի հերոսութիւն մը: Ո՞վ կրնայ չափել անոր խորհուրդին մեծութիւնը, անոր հերոսութեան սահմանը: Քսան օրերէ ի վեր, բերդի քղանցքին թառած քաղաքին բուռ մը հայութիւնը ապաստանած հոն, խելազար խիղախութեամբ կենաց եւ մահու անհաւասար սլայքար կը մղէ, հզօր թշնամիի մը դէմ: Մէկի դէմ հարիւր: Ի՞նչ հոգ սակայն: Բերդն ու ժողովուրդը միաձուլուած առնական հպարտանքով, զիմադրեր են երեք հազար կանոնաւոր զօրքի եւ տասը հազարէն աւելի պաշտպանութիւններու կատաղի յարձակումներուն:

Տարբեր դիրքերու մէջ գետեղուած երեք թնդանօթներ, ում-
քերով հերկեր են բերդին գազաթը, երկու հազարէ աւելի ումք
պայթեր է բերդին մէջ, յօշոտուեր են կիներ, երախաներ, ծերեր, եւ
սակայն Գարահիսարի խելառ կոուղները զէնքը վար չեն դրեր, եւ
դիրքերու առջեւ չոքած սպասեր են թշնամիին :


Չորս ընդհ. յարձակում վաներ են, իրենց տուած զոհերէն տաս-
նապատիկ աւելին հնձելով թշնամիէն : Կուուեր են երգելով, իրենց
մայրերու եւ քոյրերու ծափահարութիւններով գօտեպնդուած : »

(«Լուսադէմիս»)

Մալխաս



Բ Ե Ր Դ Ի Ն Մ Է Ջ



« Յունիս ամսու քանի՞ն կ'ըլլար, — չեմ յիշեր, չեմ գիտեր: Մեծ, աննախընթաց յարձակում մը գործած էին Բերդի մեր զիրքերուն վրայ, ու թնդանօթները, մարզուած սպաներու ղեկավարութեամբ կանոնաւոր զինուորներու բանակ մը, չէին յաջողեր մեզի ծունկի բերել: Մեր ինքնավստահութիւնն իսկ չէր խախտած: Բայց տուեր էինք բազմաթիւ թանկագին, անփոխարինելի զոհեր:

Գալիոնճեան Տէր Մկրտիչը, որ առաջնորդ Վաղինակ վրդ.ի սպանութենէն վերջ տեղապահ էր, բերդ գտնուող բոլոր քահանաները — հինգ հոգի — մէկտեղ հաւաքելով, որոշեց նախորդ օրուան մեծ յաղթանակին համար զոհաբանութեան պատարագ մատուցանել, վերջն ալ հոգեհանգիստ:

Երթեւեկողներու ապահովութեան համար, պատարագը տեղի ունեցաւ գիշեր ատեն: Հոռմէական տիրապետութեան օրով շինուած « Կորեկի ամպար » կոչուած փլատակ մը, որ վերածուած էր եկեղեցիի, բերնէ բերան լեցուն էր, տօնական օրուան պէս:

Ժամկոչ Աղաջանը, բերդ բարձրանալէն ի վեր, առաջին անգամ ըլլալով, ուրախ կ'երեւար: Դէմքին փոթերը սրբուեր էին կարծես, տարիներէն ծռած կոնակը՝ շտկուեր: Մոռցեր էր նոյնիսկ թէ իր տղան, մէկ հատի՛կը, քանի մը օր առաջ սպաննուեր էր: Հրավառուած քաղաքէն փախցուցած ափ մը խունկը, զոր Սուրբ Սարգիսի հրաշագործ Աջին պէս կը պահէր, հրապարակ էր բերած, կրակ ու անուխ ճարած եւ չորս քար իրար բերելով՝ խնկաման կազմած:

Աղօթողներու խնդրանքներուն, Տիրոջ ուղղուած բողոքներուն, տրտունջներուն եւ մեղաներուն հետ (այդ օրերուն այս բոլորն ալ կը կաղային), խունկի կապոյտ, բուրումնաւէտ ծուխը հանդարտ երկինք կը բարձրանար: Տէր Նաթանի շուրջառուած ուսերուն ետեւ կը տարածուէր աստեղազարդ երկինքը՝ անսահման տաճարի մը անպարագիծ գմբեթին պէս: Ու ժողովուրդը, յուզուած, վրդովուած, յոյսով ու հաւատքով լեցուած, գլխահակ կ'աղօթէր:

Հրացաններու որոտը մէջ ընդ մէջ կը կէտադրէր պատարագիչին ձայնը, եւ վարը, մեր ոտքերուն տակ տարածուող անսահման դաշտը կը լողար լուսնի գունատ լոյսին մէջ:

Երբ կարգը « Զինուորեալ Մանկունք »-ին հասաւ, պատարագիչին ձեր ձայնը դողաց: Այդ պահուն օրուան նահատակներն էին որ « ժամ » կը բերուէին, վերջին օրհնութեան համար:

Հմայեակ Գարակէօղեան, Ռուբէն ու Գրիգոր Պարոնվարդեաններ, Պուռնագեան Յակոբ, Վեցիկեան Երուանդ, Նախնիքեան Գուրգէն, Գեղամ, Վարազդատ, պատանի Հմայեակ Թեւեքէլեան, ամէնը 28 հոգի:

Բսանեւութ հերո՛ս, անհրաժեշտօրէն պէտք՝ դործը շարունակելու համար: Բոլորն ալ ահա ինկած են անհաւասար կոիւին մէջ: Ոմանք ծակուած կամ փշրուած ճակատներ ունին, բղքտուած դէմքեր, թեւեր, իրաններ ու արիւնաքամ գունատ դէմքեր: Ու ահա կողք կողքի, պարտականութիւնը կատարողի խոր ու խաղաղ քունով կը ննջեն հսկաները:

Խոչոր, հարթ քարին վրայ կարգով շարուած անպատան այդ մեռելները, լուսնի լոյսին տակ արտակարգօրէն տժգոյն ու մսած կ'երեւան: Կողք կողքի են, ինչպէս միշտ կեանքին մէջ էին: Միասին աշխատեր, կազմակերպեր, երազեր, ծրագրեր ու կոուեր էին, ու մեզի հետ պիտի չըլլային պահ մը վերջ, երբ հողը ծածկէր անոնց երիտասարդ մարմինները, երբ պատանի դպիրին մաքուր ձայնը վերջացնէր « ի վերին Երուսաղէմ »-ը եւ քահանան ափ մը օրհնուած

հողը սրսկէր անոնց վրայ ու սրտակեղէք ձայնով ըսէր. — « Հող էիք ու ի հող դարձաք » :

Յանկարծ աղէկատուր ճիշ մը, ու խուլ, հոգեցունց, զսպուելի փորձուող լացի աղմուկներ կը լեցնեն գիշերը: Մեռելներու տէրերն են, ամբողջ ժողովուրդն է որ կուլայ, խոր, գղրղազին, անմխիթար լացով...

Գիշերը թաց է:

Կծկուող դէմքեր, ճմռթկուած դէմքեր, դողացող շրթունքներ, սեղմուած բունցքներ, թաշկինակներու եւ գոգնոցներու մէջ թաղուած երեսներ:

Ահա հատ-հատ, կամ պզտիկ խումբերով կը հասնին նահատակներու դէնքի ընկերները, կը խաչակնքեն կոպիտ լայն շարժումներով ու դէնքերու փողերը վար բռնած, գլխահակ կը սպասեն:

Ի՞նչ մտածումներ կ'անցնին անոնց ծուխէն, արեւէն ու հովէն սեւցած ճակատներուն տակէն: Կը նախանձի՞ն կռուի ու փառքի մէջ մեռած իրենց ընկերներուն, մեղադրանքի խօսք ունին ամբողջ գործի ծանրութիւնը իրենց վրայ թողած՝ այսպէս աճապարանքով մեկնելնուն համար...: Դժուար է ըսել կամ գուշակել, որովհետեւ ոչ մէկ մկան կը շարժի անոնց անշարժացած, գրեթէ դաժանացած դէմքերուն վրայ...: Ինչո՞ւ այդպէս դիմացը, հեռաւոր մութ հորիզոնին կը նային միայն, հոն մեզի անտեսանելի բա՞ն մը կայ...

Չէ՛, ես գիտեմ: Կը վախնան որ իրենց ակնարկը ծանօթ, վշտաթաթաւ ու թաց դէմքի մը վրայ կ'իյնայ ու ա՛լ չկրնալով տոկալ, իրենք ալ կուլան...

Իսկ հերոսին համար արգիլուած է արցունքը:

Պատանի սուրհանդակներ լուր կը բերեն թէ կասկածելի շարժումներ կ'երեւին վարը, թէ պէտք է որ կռուողները շուտով վերադառնան իրենց դիրքերը: Պրոնդէ ձուլուած դէմքերը յանկարծ կը կենդանանան ու արտայայտութիւն կ'առնեն: Անոնք, իրենց գլուխները բացած, վերջին հրաժեշտը կուտան իրենց դէնքի մեռած ընկերներուն: Ոմանք կը ծռին ու կը համբուրեն իրենց շատ սիրելի մէկուն կամ միւսին ճակատը ու սեղմուած, գիծերու վերածուած շրթունքներով, կը մեկնին ճակատ:

*
**

— Ղուկաս, դո՞ւն ալ...

Կիսամութին մէջ, եկեղեցիէն դիրքերը մեկնողներուն ետեւ, երկու մարդիկ կը քալեն կողք կողքի:

Միջահասակ են երկուքն ալ:

Մէկը, հազիւ 28 տարու ըլլալ կը թուի, գեղադէմ է ու նրբամարմին: Հագած է որսորդի սեղմ ու թեթեւ հագուստ: Միւսը, չէկի



ՎԱՀԱՆ ՀԻՒՍԻՍԵԱՆ

վրայ, արծաթախառն մագեր ունի եւ կապոյտ աչքեր, պէխերուն մէջ
խակ սպիտակ թելեր կան, թէեւ իր տարիքը յիսունն անցած ըլլալու
չէ: Լայն կուրծքով, նիհար ու արագաշարժ մարդ մըն է: Անունը
Ղուկաս:

— Այսօրուան պէս երկու յաղթանակ եւս ու ահա մենք պարտուած
ենք, կը խօսի երիտասարդը՝ որ Հիւսիսեան Վահանն է:

— Քանի մը օր, մինչեւ որ նոր ուժ հաւաքեն, մեզ պիտի չնեղեն
թուրքերը, կը պատասխանէ միւսը: Խօսակցութիւնը կը հատնի...

Թշնամին վարէն համազարկի է սկսած: Այդ գիշերուան մութէն
օգտուելով Սարնիճներէն վեր ջուր առնելը արգիլելու իր միակ
միջոցն է:

— Անոնց մէկ գիշերուան մէջ վառած փամփուշտը եթէ մերն
ըլլար, կ'ափոտոսայ Վահան:

— Բերդին վրայ երէկ ու այսօր սպաննուած զինուորներուն զէնքերը հաւաքել տուի, — կ'ըսէ Ղուկաս, — դրեթէ փամփուշտ չկար անոնց հետ: Առանց փամփուշտի զէնքէն ի՞նչ օգուտ...: Անոնցմէ լաւերը մեր ունեցածներուն հետ փոխել տուի, միւսներուն կոթերը Սերոբ վարպետը քակեց որ հաց եփելու գործածեն:

— Փա՞յտն ալ հատած է...

— Ուժերու նոր դասաւորում պէտք է դիւրքերուն մէջ:

— Երիտասարդ չմնաց ալ, բացերը պէտք է պատանիներով լեցնել:

— Քսանեւոթ կռուող... մեր խերը անիծեցին. իրենց վերջին երկու օրուան սպաննուածներուն թիւը 300ն անցած ըլլալու է:

— Հաւանաբար, բայց անոնց 300ը մեր պղտիկ Հմայեակին հետ չէի փոխեր...

Կը լռեն:

Տարէց մարդը դադանօրէն ձեռքին կոնակը կ'անցընէ աչքերուն վրայէն ու քիթը կը ճմուէ:

Միւսը, տեսնելով այդ շարժումը, ամբողջ հոգին այդ հարցումին մէջ դրած՝ կը հարցնէ.

— Դո՞ւն ալ, Ղուկա՛ս:

— Ի՞նչը ես ալ, ծօ՛, մարդ չի՞ կրնար քիթը ճմուէլ:

Լռութիւն:

Գլխիվայր Սառնիճին առջեւ, ուր պէտք է բաժնուին իրարմէ, երիտասարդը կը հարցնէ.

— Ո՞ւր պիտի թաղեն:

— Ո՞ւր թաղել. հողն ուրկէ՞ 28 դերեզմանի համար:

— Ուրեմն ասո՞նք ալ վար պիտի նե...

— Գիտցածիդ պէս է, կ'ընդմիջէ միւսը՝ չձգելով որ իր խօսակիցը արտասանէ « նետեն » սոսկալի բառը:

— Ի՞նչ սեւ է մեր ճակատադիրը, կ'ըսէ երիտասարդը հոգիին ամբողջ ցաւը այդ բառին մէջ դնելով, ո՛չ վրան ապրելու հող ունինք, ո՛չ ալ՝ մեռնելէ վերջ, մէջը թաղուելու...

Անխօս կը բաժնուին, որովհետեւ դիտեն որ եթէ շարունակեն, պիտի ըսեն բաներ, որոնք պէտք չէ որ ըսուին:

Ղուկաս յոգնութիւն կը զգար: Նստեցաւ քարի մը վրայ ու սուղուեցաւ խոր մտածման մէջ, յետոյ յանկարծ արթնցածի պէս, ոտքի ելաւ, նայեցաւ իր հեռացող երիտասարդ գործակիցին գացած կողմը, եւ անոր ձայնը կեղծելով հարցուց ինքնիրեն.

— Դո՞ւն ալ, Ղուկա՛ս:

— Այո՛, ձեզպէսներուն հետ քարերն իսկ կուլան, ես ինչպէ՞ս չլամ...: Մարդ ենք հա՛...

Այդ պահուն լուսինը սարին միւս կողմը կը թեքէր, ա՛լ գիշերը

պիտի մթնէր ու դառնար վտանգաւոր: Աճապարեց դէպի իր պաշտպանելիք դիրքը, բայց ճամբան կը խօսէր ինքնիրեն.

— Գարակէօղեան, Պուռնաղեան, Վեցիկեան, Վարազդատ, Գրիգոր... ի՞նչ պատուական տղաք էին... Թաղելու հող չունինք այս սեւ ապառաժին վրայ, վար պիտի նետենք որ հոն ցրուած շուներու ոսկորներուն խառնուին անոնց նշխարներն ալ, որովհետեւ... որովհետեւ սեւ աստղի տակ ենք ծնած ու սեփական հող չունինք... բայց ամէնքս ալ գիտենք թէ հող չունինք, սակայն հանդիպողին չենք ըսեր թէ թաղուելու իսկ հող չունինք որ անոր հողին տակնուվրայ ընէր...: Կան բաներ որոնք ճշմարտութիւն են, բայց չեն ըսուիր... Բէօր մարդու երեսին չենք պոռար.— « է՛յ, մարդ, աչքդ փուճ է »: Ի՞նչ պատուական տղաք էին... հէյ վա՛խ...

— Դո՞ւն ալ, Ղուկա՛ս...: Ա՛յո, ես ալ... անանկ կտրիճներու հետ քարերն իսկ կուլան...

Ու մտաւ քարի մը ետեւ, բուռի իր սուր աչքերը հետախուզեցին խաւարը ու մատը բնազդաբար գնաց հրացանի բլթակին... »

Արամ Հայկազ (Զեֆէնեան)

«ԳԱՐԱՀԻՍԱՐԸ ՇԱՐՔԻ ԴԵՊՔԵՐԸ,,

(ԸՍՏ ԹՐՔԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԵԱՆ)

« Գարահիսարը Շարքի սանճաքը, յարակից էրզրումի և Տրապիզոնի վիլայեթներուն, Կոմիտէներուն համար Սերաստիոյ նահանգին ամենակարեւոր կերտներէն մին կը հանդիսանար: Հող եւս, Սահմանադրութենէն վերջ, Կոմիտէները զէնքեր ամբարեցին եւ այնտեղ զրկեցին իրենց ամենամուշեռանդ կուսակիցները, ուսուցչի եւ քահանայի հանգամանքով, որպէսզի տարածեն եւ զարգացնեն յեղափոխութեան դադափարը:

Զօրակոչի ընթացքին մեծ գործունէութիւն մը ի յայտ եկաւ Գարահիսարի Հայոց մէջ: Մասնաւոր գործիչներ, սանճաքը պատելով, Հայոց բռնելիք դիրքի մասին պատուէրներ ու հրահանգներ կը



1.— Տէր Սոփոնիա քահ. Կարիսեան. 2.— Շապուհ Օզանեան (մեծ մարտիկ). 3.— Գարեգին Թորգոմեան. 4.— Սեդրակ Պալեան. 5.— Գեորգ Թուրթեան. 6.— Հայկազ Խրպըլեան. 7.— Սեփոն Տ. Ներսէսեան. 8.— Հանի վահան Ղարիպեան:

տանէին : Աւելի յետոյ, Եայճիի քահանան Տէր Սեփոնիլ (*), — որուն վրայ խօսուեցաւ աւելի վերը, — իր հռչակաւոր շրջապտոյտին ձեռնարկէց Գարահիսարի հայկական զիւղերուն մէջ, զիւղացիներուն ծանուցանելու համար որ Թուրքիան պատերազմ յայտարարած է եւ թէ զէնք գործածելու ժամանակը հասած է :

Սուշէհիւրի շրջակայքը թաքնուած զէնքեր եւ ուժեր երեւան ելած ըլլալով, այդ քաղաքին յեղափոխականները՝ որոնք յաջողած էին փախուստ տալ, ու կերիհ քահանան, որուն յիշատակութիւնը եղած է արդէն, եկան հաստատուիլ Գարահիսար, որպէսզի հոնկէ ղեկավարեն ապստամբական շարժումը, որ պայթեցաւ հետեւեալ պարագաներուն մէջ. —

Երեքշաբթի առտու, 2-15 Յունիս 1915ին, ոստիկաններ եւ ոստիկան-զինուորներ, որոնք հայկական թաղերը կ'երթային զինուորական փախստականներ փնտռելու համար, սպաննուեցան Հայոց տուներէն արձակուած կրակով : Հեռագրի ու հեռաձայնի գիծերը կտրեցին, արգիլելու համար Գարահիսարի հաղորդակցութիւնը դուրսի աշխարհին հետ : Գնդակներ եւ ուժեր շարունակեցին տեղացնել միւսլիմաններուն եւ կառավարական ոստիկաններուն վրայ, ու միջեւ յաջորդ առտուն տեւող այդ կրակին օգնութեամբ, զէնք կրելու ընդունակ Հայերը, իրենց ղեկավարներուն ընկերակցութեամբ, խումբ առ խումբ ամրացան Գարահիսարի վաղեմի միջնաբերդին մէջ, ուր ամբարած էին երեք չորս ամիս լայնօրէն քաղաքազօրքի մը պահանջները բաւարարելու չափ ուտելիք, զինամթերք եւ ուժեր :

Գարահիսարի միջնաբերդը, կառուցուած երկու հարիւր մեթր բարձրութեամբ քարաժայռի մը վրայ, կ'իջիէ քաղաքին : Անմիջապէս որ ըմբոստները անոր տիրացան, կրակի տուին իսլամ թաղերը, ամբողջ Գարահիսարը այրեցաւ, ի բաց առեալ հարիւրեակ մը տուներէ :

Ձինեալ ուժերը փութացին Գարահիսար, պաշարեցին միջնաբերդը : Ապստամբները անձնատուութիւնը մերժած ըլլալով, պաշարումը տեւեց քսանըհինգ օր, որու ընթացքին պաշարեալները դուրս խոյացան, ինչ որ թոյլ տուաւ անոնցմէ երեք հարիւր հոգիի խոյս տալ : Միւսները անձնատուր եղան կիներուն եւ երախաներուն հետ :

Գարահիսարի ապստամբութիւնը, քանի մը հարիւր հազար ոսկիի նիւթական վնասէն դատ, 84 զինուորի եւ ոստիկան-զինուորի կեանքը արժեց, որոնցմէ երկուքը սպայ : Զօրագունդերուն մէջ, տակաւին 140 վիրաւորներ եղան, իսկ քաղաքացիներուն մէջ 30 սպանեալ եւ 20 վիրաւոր :

Հայերուն ըսածին նայելով, միջնաբերդին մէջ ամրացած

(*) Հաւանաբար կ'ակնարկէ Աներզիի Տէր Սոփոնիա քահ.ին, որ հերոսամարտի նախօրեակին Թուրքերու կողմէ չարաչար սպաննուած է բանտին մէջ : Ծ. Թ.

ապստամբներէն քանի մը հողի, անձնատուութեան առաջարկ բերած ըլլալով, հրացանի բռնուեցան Կերիհի (*) եւ Անդրանիկի հրամանով:

Միջնաբերդին մէջ գտնուած ասադին քանակութեամբ ուտելիքները, սարքաւորուած ընդարձակ մթերանոցները, խրամները՝ պեղուած ա՛յն տեղերը, որոնք լաւագոյնս կը ծառայէին պաշտպանութեան գործին, վերջապէս ամէն ինչ ցոյց կուտայ որ այս բոլորը չէին կրնար ափյափոյ եղած ըլլալ, եւ կ'ապացուցանեն որ Կոմիտէները երկար ատենէ ի վեր պատրաստած էին ամէն բան, սպասելով ապստամբութեան յարմար ժամանակին:

Գարահիսարէն փախուստ տալու յաջողած ապստամբները ցրուեցան Սերաստիոյ նահանգին դանազան վայրերը, ուր ամէն տեսակի չարագործութեանց եւ նողկալի արարքներու անձնատուր եղան:

Գարահիսարի ապստամբութեան հետեւանքով, Կայսերական կառավարութիւնը 12 Յունիս 1915 թուակիր հետեւեալ շրջաբերական հեռագիրը ուղարկեց արտասահմանի իր ներկայացուցիչներուն.

« Ծանօթ էք մեր ձեռք առած միջոցներուն ի մասին Հայերու հեռացման, ա՛յն շրջաններէն ուր իրենց ներկայութիւնը վնասակար կը համարուէր ազգային պաշտպանութեան շահերուն ու վտանգի կ'ենթարկէր ներքին ապահովութիւնը եւ անդորրութիւնը: Մեր թշնամիները նոր պատրուակ մը դտան հանրային կարծիքը մեր դէմն հանելու համար: Իրենց թերթերը, ինչպէս նաեւ չէզոք երկիրներունը, — որոնց յաջողեցան սիրաշահիլ ի նպաստ իրենց դատին, — կը ճգնին խեղաթիւրել ճշմարտութիւնը, այդ միջոցառման վերաբերեալ իրողութիւնները խնամքով այլափոխելով եւ կը հետամտին ցոյց տալ թէ հայ տարրը, հակառակ իր բացարձակ անմեղութեան, վնասուած է իր ամենանախնական, իր ամենաբնական ու իր ամենանուիրական իրաւունքներուն մէջ:

« Կարելի չէ ժխտել ստիպողական անհրաժեշտութիւնը և օրինաւորութիւնը այն դիրքին, զոր Կայսերական կառավարութիւնը հարկադրուեցաւ որդեգրել յեղափոխական Հայերուն հանդէպ: Իրողութիւնները ամէն օր մեր զինուորական իշխանութեանց կը հայթայթեն նոր փաստեր, երկար ատենէ ի վեր պատրաստուած եւ որոշուած ծրագրի մը մասին, զոր կը շարունակեն անոնք կիրարկել անվրէպ, Ռուսերուն կողքին մեզի դէմ կուռելով: Այս անուղղամիտ, յեղափոխական եւ անջատողական շարժումը, հաստատուած մինչեւ այս վերջին ժամանակները լոկ ճակատին ու հարեւան դօտիններուն մէջ, այժմ տարածուած է մինչեւ մեր կռուի հանդրուանները: Այսպէս, Յունիս 2ին, հինգհարիւր զինուած Հայեր, որոնց միացած էին միեւնոյն տարրէն փախստական զինուորներ, յեղակարծօրէն յարձակում

(*) Կիւրեղ քահ. Սարգիսեանը ըլլալու է, նահատակուած Բիւրքի եւ Արծապերի ինքնապաշտպանութեան կռիւններուն մէջ: Ծ. թ.

գործեցին Շարքի-Գարա-Հիսարի վրայ, կոխեցին իսլամ թաղերը, ուր բոլոր տուները կրակի տուին, յետոյ սլաոնիչուեցան քաղաքին միջնաբերդին մէջ, տեղական իշխանութեան հայրական ու հաշտարար յորդորներուն պատասխանեցին հրազէնի եւ սուժի կրակով, ու այսպէս սլաոնառ դարձան հարիւր յիսուն քաղաքացիներու եւ զինուորականներու մահուան: Կառավարութեան վերջին առաջարկը, որ կը հետամտէր առանց արիւնհեղութեան անոնց անձնատուութեան, ապարդիւն եղաւ: Այս սլաոններուն մէջ, իշխանութիւնները անհրաժեշտ դատեցին միջնաբերդին դէմ թնդանօթ գործածել: Այս զսպողական միջոցին շնորհիւ է որ յաջողեցան նոյն ամսոյն 20ին իշխել յիշեալ ապստամբներուն:

« Այս կարգի ըմբոստական շարժումներ, հոս ու հոն սլայթած, մեզ կը ստիպեն որ զանազան ճակատներու վրայ դռնուած մեր բանակներէն ուժեր քաշենք, զանոնք զսպելու դիտաւորութեամբ: Որպէսզի առաջին առնուի այդ անպատեհութեան եւ արգիլուի նման դէպքերու վերադարձը, որոնց միջոցին յանցաւորներու առնթեր անմեղ ու խաղաղ բնակիչներ նոյնպէս ցաւալի կորուստներու կ'ենթարկուին, Կայսերական կառավարութիւնը պարտաւորուեցաւ հայ յեղափոխականներուն հանդէպ կարգ մը նախադուշական եւ զսպողական միջոցներ ձեռք առնել: Այս միջոցներու կիրարկումով է որ անոնք հեռացուած են ճակատի շրջաններէն եւ ծովափներէն, ուր զինուորական ամբուլթիւններ հաստատուած են: Անոնք նոյնպէս ձերբազատուած են Ռուսերու աւելի կամ պակաս իրական ազդեցութենէն եւ դուրս ձգուած ազգային պաշտպանութեան գերագոյն շահերուն վնասելու ու ներքին ապահովութիւնը վտանգելու վիճակէն: »

*
**

Ահաւասիկ թրքական կառավարութեան մեկնաբանութիւնը Գարահիսարի հերոսամարտին, որ բռնած է « Հայկական Կոմիտէներու յեղափոխական ձգտումն ու շարժումը, Օսմանեան Սահմանադրութենէն առաջ եւ վերջը » գրքին Փրանսերէն տպագրութեան 361-365 էջերը, ազնուօրէն մեզի տրամադրուած Պ. Հրանդ Սամուէլի կողմէ:

Բացայայտ ճշմարտութիւն է, որ Շ. Գարահիսարն ալ նախասահմանուած էր Սեւ ծովու եզերքներու իր արենակիցներու բախտին, եթէ գլուխ ծռէր թրքական կառավարութեան սահանջներուն: Ինքնապաշտպանութեան Կոմիտէն քաջ դիտէր թէ ինչ կը նշանակէր « հայրական յորդոր »ները տաճկական իշխանութեան, որ կը հետամտէր դաւադրաբար ծուղակը ձգել մեր քաջ հայրենակիցները: Յանձնե՛լ զէնքերը, միակ գրաւականը իրենց դժբախտ կեանքին, — այնչափ թանկ ձեռք բերուած երկար տարիներու հայ արեան տուրքի փորձառութեամբ, — իսկական յիմարութիւն պիտի ըլլար:

Հայ երիտասարդութիւնը մատնել զինուորական փախստականներ
հետապնդող Թէշֆիլաքը Մախսուսի աւազակներուն եւ եղեռնագործ-
ներուն ձեռքը, համազօր պիտի ըլլար անձնասպանութեան, որովհե-
տեւ Քարահիսարի մեր ժողովուրդին այդ արոյրէ ուժերը պիտի
կոտորուէին ոչխարներու պէս, ինչպէս եղան երեք հազար հայ զին-
ուորները Սերաստիայէն զրկուած Ամելէ Թապուրին մէջ: Հետեւա-
բար, արծուերոյնի մեր հայրենակիցները նախամեծար համարեցին
առիւծի պէս մարանչիլ եւ իրենց պատուով մեռնիլ:


Թրքական կառավարութիւնը կը թուի խուճապի մատնուած
ըլլալ, չէզոք երկիրներու մամուլին ու հանրային կարծիքին արձա-
կած բողոքի ճիչերէն եւ կը ճզնի իր խիղճը հանդարտեցնել արտա-
սահմանի իր զոլամներուն միջոցաւ: Եւթազանի մղձաւանջէն ազա-
տելու համար ինքնասպաշտպանութեան դիմած մեր ափ մը կտրիճնե-
րուն ապստամբական նպատակներ վերագրելով, ան կը ճզնի ձախա-
ւեր կերպով արգարացնել շատոնց վճռուած իր դժոխային նախճիր-
ները: Բանաձեւը սքանչելի է. — « Անոնք դուրս ձգուած են ազգային
պաշտպանութեան գերագոյն շահերուն վնասելու եւ ներքին ապահո-
վութիւնը վտանգելու վիճակէն »:

Համաձայն թուրք պետութեան պնդումներուն, միջնաբերդին
մէջ այնչափ քանակութեամբ ուտելիք եւ ռազմանիւթ ամբարուած է
եղեր, որ կարող էր երեք չորս ամիս ամբողջ քաղաքազօրք մը ապ-
րեցնել...: Իրողութիւնները դժբախտաբար բոլորովին հակառակը
կ'ապացուցանեն: Ու իբր թէ Տէր Կերիհ եւ... Անդրանիկ, անձ-
նատուր ըլլալու առաջարկ ընող ապստամբները տեղն ու տեղը
սպաննած են եղեր: Կ'երեւայ թէ զօրավարը իր հրամանները ռա-
տիոյով կ'արձակէր, կամ թէ՛ ի՞նչու չէ, ուղած ժամանակ կովկասէն
կը թռչէր դէպի արծուերոյն, անձամբ իր տրակոնական կամքը
պարտադրելու համար: Յամենայն դէպս, եթէ Քարահիսարի առիւծը
հոն գտնուէր, մեր ջարդարարները դժուար թէ այսքան յոխորտային:
Զարհուրելի ողբերգութեան մը դիմաց, մարդ իսկապէս թուրք
ըլլալու է, ինքզինքը ծիծաղելի դարձնելու համար այս տեսակի
չնական բարբանջանքներով:



ՀԵՂԻՆԱԿԸ ԵՒ Պ. ԱՐԱՄ ՊԵՏՐՈՍԵԱՆ

ՅՈՒՇԵՐ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԷՆ



ԴԷՄՔԵՐ, ԴԷՊՔԵՐ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Ճակատագիրը այնպէս տնօրինած էր, որ հեռու մնայի մեծ Փոթորիկէն եւ չկարենայի իմ համեստ բաժինս բերել քաջ հայրենակիցներուս մղած հերոսամարտին: Գծուար եղած էր անշուշտ բաժանումս երկրէն, բայց ստիպուած էի հպատակիլ հօրս վերջին կամքին, որ կը բխէր զարմանալի յայտնատեսութենէ մը:

Ամէնէն առաջ, երէց եղբայրս Նիկողոս կը ձգէր Գարահիսարը եւ կ'երթար Տետէ-Աղաճ, 1906ին: Ուսմունքը տեղն էր. երկար տարիներ ուսուցչական պաշտօն վարած ըլլալով երկրին մէջ, մեծ փափաք կը զգար եկեղեցական ասպարէզի: Հետեւաբար, մօրաքրոջս աղաքը աշխատեցան ու տեղւոյն վրայ քահանայ ձեռնադրել տուին զինքը, Տէր Գարեգին անուանակոչումով:

1908ին իմ կարգիս կը հեռանայի ծննդավայրէս եւ Տետէ-Աղաճ կը տանէի եղբօրս ընտանիքը: Անկէ կ'անցնէի Խրիմի թերակղզին, Եալթայէն 28 քիլոմէթր հեռու, թաթարական գիւղի մը մէջ խան ու սրճարան կը բանեցնէի երկու եղբայրներուս հետ:

Երկու տարի վերջ, դարձեալ բոլորս մէկ եղած՝ մեծ խան մը եւ ճաշարան մը կը բռնէինք Եալթայի եւ Սինֆերոպոլի մէջտեղը, իրարմէ քառասուն քիլոմէթր հեռաւորութեամբ: Գործերնիս յաջող էր:

**

Գարաչըջանի այդ առաջին տասնամեակին, շողեկառքի դիժ չկար Եալթայի մէջ: Պէտք էր Սեւաստոպոլ կամ Սինֆերոպոլ հանդիպիլ, Ռուսիոյ խորերը երթալու համար: Այս երկու քաղաքները ունէին թղթատարական կառքեր, Ռուսաց լեզուով « Փոշտովոյ Ավթոմոպիլ », որոնք մինչեւ 28 հոգի կրնային առնել:

Օր մը, լաւ չեմ յիշեր 1912ի թէ 1913ի Յունիս ամսուն մէջ, առաւօտեան ժամը 8ին, չորս Վրացիներ եկան, ուղղակի մտան մեր ճաշարանէն ներս եւ մեզի հարցուցին թէ՛ « թղթատարական կառքը ժամը քանիի՞ն կ'անցնի »: Մենք ալ ըսինք թէ՛ « ամէն օր, կէսօրէն

վերջ ժամը Չին, եւ Եալթայէն թէ Սիմֆերոպոլէն եկած Փոշտովոյի կառքերը մեր խանին առաջ կը կենան »:

Վրացիները մեզի գինի ապսպրեցին եւ ուղեցին գիտնալ թէ « շիշիկ » կրնա՞նք պատրաստել իրենց համար: Մեր հաստատական պատասխանին վրայ, շատ դո՛հ եղան, իսկ մենք ալ անհրաժեշտ հրահանգները տուինք խոհարարին: Չորս անձի համար համեղ ճաշը պատրաստած՝ զատ զատ մատուցուեցաւ յաճախորդներուն, իսկ ես ալ գինիի շիշերը տարի: Վրացի ճամբորդները կերան, համադամներուն փոխարժէքը վճարեցին ու մեկնեցան ժամը 9ին:

Մեր խանէն դարվեր, Աղըղխըռ լերան ստորոտէն կ'անցնի ճանապարհը, որ ունի գիկ-զակ տեղեր: Այդ լերան վրայ խոշոր դիտակ մը զետեղուած էր, ուրկէ Ռուսաց մեծերը Պոլսոյ նեղուցը կը դիտէին: Վրացիները կ'երթան, այդ անհարթ ճանապարհին յարմար մէկ կողմը դիրք կը բռնեն, ու թղթարական կառքը երեւցածին պէս, տասնոց ատրճանակներն քաշած՝ կը կեցնեն զայն: Երկուքը պահակութիւն կ'ընեն, իսկ միւսները կը կոտրեն փոստին սնտուկը, դրամները կ'առնեն ու կը փախչին անտառներուն մէջ:

Ինքնաշարժին վարիչը եւ թղթատարական պաշտօնեան կը խորհին որ եթէ յառաջ երթան, մինչեւ հեռաձայնի կայանը, կէս ժամ կը կորսնցնեն, իսկ եթէ ետ դառնան, 15 վայրկեան կը շահին, ուստի այս վերջին միջոցը աւելի բանաւոր կը գտնեն: Իրիկուան ժամը 5ին, մենք դրան առաջին էինք, երբ թղթատարական կառքը սուլելէն կրակի պէս անցաւ:

Վրացիներու ճաշած պահուն, դրացի Յոյն մը հոն էր եւ կ'երեւի թէ կասկածած էր: Այս մարդը որ լրտես էր, — մենք ատիկա քաջ գիտէինք արդէն, — կ'երթայ լուր կուտայ կառավարութեան թէ՛ « Չորս վրացի ճամբորդները հաց կերած են Հայերուն ճաշարանը »: Ասոր վրայ, Եալթայի Սիռաւնիկը (գաւառապետ) ինքնաշարժով շտապեց մեր կեցած գիւղը, երեք եղբայրներս խտորէն հարցաքննեց, մենք ալ ինչ որ գիտէինք ըսինք:

Դժուար չէ գուշակել թէ այդ չորս վրացիները կալանաւորուեցան: Ինչպէս վերջէն իմացանք, ոուս ոստիկանութիւնը զանոնք ձեռք անցուցած էր Սուտաքի կողմերը, Առփատ անունով թաթարական գիւղի մը մէջ, որսկան շուներու հետախուզութեամբ:

**

Մեր կեցած գիւղէն երեք քիլոմետր հեռու Ալուշտա քաղաքը կար, ուրկէ միս, հաց եւ կանանչեղէն կը բերէի ամէն ատեն: Օրին մէկը, մինչ միաձի կառքիս մէջ նստած՝ դէպի այդ քաղաքը կ'ուղղուէի, մեր Փաստաեալէն (խան) քիչ մը վար նշմարեցի մեքենան խանգարուած ինքնաշարժ մը, որուն մօտ կանգնած էր վայելուչ

հազուաժամ մարդ մը: Չիս տեսնելուն պէս նշան ըրաւ որ կանգ առնեմ: Անձանօթը ինծի հարցուց.

— Կարելի՞ է կառքովդ Ալուշտա երթալ:

— Հրամմեցէ՛ք, եթէ կը հաւանիք ճամբորդել իմ համեստ կառքովս:

— Նիչե՛վօ:

Ելաւ քովս տեղ դրաւեց: Երբոր կառքը ճամբայ ելաւ, մարդը ուղեց գիտնալ ազգութիւնս:

— Հայ եմ, ըսի պարզօրէն, թէեւ ինքն ալ այդպէս կ'ենթադրէր:

Երբ Ալուշտա հասանք, պատահական ուղեկիցս ձեռքով նշան ըրաւ Փայիթոնի մը վարիչին, որ մօտեցաւ մեր կառքին: Այն ժամանակ ուղեց ինծի մէկ բուպլի տալ, բայց ես մերժեցի, դրամը ձգեց ու հեռացաւ:

Շատ ծանօթներ ունէի քաղաքին մէջ, մանաւանդ Փայիթոնի վարիչներէն քանի մը հատը ինձ մօտիկ բարեկամ էին: Երբոր ինծի մտերմօրէն հարցուցին թէ՛ « Ո՞ւսկից կառք առած էի այդ Կոստիոթինը », բնաւ չվարանեցայ իրականութիւնը ըսել: Վերջապէս, ես ալ հետաքրքրուեցայ եւ ուղեցի մարդուն ինքնութիւնը հասկնալ:

— Չե՞ս գիտեր, բացազանչեցին մտերիմներս զարմացած, կամենեն է...

Մեծահարուստ Հրեան պիտի դառնար Կրեմլինի իշխանաւորներէն մէկը: Իր նկարները տեսնելով, պիտի հաստատէի թէ Ալուշտա տարած մարդս է...: Նախապատերազմեան տարիներուն ինքն ալ մուտք գործեց այն դաւադրական ցանցէն ներս, որ Սթալինը տապալելու հետամուտ էր, ու ի վերջոյ գլուխը վրայ տուաւ:

**

Եալթան Չարերուն օդափոխութեան վայրը դառնալէն ասդին, Հրէից բացարձակապէս արգելուած էր այդ շրջանները բնակիչ: Մտածեցէք անգամ մը, որ օրին մէկը Հրեայ մը սոսկալի կռիւի բռնուած էր մէկու մը հետ եւ յոխորտանքով կը պոռար անոր երեսն ի վար. — « Ինծի՛ նայէ, բարեկա՛մ, գիտե՞ս թէ ով եմ. ես քանի մը օր Եկատորինատար կեցած մարդ եմ... »: Նոյնիսկ վաճառականները չէին կրնար այդ կողմերը գիշերել, հետեւաբար կ'երթային տասը քիլոմետր անդին թաթարական Գդըլթաչ գիւղը: Իսկ Ալուշտան առաւելապէս Հրեաներէն բնակուած էր, մանաւանդ ամառնային արձակուրդի օրերուն: Փոքրիկ շոգենաւեր ճամբորդները այդ քաղաքէն Եալթա կը տանէին մէկ ժամուան մէջ. Սեւ ծովու ամբողջ ափունքը եզերուած էր ամառանոցներով: Խրիմը հարուստներուն տեղն էր, մինչ Եալթան եւ Ալուկայը Չարերուն եւ պետական աւագանիին նախասիրած վայրն էր:

Եալթայի այդ գիւղը ապրած շրջանիս, օր մը դէմս ելաւ ծանօթ
Թաթար մը եւ իրեն ըսի. — Այս ո՞ւր ես, Պիլա՛ւ, այսչափ ատենէ
ի վեր մէջտեղ չկաս :

— Մի՛ հարցներ, Ատա՛շ. ուզեցի որ այս երկրէն հեռանամ, ելայ
Պուրսա գացի, որպէսզի հանգիստ սրտով ապրիմ իսլամ թուրքերուն
քով : Ըմմա, այդ « տին քարտաշ » ները անանկ զուլումներ բերին
գլխուս, որ քեաֆիր Մոսկոֆը փնտուել տուին : Օրին մէկը, փողոցէն
անցած ատենս, տեսայ որ կահպէ մը վէճի բռնուած է քալսըմ մը
մարդոց հետ : Ասոնք իր երեսին կուտային որ կեալուրի մը սեվտա-
լամիշ եղած է : Ատ էտէպսիզը ի՞նչ պատասխան տայ կը հաւնիս .
« Ա՛յ հերիֆնե՛ր, ի՞նչ գահլէս կը տանիք պարապ տեղը : Ո՞՞, Թա-
թարի հետ չեմ պառկած, Հայու մը հետ ժամանակ անցուցած եմ » :
Երբ այս լսեցի, ա՛լ ատ մեմլէֆէթը չկեցայ, շունչս թրիմ առի նորէն :

Ես ծանր կեցայ, բաւականացայ միայն գլուխս շարժելով,
« հա՛շա, հա՛շա » մը մըմուռէն քթիս տակէն, բայց երբոր հեռացաւ,
կուշտ ու կուռ խնդացի Թաթարին միամտութեան վրայ :

**

Օրին մէկը շատ զուարճալի դէպք մը պատահեցաւ, կ'արժէ որ
այս մէկն ալ պատմեմ սիրելի ընթերցողներուս : Զմբան եղանակին՝
Յոյն մը եւ թուրք մը եկան մեզի, որ ըմբշամարտի հանդէս մը
սարքեն խանին կառատան մէջ : Մենք համաձայն եղանք ու թոյլ
տուինք որ այդ անարժաթ մարդիկը կիւլէշ բռնեն եւ իրենց ծակ
գրպանը լեցնեն :

Մեր կառատունը ընդարձակ էր. չորս կողմէն քանի մը հարիւր
հոգի եկան, 4-5 կողէկ վճարելով մտան ներս : Յոյնը խոշոր կազմ
ունէր, մինչ թուրքն ըսես մանրիկ մարդ մըն էր, վրան հոգի չկար :
Չէնց որ իրարու կպան, հսկան իր մրցակիցին մէջքէն բռնեց ու սկա-
ւառակի մը պէս գլորեց այն ձիւնակոյտին մէջ, որուն ներքեւը
կոյուղին պայթած էր... : Տեսնելու բան էր. խեղճ թուրքը ոտքէն
մինչեւ մազերուն արմատը թաթխուած էր գարշանքի մէջ եւ ողբա-
լիօրէն կը փռնչէր : Մահմետականները երբ ասիկա տեսան, կատղե-
ցան եւ զիս յանցաւոր նկատեցին : Ես կծիկը դրի, գացի պահուեցայ
Մարալի մսուրին մէջ, եթէ ոչ բղիկս պիտի հանէին :

**

Մօտաւորապէս աւելի քան հինգ տարի Եալթայի շրջանը ապրելէ
ետք, եղբայրներէս զատուեցայ եւ գացի Սոչի : Հոն կեցայ երեք
տարի, այնուհետեւ գացի հաստատուիլ Թուափսէ, ուր օթեւան մը

եւ կաթնատուն մը կը բանեցնէի երկու ընկերներով : Յաջող էր գործս , շատ գոհ էի եւ կեանքս կը սահէր բնականոն կերպով :

Հոկտեմբերեան յեղափոխութեան կերենսկիի կուսակցութիւնը կ'որոշէ Թուափսէն կազմակերպել , բուլշեւիկներուն դէմ պայքար մղելու համար : Մասնաճիւղին նախագահը կը կանչէ դաշնակցականները ու կ'ըսէ .

— Դուք ալ մեզի պէս Սոցիալ յեղափոխականներ էք , հետեւաբար մեզի հետ պէտք է ճակատ կազմէք բուլշեւիկներուն դէմ :

Դաշնակցական պետերէն Ա . Պապախանով եւ Ս . Մելիքեան խօսք կուտան որ վաթսուն հոգի պիտի տրամադրեն : Յիշեալ գործիչները եկան մեր պանդոկը , որպէսզի տղաքը համոզելու ճար մը գտնեն : Գործի ընկերներէս մէկը դաշնակցական էր . շատ լուրջ երիտասարդ մը , որ ինծի ըսաւ թէ՝ « Ժողով եւայլն չկայ » : Վեր ելայ , ի՞նչ տեսնեմ . 25 հոգի հաւաքուած , ահագին վէճի բռնուած են : Խօսք ուղեցի , դարձայ դէպի նախագահը ու ըսի .

— Այս ձեր քայլը կեղրոնին հաւանութեամբ է :

— Կեղրոնին հարցնելու պէտք չկայ , այստեղ մենք կ'ապրինք , մեզի կ'իյնայ վճռել , պատասխան տուաւ Սարգիս Մելիքեան :

— Ատիկա օրէնքէ դուրս է , յարեցի սրտնեղած :

Տեսայ թէ կիրքն է որ կը խօսի , ու ի վերջոյ գործը կրնայ կռիւի յանդիլ :

— Կը խնդրեմ որ դուրս ելլէք պանդոկէն , ըսի ճարահատ :

Ոչ մէկը տեղէն չարժեցաւ : Ասոր վրայ , շուրջս ակնարկ մը նետեցի եւ բաւական մը Արեւմտահայեր նշմարեցի ժողովականներուն մէջ :

— Տաճկահայերուն անարժանաբար խորհուրդ կուտամ որ չմասնակցին այս ժողովին , վրայ բերի անուշութեամբ : Հսկայ Ռուսաստանը ոտքի ելած է , մենք ոչինչ կ'արժենք այդ յեղափոխութեան մէջ :

Ժողովականները յամառեցան դուրս չելլել : Ես իջայ կաթնատուն : Գործի ընկերներէս մէկը խոստացաւ ճամբու դնել ինքնակոչ հիւրերը : Ժամ մը վերջ եկաւ .

— Ախպե՛ր ճան , դուն գնա կեցիր պանդոկը , ըսաւ ինծի Թախանձագին :

Վեր ելայ , տեսայ որ բազմութիւնը քաշուած է : Զրոյց ելաւ որ Կարմիրները դէմէն կուզան : Շատ չանցած , գործի ընկերս՝ Հրանդը եւ Ս . Մելիքեանը եկան աճապարանքով եւ լուր բերին թէ « Բուլշեւիկները մօտեցած են » :

Նոյն վայրկեանին հեռաձայնը հնչեց . ձեռք առի ընկալուչը :

— Ալլօ՛ , ի՞նչ կ'ուզէք , հարցուցի սրտատրոփ :

— Շո՛ւտ , Հայերը գէնքերն առած թող դան , պատուիրեց դէմինս :

— Ի՞նչ Հայ , ի՞նչ գէնք . . .

— Այդտեղ վաթսուն Հայ պիտի ըլլայ :

- Բա՛հ, այստեղ Հայ ըլլալով մինակ ես կամ:
 - Ո՞վ ես դուն:
 - Այս պանդոկին տէրը:
 - Հող ժողովուած Հայերը ի՞նչ եղան:
 - Պապախանովին հարցուր, թիւ 63. ես վեր ելայ եւ չթողուցի՞ որ ժողով ընեն:
 - Մելիքեանը հո՞գ է:
 - Նոյն միջոցին այս վերջինը դէմէն փոփոսաց.
 - Ամա՛ն, քեռի՛, լուր մի՛ տար...
 - Հոս մարդ չկայ, պատասխան տուի, պարզապէս խնայելու համար անխոհեմ գործիչին:
- Մեր խօսակցութիւնը այսպէս վերջ գտաւ Կերենսկիի տեղւոյն մասնաճիւղի պետին հետ:

**

Քիչ վերջը Կարմիրները մտան քաղաք: Պապախանովի եւ այլոց այդ անխորհուրդ քայլը բաւական վնասակար եղաւ, որովհետեւ եկւորները սկսան դէշ աչքով նայիլ մեր վրայ: Ռուսական յեղափոխութեան ժամանակ, ուրիշ տեղեր ալ գտնուեցան Հայեր, որոնք այս կարգի սխալներ գործեցին եւ չարաչար տուժեցին: Օրինակ, Սոչիի եւ այլ շրջաններուն մէջ քանի մը հայ երիտասարդներ զոհ գացին:

Ուրեմն, թուափսէն խաղաղ կերպով գրաւեցին բոլշեւիկները, ու քիչ շատ տանելի կեանք մը ստեղծուեցաւ քաղաքին մէջ: Սակայն, կամաց կամաց սկզբնական օրերու հանդարտութիւնը վերջ գտաւ եւ ժողովուրդը սկսաւ նեղուիլ:

Տրապիզոնի կողմի ռուսական զօրքը նաևով կուգար թուափսէ, որպէսզի շոգեկառք առնէ: Դժբախտ օր մը, նոյն ճանապարհով կամուրջ եւ նաւահանգիստ շինող Ծրդ « Սափորնի Պաթայոն »ը եկաւ: Այս բանուոր զօրքերու գումարտակը երբ նաւէն դուրս ելաւ, առանց այլեւայլի ուղղակի մտաւ մեր օթեւանը ու գրաւեց նստաւ մէջը: Մեզի՝ չէնքին օրինաւոր տէրերուս, մէկ մէկ սենեակ տուին...

Շունը չէր ճանչնար իր տէրը: Ամէն օր մարդ կը գարնէին: Նոյն իսկ եօթը թրքուհիներու ծախուիլը տեսայ շուկային մէջ: Ահագին ապրանք լեցուած էր հոն. շաքար, հագուստ, Տրապիզոնի ծխախոտ եւ մեծ քանակութեամբ թրքական դրամատոմս: Մարդ չէր առներ այս դրամատոմսը, որովհետեւ շատերուն միտքն էր 77ի պատերազմին տաճկական պետութեան սնանկացումը եւ կը վախնային պատմութեան կրկնութենէն:

1918ի Փետր. 4ին, ցնցող կոչ մը երեւցաւ հայ մամուլին մէջ, Անդրանիկի եւ Աւետիս Ահարոնեանի ստորագրութեամբ. — « Անճի-

փայլը մեր դրանն է »: Պարտադիր զինուորութիւն 18-40 տարեկան անխտիր:

Մեծ եռուզեռ մը ծայր տուաւ: Զինուորական տարիք ունեցողները ասդիէն անդիէն հաւաքուեցան Թուափսէ: Ճգնաժամային այդ օրերուն, մեր ամբողջ ճիգերը լարած սկսանք կազմակերպուիլ: Հայոց վարժարանը տրամադրուեցաւ եկեղեցիներուն:

Չմոռնամ ըսել որ անկէ առաջ, Յունուարի վերջին շաբթուն, Սարգիսեան անունով ազգային մը Օտեսայէն շատ մը կամաւորներով եւ ռազմանիւթի կարեւոր քանակով մը ժամանեց Թուափսէ: Որովհետեւ շոգենաւ չկար, բաւական մը սպասեց: Չար բախտէն, օրին մէկը Արմաւիրէն եկաւ համայնավար խմբակ մը, որ « Սորոքին » կ'ըսուէր: Այս մարդիկը կողոպտեցին Սարգիսեանի ամբողջ ռազմամթերքը, զինաթափ ըրին հայ կամաւորները: Մինչեւ այն ատեն ասոնցմէ երեսուն հազար հոգի արձանագրուած էին մեր տոմարին մէջ:

**

1918ին, կարծեմ Փետրուարի սկիզբի օրերուն, « Քսենիա » շոգենաւը խարխախ նետեց Թուափսէի առջեւ: Իմացանք որ Զամալեանը մէջն է. Օտեսա պիտի երթար, անկէ Գերմանիա անցնելու համար: Անմիջապէս ժողովի նստանք եւ որոշեցինք զինքը հրաւիրել որ մեզի դասախօսութիւն մը տայ ազգային հարցերու շուրջ: Սակայն, մեր նախագահ Ատամոֆը նախապէս հեռաձայնեց շոգենաւային գործակալութեան եւ ստուգեց որ նաւը հինգ ժամ պիտի մնայ մեր քաղաքը: Երբ ասիկա լսեցինք, երկու պատգամաւոր զրկեցինք դաշնակցական գործիչին մօտ: Մինչեւ իր ժամանումը, մեր նախագահը հարցարան մը պատրաստեց:

Զամալեան երբոր եկաւ հաւաքավայր, սիրալիր մեր ձեռքը թօթուեց: Մեր նախագահը, — որ Ղարաբաղցի պատկառելի մարդ մըն էր, — դաշնակցական գործիչին երկարեց թուղթը, որ ունէր հետեւեալ բովանդակութիւնը.

Ա.— Մենք որ ազգովին ոտքի ելած ենք, մեզի եւրոպական պետութեանց կողմէ ունէ երաշխիք տրուած է:

Բ.— Ո՞րչափ զօրքով կարող ենք Հայաստանի ճակատները պահել:

Գ.— Թիկունքը ապահով է:

Դ.— Պարտադիր զինուորութիւնը չյարգողներուն դէմ ի՞նչ միջոցներ ձեռք առնուած են:

Զամալեան վերցուց հարցարանը, քիչ մը մտածեց ու սապէս պատասխանեց.

— Այո՛, երաշխիք տրուած է: Եւրոպայի մեծերը մեզի ըսին.

« Գուք՝ Հայերդ, թէ որ 2-3 ամիս մը ոռւսական ճակատը բռնէք, ձեր Հայաստանը երաշխաւորուած է »:

« Վաթսուն հազար զօրքով, ես ձեզ վստահեցնում եմ որ կարող ենք ճակատը պահել: Մենք եթէ երզնկան ձգեցինք եւ Մամախաթուն քաղուեցանք, դա ուղմագիտական նկատումով է:

« Նմանապէս, թիկունքը ապահով է: Ատրպէյճանցիք չէզոք պիտի մնան, իսկ Վրացիները Բաբերդէն մինչեւ Պաթումի դիժը պիտի բռնեն: Բաբերդի շրջանէն մինչեւ Վան մեր վրայ կ'իյնայ: Թուրք չի կրնար մեզի դէմ կռուիլ:

« Գալով չորրորդ հարցումին, ես ձեզ ասելու եմ որ ամէն միջոցի կարող ենք դիմել դասալիքների դէմ: »

Արշակ Չամալեանի մեկնումէն 3-4 օր վերջը, Սեւաստոփոլէն « Էֆրատ » շոգենաւը եկաւ: Պ. Քիրէմիտճեան երեք հազարէ աւելի կամաւորներով, ուտելիքով եւ ահագին ուղմամթերքով մէջն էր: Բաւական կամաւորներ կային Թուափսէի մէջ. ես ալ արձանագրուեցայ եւ բոլորս մէկտեղ մտանք նաւ: Մեր ճամբորդութիւնը 18 ժամ տեւեց մինչեւ Պաթում:

Վրացիները մեզի ըսին թէ՝ « Թրքական զօրքը մօտեցած է Պաթումի, գերման օդանաւ մը կը պտտի քաղաքին վրայ »: Իրենց ուղածն էր, որ երթայինք Թուրքերուն դէմ կռուելու, բայց Պ. Քիրէմիտճեան կարեւորութիւն չտուաւ:

Պաթումի մէջ իմացանք որ Կարինը ինկած է, Թուրքերը հասած են Սելիմ Բէօյ, Կարսէն 35 քիլոմետր անդին: Մեր հարցումին վրայ, այդտեղի Հայերը մեզի ըսին որ Կարինը մօտաւորապէս ութն օր առաջ դրաւուած է: Պարզ հաշիւ մը ընելով, տեսանք որ Չամալեանէն բաժնուելնիս այդքան օր կ'ընէ արդէն...

Պ Քիրէմիտճեան հարկ եղած պատրաստութիւնները տեսաւ: Մտանք կառախումբէն ներս, գնացքը ճամբայ ինկաւ դէպի Թիֆլիզ: Ճանապարհին բաւական Հայեր դուրս ելան ու ա'լ չվերադարձան: Մինչեւ որ Վրաց մայրաքաղաքը հասանք, հազար հոգի մը պակասած էին այդ « կամաւոր »ներէն...

Սոսկալի կացութիւն ստեղծուած էր Թիֆլիզի մէջ: Զօր. Անդրանիկ Կարինէն վերադարձած, հայ ժողովուրդին մէջ երկպառակութիւնը եւ բարոյալքումը ծայր տուած էր: Կուսակցական պայքար, Թրքահայի եւ Ռուսահայի խնդիր, եւայլն: Մեր թշնամիներուն եւ նո'յնքան ալ մեր դրացիներուն ուղածն ատ էր արդէն: Մեր հրամանատար Քիրէմիտճեանը դացած համոզած էր զօրավարը եւ խօսք առած իրմէ: Մեզի լուր եկաւ որ այսինչ ժամուն հաւաքուինք քաղաքին գինարանին առջեւ: Մտածեցէք անգամ մը, 12.000 Տաճկահայ էինք, բան գործ ձգած եկած էինք պատասխանելու հայրենիքի կոչին:

Վերջապէս, Անդրանիկը երեւցաւ զօրավարի համազգեստով, որոշեալ տեղը կանգնեցաւ Քիրէմիտճեանի կողքին: Այդ վայրկեանին

յիշեցի հերոսին կեանքին զանազան դրուազները, մանկութեան օրերէն մինչեւ կարնոյ կռիւները: Թէեւ իր նախնիքը Օղան գիւղէն էին, բայց 1700ի ժամանակ քաղաք եկած էին Թրքական հալածանքներէն փախչելով: Այդ գիւղը Գարահիսարի հարաւ-արեւելեան կողմը, Գայլ եւ Պուտու գետերու կազմած եռանկիւնին վրայ, լեռան մը կողերուն թառած էր, քաղաքէն երեք ժամ հեռաւորութեամբ: Օղանէն գաղթած յիսուն տնուորներէն մէկն ալ Անդրանիկի ընտանիքն էր: Մեր բնակարանը, — հետագային իւրացուած Ալատինենց կողմէ, — եղած էր զօրավարին տան երդիքը:

Մայրս լաւ դրացնութիւն ունեցած ըլլալով անոր ծնողքին հետ, ինծի կը պատմէր որ Անդրանիկի հայրը բարի մարդ մըն էր, իսկ մայրը շրջակայ Աներդի գիւղէն, քաջ, յանդուգն եւ շատ խելացի, թաղին կիներուն խորհրդատուն: Օր մը բաղնիքին մէջ Թրքուհի մը հայ կին մը կը ծեծէ, Անդրանիկի մայրը երբ ասիկա կը տեսնէ, մատակ յովազի մը պէս կը նետուի այդ անդամ կնոջ վրայ եւ անանկ փառաւոր տիպոց մը կը քաշէ, որ բաղնիքին ամբողջ ժողովուրդը խուճապի կը մատնուի եւ ա՛լ անկէ վերջ Թրքուհիները կը սկսին վախնալ իրմէ: Անտարակոյս, Անդրանիկ կանուխէն հեռացած ըլլալով տունէն, առաջին անգամն էր որ բախտը կ'ունենայի լսելու Գարահիսարի առիւծին խօսիլը.

— Հա՛յ ժողովուրդ, ձեզմէ մեծապէս շնորհակալ եմ որ մեր կոչին պատասխանեցիք, աւելի քան ինչ որ կը յուսայի: Հայ ազգին հայրենասիրութեան մասին որեւէ ըսելիք չունիմ: Հիմա մէկ խնդրանք մը ունիմ, այս խնդրանքիս պէտք է ականջ կախէք: Հայրենիքի սիրոյն համար, ձեզի ինչ որ ըսեն պէտք է ընդունիք, որովհետեւ ես պիտի չկրնամ դալ:

Դժգոհութեան ալիք մը ծայր տուաւ: Ժողովուրդը խռոված պոռթկաց ու մէկէն ամէն կողմէ աղաղակներ բարձրացան.

— Ո՛չ, մենք ձե՛զ կ'ուզենք, զօրավա՛ր:

— Տղա՛քս, իմ դէմս հակառակութիւն կայ, սեպեցէք թէ ես մեռած եմ. ազգին շահը ամէն բանէ վեր է: Դուք ամէն տունէ մէջ մէկ ծաղիկ մնացած էք. եթէ ես ձեզ առնեմ տանիմ, ամէն ինչ ինձմէն պիտի ուզէք, ուտելիք, հագնելիք, ռազմամթերք, եւայլն: Հակառակութեան համար ասոնցմէ ոչ մէկը ինծի պիտի տան: Այդ մարդիկը՝ նապաստակ թուրքերը առիւծ դարձուցին: Եթէ ես ձեզ առնեմ տանիմ, շարադէպ անակնկալներու պատճառ դառնամ եւ դուք կոտորուիք թշուառութենէն, իմ ճակտիս պիտի փակցուի դաւաճանի խարանը պատմութեան մէջ:

Անդրանիկի այս յոռետես յայտարարութեան վրայ, Քիրէմիտ-ձեան վեր կեցաւ տեղէն ու ըսաւ.

— Զօրավա՛ր, մենք ռազմամթերք ալ ունինք, ուտելիք ալ ունինք:

— Գիտե՛մ, դիտե՛մ, արդէն ըսիր ինձի ինչ որ ունիք. բայց քու ունեցածդ երեք ժամուան սլաշար է սլատերազմի մէջ...

Անդրանիկի քովը կանգնած էին քանի մը ոռու սպաներ: Չօրավարին խօսած ժամանակ, Քիրէմիտճեան կամաց մը կը թարգմանէր եւ անոնք տեղեակ կ'ըլլային հերոսին մտածումներուն: Յանկարծ անոնցմէ մէկը ելաւ, դերասանական շարժումներով այսպէս խօսեցաւ.

— Մենք Սիպերիոյ խորերէն եկած ենք ձեր դժբախտ ազգին օգտակար ըլլալու համար: Մեր Չարն ալ դո՛ւք էք, մեր կեներալն ալ դո՛ւք էք...

Անդրանիկի սիրտը չդիմացաւ, դարձաւ դէպի կամաւորները ու հրահանգեց.

— Չորեքշաբթի ամէնքնիդ այստեղ արիք:

Իրապէս այդ օրը բոլորս գացինք զինարանին առջեւ: Չօրավարը եկաւ ինքնաշարժով, մեզի կարգի կանգնեցուց եւ 12 հազար կամաւորներուն մէջէն 2800 հողի ընտրեց: Յետոյ սլատուիրեց ազատ ձգուածներուն որ իրենց զէնքերը՝ զէնք չունեցող զինուորներուն տան: Այդպէս ալ ըրին:

Անդրանիկ մեզի ի վերջոյ ըսաւ.— « Դուք գացէք ձեր գործին: Գալով շոկուած զինուորացուներուն, թող երթան սլատրաստուին, այսինչ օրը պիտի մեկնինք »:

Քանի մը օրէն մեր ընկերները ճամբու դնելու գացինք: Ես այն ատեն կ'ապրէի ընկերոջ մը հետ Թիֆլիզ, Պուշկինսկի պարտէզին մօտ, Կաստինիցա Տվոուցով: Մինչեւ Կարսի իյնալը պահեցի սենեակս:

Ազգ. հերոսին վրայ շատ բան կը սլատմուի: Տխուր դէպքերու շարքին, ահաւասիկ դուարձալի դրուագ մը զօրավարին կեանքէն, որ ցոյց կուտայ իր արհամարհանքը « աշխրբի բաներ »ուն վերաբերմամբ:

Անդրանիկ երբոր Ղարաբաղ կը գտնուէր, տեղւոյն հայրենասէր ազգայինները երկու հաւ կը նուիրեն, որպէսզի ուտէ: Խոհարարը կը մաքրէ, խնամքով կ'ուտէ այդ հաւերը, բայց երբոր եփելու մօտ կ'ըլլան, զօրավարին պահակները խօսքի կը բռնեն Քերոփէն, իսկ միւս երկուքը սուրինները կը կոխեն կաթսային մէջ եւ մէկը միւսին ետեւէն դուրս կը քաշեն հաւերը...

Կէսօրը անցած՝ Անդրանիկ քաղցած կը զգայ եւ կը սլատուիրէ խոհարարին որ ճաշը բերէ: Կայծակը քիչ էր մնացեր իյնար խեղճ Քերոփէի գլխուն, երբոր կը նշմարէ որ հաւերը չկան.

— Փաշա՛, կը մրմնջէ դողդոջուն ձայնով մը, հաւերը թոցուցած են:

— Հող չէ, անոնք ալ անօթի են, կ'ըսէ մեր հերոսը: Խօ՛, ջուրն ալ չեն տարեր ա, շուտով հոս բեր:

Ստոյիկեան փիլիսոփայութեամբ մը, Գարահիսարի առիւծը հաց կը փրթէ հաւու ջուրին մէջ եւ լոկ մնջիկ կը ճաշակէ :

Մայքոսի ծխախոտի գործարանատէր մը՝ Թերզիօֆ, 1917ին ճաշի կը հրաւիրէ Անդրանիկը, որ այդ միջոցին Ռոստով էր : Երբ ան ներս կը մտնէ ճաշասրահէն, ազգ. հերոսը ափ ի բերան կը մնայ արքայական սեղանի մը ճոխութիւնը տեսնելով .

— Պարո՛ն Թերզիօֆ, ես այս սեղանին արժանի չեմ, կը բացառանչէ գայթակղած :

— Ինչո՞ւ համար :

— Էջմիածնայ պարսպներուն տակ հայ դաղթականներ սովահար



ԱՆԴՐԱՆԻԿԻ ՎԵՐՋԻՆ ՆԿԱՐԸ

(Իր տիկինը եւ Տ. Գարեգին քահ. Տէօվլէթեան)

պիտի մեռնին, իսկ ես այսպիսի սեղանի մը առաջը նստած հա՞ց ուտեմ . . . ես այդ բանը չեմ կարող տանիլ, կոկորդէս վար չերթար :

— Զօրավա՛ր, այս սեղանը ձեզի համար է : Ինչ կը վերաբերի

գաղթականներուն, մենք մեր դժբախտ հայրենակիցներին չենք մոռնար. ահաւասիկ հարիւր հազար բուպլիի չէք մը նրանց համար:

Թուափսէի մեր հայրենակիցներն ալ ուզեցին Անդրանիկը պատուել, բայց հերոսը ժամանակ չունէր, ուստի խորհուրդ տուաւ մեր պատգամաւորներուն որ գաղթականներուն օգնեն: Մենք ալ չորս հազար բուպլի զրկեցինք: (Այն ժամանակ ռուսական օսկին 45 բուպլի էր):

Այդ հերոսը արտասահման գտնուած միջոցին, վայրկեան մը իսկ աչքէ չհանեց իր թշուառ ազգակիցները եւ ամէն կերպով օգտակար եղաւ անոնց: Նոյնիսկ 1921ին, մեծ քանակութեամբ կտաւ, հագուստ, ուտելիք եւ խտացած կաթ զրկած էր Հայաստանի ժողովուրդին: Այդ ծրարները երբոր Պաթում հասան, Մշեցի կիները գացին որ բաժին վերցնեն. — « Անդրանիկ փաշէն զմեզ ի զրկեր » ըսելով: Կառավարութիւնը արդիւնեց եւ կապոցները ուղարկուեցան Հայաստան:

Անդրանիկի մահէն վեց ամիս առաջ, 1927ի դարնան, եղբայրս այցելութեան կ'երթայ հերոսին, Քալիֆօրնիոյ իր ագարակը: Տխուր մտածումներէ տարուած, Անդրանիկ իր սիրտը կը պարպէր այդ օրը.

— Տէ'րտէր, մենք ինչ որ ըրինք, ո'չ Պուլկարները ըրին, ո'չ Սերպերը եւ ոչ ալ Յոյները: Միայն թէ բախտ չունեցանք, ո'չ մէկ բարեկամ. եթէ բոլշեւիկ յեղափոխութիւնը տարի մը եւս ուշանար, մենք ազատած էինք:

Տէր Գարեգին չկարենալով թափանցել անոր թաքուն մտքին, երբոր զարմանքով կը նայի Գարահիսարի առիւծին, այս վերջինը կ'աւելցնէ.

— Մենք այն ժամանակ փայտով պիտի մտնէինք Հայաստան. ուտելիք բացարձակապէս չկար, Թուրքերը անօթի պիտի մեռնէին...

Անդրանիկի մահէն 27 տարի վերջն ալ, ցաւօք սրտի նկատած եմ որ ծուռ աչքով նայողներ կան իր վրայ: Հերոսը ո'ր կողմն ալ դարձնես, հերոս է: Սակայն, մեր ազգին մէջ միշտ ալ ցեցեր չեն պակսիր. ես այդ տխուր երեւոյթը հաստատեցի Պ. Վազգէն Անդրէասեանի մէկ զեկուցման ժամանակ, որ նուիրուած էր Անդրանիկի: Շատ բան կրնայի ըսել, բայց նախամեծար համարեցի լռութիւն պահել: Ամենեւին փափաքող չեմ սանդին մէջ ջուր ծեծելու կուսակցական ամուլ վէճերով, որովհետեւ Սփիւռքի հայութիւնը աւելի քան երբեք համերաշխութեան պէտք ունի: Չեմ մոռցած նաեւ ուրիշ պարոն մը, որ զօրավարին շիրիմին վրայ խօսած ժամանակ չքաշուեցաւ հետեւեալ խօսքերը սպրդեցնել. — « Որչափ որ Անդրանիկը սայթաքած է, մենք նորէն կը դուրդուրանք իր դամբանին վրայ »:

Հայ ազգը 500 տարին անգամ մը հազիւ կը ծնի այդ տեսակ հերոս: Անդրանիկը այն առասպելական թռչունն է, որ իր սիրտը



ԱՆԴՐԱՆԻԿԻ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

բղքտած է, իր ձագերը սնուցանելու համար: Հետեւաբար, այս աղբային հերոսին հասցէին քար գլորողները, ամէնէն առաջ իրենք զիրենք է որ կ'անպատուեն:

Վերջին աշխարհամարտի յաջորդող տարիներուն, երբ ողբացեալ թերզիպաշեան կը վերադառնար Հայաստանէն, անգամ մը ինծի հանդիպած էր: Պահ մը կաթողիկոսի ընտրութեան անդրադառնալէ վերջ, Սասունցի Դաւիթ մեքենազէն զօրաբաժնին խօսքը դարձաւ: Ռամկավար գործիչը ըսած էր պետական բարձր պաշտօնատարի մը.

— Ի՞նչու համար առասպելական Սասունցի Դաւիթի մը համար այսպէս ծախքեր կ'ընէք, երբ անդին իրականը կայ, որպէս Հայուն ուժը մարմնաւորող, — Զօր. Անդրանիկը:

— Գիտե՛նք, գիտե՛նք, կը պատասխանէ պաշտօնատարը ամենայն պարզութեամբ: Ատոր ալ ժամանակը կայ:

Անդրանիկի յիշատակը աղարտողներուն միակ պատասխան ունիմ տալիք. — Սասունցի Դաւիթը առասպելական ոգի մը չէ, այլ Զօր. Անդրանիկը ի՛նքն է:

Աւագ ուրբաթ օր, երկու տոմսակ ճարեցի բարեկամի մը շնորհիւ եւ ճամբայ ինկանք դէպի Փոթի: Զատկի առտուն հասանք Սոխում, որ բուշեւիկներու ձեռքն էր: Հոն ամիս մը մնացի ազնիւ ընկերոջս Հրանդ Թորամանեանի հետ: (Գարահիսարցի հռչակաւոր ճարտարապետին եղբորորդին):

Վերջապէս դացինք Թուափսէ: Գէշ աղէկ դործի ձեռնարկեցինք. կ'երթայինք ուրիշ քաղաքներ բաներ մը կը գտնէինք եւ ոտքի վրայ առեւտուր կ'ընէինք:

Կովկասահայ գաղթականութիւնը սկսաւ դալ Փոթի-Թուափսէ ճանապարհով: Մենք ստիպուեցանք կազմակերպուիլ, ընդհանրապէս առադաստանաւով եկող այդ տարազիրները խնամելու, կերակրելու եւ այլուր ճամբու դնելու համար: Պաթումի կողմէն նաւ մը որ երեւէր, կը շտապէինք քարափ. անպատճառ հայ գաղթական կ'ըլլար փախստականներուն մէջ:

Օր մը առադաստանաւ մը նշմարեցինք: Մեր կազմակերպութենէն ընկերոջ մը հետ ուղղուեցայ ծովեզերք. երբոր նաւը մօտեցաւ քարափին, հարցուցինք թէ՛ « Հայ կա՞յ մէջերնիդ »: Պատասխանը չուշացաւ. — Ե՛ր հողի: Մենք ալ ըսինք իրենց որ « Թող հող չընեն, չուտով դուրս կը հանենք »:

Մէկ մըն ալ ծեր կին մը դէմէն. — « Ա՛խ, եթէ երկու ճուտ խաղող ըլլայ, պիտի չմեռնիմ »:

— Անհո՛ւք եղիր, մայրի՛կ, հիմա կը բերենք, եղաւ մեր պատասխանը:

Մեր տրամադրութեան տակ երեք ժամ ունէինք. մինչեւ որ բոլոր ձեւակերպութիւնները լրանային ու տարազիրները կարենային դուրս ելլել: Երբոր կ'երթայինք հաց բերելու, ճամբան առջեւս դրամ տեսայ եւ վերցուցի: Ընկերոջս ըսի. — « Ասիկա գաղթականներուն բախան է »:

Բաւական կարեւոր գումար մըն էր: Մարդ զլուխ երկու Փունտ հաց եւ մէկուկէս Փունտ ալ խաղող առինք, տարինք տուինք ամէնէն առաջ այդ պառաւին եւ նաւուն ամբողջ հայ գաղթականներուն:

Վերջապէս դուրս հանեցինք զանոնք եւ տեղաւորեցինք կայարանին մօտակայ մէկ շէնքին մէջ: Յաջորդ օրը, հիւանդութիւն մը ծայր տուաւ անոնց մէջ, երկու հողի մեռան ծերերէն: Ստիպուած բժիշկ բերինք. յետ քննութեան խմացանք որ գաղթականները օրերով անօթի մնալով իրենց աղիքը տկարացած եւ անոր զոհը դարձած են: Բժիշկը դեղագիր տուաւ եւ անոր յանձնարարած դարմաններով հիւանդութեան առաջքն առինք:

Մեր դժբախտ ազգակիցներուն կեանքը չվտանգելու համար, ճաշարանի մը հետ պայմանաւորուեցանք: Երբոր ցամաք կ'ելլէին, հոն կ'առաջնորդէինք. պիսիուիթով տաք ապուր կը տրուէր իրենց

Եւ իրենք զիրենք կը գտնէին : Յետոյ կը ճամբէինք Եկատերինոտար (այժմ Կրասնոտար) , որ այն ժամանակ գաղթականներու կեդրոնն էր :

Վրացիները եկան ու քաղաքը գրաւեցին : Այդ շրջանին Տոնի եւ Քուպանի Ղազախները ոտքի ելան , կրօնական հալածանքներու պատճառով , Զօր . Ալեքսիէվի (*) ղեկավարութեամբ : Չեռքերնին անցած ինը գաւառներու Կոմիսարները առաջ կանգնեցուցած՝ ըմբոստները հետապնդեցին բոլշեւիկ ուժերը : Ասոնք երկուքի բաժնուած՝ աշխատեցան ծովեզերքի եւ Նովորիսիսկի լեռնային ճամբով իրարու միանալ Արմաւիրի մէջ եւ ի վերջոյ յաջողեցան :

Ռուսերը առհասարակ բարեացակամ էին մեզի հանդէպ : Մեր տարագիրներուն հաց , բնակարան ու ձրի վակոն կը տրամադրէին : Իրենց հմազգեստը բաւական էր , որպէսզի սանձ մը դնէր Վրացիներու շահատակութիւններուն : Ինչպէս ըսի քիչ առաջ , Թուափսէի կարճատեւ գրաւման շրջանին , անոնք որչափ ալիւր ու ընդեղէն որ կար տարին եւ տեղը գինի լեցուցին : Թշուառութիւնը ծայր աստիճանին հասած էր այդ օրերուն : Հայ գաղթականները անօթի , խեղճուկրակ վիճակի մատնուած , կը մնային կայարանի մէկ մթերանոցին մէջ : Երբ ճաշարան երթայինք , հացի տեղ խաչած քրուփա (կորկոտ) կը բերէին մեզի :

Քուպանի Ղազախներէն հալածուած բոլշեւիկները յառաջացան դէպի Թուափսէ , մէկէն յարձակեցան Վրացիներու վրայ եւ սկսան ուղղակի ոմբակոծել կայարանը , որպէսզի շոգեկառքը չկարենայ ճամբայ ելլել : Սակաւաթիւ անձեր միայն կրցան սրծիլ , զօրքին մեծ մասը ծովը թափեցաւ : 75.000 կարմիր ձիաւորներ , եթէ չեմ սխալիր 1918ի Օգոստոսին , եկան քաղաքին տիրացին : Աննկարագրելի՝ տեսարան . խուճապ , սպանութիւն եւ թալան : Մտածեցէք անգամ մը , Թուափսէն երկու հեղ կողոպտուած էր արդէն , երրորդ անգամ մը եւս կ'արժանանար այդ բախտին . . .

Յաջորդ օրը , երեքշաբթի , մեր վարձած « Թայֆուն » նաւը մտաւ քաղաքին նաւահանգիստը : Չորս հողիի ապրանք կար մէջը . երկուքը՝ Ղարաբաղցի Հայերու , իսկ միւս երկուքն ալ իմ եւ ընկերոջս՝ Հրանդին : Այս վերջինը չէր եկած մեզի հետ , փոխարէն զրկած էր Առաքել անունով մէկը : Ղարաբաղցի պատուական ազգային մըն էր , ընտանիքի եւ զաւակներու տէր : Երբոր բոլշեւիկները նաւը գրաւեցին , խեղճ մարդը մնաց չոր գլուխ :

Ուրիշ քաղաքներէ ապրանք բերելու համար , Կոպերատիւի մակադէնին հետ համաձայնած էինք : Վարիչներէն առած թուղթով

(*) Ծերունի զօրավարը իր մահուան օրերուն չէր ուզած Վրացիներու երեսը տեսնել , իսկ ընդհակառակը սիրով ընդունած էր մեր պատգամաւորները ու ըսած անոնց . — « Հայե՛ր , զգո՛յ՛շ եղէք . Վրացիները մեզի դաւաճանեցին , ձեզ ալ կրնան դաւաճանել » :

կրնայինք ազատորէն ճամբորդել, ապրանք դնել ու եթէ գործակ-
ցականը չառնէր, այլուր հնարաւորութիւն ունէինք ծախելու:

Կոպերատիւին տնօրէնը չկար: Ուրախ եղանք, երբոր իմացանք
որ եկւոր բոլշեւիկներուն պետը Հայ մըն է, — Յովսէփով: Առաքելէն
պայմանագիրը առի, Լեւոն անուն ընկերոջ մը հետ դացի դրամա-
տուն, որ գրաւուած էր Կարմիրներուն կողմէ: Երբոր ներս մտանք,
ինը գրամեքենայ կ'աշխատէր, որովհետեւ նոյնքան կոմիսար կար...

Յովսէփովը հարցուցի պաշտօնեայի մը: Անվարան ցոյց տուաւ.
մօտը դացի ու բարեւեցի: Խեղճ Լեւոնին լեզուն վախէն բռնուեցաւ...:
Ես խօսք առի, որպէս վաւերագիր ցոյց տալով Կոպերատիւին տուած
թուղթը:

— Բա՛հ, այդ տեսակ թղթեր չատ ենք տեսել, ըսաւ կոմիսարը
հեղնական քմծիծաղով մը: Պէտք է շիտակ խօսիք, կարելի է բան
մը ընեմ:

Վաւերագրին վրայ ոչ իսկ նայուածք մը նետեց: Ես վերսկսայ
խօսիլ.

— « Թայֆու »-ին ապրանքները չորս հոգիի համար է: Ես առան-
ձին եմ, մէկը չունիմ, իմ բաժինս առէք: Բայց, այդ մարդոց ապ-
րանքը բարի եղէք վերադարձնել, զաւակներու տէր են. ահա՛ տեսէք
խեղճին լեզուն կապուած է:

Կ'երեւի թէ ըսածներս ազդեցութիւն գործեցին: Կոմիսարը դար-
ձաւ, մեզի նայեցաւ շեշտակի, ապա հարցուց.

— Քանի՞ կառքով կ'ելլէ:

— Ութը հատը կը բաւէ:

— Եթէ Կոպերատիւը չառնէ, ի՞նչ պիտի ընէք:

— Ուրիշին կը ծախենք եւ կ'ապրինք:

— Ես ձեր ապրանքները կուտամ, միայն թէ Վրացիի չլինի:

— Վրացիները եկան, այս քաղաքը կողոպտեցին:

Հայ կոմիսարը երկու հոգի կանչեց, դացինք նաւուն մէջէն մեր
ապրանքները դուրս հանեցինք եւ ութը կառքով ուղղակի տարինք
Գործակցականի վաճառանոցը:

Թէոդոսիայէն եկած այս ապրանքներուն մէջ կողով մը ընտիր-
խաղող կար, մօտ տասը քիլօ կը կշռէր: Չուզեցինք վար դնել մեզի
համար, այլ նախընտրեցինք նուէր ընել Յովսէփովին:

— Ընկե՛ր կոմիսար, ասիկա քեզի կը վայլէ, ըսի համարձակ
չեչտով մը: Շատ գոհ մնաց:

Թուափսէ մտած 75.000 ձիաւորները ախոռ դարձուցին քաղաքը:
Վրացիներու բերած ամբողջ գինիները թափեցին, ամէն տան առջեւ
եղ կամ ոչխար կը մորթէին...: Տեսարանը այնչափ սոսկալի էր, որ
ես չեմ կրնար նկարագրել իմ տկար գրիչովս:

Հարիւրի մօտ գաղթականութիւն կար, որ Վրացիներու պատ-

Ճառով թշուառութեան մատնուած էր: Անմիջապէս որ լսեցի թէ բոլշեւիկները պիտի մեկնին քաղաքէն, վազեցի Յովսէփովին քով ու բարեւեցի:

— Ի՞նչու եկար, հարցուց ինծի խիստ շեշտով մը:

— Դուք որ պրոլետարներու պաշտպանն էք, կը խնդրեմ որ տէր դառնաք կայարանին մօտակայ գաղթականութեան: Շուրջ հարիւր հողի են, ամենայետին թշուառութեան մատնուած. չէ՞ կարելի միասին տանիլ Արմաւիր. եթէ հոս մնան՝ պիտի մեռնին:

— Որչափ որ կան, թո՛ղ դան. հա՛յ ալ ունինք, դրա՛մ ալ ունինք:

Իրաւ ալ հայ կոմիսարը խօսքը բռնեց: Շաբաթ օր, ամբողջ այդ դժբախտ գաղթականութիւնը ժողովեց եւ միասին տարաւ:

Բոլշեւիկներու մեկնած օրերուն, ճանճերու սոսկալի արշաւ մը ծայր տուաւ Թուափսէի մէջ: Երկու օր տունը մնացինք. փողոց չէինք կրնար ելլել, ամբողջ օրը այդ աղտոտ միջատները կը քչէինք: Եթէ քանի մը օր ալ տեւէր, շատերը պիտի փախչէին քաղաքէն...: Բարեբախտաբար, հեղեղի պէս անձրեւ մը եկաւ. պատուհանները բացինք դուրս ըրինք ճանճերու բիւրաւոր զօրագունդը: Փա՛ռք Աստուծոյ, այդ փորձանքէն ալ պրծանք:

Երկու օր վերջ Ղազախները եկան, քիչ մը կարգ կանոն հաստատեցին: Վրացիներու ձեռքէն առին Սոչին, Խոստան, Ատիլէրը եւ գրաւեցին մինչեւ Կակուան:

Մեր ազգային գործերը գրեթէ անկազմակերպ վիճակի մէջ էին: Դաշնակցական մարմին մը կար, ան ալ ձեռնթափ ըլլալով, անկայուն կացութիւն մը ստեղծուած էր: Գերմանիոյ պարտութեան մասին կը խօսուէր:

Նոյեմբերի շրջանին Հրանդը քիչ մը տկարացած էր: Մտադրած էինք մնացեալ ապրանքը փոխադրել Սոխում: Կ'ուզէի ես երթալ, բայց ընկերս չթողուց եւ ինքը գնաց:

Չորս օր անցած էր այն օրէն ի վեր, ահա դիշերուան ժամը 10ին հեռագիր մը.— Հրանդը մահամերձ է: Անմիջապէս վազեցի շոգենաւային գործակալութեան գրասենեակը: Պէտք էր 24 ժամ սպասել. ճարահատ յաջորդ դիշեր նոյն ժամուն նաւ մտայ:

Ճանապարհը կէս եղած՝ կամրջակին վրայէն մտածկոտ ծովը կը դիտէի. մաքուր հազուած մէկը եկաւ քովս: Նաւուն մէջ հայ բարեկամ մը ունէի. երբ դիս տեսաւ, բարեւեց ու անցաւ գնաց: Ասոր վրայ, մօտս կանգնած մարդը դարձաւ ինծի ու հարցուց.— «Հա՞յ էք»:

Բնական է հաստատական պատասխան տուի: Մէկ քանի խօսքեր փոխանակեցինք. անձանօթը երբ իմացաւ որ ես Թրքահայ եմ, ուզեց հասկնալ ո՛ր քաղաքէն ըլլալս:

— Շապին Գարահիսարէն եմ, ըսի պարզօրէն:

— Մէջէ՞ն:

— Այո՛ :

— Ուրեմն, դուք այդ սրիկայ Անդրանիկին քաղաքի՞ց էք :

Չայրացած դարձայ դէպի այդ այլասերած մարդը եւ գոռացի երեսին :

— Դուն անպայման Հայ չես, հարազատ թուրք ես, որ ատանկ ցափոտուքներ կ'ընես : Իսկական Հայ մը այս տեսակ լիրբ խօսքեր երբեք դուրս չի տար բերնէն :

— Ե՞ս, ե՞ս... ամենապատուական Հայն եմ, թիֆլիզի Ներսիսեան վարժարանից շրջանաւարտ :

— Մե՛ղք այդ վարժարանին որ քեզի պէս հայանուն թափթփուքներ տուած է :

Պատիւին դպաւ, որպէս թէ ունեցած ըլլար, թշուառակա՛նը :

— Դուք մեզի թիւրքին հետ վատացրիք, պոռաց երեսս ի վար անամօթաբար :

— Բարեկա՛մ, մենք յանցաւոր չենք ատոր մէջ. թուրքը առհասարակ վատ է ու եթէ ձեռքէն դայ բոլոր Հայերը եաթաղանէ պիտի անցընէ : Միթէ՞ կը մոռնաս հայ-թաթարական ընդհարումները :

Արիւնը խուժած էր գլուխս, կրակէ յորձանք մը կ'անցնէր երակներէս : Անգուսպ փափաք մը ունէի մատներս կոխել թշուառականին կոկորդը, խեղդե՛լ եւ ծովը շարտել, բայց ընկերս եկաւ զիս համոզեց ու մէկդի տարաւ :

Առաւօտուն ժամը 10ին Սոխում հասայ : Տխուր մտածումներով պաշարուած՝ նաւէն դուրս ելայ : Ո՛վ Աստուած, արդեօք ընկերս ողջ պիտի գտնէի՞ : Դժբախտաբար նախատեսութիւնս իրագործուած էր. Հրանդ Թորամանեանը նոյն առտուն ժամը երեքին մեռած էր : Սրտիս կսկիծէն սկսայ լալ :

Նոյեմբերի այդ օրերուն, սպանիական կրիփի համաճարակ մը ինկած էր Սոխումի մէջ, որ ունէր 25.000 բնակչութիւն : Օրական 55-60 հոգի կը մեռնէր : Մտածեցէք անգամ մը, մարդը եկաւ իր կիներ թաղեց, միւս օրն ալ ինք մեռաւ : Քաղաքապետարանը Պարսիկներ բռնած էր, որոնք խոշոր փոս մը փորած՝ հոն կը լեցնէին զոհերը :

Սոխումի մեր հայրենակցական միութիւնը ժողովի հրաւիրեցի : Օրակարգի նիւթը այն էր, դժբախտ ընկերս պէ՞տք էր հասարակաց փոսը նետուէր, թէ թաղուէր դատ գերեզմանի մէջ : Ժողովականներէն մէկը հարց տուաւ թէ՛ « որչա՞փ դրամ ունի » :

— Եօթը-ութը հազար ըուպլի : Ընկեր Լեւոնն ալ գիտէ :

— Այո՛, հաստատեց այս վերջինը, ատկից աւելի չէ :

— Ո՛վ ունի Հրանդ Թորամանեանը, հարցուց ատենապետը :

— Մայր մը եւ երկու քոյր ունի Շապին Գարահիսարի մէջ : Չեմ գիտեր թէ ո՞ղջ են թէ մեռած : Յեղափոխական գործիչ Հրաչեայ Մարալի քեռորդին է :

Բոլոր այս մանրամասնութիւններուն տեղեկանալէ ետք, հայ-

րենսակցական միութիւնը որոշեց որ տարաբախտ Հրանդը թաղուի առանձին գերեզմանի մէջ:

— Իմ ալ փափաքս այդ էր, վրայ բերի ես, միայն թէ ուզեցի որ ձեր գիտութեամբ ըլլայ:

Ընկեր Լեւոնը նախապէս հեռաձայնած էր հիւանդանոց եւ տեղեկացած որ ողբացեալը հոն կը գտնուէր: Երբոր հասայ այնտեղ, տեղեկատու գրասենեակէն ինծի թելադրեցին որ վար իջնեմ եւ փնտռեմ: Այդպէս ալ ըրի, առ ի զգուշութիւն գաւաթ մը գոնեակ խմելէ վերջ: Միայն թէ՛ ստիպուած եղայ քառասունի չափ մեռելի երես բանալ, մինչեւ որ վերջապէս գտայ վաղամեռիկ բարեկամս: Համաճարակի այդ զոհերուն մէջ, մէկ հատիկ ձերմակ գլուխ չառսայ, բոլորն ալ երիտասարդ էին: Տղու մը պէս սկսայ լալ:

Հրանդին մարմինը եկեղեցի փոխադրեցինք: Մեռելական կարգը լրանալէ վերջ, երբոր դուրս հանեցինք դադաղը, Տէրտէրը ուզեց գիտնալ թէ՛ «ո՞վ է ննջեցեալին տէրը»: Երբ իմացաւ որ ես եմ, ըսաւ.

— Օրհնա՛ծ, եկեղեցին տղայ մը բերին, որ այս գիշեր մեռած է շողենաւին մէջ: Եթէ կարելի է, ձեր մեռեալին սնտուկը դրէք:

— Ամենա՛յն սիրով:

Վերցուցին կափարիչը: Ի՛նչ տեսնեմ, վերմակին մէջ փաթաթուած մատղաշ պատանի մը. ես այդպէս գեղեցիկ տղամարդու երբեք չէի հանդիպած: Յուզումէս սկսայ խենդի պէս հեկեկալ. նայեցայ որ Տէրտէրն ալ աչքերը կը սրբէ:

Քանի մը օր վերջ լուր եկաւ որ Գերմանիա պարտուած է, մէկ ժամէն անդլիական զրահաւորները պիտի գան: Վազեցինք ծովափ. իրաւ ալ մարտանաւերը դէմէն փրթան ու եկան խարխախ նետեցին քաղաքին բացերը: Անոնցմէ մէկը հեռացաւ, իսկ միւս երեքը բաւական մը մնալէ վերջ ուղղուեցան Պաթում: Մէկ ամիսի չափ Սոխում մնացի, յետոյ վերադարձայ Թուափսէ: Անմիջապէս ժողով ըրինք, ողբացեալ Հրանդին դրամները յանձնեցի մեր հայրենակցական միութեան: Իսկ ես ուրիշ ընկեր մը գտնելով, միասին դործի ձեռնարկեցի, որովհետեւ քիչ շատ կայուն վիճակ ստեղծուած էր շրջանին մէջ:

**

Աղղային սեւէ կազմակերպութիւն գրեթէ չկար Թուափսէի մէջ: Մինչդեռ, այդ փոխանցման օրերուն, աւելի քան երբեք զգալի էր այդ պահանջը: Ժամանակին Կովկասայ բարեգործական միութիւն մը գոյութիւն ունեցած էր, ծրագիրն ալ վաւերացուած ուսական իշխանութենէն: Մտածեցինք մէջտեղ հանել վաւերագիրը, ժողովի արտօնութիւն խնդրել ու մարմին մը ստեղծել: Ղազախներ էին, դժուարութիւն չյարուցին երբեք, պայմանով որ սպայ մը ներկայ գտնուէր:

Ժողովին օրը ութը հոգի միայն կար. սպասեցինք, ուրիշ մարդ-
մարդասանք չելաւ մէջտեղ: Ճարահատ ներողութիւն խնդրեցինք
ուս գնդապետէն եւ առաջարկեցինք որ բարի ըլլայ միւս շարաթ
գալու:

Ամէնքս ալ աշխատեցանք որ յաջորդ կիրակի տեղւոյն մեծերը
Ժողովի գան, դարձեալ ներկաներու թիւը նոյնչափ եղաւ: Երբորդ
անգամ երբ մեր փորձը նորէն ձախողեցաւ, գնդապետը ուզեց
գիտնալ թէ ծրագիր ունի՞նք: Երբոր իրեն ներկայացուցինք տպա-
գրեալ օրինակը, ուշի ուշով կարդաց եւ ըսաւ.

— Գուք այս ծրագրով ամէն օր ալ կրնաք ժողով ընել:

Գնդապետը ձգեց գնաց: Մենք սկսանք խորհիլ թէ ի՞նչ պիտի
ընենք: Ես ոտքի ելայ եւ խօսքս մասնաւորաբար ուղղելով Տրապի-
զոնցի երեք յարգելի անձնաւորութիւններուն, հետեւեալ առաջարկը
բերի. — Մենք այլեւս պարապ տեղը խորհուրդի չնստինք, այլ մեր
մէջէն ընտրենք դիւանը նշանակովի, կառավարութեան վաւերացնել
տանք եւ սկսինք գործի: Եթէ ոմանք դժգոհ մնան եւ մեզ չուզեն,
թող հրամմեն, իրենց կը յանձնենք մեր պաշտօնը:

Քանի մը հոգի ընդդիմացան, ապօրինութեան խօսք ըրին, բայց
եւ առարկեցի.

— Ժողովի չեկող մարդը իրաւունք չունի ձայն բարձրացնելու:

Վերջապէս տեղի տուին: Առժամեայ դիւանին առջեւ հսկայ
աշխատանք կը ներկայանար. մէկ կողմէն, թիֆլիզի համաճարակ,
որմէ բաւական Հայեր վարակուած էին. միւս կողմէ, Հայաստան
գացող ազգայիններու խուժումը: Ասոնք բոլորն ալ դրամի, ուտե-
լիքի եւ խնամքի պէտք ունէին: Անմիջապէս Թիֆլիզ դիմեցինք,
պէտք եղած օգնութիւնը հասցուցին: Կազմակերպութիւնը սկսաւ
գործել « Ազգային Խորհուրդ » անունին տակ. ծրագիր-կանոնագիր
մըն ալ խմբագրեցինք եւ վաւերացնել տուինք կառավարութեան:
Մեր ստացած իրաւունքներով, նոյնիսկ սկսանք շատ մը գաղթական
Հայերու ինքնութեան թուղթ եւ անձագիր տալ: Նոյն օրերուն,
Թուափսէ եկած էր նաեւ իշխան Արղութեանը, բայց շուքի տակ
ծածկուած՝ երբեք իր ո՛վ ըլլալը չէր յայտներ: Երբոր մէջտեղ ելաւ
իր ինքնութիւնը, թուղթերը շինեցինք, ամէն տեսակ դիւրութիւն
տուինք իրեն եւ մեծ պատիւներով ճամբու դրինք:

1919ի սկիզբները, Գնդ. Ճան Փոլատօֆ շարք մը հայ սպաներով
մտաւ Զօր. Տէնիքինի սպասարկութեան մէջ, որովհետեւ ուրիշ ճար
չկար: Այս կերպով, մեր զինուորականները կը ծառայէին Վրաստանի
սահմանէն մինչեւ Սոչի:

Հայաստանի կառավարութիւնը իր հերթին դիմեց սպիտակ
Ռուսերու հրամանատարին, որպէսզի արտօնութիւն տայ հայ սպա-
ներուն հայրենիք երթալու, որովհետեւ զինուորական «քատր»ներու
պահանջը զգալի էր: Զօր. Տէնիքին հրամանագիր մը հանեց, որ

հետեւեալ հրահանգները կը բովանդակէր. — « Այն հայ սպաները, որոնք կ'ուզեն իրենց հայրենիքին ծառայել, ազատ են մեկնելու իրենց ուզած ատեն »: Այս հրամանագիրը հրատարակուեցաւ օրուան կառավարութեան պաշտօնաթերթին մէջ:

Հայ սպաները երբ ասիկա կարգացին, դիմեցին մեր Ազգային Խորհուրդին, որ թուղթ մը գրեց տեղւոյն իշխանութեան: Ինծի վիճակուեցաւ Միութեան քարտուղարին հետ այդ դիմումագիրը տանիլ զինուորական Ատեան, բայց մեզի ըսին թէ « վերոյիշեալ հրամանը իրենց եկած չէ »:

Վերադարձիս եղածը պատմեցի մեր նախագահ Ազամովին, որ ինձմէ խնդրեց դարձեալ երթալ զինուորական Ատեան եւ արձանագրել տալ դիմումը տոմարին մէջ: Քարտուղարը բարեկամս էր, շատ սիրով ընդունեց առաջարկս եւ այնտեղ նշանակեց դիմումագիրս, թուականով միասին: Չեռնարկիս արդիւնքը երբոր իմացուցի Խորհուրդի պատկառելի նախագահին, գոհ մնաց ու ըսաւ. — « Շատ լաւ ըրիր, որովհետեւ օր մը պէտք պիտի ըլլայ »:

Հայ սպաները քանի մը անգամ եկան գացին, որովհետեւ բուլշեւիկները սկսած էին յառաջ խաղալ եւ մինչեւ Ռոստով հասած էին: 1920ի առաջին օրերուն, նորէն դիմեցինք զինուորական Ատեան, նոյն ժխտական պատասխանը ստացանք: Մենք ալ ստիպուած եղանք դարձեալ արձանագրել տալ մեր դիմումը տոմարին մէջ:

Ծնունդին Սարքովէն մեծ վաճառական մը եկաւ 25 վալոն ապրանքով: Քանի մը շաբաթ ետք, նաև մը գնեց ու կամաց կամաց ապրանքները հոն փոխադրեց: Բաւական մըն ալ ծախեց անգլիական եւ ամերիկեան դրամով: Վաճառականը իր ընտանիքով մտաւ շոգենաւ. նպատակն էր շուտով մեկնիլ, բայց նաւապետը երկու օր ձգձգեց...:

Մեծ պահքին երեքշաբթի օրը տեղացի բուլշեւիկները գրաւեցին Թուափսէն: Ասոնք Տէնիքինի զրկած 5000 զինուորներն էին, միւս կողմը անցած...: Անտանելի կացութիւն մը ստեղծուեցաւ քաղաքին մէջ: Հայ սպաներէն ինը հոգի եկան մօտս. — Քեռի' (*), մեզի դուն պիտի ազատես, ըսին ազաչողական շեշտով մը: Չէի կրնար մերժել իրենց խնդիրքը, բոլորն ալ պահեցի. Աստուծմէ մարդ չտեսաւ:

Ուկրայնացի վաճառականը բռնեցին, եկեղեցիի պարտէզին մէջ սպաննեցին: Մինչեւ անգամ ընտանիքին եւ օրօրոցի երախային չինայեցին, ամբողջ ապրանքներն ալ գրաւեցին: Իրիկուան դէմ ժամը 7ին պատերուն վրայ թուղթ փակցուցին, գացինք կարգացինք եւ վերահասու եղանք իրականութեան:

Նախագահ Ազամօֆին հանդիպեցայ նորէն, պատմեցի իրեն թէ՛

(*) Ինծի « Քեռի » կ'ըսէին Թուափսէի մէջ:

հայ սպաները ստիպուած եղայ վար դնել ու չեմ գիտեր ի՞նչ կրնայ ըլլալ հետեւանքը:

— Շա՛տ աղէկ, մենք այժմ պիտի կարողանանք փրկել այդ սպաներին, որովհետեւ զանոնք Հայաստան ղրկելու դիմումնագիրս արձանագրուել է տոմարին մէջ: Հիմա զնա քարտուղարին ասա որ մեր ընկերակցութեան ծրագիրը (*) առնէ ու էստեղ գայ:

Հայ սպաներուն իմացուցի Աղամօֆին լաւատեսութիւնը: Ծրագիրն առի եկայ նախագահին մօտ, ընկերակցութեամբ Արդուինցի Կարապետ Աւլարեանի, որ իր ուսումը ստացած էր Վենետիկի մէջ:

— Պարո՛ն քարտուղար, Յեղկոմի նախագահին գրիր ինչ որ ասելու եմ, սկսաւ Աղդ. Խորհուրդի նախագահ Աղամօֆը: « Մենք Հայերս դժբախտներին օգնող մի կազմակերպութիւն ունենք Թուրքի-սէի մէջ: Եթէ իրաւունք տաք, պիտի շարունակենք, իսկ եթէ մերժելու լինէք, պիտի դադրեցնենք ամէն գործունէութիւն: »

Կ. Աւլարեանի հետ գացի բոլշեւիկների կեդրոնը: Դիմումնագիրը եւ մեր ընկերակցութեան ծրագիրը ներկայացուցի յեղափոխական Կոմիտէի քարտուղարին, որ մեզի պատուիրեց ժամը 5ին նորէն հանդիպիլ: Մենք վերագործանք Աղամօֆի մօտ ու պատմեցինք եղելութիւնը, շատ գոհ մնաց:

Իրիկուան որոշեալ ժամուն ուղղուեցանք Յեղկոմի պաշտօնատունը: Կէս ժամի չափ սպասցնելէ ետք, մեզի կանչեցին ու ըսին. — « Գացէ՛ք, շարունակեցէք մեզի երբեք վնաս չունի »: Ծրագիրը վաւերացուցին, կնիքն ալ դարկին, առինք եւ ուրախ դուարթ եկանք:

Այս առաջին յաջողութենէն վերջ, մենք մեզի մտքերու փոխանակութիւն կատարեցինք, ինը հայ սպաները ազատելու մասին ճարմը գտնելու համար: Վերջապէս, ամէնքս մէկ որոշեցինք աղերսագիր մը ուղղել Յեղկոմին, հետեւեալ բովանդակութեամբ. —

« Տէնիքինը հետամուտ էր հայ սպաները ձեզի դէմ կռուի ղրկել բռնութեամբ, բայց Հայկական Հանրապետութիւնը խնդրած էր սպիտակ Ռուսերու ընդհ. հրամանատարէն որ մեր զինուորականները ազատ ձգէ եւ ան ալ արտօնութիւն տուած է: Ահաւասիկ Զօր. Տէնի-նիքինի պաշտօնաթերթը: Մենք այդ հրամանին վրայ յենլով, երկու անգամ դիմեցինք տեղւոյն իշխանութեան. դժբախտաբար թոյլ չտուին մեր սպաներուն որ մեկնին: Մենք մեր դիմումնագիրը արձանագրել տուած ենք տոմարին մէջ, կարող էք տեսնել անմիջապէս: Այդ հայ սպաները, որոնք չուղեցին ձեզի դէմ կռուիլ, հիմա մեր մօտ կը գտնուին եւ ինը հոգի են: »

Աղերսագիրը երեք հոգիով տարինք, Յեղկոմի մարդիկը կարգացին եւ գացին իրենց հնամանատարին քով: Քիչ մը վերջը եկան

(*) Բոլշեւիկներու առջեւ Բարեգործական ընկերակցութեան ծրագիրը կը գործածէինք, իսկ ճերմակ Ռուսերու առջեւ Աղգային Խորհուրդի:

ու սա պատասխանը տուին. — « Եթէ ձեր դիմումնագիրը արձա-
նագրուած է տոմարին մէջ, ըսել է շիտակ կը խօսիք » :

Տոմարը քերին եւ տեսան որ իրաւացի ենք: Ասոր վրայ նոր
իշխանաւորները հետեւեալ պայմանը դրին. — « Գացէ՛ք հոս բերէք
այդ ինը սպաները: Եթէ զօրքերը ըսեն որ մեզի դէմ չեն կոուած,
ազատ կը թողունք, կ'երթան » :

Մեր ընկերակցութեան պատուական ատենապետը՝ Պ. Յակոբ
Մաղլըմեան, այն ժամանակ մեզի պատուիրեց որ երթանք համոզենք
զինուորները, որ բարի վկայութիւն տան հայ սպաներուն մասին,
որպէսզի այդ խեղճերը փրկենք:

Ուրախ եղանք որ զինուորները Հայ էին: Երբոր իրենց պատա-
հեցանք, ի՞նչ տեսնենք. ահագին ապրանք բեռցուցած՝ նստեր թէյ
կը խմէին...: Անոնք իրենց աւարէն զինովցած, նախ հարց տուին
թէ ի՞նչ կ'ուզենք: Երբոր խնդիրը պարզեցինք, մեզի խստօրէն ըսին.
— « Ձեր առաջարկը մենք չենք ընդունիր » :

Մենք կրկին խնդրեցինք, ի վերջոյ հետեւեալ պայմանը դրին.
— « Մեր պետին ձեռքն է. եթէ ընկեր Վահանը ընդունի, մենք ալ
կուզանք, լաւ վկայութիւն կուտանք » :

Հայ զօրաց հրամանատարը Պոլսեցի էր: Բաւական քրտնեցանք
մինչեւ որ այդ ընկեր Վահանին համոզեցինք. — Այս յեղափոխութեան
վերջը չենք գիտեր, ըսինք անկեղծօրէն մեր սիրտը բանալով, կրնայ
ըլլալ որ դուք ալ այդ սպաներուն վիճակին ենթարկուիք: Քա՛ջ
գիտցէք որ ձեզ ալ մենք պիտի ազատենք » :

Մեր այս շիտակ խօսքերը իրենց ազդեցութիւնը գործեցին:
Վերջապէս մեր խնդիրքը ընդունեց ու հայ զինուորները անհրաժեշտ
վկայութիւնը տուին:

Դժբախտաբար ինը սպաներէն մէկը սպաննեցին: Ռուս զինուոր
մը Յեղկոմին առջեւ վկայեց թէ՛ « ես այս մարդը կը ճանչնամ.
Սոստայ քաղաքի ճամբուն վրայ չորս բոլշեւիկ մեռցուց »: Վկան իր
ըսածը կրցաւ հաստատել եւ հայ սպան իր կեանքով քաւեց իր ան-
խորհուրդ ընթացքը:

Մնացեալ ութը սպաները ազատ ձգեցին որ անոնք իրենց ուզած
տեղը երթան: Երեքը Նոր Նախիջեւանէն էին. անմիջապէս իրենց
ծննդավայր մեծ Սալա գիւղը մեկնեցան, իսկ միւսները՝ Հայաստան:
Այս սպաներէն մէկը բնիկ Կարսեցի էր, անունը Յովհաննէս Արարատ:
Երբոր 1920ի Յուլիսին Հայաստան դացի, անոր հանդիպեցայ Կարսի
հանրային պարտէզին մէջ. տեղւոյն ձիաւոր ոստիկաններուն պետն էր:

Բոլշեւիկները հազիւ 20-25 օր մնացին, ինչ որ դտան թալանեցին,
բան չձգեցին քաղաքին մէջ: Օր մըն ալ թողուցին փախան: Երեք
ժամ վերջը Ղազախները սկսան դալ. ութն օր անընդհատ ձիաւոր
եկաւ, ճիշդ կէս միլիոն, Զօր. Ըշկուռոյի հրամանատարութեամբ:

Ուտելիք չէր մնացած թուափսէի մէջ, ձիերը ստիպուած թող տուին. խեղճ կենդանիները սկսան ծառերու կեղեւները կրծել:

Ձին շատ փխրուն է, մեղի պէս չի կրնար տոկալ անօթութեան: Երբոր դետին իյնայ, ոտքի ելլելու անկարող է. քովէն անցած ժամանակդ գլուխը վեր կը վերցնէ եւ մարդոց նման կուլայ: Կը հաւատա՞ք, ես չէի համարձակեր դուրս ելլել, որովհետեւ ամէն քայլափոխի այս ահաւոր տեսարանին կը հանդիպէի: Յուզումէս յաճախ տղու մը պէս արտասուած եմ: Մտածեցէք անգամ մը, հարիւր քիլոմէթր տարածութեան վրայ լքուած՝ այդ կէս միլիոն ձիերուն մեծ մասը անօթութենէ մեռան:

Թուափսէ եկող ճերմակ Ռուսերուն հարիւր հազարը Տոնի Ղաղախներն էին, իսկ 400.000ը՝ Քուպանի շրջանինը: Առաջին նահանգի զինուորները գացին Խրիմի թերակղզին, իսկ մնացեալ Ղաղախներուն մեծ մասը Սեւ ծովու ափերէն ուղղուեցաւ դէպի Վրաստան:

Տեսարանը աննկարագրելի էր: Ես կարդացած եմ Վիքթոր Հիւկոյի «93»ը, «Մի Գիւղացիի Պատմութիւնը» եւ Ֆրանսական յեղափոխութեան ամբողջ իրադարձութիւնները, բայց այս տեսածներուս քով անոնք ոչինչ են:

Թուափսէն բուն թատերաբեմը եղաւ սպիտակ բանակայիններու պարտութեան: Չարական զօրաց յետին բեկորները յուսահատական դիմադրութիւն մը ցոյց տուին Խրիմի մէջ, յետոյ ամէն ինչ վերջացաւ բոլշեւիկներու յաղթանակով:

Ի՞նչ էր պատճառը այս ահաւոր տուամին, որ յեղաշրջեց հսկայ Ռուսաստանը, որուն անդրադարձումը աւելի քան երբեք կը տեսնենք ամբողջ աշխարհի մէջ: 1919ի Դեկտեմբերին, բոլշեւիկ սպայ մը գաղտնապէս եկած էր Թուափսէ: Այս մարդը մտերիմ բարեկամն էր իմ մէկ ընկերոջս, որ զինքը հացի հրաւիրած էր: Ճաշի միջոցին, քանի մը դաւաթ գինի կոնծելէ վերջ, ռուս բարձրաստիճան զինուորականը մեղի հետեւեալը պատմեց.

« Չարականները երբոր Մոսկուայի հարաւակողմը Տանպովի նահանգը գրաւեցին, մեզ՝ բոլշեւիկներուս յաղթանակը այնքան խնդրական դարձաւ, որ միտք ունէինք դէպի Սիպերիա նահանջել: Սակայն, Տէնիքինի մէկ յիմարութեան երեսէն, իր կռուող ուժերը մեր կողմը դարձան: Սպիտակ բանակայինները մեծ ժողով մը կ'ընեն. այն ատեն սա հարցը կը դրուի սեղանի վրայ մարտիկներու կողմէ.

— Մենք կը կռուինք բոլշեւիկներու դէմ: Թէ որ յաղթենք, — ինչ որ շատ հաւանական է, — ի՞նչ պիտի ըլլայ մեր վարչաձեւը: Եթէ Չար մը պիտի բերէք, մենք չենք կռուիր, կը նախընտրենք Ամերիկայի պէս կառավարութիւն մը:

Չօր. Տէնիքին հետեւեալը կը պատասխանէ.

— Բոլշեւիկները անգամ մը որ մաքրենք, այն ժամանակ երես-

փոխանական ժողով կը գումարենք. թող ան որոշէ մեր ապագայ վարչաձեւը:

« Ռուս ժողովուրդը տրամաբանական գտնելով ընդհ. հրամանատարութեան այս առաջարկը, սկսած է անվերապահօրէն կռուիլ, մինչեւ Տանպովի նահանգին գրաւումը: Այս շրջանը ամբողջովին կը պատկանէր հողատէրերուն (Փամեշչիկ), որոնք Պալքանները փախած էին: Ասոնք կը վերագառնան եւ Տէնիքինի մէկ փոքագով (հրամանագիր) կը վերստանան իրենց կալուածները: Ընչաքաղց հարուստները այսքանով չեն գոհանար եւ գիւղացիներէն կը պահանջեն երեք տարուան վարձքերը: Պարտատէրերը կ'երթան, եղածը կը պատմեն իրենց զաւակներուն, որոնք կը ծառայէին Տէնիքինի հրամանին տակ: Խռովութիւն կը ծագի սպիտակ բանակներուն մէջ, զինուորները ոտքի կ'ելլեն ու կ'անցնին մեր կողմը: Այսպէս կ'երաշխաւորուի բոլշեւիկներու յաղթանակը: »

Զօր. Տէնիքինի պարտութեան այս պատմականը ընելէ վերջ, կարմիր սպան մեզի հետեւեալ հարցումը ուզղեց.

— Իբրեւ մարդ, ի՞նչ տարբերութիւն կը գտնէք Քրիստոնեաներու եկեղեցիին, Իսլամներու մզկիթին, Հրէից սինակոկին եւ Չինացիներու մեհեանին միջեւ: Չէ՞ որ բոլորն ալ Աստուած կը կանչեն:

— Ոչ մի տարբերութիւն, եղաւ մեր պատասխանը:

— Քանի որ այդպէս է, ի՞նչու համար քրիստոնեաներու բոլոր եկեղեցիները գոց են Մոսկուայի մէջ, մէջն ըլլալով նաեւ ձեր Հայոց եկեղեցին: Դուք տեղեակ չէք, բայց ես գիտեմ որ Հրեաներուն սինակոկը բաց է, այն նկատումով որ Հրեաները քրիստոնեաներուն չափ քաղաքակրթուած չեն...

Բոլշեւիկ սպան, — որուն լեզուին կապանքները քակուած էին ալքօլի հրաշագործ ազդեցութեան տակ, — խօսքը վերջացուց յատկանշական ձեւով մը.

— Մենք եղբայրասպան կռիւի մը բռնուած ենք հիմա, բայց օր մը պիտի հաշտուինք եւ մէկ հատիկ Հրեայ պիտի չթողունք մեր երկրին մէջ:

Ղազախներուն դալէն հազիւ օր մը անցած, մաքուր հաղուած մարդ մը եկաւ գտնուած տեղս եւ ինծի հարցուց.

— Ո՞վ է Տէօվլէթեանը:

— Ես եմ, ըսի, ոտքի ելլելով:

— Դուք հաց ունիք եղեր, ինծի այդպէս ըսին:

— Պարո՛ն, ազնիւ խօսք որ չունիմ:

— Վա՛հ, ես տարեկան 300 վակոն ցորեն կուտայի Չարին, այսօր անօթի մեռնելու դատապարտուած եմ:

Երբոր այս լսեցի, սիրտս շարժեցաւ, առի եւ ներս տարի անձանօթ Ղազախը: Մօտ 15 քաշ բրինձ ունէի. հանեցի կէսէն աւելին իրեն տուի ու ըսի.

— Հրամմեցէ՛ք, ասիկա ձեզի թող ըլլայ. միս շատ կայ, փիլաւ կ'եփէք անով: Մենք ամիս մըն է այդպէս կ'ապրինք:

— Ի՞նչ պիտի տամ:

— Ոչինչ: Աղնիւ խօսք ձեզի, շատ կը ցաւիմ որ ոուսական հօգը կայսրութիւնը այսպիսի վիճակի մատնուած է:

Մարդը դնաց, կէս ժամ վերջ դորդ մը եւ վերարկու մը բերաւ իբրեւ նուէր: Դարձեալ մերժեցի ոեւէ վարձատրութիւն, բայց երբ ինծի յայտնեց որ շատ ապրանք ունի, ես հաւանեցայ դժբախտ Ղազարին բերածները ընդունիլ, 5000 ըռպլի փոխարէն:

Շարաթ մը վերջ, փոքր նաւ մը եկաւ Վրացիները տանելու համար: Յոյն մը կը ճանչնայի, որ ինծի ըսաւ թէ՛ « Սարգիս, եթէ կը փափաքիս կարող ես Պաթում երթալ, ուզած ընկերներուդ հետ: Շողենաւը ճամբայ պիտի ելլէ ժամէ մը »: Վայրկեան մը իսկ չվարանեցայ ընդունիլ աղնիւ բարեկամիս առաջարկը: Երեք հայրենակիցներու հետ (մէկը Երզնկացի), ցատկեցինք նաւուն ետին կապուած չորս լաստափայտերէն մէկուն վրայ եւ ճիշդ Չատկին 'օրը հասանք Պաթում:

**

Մօտ երեք ամիս մնացի Սեւ ծովու այդ կարեւոր նաւահանգիստը: Օր մըն ալ Երզնկացի, Սեբաստացի եւ Գարահիսարցի հայրենակիցներու հետ խորհուրդ ըրինք եւ որոշեցինք Հայաստան երթալ: Շիտակ Կարս ուղղուեցանք. հոն իմացանք որ լքուած գիւղ մը կայ, բայց ուղողին չեն տար: Այսուհանդերձ, երբ Գարահիսարցիներու անունով խնդրանք ներկայացուցինք, Հայաստանի կառավարութիւնը սիրայօժար մեզի տրամադրեց այդ գիւղը:

Սողանլըի շրջանին մէջ, Վերուշան գիւղն էր, որ անտէր կը մնար յոյն բնակչութեան մայր հայրենիք գաղթին պատճառով: Հայերը երբոր Կարս կը մտնեն, Քիւրտեր կան եղեր շրջանին մէջ, որոնք քիչ շատ վարուցանք ըրած էին: Մնաց որ, հոն ինքնաբոյս առատ ցորեն եւ գարի կար, որ կրնար մեզի բաւարարել: Մենք 145 հողի էինք, մինչ այդ գիւղը 5-6000 մարդ կրնար ապրեցնել, ուստի որոշեցինք որ հողին բաժանումը կատարենք, բնակչութեան թիւին լրացումէն վերջ:

Շուրջ երեք ամիս Վերուշան մնացած էինք, երբ աշնան առաւօտ մը՝ լոյսը հաղիւ բացուած, հեռաձայն եկաւ սահմանադրուիէն, որ ութը քիլոմեթր էր մեր գիւղէն: Թուրքը յարձակած էր, հայկական ճակատը ճեղքուած, գնդ. Մազմանեան ժողովուրդին կը հրահանգէր որ « շուտով գաղթէ, թշնամին ժամէ մը հող է »:

Ուրեմն, ժամանակ մը մեր խաղաղութեան կայանը գտած ըլլալու պատրանքը ունենալէ վերջ, անգամ մը եւս խորտակուած սրտով ձեռք կ'առնէինք տարադրի ցուպը: Վերուշան կը ձգէինք այն ինչ

որ կրցած էինք ազատել բոլշևիկներու ձեռքէն. մեր գոյքերը, զգեստները, գրքերն ու ձեռագիրները: Մեր ետեւէն կուգային թուրքերուն ձեռքն ինկած թնդանօթներու ձիերը:

Երբ Սելիմ գիւղը հասանք, տեղացի Մալախաները մեր ետեւէն նայեցան եւ կարծելով որ ոուսերէն չենք հասկնար, ծաղրանքով մը իրարու ըսին. — Պա՛հ, այս Արմանչկեաները բոլորն ալ պիտի մաքրուին...:

Գաղթականներուն առջեւէն ես էի որ կը քալէի, գլխիկոր եւ ընկճուած տխուր մտածումներով, երբ Պէքլի Ահմէտի կայարանին առջեւը հանդիպեցայ միականի սպայի մը, որ ինծի հարցուց թէ՛ « ի՞նչ է այս բազմութիւնը »:

— Նահանջ կայ, ըսի պարզօրէն:

— Իրա՞ւ կ'ըսես:

— Այո՛, հիմա կը հասնին թշնամիին ձեռքն ինկած գնդ. Մաղմանեանի թնդանօթներուն ձիերը:

Սպան շտկեց իրանը, դարձաւ դէպի ինծի եւ գլուխը ճօճելէն մուտաց.

— Ափսոս չի՞ նիկոլային, որ այս վիճակին ընկանք...

Դժբախտաբար մեր Կովկասահայ աղբրտիքը մեծ մասամբ այս մտայնութեան տէր էին եւ ատոր համար է որ անոնք չկուուեցան:

Մութը կոխած էր, երբ հասանք Կարս եւ գիշերեցինք այրած տան մը մէջ: Յաջորդ օրը, կարդ մը սրիկաներ լուր հանեցին թէ « թուրքերը ժամէ մը հոս կ'ըլլան »: Ասոր վրայ, խուճապ մըն է ծայր տուաւ. փախող փախողի: Առիթէն օգտուեցան դիտումնաւոր տարածայնութեան հեղինակները, որոնք իրենց թեւերը սոթտած սկսան թալանել փախչող Հայերուն գոյքերը...

Դարձեալ ճանապարհ ինկանք, բայց մեզի չձգեցին այդ ուղղութեամբ յառաջանալ, ուստի ելանք դարվեր, դէպի Կարսէն 12 քիլոմետր անդին, կաթոլիկներէ բնակուած Թաշկօֆ գիւղը: Անկէ երեք քիլոմետր հեռաւորութեամբ կը գտնուի Վէզին գիւղը: Բլուրներուն ստորոտը հաստատուած, երկուքն ալ Կարսի թիկունքը կ'իյնան:

Թաշկօֆի մէջ կ'ապրէինք 28 Սերաստացիներ եւ Գարահիսարցիներ: Աւելի քան քսան օրուան մեր բնակութեան շրջանին, ես երկար պտտեցայ այդ բլուրներուն վրայ: Ռուսական կառավարութիւնը այնպիսի դիրքեր եւ ճանապարհներ չի նկատուած է այնտեղ, որ երբ մարդ տեսնէ կը զմայլի:

Զօր. Նազարբեկեան անշուշտ զգացած էր այս բնական դիրքին ռազմական կարեւորութիւնը եւ հրամայած էր որ չորսական թնդանօթ հաստատեն իւրաքանչիւր բլուրի վրայ: Ասոնց կողքին պիտի գետեղէին վեցական գնդացիք, 50-100ի չափ ալ զօրք: Լսածիս համաձայն, մեծանուն սպարապետին հրահանգը չէր գործադրուած եւ

բլուրները անպաշտպան մնալով, թուրքերը այդ կողմէն եկած
կարսը գրաւած էին :

Կեանքիս մեծագոյն կսկիծը ունեցայ այդ սեւ օրն ալ տեսնելու :
Գիշեր մը դուռը զարկին, հարցուցի թէ՛ « ո՞վ է » :

— Բա՛ց, քեռի՛, ես եմ :

Երբ նիքը քաշեցի, տեսայ Մոսիկն էր, որ կարդ մը Մշեցիներու
հետ մեր տունէն քիչ մը անդին կ'ապրէր : Իր փափաքին համաձայն
դացի կանչեցի Սիմոն աղբարը : Երկուքն ալ Ծիպերք գիւղէն էին,
իրարու մօտիկ բարեկամ :

— Թուրքը եկած՝ Վէզին գիւղն է, խմացուց Մոսիկը խոռոված :

— Իրա՞ւ կ'ըսես :

Մտիկ ըրինք. համազարկի մը տնկտնկոցը որոշապէս լսելի էր :
Ծիպերքցի երկու հայրենակիցներս զինուոր եղած էին Անդրանիկի
բանակին մէջ եւ պատերազմէ աղէկ կը հասկնային : Թուրքերը իրա-
պէս կուզային... ճար չկար, պէտք էր թողուլ հեռանալ : Խորհեցանք
դէպի Կարս ուղղուիլ, որ վերջապէս բերդաքաղաք էր եւ ինքնա-
պաշտպանութեան աւելի լայն հնարաւորութիւն կը ներկայացնէր :

Կէս ժամ չտեւեց, քիչ շատ պատրաստուեցանք եւ դուրս եկանք
տունէն : Մոսիկը կոնակիս բեռը դրաւ իր եզնասայլին վրայ, բայց
ես ետ դարձայ լաթերս ալ առնելու համար. տեսայ որ չկայ, նորէն
վազեցի տղոց ետեւէն :

Կարսի ճամբան զառիվար է. երբ դարձեր նայեցայ, նշմարեցի
որ թուրքերը հազիւ 200 մեթր հեռու են մեզմէ : Անոնց զլուխը լազի
պաշլըխ կար, իսկ ոտքերնին փաթթած էին այծամազէ տոլախ :
Ամերիկեան կալտ ատրճանակ մը ունէի. քաշեցի դրպանէս ու պատ-
րաստ բռնեցի ձեռքիս մէջ : Եզները կրակի պէս կ'երթային, բայց
ես վերջապէս հասայ կառքին : Սիմոն աղբար գետնէն վերցուցած ափ
մը հողը սահմոկած մօրը բերանը կը նետէր... : Այն ժամանակ
Ծիպերքցիին եղբայրը ըսաւ .

— Ա՛խ, ինչ լաւ կ'ըլլար, գոնէ եզները տանէինք :

— Ծօ՛, Յարութիւն, ի՞նչ սարսախ սարսախ դուրս կուտաս,
սաստեց Սիմոն աղբար : Սա հողաթումբերը երբ անցնինք, ազատա՛ծ
ենք. եթէ ոչ մեր կիներն ալ հոս պիտի թողունք... :

Թուրք բանակին յառաջապահները մեզ կրնային զարնել, բայց
հայ վաճառականի մը հարիւրի չափ եզները կողոպտելով գրաղած
էին : Վերջապէս վտանգաւոր դօտին անցնելով հասանք Կարս :

Սիմոն աղբար ճարպիկ մարդ էր. մեզի ըսաւ որ ուղղակի թուր-
քերու թաղը երթանք, որպէսզի մօտ ըլլանք ճանապարհին :

— Ատա՛շ, այնպէս կ'երեւայ որ ասոնք Կարսը պիտի տան, վրայ
բերաւ ան յուսակտուր :

Մեր սրտէն արիւն կ'երթար, իսկ տեղացիներուն հողը չէր :
Գացինք քիչ մը ուտելիք առինք. գիշերը անցուցինք եզնասայլին

մէջ, բայց մեր քունը չտարաւ: Լուսարացին պատրաստուեցանք եւ
երբ սալարկուած ճամբան պիտի առնէինք, պահակ մը մեր առջեւը
կտրեց:

— Տեղերնէդ չչարժիք, եթէ ոչ կը զարնեմ, սպառնաց մեզի
խստօրէն:

Սիմոն աղբար մօտեցաւ պահակին:

— Եղբա՛յր, ինչո՞ւ չէք թողուր որ չուլուխ չօճուխ երթան, հոս
պիտի մեռնինք: Այնպէս կ'երեւայ որ դուք ճիշդ Սանսառ Տէրէսին
պիտի դարձնէք...: Լսա՞՞ծ էք այս պատմութիւնը:

— Հը՛մ, ա՛յո... Ես դարձեր երթամ, դուք շուտ մը անցէք:

Բաւական մը քալեցինք, մինչեւ որ արեգակը ծագեցաւ: Նոյն
միջոցին զրոյց մը հասաւ մեր ականջին, որ թուրքերը նահանջի
ճամբան կտրած են: Հազիւ թէ կանգ առած էինք, յանկարծ նշմա-
րեցինք հայկական բանակը անդլիական համազգեստով, որ կ'ուղ-
ղուէր դէպի օճառի գործարանին բլուրները, կարսի բերդին թի-
կունքը: Զօրագունդին հրամանատար զօր. Յովսէփովը երբ մեզ
տեսաւ, զարմանքի բացազանչութիւն մը արձակեց:

— Ախր՛ր, սա Նազարի ձին է...

Այս վերջինը ժամանակ մը եղած էր հարիւրապետ Անդրանիկի
բանակին մէջ եւ ձին ձգած էր եղբօրը՝ Սիմոնին: Որովհետեւ Նազարը
այդ շրջանին կը ծառայէր զօր. Յովսէփովի հրամանին տակ, մեր
ընկերը զինքը մօտէն կը ճանչնար:

— Զօրավա՛ր, ի՞նչ խորհուրդ կուտաք մեզի, երթա՞նք, մնա՞նք,
հարցուց Սիմոն աղբարը:

— Դուք գիտէք, ես ձեզ բան չեմ կարող ասել:

Զօրագունդը անցաւ գնաց: Մենք անորոշ կացութեան մը մտա-
նուած, երբ կը մտածէինք տխրօրէն, մեր քովէն անցաւ 3-400 գլխու
չափ արջառներու հօտ մը: Մեր հարցուփորձերէն դուրս եկաւ որ
հայկական Դ. զօրաբաժնին կը պատկանէին այդ կենդանիները եւ
դէպի Ալեքսանդրապոլ կ'ուղղուէին:

— Դուք պատերազմի օրէնքները գիտէք, դարձայ ես դէպի
կարաւանին պետը, քանի որ այդ եղները կը տանիք, ըսել է ճանա-
պարհը բաց է: Գոնէ բարի եղէք մեզի առաջնորդելու ապահով
հանդրուան մը:

— Բա՛հ, մենք չենք հակառակիր, քալեցէք երթանք:

Ճարահատ հետեւեցանք արջառներու հօտին: Յայտնի էր որ
կարսը պիտի իյնար, ուստի խոհեմութիւնը նախընտրելի էր: Մտա-
ծեցէք անգամ մը, այդ օրը 32 քիլոմեթր ճամբայ կտրեցինք ու
իրիկունը հասանք գիւղ մը:

Յաջորդ օր Շահնալար էինք արդէն, բայց եղնասայլերը իրարու
փակած կը կենային, երկու ժամ հեռաւորութեան վրայ...: Հայ
զինուորները՝ զնդացիները լարած, պահակ կը սպասէին եւ չէին

Թոյլատրեր ժողովուրդին անցքը: Բարեբախտաբար, շատ չանցած ձիաւորներ եկան, կամուրջը բանալ տուին եւ այդպէսով դադարեցին: Գիշերը մըն ալ Զաջուռի ստորոտը, ջրաղացի մը մէջ անցուցինք: Երկու գիշեր Համամլու մնալէ վերջ, գացինք Ղարաքիլիսէ, ուր երեք օր ապրեցանք: Անկէ անցանք Քոլակերան, գիշերը պառկեցանք կայարանին մէջ: Յաջորդ օրը կտրեցինք կամուրջը, Տսեղի մօտ գիւղ մը գիշերեցինք երկու օր, յետոյ անցանք Թումանեանի ծննդավայրը:

Վերջապէս, ութն օր այնտեղ բնակելէ ետք, որոշեցինք երթալ չէզոք գօտին, որ ստեղծուած էր Անգլիացուց կողմէ, հայ-վրացական պատերազմին առիթով: Մէկու մը կաշառք տուինք, մեզի գիշերանց անցուց Քարինջ անուն գիւղ մը: Իսկ երկու օր վերջ, նորէն դրամ խաղցնելով, մեզի խոստացան տանիլ Ալազվերտի կայարանը:

Մեր չար բախտէն, սխալ ճանապարհ առաջնորդուելով, յանկարծ մենք մեզի գտանք Եայլա եւ անկէ համազարկ մըն է սկսաւ տեղալ մեր վրայ: Բարեբախտաբար, մեր մէջէն Եւգոկիացի Յակոբը եւ Նազարին եղբայր Յարութիւնը շնորհքով գէնք բռնել դիտէին. անոնք քաջաբար դիմադարձեցին ու մենք կրցանք անցնիլ ողջ առողջ:

Յաւալի է ըսել թէ Լոռեցիները փախստական Հայերէն շատերը կողոպտեցին: Մենք ինկանք Օռնակ գիւղը, բայց մեր երկօրեայ բնակութեան միջոցին, սեւէ գէշութիւն չտեսանք հայ գիւղացիներէն, ընդհակառակը մեզի հետ շատ լաւ վերաբերուեցան: Քիչ մը կադրուրուած՝ անկէ անցանք յունական Մատէն գիւղը, ուր ութն օր ապրեցանք եւ ճամբայ ելանք դէպի Ալազվերտի:

Մենք 28 հոգի էինք. երկու շաբաթուան համար այնտեղի դպրոցը վարձեցինք: Ընկերներս գացին Հաղբատ, իսկ ես դիմեցի Սանահին, քիչ մը ուտելիք ճարելու համար: Գործս տեսնելէ՝ վերջ, երբ կը պատրաստուէի վերադառնալ, յանկարծ լսեցի որ մէկը « քեռի » կը պոռայ ետեւէս: Չայնը ծանօթ էր. դարձայ նայեցայ որ ձեռքով նշան կ'ընէր: Թիֆլիզեցի Լոռիսն էր. Սոչիէն կը ճանչնայի, երբ հոն կը գործէր իբրեւ ուսուցիչ: Հայաստան դառնուած միջոցիս՝ փոխկայարանապետն էր Սանահինի:

Լոռիս թողուց իր երկու ընկերները, մօտեցաւ ինձի. ջերմօրէն ողջագուրուեցանք:

— Քեռի', ի՞նչ պիտի ընես, շտապեց հարցնել:

— Պոլիս պիտի երթամ:

— Ախր'ը, չլինի որ այնտեղ գնաս: Առ սա թուղթը, կարդա՛ եւ ամէն ինչի կը տեղեկանաս: Մենք 20-25 օրից էստեղ կը լինենք...: Մնացէ՛ք բարով:

Այս ըսաւ եւ աճապարանքով ելաւ դնաց: Ես ալ ճամբաս շարունակելով, աչք մը պտտցուցի Լոռիսի տուած թուղթին վրայ. չե՞ս ըսեր որ համայնավարական թուղթիկ է . . . :

Վերջապէս, երբոր Հաղբակ հասայ, նայեցայ որ Սիմոն անուն մարդ մը ամբողջ գաղթականները վռնտեր է, իբրեւ դաշնակցական . . . : Կ'երեւայ իր քթին ծայրէն անդին չէր տեսներ: Կարսի Արսէն քահանային տղուն հետ, մայիսեան ապստամբութեան շրջանին Տաճկաստան փախած եւ վերջը Թուրքերուն հետ մտած էր բերդաքաղաք:

Այս արկածախնդիր սրիկան, փողոցին մէջտեղ կանգնած՝ անվայել խօսքեր կ'ընէր: Քիչ մը հեռուն, ես վայրկեան մը մտիկ ըրի, ապա կանչեցի քովս: Մարդը երբ ինծի մօտեցաւ, դիտմամբ գրտանէս հանեցի թուղթիկը եւ իրեն տուի որ կարդայ: Ժպտեցաւ, սանկ մէջ մը նայեցաւ երեսս ու ձեռքը տարաւ դպրոցի դրան:

— Հը՛մ, երեւում է որ դուք բոլորդ մեզանից էք, անցէ՛ք . . .

Հաղբակ մնացինք ութն օր: Հանգիստի այդ օրերուն, ես մօտէն ճանչցայ Սիմոնը, յաճախ կը տեսնուէի հետը:

— Աղբե՛ր, մենք չէինք իմանում որ Թիւրքերը էղպէս վայրենի կարող են լինել, խոստովանեցաւ ինծի անգամ մը:

— Հի՞մա հասկցաք:

— Բա՛հ, Թիւրքերի առնելիքը թող լինի . . .

— Բարեկա՛մս, ատիկա խնդրական է. Թուրքերը Մոսկուան ալ տոպրակը դրին:

Գարձեալ գացի Ալլահվերտի: Հայրենակիցներուս հետ կ'ապրէի բանուորական շէնքի մը մէջ: Վրացիները չէզոք դօտին գրաւած՝ մօտեցած էին Ղարաքիլիսէի եւ դիշեր մըն ալ կռիւր ծայր տուաւ:

Տեղը ցած էր, ես վերէն լաւ մը դիտեցի պատերազմը: Վրացիները չէնք շնորհք ծեծ կերան մեր քաջարի Լոռեցիներէն եւ 12.000 դերի տուին մէկ դիշերուան մէջ: Պարծանքի առիթ մըն էր այս մեր նորազարթ հայրենիքին համար, բայց միւս կողմէ սիրտս կը կսկծար որ հայկական զօրքը նոյնչափ լաւ չէր կռուած Կարսի մէջ: Նոյն օրը մերոնք մաքրադործեցին սրիկայ Վրացի մը, որ « Կապիտան » կ'ըսուէր:

Լոռեցիները յառաջ խաղացին մինչեւ Թիֆլիզի մերձակայ լիճը: Յաջորդ օրը, Վրացիները քիչ շատ աղէկ կռուեցան, Սողանլըի կամուրջին մօտ: Սակայն, երբոր Կարմիր բանակը Պաղուէն հասաւ ռազմաճակատ, մեր Կովկասի հարեւանները կամուրջներէն մէկը օդը հանեցին եւ ձգեցին փախան մութը կոխելուն:

Երեք օր վերջ, Հայաստանի զրահապատ գնացքը եկաւ Ալլահվերտի, ծածկուած կարմիր պաստառներով: Վրայի արձանագրութիւնները ռուսերէն, հայերէն եւ վրացերէն տառերով կը շնորհաւորէին « Սովետական Վրաստանը »: Զօր. Յովսէփովը նոյնպէս

չապիկ փոխած եւ եղած էր դավարիչ: « Զտարին » չայ էր եւ
այնչափ... հայրենասէր, որ կարսի անկումը շատ քեֆիս գացած էր,
ինքը որ հոն ճամբուած էր իր զօրքերուն հետ պատմական բերդա-
քաղաքը պաշտպանելու համար:

Թրքական այս յաղթանակը երբ կը տեսնէ, Յովսէփով կը դառ-
նայ մեր Գարահիսարցի Նազարին եւ աչքերը հիացմունքով լեցուած
կ'աղաղակէ.

— Տե՛ս, Նազար ջա՛ն, Թուրքերը ինչպէս կալո՛ն կալո՛ն
գալիս են...

Ահա, այս « քաջարի » կեներալն էր, որ Թիֆլիզ գացած էր
իրրեւ պատգամաւոր, « եղբայրական Վրաստան »ի խորհրդայնա-
ցումը շնորհաւորելու համար:

Ալլահվերտի ժողովուրդը լաւ ընդունելութիւն ըրաւ Յովսէ-
փովի: Մենք գաղթական Հայերս շատ ուրախ էինք, որովհետեւ
Վրացի կոչուած այդ շնագայլերը մեր մուխը մարեցին: Մօտեցայ
զրահապատ կառքերուն, վարիչի մը միամտօրէն ըսի.— « Թիֆլիզ
մտա՞ք »:

Մարդը փոխանակ պատասխան տալու, դարձաւ դէպի ինծի եւ
հարցուց.

— Ո՞ր տեղացի ես:

— Տաճկահայ եմ:

— Վա՛յ, ես ձեր մերը... դուք մեզի վատացրիք Թիւրքերի հետ:
Զի սատակեցաք որ ձեր ձեռնից պրծնէինք...

Պահեր կան որ մարդս ինքնիրմէն կ'ելլէ եւ անանկ յախուռն քայլ
մը կ'առնէ որ մահն աչքին չերեւար: Բռունցքներս սեղմած՝ վրան
խոյսացայ եւ փայլակնացայտ աչքերով գոռացի երեսն ի վեր.

— Ծօ՛, դուք չէի՞ք որ ձեր սրածայր մօրուքներով գործիչները
զրկեցիք Տաճկահայաստան, մեր կեանքը տակնուվրայ ըրիք եւ
ձգեցիք փախաք: Դուք չէի՞ք որ Անդրանիկին հեռագիր տուիք
Թիֆլիզ, որ կամաւորական զունդեր կազմէ, բայց երբ կարգը գոր-
ծին եկաւ, ձեր բուրժուաներու տղաքը փախցուցիք: Մինչեւ իսկ
մեր ազգային հերոսը սպաննելու հետամուտ եղաք: Հիմա, երբ
ջարդուկոտոր եղած՝ ձեր դուռը եկած ենք, մեր դէմը կը հայհոյէք
ջրհանկիրի պէս...

Արիւնը գլուխս խուժած՝ ես ալ սկսայ այդ Թուրքի ծնունդին
եօթը պորտին հասցէին յիշոցներ տեղացնել, բայց քանի մը տեղա-
ցիներ բռնեցին զիս, որպէսզի փորձանք մը չելլէ ձեռքէս:

— Մի՛ անպատուիր նրան, շատ իրաւացի է խօսում. մենք էինք
նրանց դժբախտութիւնների պատճառը, համոզելու ելան թշուա-
ռականին:

Զրահապատի վարիչը վախցաւ ու կծիկը դրաւ դէպի կայարան:
Շատ գաղթական կար, մասնաւորաբար Ասլանպէկցի բաւական

Հայեր խոնուած էին Ալլահվերտի շողեկառքի քարափը: Ասոնք չուզեցին Հայաստան մնալ, այլ նախընտրեցին Պոլիսը եւ արտօնութիւն ստացան: Ես ալ ուրիշներու հետ արձանագրուեցայ անոնց ցանկին մէջ:

Հայերը Լոռիի Վրացիները արտաքսելէ վերջ, կոմիսար ընտրեցին Հաղբակեցի Սիմոն Երզնկեանը, որ եղբայրն էր նախկին նախարար Արամայիսի: Հնչակեան էր, շատ լաւ դիրար կը հասկնայինք եւ գրեթէ բարեկամ դարձանք: Նոյնիսկ կը յիշեմ որ անգամ մը իրենց տունը հիւր դացի եւ դիս պատուասիրեցին կարագով ու մեղրով:

Փետրուար 18ի կռիւներուն, շատ նեղութիւն տուին մեզի ու ես դիմեցի Կոմիսարիատ. կամուրջին մօտն էր, ջրակէքարակայանի շէնքին մէջ:

— Ընկե՛ր Սիմոն, ըսի անուշութեամբ, մեզի արտօնութիւն տուէք որ երթանք Շուշաւեր:

Բայց եկու տես որ կոմիսարը անընդհատ ձգձգեց գործը: Անգամ մը կրկին իրմէ խնդրեցի որ թուղթերս պատրաստէ այնինչ թուականին, սակայն այդ օրը ընկեր Սիմոնը մէջտեղ չելաւ...

Վերջապէս ճարս հատաւ եւ ըսի դաղթական ընկերներուս. — « Ես այսօր անպայման պիտի երթամ, ով որ կ'ուզէ թող ինծի հետեւի »:

Կազմ ու պատրաստ, ես առաջ ինկայ, բայց բոլշեւիկները զէնի ձեռին եկան մեր առջեւը կտրեցին: Ես վար դրի բեռներս ու գուռացի անոնց երեսն ի վար.

— Մենք վճռած ենք, կա՛մ պիտի երթանք, կա՛մ պիտի մեռնինք: Բա՛հ, եթէ կ'ուզէք, առաջին անգամ ինծի զարկէք:

Բոլշեւիկները մէկ կողմ քաշուեցան, իրարու հետ խորհուրդ ըրին եւ ապա դարձան մեզի ըսին.

— Կորէ՛ք, գնացէք մեր աչքի առաջքէն, ալ ձեր մոռութը չտեսնենք:

Ճանապարհ ինկանք դէպի Մատէն գիւղը, բայց տեղացի Յոյները մեզի վոնսելու ելան: Խնդրեցի որ դիս իրենց մեծերուն քովը տանին, այդպէս ալ ըրին: Տեսայ որ քանի մը տարեց Յոյներ նստած էին. բարեւ տուի ու իրենց այսպէս խօսեցայ.

— Մեզ կապէք ալ՝ մենք հոս չենք կենար: Միայն թէ՛ երեք յղի կիներ կան մեր մէջ, արտօնեցէք որ գոնէ այս գիշեր հոս մնանք: Դուք ալ ընտանիքի եւ զաւակի տէր էք, մեր հալէն կը հասկնաք:

— Յանցանքը մերը չէ, մեզի հեռաձայնով խստիւ հրահանգ տրուեցաւ որ ձեզ գիւղէն դուրս ընենք, պատասխան տուաւ յոյն երեւելիներէն մէկը:

Ուրեմն, Մատէն գիւղը հանգստացանք այդ գիշեր, իսկ յաջորդ

օրն ալ անցանք վրացական սահմանը: Երկու օր հայկական դիւղ մը մնալէ ետք, գացինք Շուլաւեր եւ հոն ամիս մը ապրեցանք:

*
**

Վերջապէս, Թիֆլիզէն Պաթում անցայ եւ հոնկից նաւ առի գէպի Պոլիս: Օրին մէկը, նուրը Օսմանիյէի ճանապարհէն անցած միջոցիս, յանկարծ լսեցի որ մէկը « քեռի » կը պոռայ ետեւէս: Դարձայ որ Երզնկացի բարեկամ մըն էր, որուն հանդիպած էի Պաթում, 1920ի Չառկի յաջորդ օրերուն: Այդ շրջանին ինք կովկասէն կ'անցնէր Պոլիս, Սեւ ծովու ճամբով, իսկ ես կ'երթայի մայր հայրենիք: Այս մարդը յարմար նկատած էր այդ որոշումը, որովհետեւ Հայաստան առաւելապէս հողագործական երկիր մըն է. ես ալ արդէն այդ գործով զբաղելու միտք ունէի կարգ մը համաքաղաքացիներու ընկերակցութեամբ:

Այս Երզնկացին Պոլիս հաստատուած ոսկերչութիւն կ'ընէր մեծ շուկային դուրսի կողմը: Շատ մը բաներու վրայ խօսեցանք, ու վերջապէս միտքս ինկաւ Լոռիս Մելիքովի արձանը: Ժամանակին իմ իջեւանած կարսի օթեւանիս սրճեփը պատմած էր ինծի որ Թուրքերը 1918ին Պոլիս տարած էին այդ անդրին, բերդաքաղաքին վրայ առաջին անգամ դրօշ տնկող ուս զինուորին յուշարձանին հետ (Թանգարան դրուած հետադային):

— Բարեկա'մ, Լոռիս Մելիքովի արձանը կ'ուզե՞ս տեսնել, հարցուց ինծի Երզնկացին:

— Հա'րկաւ:

— Է՛հ ուրեմն, կամուրջը անցիր, աջ կողմը դարձիր, բաղրիքի մը ետին ձգած են:

Անմիջապէս գացի ցոյց տուած կողմը: Յուշարձանը իրօք հոն էր, դետնին վրայ փռուած, Թուրքերը վրան կը միզէին...: Մտածեցէք որ, Պոլիս բնակած շրջանիս, երկու օրն անգամ մը այդ տեղէն կ'անցնէի եւ 5-6 հեղ այդ դարչելի տեսարանին ականատես եղած եմ:

Այն ժամանակ միտքս ինկաւ այն հին Երանելի օրերը, երբ « Մեծ արջ »-ին շուքը սոսկում կ'ազդէր Թուրքերուն: 1877ի ուսութրքական պատերազմին հայրս գործով կ'երթայ Երզնկա: Ճանապարհին, Մելիք Շերիֆ դիւղը, Հայու մը տունը հիւր կ'ըլլայ: Ուշատեն, 15 հողիի չափ զօրք կուգայ կը լեցուի այդ տունը: Տանտէրը կը ստիպուի սչխար մը մորթել, իրեն բաժին ինկած այդ զինուորները կերակրելու համար: Ասոնք կ'ուտեն կը խմեն եւ հայրս ալ ճաշի կը հրաւիրեն, բայց ան կը մերժէ մասնակից ըլլալ սեղանին:

Թուրք զինուորները կը սկսին Աղա Նազարի պէս պսսել. մէկը ջարդի մոլուցքով տարուած է, ուրիշ մը՝ Թալանի եւ կոտորել Թափելու, երրորդ մը կ'երազէ խարտեաչ Ռուսուհիները, որոնք Մու-

համմէտի խոստացած արքայութեան պիտի տանէին զիրենք... :
է՛հ, իրաւունք ալ ունէին. տիկերնին լեցուած եւ զլուխնին շէնք
չնորհք տաքցած էր ալքովի դուրըշիներէն : Տանտէրը անոնց մէյմէկ
հաւ ալ կուտայ եւ իրենց ամանները կը լեցնէ հրուշակով : Ականջ
դնելով այդ մեծխօսիկութիւններուն, բազմոցին անկիւնը նստած
մօրուսաւոր ծերունի Գիւրտ մը կը դառնայ դէպի հարբած զինուոր-
ները ու անոնց կ'ըսէ .

— Տղա՛քս, այդ բոլորը ցնորքներ են, դուք տակաւին այդ
Քեափիւր Մոսկօֆը չէք ճանչնար : Սեւաստափովի պատերազմին՝ ես
ալ ձեզի պէս տաքզլուխ երիտասարդ մըն էի, երբոր այնինչ պէյին
հրամանին տակ կը ծառայէի : Հինգ հարիւր հոգի էինք, ամէնքս ալ
ձիաւոր ու պատրաստ էինք մեր արիւնը թափելու Մարգարէին փառ-
քին համար : Ճանապարհին մեզի հետ էին Կիւմիւշխանայէն եկած
յոյն հացագործները, որոնցմէ մէկուն հետ կապուած էի բարեկա-
մութեամբ : Մենք ալ երդում ըրած էինք թշնամիին արիւնը խմել,
Մոսկօֆի ազջիկները բերել, ջարդել-փշրե՛լ... : Օր մըն ալ յարձա-
կումի հրաման եկաւ. կը կարծէինք որ հեռու են, բայց մէկէն մշուշի
պէս բան մը երեւաց : Թուրերը քաշած՝ խթանեցինք ձիերը. ի՞նչ
տեսնենք... Ղազարի հեծելազօրքը մառախուղի մէջէն փոթորիկի
պէս փրթած՝ փռասայի պէս կը ջարդէր մեր յառաջապահ ընկերները :
Վերջին դատաստանի օ՛րը, փախչող-փախչողի. մայր՝ մանուկը
կ'ուրանար : Մէկ ալ նայիս, Շէյխ Հասօ Թելլօն խելայեղ ետ կը
վազցնէ ձին ու կողկողազին կը բղաւէ. — Ամա՛ն, Մոսկօֆ աղա,
չոլու՛ք շօնու՛ք սահիպի եիմ, վո՛ւումա պանա... : Զէնքի ընկերները
կը տեսնեն որ դուստունն է (աղեկապ) : Ասոր վրայ, դիտել կուտան .
— « Մի՛ վախնար, Մոսկօֆ չկայ. դուստունն է որ պոչէն ելած՝
քամակին կը դարնուի ձիուն քառասմբակ վազքին մէջ » : Շէյխը
վախէն ցնորած՝ բան չիմանար ու կը պաղատի. — Ամա՛ն, դուստուն
աղա, օնազընա տիւշտիւմ, վո՛ւումա պանա... : Ես դէպի ձորը փա-
խայ. յոյն բարեկամս ինծի հացագործի հագուստ մը հազցուց եւ
ազատեցայ : Զդո՛յշ եղէք, տղա՛քս, Մոսկօֆը եաման է, հետը խազի
չելլուիր...

*
**

Երկար չմնացի Պոլսոյ մէջ, 1921 Մայիս 27էն մինչեւ Յուլիսի
սկիզբը, յետոյ դացի Տետէ-Աղաճ :

Զորս տարիի չափ մնացի Քսանթի : Ազգասիրական ոգիէ մղուած՝
երկու տարի անձնուիրաբար ծառայեցի ՀՅԿին, մինչեւ համայնա-
վարներու մուտքը կազմակերպութենէն ներս : Երբ նշմարեցի թէ
հայրենիքի օգնութեան անունին տակ թաքնուած այդ մարմինը
համաշխարհայի յեղափոխութեան քարոզչութեան լծուած է, հրա-
ժարականս տուի իսպառ :

1926ի աշնան Փարիզ եմ արդէն: Ուղեցի ազգիս օգտակար ըլլալ եւ 1928ին մտայ Հ. Բ. Ը. Միութեան մէջ: Յոգնած, հրաժարեցայ այդ կազմակերպութենէն, քսանամեայ գործունէութենէ մը վերջ: 1951ին ալ թողուցի Հնչակեան կուսակցութիւնը:

Վշտեալագոյն դժբաղտոյցոյցով մզոցմտով միմիջմիջով . մօճ պաշտօնը վարեցի ամբողջ 13 տարի (1932-1945): Գէշ հով մը կը փչէր 1933ին. կուսակցական պայքարը իր ծայրագոյն աստիճանին հասած՝ Ամերիկայի Հայերը զիրար կը բզբտէին: Մեծ ջանք թափեցի, ամէն զնով աշխատեցայ հաշտեցնել այդտեղի մեր հայրենակիցները: Անոնց դրած շատ մը նամակներուս մէջ, հետեւեալ յորդորները ուղղեցի. — « Դուք Գարահիսարցիներդ ամէն բանէ առաջ Հայ էք եւ ուղղափառ Հայ: Մեզի համար կուսակցութիւնը լոկ միջոց մըն է. մեր միջեւ երբեք լուրջ պայքար գոյութիւն չէ ունեցած, եղածները ոչինչ բաներ էին: Բայց, մենք՝ սիրտ-սիրտի, շունչ-շունչի մղեցինք հերոսամարտ մը, որ հանուր աշխարհի առջեւ կը պանծացնէ Շապին Գարահիսարի անունը: »

Բարերախտարար, համեստ սրտէ մը բխած այս կոչը իր արդիւնքը ունեցաւ եւ Ամերիկայի մեր հայրենակիցները լիարունակ օգնեցին: Նիւ-Եորք տուաւ հազար տոլար, իսկ 700 տոլար ալ Տիթ-րոյիթը, եթէ ոչ այդ արծանը չէինք կրնար կանգնել: Փարիզի յանձնախումբս ամէն ջանք թափեց, ու բոլոր կուսակցութիւնները իրարու քով բերելով, բացումը կատարեցինք Գարահիսարի պանծալի զաւկին յուշարձանին: Այդ օրը կեանքիս ամէնէն երջանիկ վայրկեանները ապրեցայ:

Ահա՛ւասիկ, մեռնելէ առաջ թուղթին կը յանձնեմ փոթորկալի կեանքէս քաղուած այս յուշերը, որոնք տարիներէ ի վեր ծանր երկանաքարի մը պէս կը ճնշէին սրտիս վրայ: Ես ինչ որ գիտէի գրեցի՝ բան մը զանց չըրի: Շատ ու շատ ուրախ եմ, որ այս հասուն տարիքիս բախտը ժպտեցաւ ինձի եւ ներկայ աշխատութիւնս իմ ողջութեանս լոյս կը տեսնէ: Երջանիկ հպարտութեան առիթ մըն է ասիկա ինձի համար: Ես կը հաւատամ որ այս հատուկտոր յուշերս գոնէ իբր հում նիւթ կրնան ծառայել ապագայ պատմագրին:

Փարիզ, 28 Մայիս 1954

Վ Ե Ր Զ

ՅԱԻԵԼՈՒԱԾԱԿԱՆ ԷԶԵՐ



Այս գլուխին ներքեւ յարմար դատեցինք աւելի ընդարձակ տեղ տալ մեր մեծ հայրենակցին՝ Տ. Վրամշապուհ Արք. Քիպարեանի կենսագրականին, անոր անունը կապուած ըլլալով բազմաթիւ դէպքերու :

Այդ աշխատանքը յանձնեցինք իր եղբօրորդւոյն՝ Պ. Մանուկ Քիպարեանի, որ մօտէն ծանօթ ըլլալով անոր կեանքին ու գործունէութեան, գայն կը ներկայացնէ իր համառօտ գիծերուն մէջ :

Այս առթիւ կուտայ նաեւ ընդհանուր պատկերը Շ. Գարահիսարի կրթական եւ մարտական արժէքներուն, իրենց կարն կենսագրականներով, ինչպէս նաեւ իր խորհրդածութիւնները : Կը յուսանք որ մեր ընթերցողները հետաքրքրութեամբ պիտի կարդան այս էջերը :

Ս . Տ .






Տ. ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ԱՐԲ. ՔԻՊԱՐԵԱՆ

ՀԱՄԱՌՕՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԷՐ ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ԱՐՔ. ՔԻՊԱՐԵԱՆԻ



Ան ծնած է Գարահիսար, 1855ին: Որդին՝ համեստ արհեստաւոր առեւտրականի մը՝ Յակոբ աղա Քիպարեանի: Իր նախնական կրթութիւնը առած է տեղւոյն Մուշեղեան Ազգ. նախակրթարանին մէջ: Աշխարհական անունը եղած է Նազարէթ: Իր մանկութենէն իսկ իր մէջ նշմարուած է խոր սէր մը դէպի եկեղեցին:

Տարիքով կարգով՝ Նազարէթ իր վեց եղբայրներուն երրորդն էր: Տասը տարեկան եղած ատեն, հայրը անոր մէջ նշմարելով ապագայ եկեղեցականը, օր մը ձեռքէն բռնած, դայն կ'առաջնորդէ եկեղեցի եւ կը յանձնէ Տէր Մկրտիչ աւագ քահանային, ըսելով. — « Որդիս կը նուիրեմ եկեղեցիին »:

Հետզհետէ կը ստանայ դպրութեան զանազան աստիճանները, հասնելով մինչեւ աւագ սարկաւագութեան. իր արծաթեայ գեղեցիկ ձայնը զինքը կը դարձնեն եկեղեցւոյ գլխաւոր դպիրը: Այդ ձայնին «իրահար՝ քաղաքին մեծատուններէն՝ Գրիգոր աղա Մարկոսեան իր աղջիկը՝ Թագուհին անոր կնութեան կուտայ: Իրենց ամուսնութենէն կ'ունենան հինգ զաւակներ, երկուքը մանչ, միւսները՝ աղջիկ:

Նազարէթ սարկաւագ, այլ անունով Նազարէթ պատուելի, ուսուցչական պաշտօններ կը վարէ իր ծննդավայրին եւ շրջակայ հայաբնակ գիւղերու դպրոցներուն մէջ: Իր ուսուցչական պաշտօնին համընթաց՝ ան կը ցանէ առաջին սերմերը հայ յեղափոխութեան, աջակցութեամբ Աւագ Տուրիկեանի, Աւետիս Սահակեանի եւ ուրիշներու, այս կերպով պատրաստելով դետինը Հնչակեան կուսակցութեան կազմութեան, որուն հիմը դրած է քիչ վերջ՝ Արամ Աչբպաշեան:

Քաղաքին երեւելիներուն ցանկութեան ընդառաջ երթալով, Նազարէթ Քիպարեան կը մեկնի Սեբաստիա եւ Պետրոս Թահմիզեան Սրբազանէն կը ձեռնադրուի քահանայ, կոչուելով՝ Վռամչապուհ:

Շ. Գարահիսար դարձին հազիւ կարճ շրջան մը կը պաշտօնավարէ տեղւոյն եկեղեցւոյն եւ վարժարանին մէջ: Իր քահանայութեան այս կարճ շրջանին մէջ, ան կատարած է երկու պատմական արժէք ունեցող գործեր: Առաջին՝ Ազգ. հերոս Զօր. Անդրանիկի յեղափոխական կեանքի նուիրման ուխտը՝ իր քահանայական խաչին տակ:

Անդրանիկ՝ համեստ ատաղձագործի մը դաւակ եւ նոյն արհեստին մէջ հօրը աջ բաղուկը: Օր մը ոստիկան մը՝ իր ներկայութեանն իսկ կը խոչտանդէ իր հայրը: Անդրանիկ չհանդուրժելով հօրը վրայ թափուած լուտանքներուն, կը յարձակի վրան եւ կը դանակոծէ զայն: Ծանր էր դորձած յանցանքը, կը հետապնդուի: Հարկ էր որ հեռանար քաղաքէն:

Կը դիմէ իր ուսուցչին՝ Տ. Վոամշապուհ քահանային եւ կը յայտնէ իր ցանկութիւնը՝ նուիրուիլ հայդուկային կեանքի: Վոամշապուհ քահանայ վարժարանին մէջ իսկ ըմբոստ Անդրանիկին մէջ նշմարած էր ապագայ յեղափոխականը: Ընդառաջ երթալով անոր ցանկութեան, զայն կ'առաջնորդէ Սուրբ Սարգիսի սարը, կախ-կախ ուռենիին տակ ճոճուացող աղբիւրին մօտ, որ ուխտավայր մըն էր եւ հոն՝ անոր հողին մէջ կը դնէ յեղափոխութեան կայծը եւ իր քահանայական խաչովն ալ զայն կ'օրհնէ իբրեւ հայ ազգ. ազատագրութեան սուրբ դատին նուիրուող զինուոր մը:

Հոս հարկ է յիշել խորագէտ յուզիչ երեւոյթ մը. — Վոամշապուհ քահանային այդ ձեռնախաչը՝ իր պարունակած թանկագին մասունքով սերունդէ սերունդ իրեն փոխանցուած է, եւ Անդրանիկի հերոս օժուժով ստացած է աւելի թանկագին արժէք մը: Ահա այդ նոյն խաչովն է որ տարիներ ետք, Վոամշապուհ վարդապետ՝ Փարիզի մէջ կը կատարէ Չօր. Անդրանիկի պսակը՝ Հայոց եկեղեցւոյ մէջ, իսկ քանի մը տարիներ ետքն ալ Վոամշապուհ Եպիսկ. տխուր պարտականութիւնը կ'ունենայ՝ միշտ նոյն խաչով կատարելու թաղումը՝ ազգ. մեծ Հերոսին, որ կը հանդէս այժմ Փէռ-Լաշէզի դերեզմանատան մէջ:

Ի գիտութիւն ընթերցողներու յայտնենք որ այդ թանկագին խաչը՝ շարք մը ուրիշ արժէքաւոր առարկաներու հետ (ձեռագիր աւետարան՝ արծաթապատ կողքով, գործ՝ Ե. Գարահիսարի ոսկերիչներուն, նուիրուած է Վոամշապուհ քահ. ի իր յիսնամեակին առթիւ, պնակէներ եւ ուրիշ առարկաներ), Քիպարեան ընտանիքին կողմէ նուիրուած են Փարիզի Հայ Ազգ. Թանգարանին եւ ղետեղուած Վոամշապուհ Արք. Քիպարեանի անձնական առարկաներու յատկացուած ապակեգարանի մը մէջ:

Վոամշապուհ քահ. Քիպարեանի երկրորդ գործը կ'ըլլայ՝ տեղւոյն եկեղեցւոյն վերաշինութեան իր բերած բարոյական նպաստը:

1885ին, մեծ հրդեհ մը հրոյ ճարակ կ'ընէ Ե. Գարահիսարի Հայոց թաղերուն կէսը: Հրդեհը լափլիզած էր նաեւ Հայոց Մայր եկեղեցին եւ հարուստ մեծատուններ՝ մոխիրի վրայ նստած: Նիւթապէս քայքայուած Ե. Գարահիսարցին ի վիճակի չէր իր սեփական միջոցներով վերականգնել իր հրկիզուած եկեղեցին. պէտք ունէր արտաքին օժանդակութեան: Քաղաքական ժողովը կ'որոշէ Վոամշապուհ քահ. զրկել հայաշատ քաղաքներ, այս նպատակին հանգանա-

կութիւն մը կատարելու համար: Վռամ շապուհ քահ. կը ներկայանայ
Կ. Պոլսոյ Պատրիարքին իր յանձնարարագիրներով: Ժապաւինեալ
տոմարով հանգանակութիւն կը կատարէ հոն: Կ'անցնի Զմիւռնիա, հոն
եւս իր հանգանակութեան ձեռնարկը յաջողութեամբ կը ստակուի եւ
կը վերադառնայ Շ. Գարահիսար:

Մայր եկեղեցին կը վերաշինուի զառիթափի մը վրայ, իշխելով
ամբողջ քաղաքին: Այս եկեղեցին էջմիածնական ոճով, գմբէթի մե-
ծութեամբ, լուսաւորութեամբ, դիրքով եւ զեղեցկութեամբ կը
դառնար Փոքր-Հայքի լաւագոյն եկեղեցիներէն մին, ունենալով
Սերաստիոյ եւ Զմիւռնիոյ մայր եկեղեցիներուն ոճը:

Վռամ շապուհ քահ. ի յեղափոխական գործունէութիւնը կառա-
վարութեան ուշադրութիւնը կը գրաւէ: Անոր կեանքը կը վտանգուի.
Կը յորդորեն հեռանալ քաղաքէն: Իր ետին ձգելով իր ծերունագարդ
ճնողքը, երիցուհին եւ զաւակները, կ'երթայ Սերաստիա, ուրկէ
փշոտ ճամբաներէ անցնելով կը հասնի Կ. Պոլիս: Պատրիարքարանը
ճանչցած էր անոր արժանիքները՝ իբրեւ իր կոչումին նուիրուած
եկեղեցական մը, ուստի զայն քահանայ կը կարգէ Գատըղիւղի Ս.
Թագաւոր եկեղեցիին, որ տեսակ մը ճգնարան կ'ըլլայ անոր քանի մը
տարիներ, դառնալով Վէզիր Խանի Հայաստանցի զարիպներուն
զարիպ տէրտէրը, ինչպէս կը յորջորջեն զինքը (*): Իր քահանայի
պաշտօնին կիրարկման համընթաց Արամեան վարժարանին մէջ կը
ստանձնէ հայերէն լեզուի, կրօնագիտութեան եւ բարոյագիտութեան
դասեր:

Իր ամբաստիւր եկեղեցականի անունը կը տարածուի, մեծատուններ
կը դառնան իր ծուխերը եւ չեն ուզեր որ իրենց զարիպ տէրտէրը
խկապէս զարիպի կեանքը ապրի, ուստի կ'օժանդակեն որ ընտանիքը
Պոլիս փոխադրէ:

Նորաստեղծ ընտանեկան կեանքը սակայն կարճ կը տեւէ: Ծերու-
նագարդ հայրն ու երիցուհին կը մեռնին Գատըղիւղի մէջ եւ անչա-
փահաս զաւակները կը մնան մօրը ինամքին ենթակայ եւ հարկա-
գրուած՝ կը դառնան Շ. Գարահիսար:

Գէպքերու բերումով՝ զարիպի նոր կեանք մը կը սպասէր Վռամ-
շապուհ քահ.ին: Փարիզի առաջնորդին վախճանումով, տեղւոյն
հայ փոքրիկ գաղութը կը մնայ առանց հոգեւոր հօր: Պատրիար-
քարան կը դրուի եւ քահանայ մը կ'ուզուի: Օրուան Պատրիարքը՝
Օրմանեան Սրբազան, նկատի ունենալով Վռամ շապուհ քահ.ի արժա-
նիքները, զայն կը կարգէ Փարիզի Հայոց հոգեւոր հովիւ, ուր ան
կուգայ հաստատուիլ 1899ին:

Փարիզի հայ գաղութը փոքր էր թէեւ, բայց Վռամ շապուհ

(*) Արփիարեանի « Կարմիր ժամուց » վէպին մէջ յիշուած զարիպ տէրտէրը
նոյն ինքն Վռամ շապուհ քահանան է:

քահանայն առջեւ կար աշխատանքի մեծ դետին մը, հարկ էր կազմակերպել զայն: Չանազան գոյներով կազմուած խճանկար մըն էր ան, Կովկասահայերու, Հնդկահայերու, Պարսկահայերու եւ Թրքահայերու խառնուրդ մը, զանազան մտայնութեանց տէր, տարբեր խառնուածքով ու դաստիարակութեամբ, պէտք էր անոնց միջեւ ստեղծել ներդաշնակ կապ մը: Արդարեւ դժուարին դեր մը, զոր Վռամշապուհ քահանայն Քիւրաքան զլուխ հանած է, իր քաղցրաբոյր բնաւորութեամբ:

Երկար տարիներ իրեն հետ համերաշխ գործակիցներ ունեցած է Աթանազինէ էզնայեանը (բարերար՝ Պոլսոյ Մայր Վարժարանին շինութեան), Ռափայէլ Մարկոսեանը (նուիրատուն Մարկոսեան կտակին), Պ. Զօրեան եւ Պ. Պօղոս Էսմէրեան, յայտնի ակնավաճառներ միջազգային հրատարակին վրայ: Պատմութիւնը՝ ո՛չ մէկ գայթակղալից դէպք կ'արձանագրէ այդ շրջանին համար:

Վռամշապուհ քահանայն կազմակերպչական գործունէութիւնն ու բարւոք ծառայութիւնը գնահատելով՝ Խրիմեան Հայրիկ գայն կը վարձատրէ Աւագութեան աստիճանով: Իրաւունք կուտայ ծաղկեայ փիլիսոն կրելու եւ անոր կը զրկէ քահանայական ասա մը իր յիսնամեակին առթիւ, պատիւ մը՝ որուն շատ քիչ քահանաներ արժանացած են:

Փարիզի հայ գաղութը, հարուստ էր իր նիւթականով, բայց աղքատ էր իր եկեղեցիով: Երկու յաջորդական փոքրիկ մատուռներ սարքուած էին Միլթոնի եւ Վիլիէն փողոցներու յարկաբաժիններու մէջ: Կիրակի օր մը, քարիւղի իշխանը՝ Աղեքսանդր Մանթաշեան ներկայ կ'ըլլայ սրատարազին: Արարողութեանց աւարտումին՝ աջը կը համբուրէ սրատարազիչ քահանային եւ կ'ըսէ. — « Տէ՛ր Հայր, մի աղքատ մատո՞ւռ՝ հարուստ գաղութի մը համար »: « Մեկենաս մը կը փնտռենք, Տիար Մանթաշեան », կը պատասխանէ Վռամշապուհ քահանայն, անոր ապագայ տալիք մեծ նուէրին իբրեւ կանխայայտ շնորհակալութիւն տալով նշխարհ մը եւ կարդալով պահպանիչ մը: « Վաղը ե՛կ ինձ գտիր իմ գրասենեակը » կ'ըսէ ու կը հեռանայ Պ. Մանթաշեան:

Յաջորդ օրը երկու եկեղեցաշէններ զլուխ զլիւի են արդէն: Մանթաշեան՝ մեծ հաւատացեալ մը, ոսկիէ սիրտով բազմիցս բարեգործ մը, չի սակարկեր եւ բաց կը ձգէ իր դրամարկղը եկեղեցիի մը շինութեան համար, պայմանով որ ան շինուի ազնուապետական թաղի մը մէջ եւ ունենայ էջմիածնական ոճ:

Լա Պօէսի փողոցին վրայ Կալոյի երաժշտական սրահին հողը թափուր էր: Նախ կ'որոշուի հոն շինել եկեղեցին, բայց կը լքուի այդ ծրագիրը, այդ փողոցին առեւտրական հանգամանքը նկատի առնուելով: Ժան Կուժոն փողոցը աւելի ազնուապետական ըլլալով՝ Պ. Մանթաշեան նախապատուութիւնը անոր կուտայ, ուստի Պազար տը լա

Եւ եկեղեցւոյ շինութիւնը կը սկսի: Բազմաթիւ յատակադիժերէն կ'ընտրուի ա'ն որ աւելի կը յարգէր էջմիածնական ոճը: 1904ին ձեռ ու մարմին կ'առնէ եկեղեցին: Օծումը կը կատարուի, զայն կոչելով Սուրբ Յովհաննէս Մկրտիչ:

Անոր ներքին մարմարեայ սեւ սիւներուն վրայ կը հանգչի փոքրիկ եւ սիրուն կաթողիկէն: Այդ տեսանելի սիւներէն զատ կան սակայն երկու անտեսանելի կրանիթէ սիւներ, որոնց վրայ կը հանգչի ամբողջ եկեղեցին. մին՝ Աղեքսանդր Մանթաշեանն է, իսկ միւսը Տ. Վռամ- շապուհ քահ. Քիպարեանը:

1914ի պատերազմին սկիզբը, Փարիզի եւ Ֆրանսայի հայ գա- ղութիւնը քաղաքականապէս մատնուած էր դէշ կացութեան մը, նկատ- ուելով իբրեւ թրքահայատակ եւ հետեւաբար հսկողութեան տակ առնուելիք տարր մը: Տ. Վռամշապուհ աւագ քահ.ի եւ Պ. Ա. Զօպանեանի արտաքին նախարարութեան մօտ կատարած զիմումին վրայ, Հայերը կը ճանչցուին իբր Ֆրանսայի դարաւոր բարեկամներ: Նոր կացութիւն մը կը ստեղծուէր: Հարկ էր որ ամէն Հայ ունենար իր Հայ ըլլալը հաստատող վկայագիր մը, ստորագրուած եւ կնքուած Փարիզի Հայոց հոգեւոր հովիւէն: Այս հարիւրաւոր վկայականները կը կնքուէին ու բաշխուէին Վռամշապուհ քահանային կողմէ:

Եղիշէ Արք. Դուրեան, որ այդ միջոցին Փարիզ կը գտնուէր, պնասատելով Տ. Վռամշապուհ աւագ քահանային բարւոք գործու- նէութիւնն ու եկեղեցականի արժանիքները, զայն կը ձեռնադրէ Վարդապետ, տալով միանգամայն ծայրագունութեան աստիճան:

Զինադադարի վաղորդայնին, հայ հալածական բեկորներ կը սկսին հասնիլ Ֆրանսա եւ մանաւանդ Փարիզ: Այս վերջնոյն երկու հազարնոց հայ գաղութը տասնապատկուած էր, որով պէտք էր ստեղ- ծել նոր կազմակերպութիւններ, օգնութեան հասնելու համար նիւ- թապէս քամուած եւ կարօտ դաղթականներուն: Այդ շրջանին, եկե- ղեցիին բակը յաճախ ողբալի տեսարան մը կը պարզէր: Ազգային բարեսիրական մարմիններ, հողաբարձութիւն, Աղքատախնամ եւ Կարմիր Սաչ, իրենց կարելին կ'ընէին, ամօքելու համար անոնց ցաւերն ու հողալու պէտքերը: Բայց պահանջը շատ էր եւ միջոցները՝ սահմանափակ: Եկեղեցիին հոգեւոր հովիւը՝ Տ. Վռամշապուհ վրդ. չկրցաւ անտարբեր հանդիսատեսը ըլլալ տիրող թշուառութեան տե- սարաններուն, երբ՝ իբրեւ նախագահ վերոյիշեալ մարմիններուն, մօտէն տեղեակ էր այս կացութեան, որով շտատամսեցաւ իր նիւթա- կան միջոցներով շատերու օգնութեան հասնելու համար:

Փարիզի հայ գաղութը՝ ի վարձատրութիւն իր հոգեւոր հօր քսանը հինգ տարուան բարւոք գործունէութեան, զայն պատուելի վերջ յորելեանով մը, հանրագրութեամբ մը Ամենայն Հայոց Հայրա-

պետէն կը խնդրէ անոր տալ՝ եպիսկոպոսութեան աստիճան: Էջմիածնայ Գերագոյն Ժողովը ընդառաջ կ'երթայ Փարիզի հայ դաղութին ցանկութեան եւ Վոսաճապուհ Մ. Վրդ. 1926 Յունիս 6ին կը մեկնի Էջմիածին, ուր Գէորգ Ե. Կաթողիկոսին ձեռքով կը ստանայ Եպիսկոպոսական աստիճան: Վերադարձին, նախկին Աղեքսանդրապոլի երկաթուղիի կայարանին մէջ, կէս զիշերուան մօտ, կառախումբէն իջած ատեն անկում մը կ'ունենայ եւ կը կոտորի աջ սրունքին ոսկորը: Զգայազիրի վիճակի մէջ կը փոխադրուի հիւանդանոց ուր դաճի մէջ կը մնայ ամբողջ վեց ամիս:

Հակառակ դեռ իր ցաւատանջ վիճակին, ճամբայ կ'ելլէ եւ Մոսկուայի ճամբով կը հասնի Փարիզ, ճիշդ ճրագալոյցի նախօրեակին, 4 Յունուար 1927ին: Երկու անթացուպեր միայն կանգուն կը պահէին զայն: Վոսաճապուհ Եպիսկ. հակառակ իր Փիղիքական անկար վիճակին, միշտ մնաց պատնէշին վրայ. տասնեակ մը տարիներ եւս պատարագեց, քարօղեց, եւ երբեմն ալ իր այցելութեամբ մխիթարելով նաեւ Պելճիքայի հօտը:

Էջմիածնայ Գեր. Խորհուրդը՝ վերջին վարձատրութիւն մը եւս տուաւ անոր, շնորհելով Արքութեան աստիճան:

Վիրաբուժական երկրորդ դործողութեան մը շտոկաց իր յողնաքեկ մարմինը եւ 3 Յունուար 1940ին, 85 տարեկանին վախճանեցաւ դարմանատան մը մէջ: Յունուար 7ին կատարուեցաւ օժումն ու թաղումը Փէռ Լաշէզի գերեզմանատան մէջ, ստուարաթիւ բազմութեան մը ներկայութեան, իր ետին ձգելով սրբակենցաղ եկեղեցականի մը անունը:

Վոսաճապուհ Արք. Քիպարեանի դամբարանը յարակից է աղգ. հերոս Զօր. Անդրանիկի շիրմին: Այս կերպ քով քովի կը հանդէսն երկու վտարանդի աղգային աշխատաւորներ, ուսուցիչ եւ աշակերտ:

Հոս թող թոյլ տրուի մեզի, յայտնելու որ աղգ. հերոսին գերեզմանը երկար ժամանակ անկերպարան մնալէ վերջ, շնորհիւ Ե. Գարահիսարի «Ռազմիկ» Հայրենից. Միութեան ձեռներէցութեան, ունեցաւ համեստ յուշարձան մը, մինչդեռ Վոսաճապուհ Արքեպիսկոպոսի դամբարանը՝ իր վախճանումէն տասնըչորս տարիներ վերջն ալ, դեռ կը մնայ անշուք վիճակի մը մէջ:

Լիայոյս ենք որ Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ հոգաբարձութիւնը՝ իր քառասուն տարուան ժրաջան հոգեւոր հովիւին հանդէպ պիտի կատարէ իր վերջին պարտքն ալ, անոր դամբարանին վրայ զետեղել տալով պատշաճ տապանաքար մը:

Մեր նպատակը չէր Տ. Վոսաճապուհ Արք. Քիպարեանի ամբողջական կենսագրականը տալ այս էջերուն մէջ, այլ ներկայացնել միայն անոր կեանքին մեծ գիծերը, իբրեւ արժանաւոր զաւակներէն մին

Ե. Գարահիսարի, որուն համառօտ պատմութիւնը գրելու փորձը կատարած է Պ. Սարգիս Տէօվլէթեան: Այդ աշխատանքը կը թողունք ապագայ պատմագրին, որ պիտի տայ Փարիզի հայ գաղութին ամբողջական պատմութիւնը:

**

Ե. Գարահիսար, չգտնուելով քառուղիներու վրայ, հակառակ իր կղզիացած վիճակին, եղած է Փոքր-Հայքի հայութեան ուսումնատենչ եւ համեմատաբար առաջաւոր քաղաքներէն մին: Տուած է արժէքաւոր հոգեւորականներու հոյլ մը:

Տ. Վոամշապուհ քահանայ եղած է կրօնի եւ յեղափոխութեան սերմնացաններէն մին: Հունձքը եղած է առատ, հոգեւորական, մտաւորական եւ քաղաքական գետնի վրայ:

**


Մեր ժամանակակից հոգեւորականներու շարքին մէջ կը մտնեն .—

Վաղինակ Վրդ. Թորիկեան, առաջնորդական փոխանորդ եւ առաջնորդ: Քաջ հովիւ մը որ Ե. Գարահիսարի հերոսամարտի նախօրեակին ձերբակալուելով խողխողուած է՝ Անդրէաս գիւղաքաղաքին մօտ:



Շախարհ Մ. Վրդ. Սախակեան (արմաշական), Թորգոմ Եպիսկոպոս Գուշակեանի Սերաստիոյ առաջնորդութեան շրջանին, նաեւ անոր փոխանորդ, յետոյ սիրուած առաջնորդ Եւզոկիոյ թեմին, ըլլալով միանգամայն դասախօս տեղւոյն Աղդ. ձեմարանին, Վարուժանի եւ Յովհ. Գազանձեանի ուսուցչական շրջանին: Քաղաքին հայութեան աքսորուելէն առաջ նոյնպէս ձերբակալուած եւ խժոժօրէն խողխողուած է, կարծեմ Գրգըլ Տէրէ կոչուած մօտակայ ձորին մէջ, սպանդանոցը՝ Եւզոկիոյ հայութեան:

ուած մօտակայ ձորին մէջ, սպանդանոցը՝ Եւզոկիոյ հայութեան:



ԳԵՂԱՄ ՎՐԴ. ԹԵՎԷՔԵԼԵԱՆ

Գեղամ վարդապետ Թեվեֆելեան (արժաշահան), առաջնորդ Քղիի, նոյնպէս նահատակուած իր հօտին հետ: Արժէքաւոր մտաւորական մըն էր, հեղինակ՝ «Մէկ չափ, մէկ կշիռ» գրքոյկի մը:

Քահանաներու շարքէն թուենք հետեւեալները.—

Տէր Մկրտիչ աւագ քահ. Գալիոնեան, Տէր Նաթան քահանայ Տատեան, երկու արժանաւոր եկեղեցականներ, որոնք ողջակիզուած են՝ Շ. Գարահիսարի հերոսամարտէն վերջ, աչքերնին փորուելէ եւ չարաչար խոշտանգուելէ ետք:

Տէր Սեփոնիա քահ. Կարինեան, քաջ յեղափոխական մը: Կազմակերպիչը Անեռլի հայաբնակ գիւղին ինքնապաշտպանութեան: Զերբակալուած եւ նահատակուած է:

Տէր Մկրտիչ քահ. Սարգիսեան. Բիւրք եւ Ածպտեր հայաբնակ գիւղերու կռիւներուն կազմակերպիչն ու վարիչը: Բիւրք՝ քանի մը օրեր հերոսական կռիւ մղելէ վերջ յանձնուած է գերազաս ուժերու գրոհին չկրնալով դիմադրել: Բոլորն ալ նահատակուած են:

Տէր Սուրէն քահ. Տիրկերեան, հովիւ Թամղարայի: Իսկական

չինական քահանայ մը, ուշիմ աչքերով եւ ճարտասան լեզուով: Իր մէկ ձեռքին մէջ մաճկալը, միւսին մէջ խաչն ու բուրվառը, մէկ ոտքը կալը, միւսը՝ եկեղեցին, երկար տարիներ հովուած է իր չորս եկեղեցիներով եւ փայլուն անցեալով դրախտավայր Թամզարան: Նահատակուած է իր հօտին մեծամասնութեան հետ:

**

Շ. Գարահիսարը տուած է նոյնպէս արժէքաւոր ուսուցիչներ եւ մտաւորականներ, որոնք եղած են ոչ միայն մտքի մշակներ, այլեւ՝ սերմնացաններ յեղափոխութեան, իրենց աշակերտներուն հոգիին մէջ վառելով կրակը հայրենիքի ազատագրութեան: Անոնցմէ քանի մը հատին անունները հոս թուել՝ յարգանքի տուրքի մը հատուցումը կը նկատենք անոնց յիշատակին:

Աւագ Տուրիկեան, իբր յեղափոխական ձերբակալուած եւ աքսորուած է Աքիա, ենթարկուելով շէկ երկաթի ահաւոր չարչարանքներուն: Սահմանադրութեան շրջանին վերադառնալով Շ. Գարահիսար, վերստանձնած է իր ուսուցչական պաշտօնը, Ազգ. Վարժարանին մէջ:

Գրիգոր Վահունի, ծնած Կովտուն, բայց փոքր տարիքին դարձած Շ. Գարահիսարի զաւակ, երկար տարիներ ապրելով եւ ուսուցչական պաշտօններ վարելով քաղաքին եւ Թամզարայի մէջ: Եղած է Պոլսոյ Կեդր. վարժարանի աշակերտ: Քաջ յեղափոխական եւ հայր՝ քաղմանդամ ընտանիքի մը: Հայրն է՝ Կապոյտ Խաչի Ամերիկայի ժրաջան անդամուհիներէն Տիկ. Զապէլ Տօքթ. Սերոբեանի: Համիտեան շրջանին՝ իբրեւ վտանգաւոր յեղափոխական աքսորուած է նոյնպէս Աքիա, իր չորս զաւակներուն հոգն ու դաստիարակութիւնը թողելով իր դաստիարակ ուսուցչուհի կնոջը՝ Երանուհի Վահունիին: Սահմանադրութեան վաղորդայնին ազատելով վերադարձած է Շ. Գարահիսար եւ վերստանձնած իր տնօրէնի պաշտօնները Անդրէաս դիւղաքաղաքին եւ յետոյ Թամզարայի մէջ: 1915ի ջարդին շարան մը ուսուցիչներու եւ ընկերներու հետ շղթայակապ տարուելով մօտակայ ձոր մը, ահաւոր տանջանքներով նահատակուած է՝ 1895ի Թամզարայի ջարդին կազմակերպիչ Կայէն Մուսթաֆա կոչուած գաղանին ձեռքով:

Սերոբէ Տէր Պետրոսեան, Շ. Գարահիսարի մէջ ուսուցչական պաշտօններ վարելէ վերջ, անցած է Եգիպտոս եւ երկար տարիներ եղած է ուսուցիչ եւ տնօրէն Աղեքսանդրիոյ Ազգ. վարժարանին մէջ:

Մեռած է վերջերս, խոր ծերութեան մէջ, տեսողութիւնն ալ կոր-
արնցուցած :

Գագիկ Օզանեան, ուսուցիչ եւ յեղափոխական : Պաշտօնավարած է՝ ծննդավայրին Ազգ. վարժարանին մէջ : Ունի հեղինակութիւն մը « Պատմութիւն հայերէն լեզուի եւ բանահիւսութեան » անունով : Համիտեան շրջանին ձերբակալուած եւ բանտարկուած է Տրապիզոնի մէջ : Վարած է նաեւ Մարզուանի Ազգ. Սահակեան վարժարանին տեսչութիւնը : Եղած է նոյնպէս տեղւոյն ամերիկեան «Անաթոլիա» դռլէճին հայերէնի եւ պատմութեան դասախօսը : Մարզուանի ջարդին ձերբակալուած եւ խողխողուած է դռլէճի շատ մը աշակերտներուն հետ : Քոյրն ալ եղած է ուսուցչուհի տեղւոյն Ազգ. վարժարանին մէջ : Յայտնենք նոյնպէս որ եղբայրը՝ Իսրայէլ Օզանեան, եղած է Շ. Գարահիսարի հերոսամարտին կազմակերպիչներէն մին :



Սրբուհի վարժուհին իր աշակերտներով 1890ական թուականներուն

Տիգրան Կարմիրեան, կիսաւարտ արմաշական մը: Ուսուցիչ հայերէն լեզուի եւ մատենագրութեան: Պաշտօնավարած է ծննդավայրին եւ Սեւ ծովու քաղաքներու վարժարաններուն մէջ:

Առաքել Տէր Գեորգեան, աշակերտած՝ Պոլսոյ Կեդր. վարժարանին: Ուսուցիչ հայերէնի եւ պատմութեան:

Սարգիս Քաջունի, Աւետիս Թացեան եւ ուրիշ արժէքաւոր ուսուցիչներ, որոնք պատրաստեցին Շ. Գարահիսարի հերոսամարտին քաջ սերունդը:

**

Շ. Գարահիսար տուած է նաեւ շարք մը ուրիշ քաղաքական դործիչներ, արուեստագէտներ, զիտուններ եւ մտաւորականներ, ինչպէս՝

Յարութիւն Շահրիկեան (Ատոմ) ծնած Թամզարա: Յայտնի իրաւագէտ, տեսարան, կուսակցական վարիչ եւ բեմբասաց: Անդամ Պոլսոյ Ազգ. Երեսփ. Ժողովին: Իր խօսքերը միշտ կշիռ մը ունեցած են՝ ազգային կենսական խնդիրներու մէջ: Աքսորուած եւ ջարդուած Այաշի բանտին կալանաւորներուն հետ:

Գառնիկ Շահրիկեան. յեղափոխական, ուսուցիչ եւ հաշուապահ: Մեռած Փարիզի մէջ, անողոք հիւանդութեամբ մը:

Թորոս Թորամանեան. հնախոյզ, ճարտարապետ: Հայաստանի մէջ կատարած իր հնախուզական աշխատանքներովն ու հնութեանց վերակառուցումներովը, ու իր դրած հեղինակութիւններով՝ միջազգային արժէք ներկայացնող գիտուն մը: Մեռած է քանի մը տարիներ առաջ:

Գրիգոր Ղարիպեան (Հրաչեայ Մարալ). վկայեալ երկրաչափ, հանքարան կլասքոյի համալսարանէն եւ քաջ հերոս Չէյթունի կռիւներուն: Սահմանագրութենէն վերջ վերադարձած է Շ. Գարահիսար: Շապին-Գարահիսար – Կիրասոն երկաթուղիի գիծի մը շինութեան իր ծրագրին վիժումէն վերջ, անցած է Փարիզ եւ մեկնած Մարոք, իբրեւ ճարտարագէտ հանքային ընկերութեան մը:

Հայկ-Արամ Քիպարեան, անդրանիկ որդին Տ. Վոամշապուհ Արք. Քիպարեանի: Ընթացաւարտ Կարնոյ Սանասարեան վարժարանէն: Վկայեալ հողագէտ-ճարտարագէտ: Հեղինակ «Սրտի Մրմունջներ» բանաստեղծութեանց զրքոյկի մը, իր Ֆրանսերէն թարգմանութեամբ: Ֆրանսերէնի թարգմանիչը՝ Րաֆֆի «Սամուէլ»ին: Մեռած՝ 11 Փետրուար 1952ին:

Արսէն Մարկոսեան . նկարիչ ուսուցիչ Եւզոկիոյ Ազգ . ճեմարանին մէջ : Անյայտացած աքսորի ճամբաներուն վրայ :

Շահնագար Գուլումեան . տաղանդաւոր նկարիչ մը : Ծանօթ Փարիզի Հայերուն :

Գարեգին Խոցեան . ճանչցուած լուսանկարիչ՝ Փրանսական շրջանակներու մէջ եւ 1914ի պատերազմին կամաւոր զինուորներէն մին : Պատուուած շքանշանով մը :

**

Թուենք քանի մը անուններ եւս մեր մտաւորականներէն . —

Խորէն Գաբիկեան . աշակերտ՝ Վենետիկի Մուրատ Ռաֆայէլեան վարժարանին : Համալսարանական : Արժէքաւոր մտաւորական մը՝ բանասէր , պատմագէտ եւ մանկավարժ ուսուցիչ : Այժմ դասախօս Անթիլիասի դպրեւանքին մէջ :

Գուրգէն Միսիթարեան . աւարտած Պոլսոյ Ազգ . Կեդր . վարժարանը : Յայտնի գրադատ , հրատարակագիր , խմբագիր «Յուսաբեր»ի եւ այժմ «Հայրենիք» օրաթերթին :

Միքիման Օզանեան . պատրաստուած մտաւորական մը : Ուսուցիչ Շ . Գարահիսարի մէջ : Այժմ «Հայրենիք» օրաթերթի խմբագրութեան մէջ :

Լեւոն Մօզեան . աւարտած՝ Պոլսոյ Ազգ . Կեդր . վարժարանը : Փարիզահայ մտաւորականներուն ամէնէն ճանչցուածներէն : Հրատարակագիր , խմբագիր եւ հեղինակ :

Արամ Հայկազ . Շ . Գարահիսարի հերոսամարտին վերապրողներէն : Աշակերտած Պոլսոյ Եօայեան եւ Կեդր . վարժարաններուն : Երիտասարդ գրող մը : Կը մշակէ դասական գրականութիւնը : Ունի հեղինակութիւն մը , իբրեւ կենդանի վկայ : Իրմէ կը սպասուի Շ . Գարահիսարի հերոսամարտին ամբողջական պատմութիւնը :

**

Արծուի բոյն Շ . Գարահիսարի պատմութիւնը շատ հարուստ է՝ հայ ժողովուրդի ազատագրական պայքարի զոհողութեան սեղանին տուած իր անձնուէր քաջամարտիկներու թիւով :

Առաջին շարքին կը գտնուի Ազգ. Հերոս Զօր. Անդրանիկ, նոր օրերու Վարդանը որ իր առասպելական քաջագործութիւններով արժանացաւ Ազգ. Հերոսի արժար տիտղոսին:

Ղուկաս Տէօվլէթեան. կապոյտ աչքերով, շէկ մազերով Ղուկաս Ազբարը: Փոքր էր կազմով, բայց շատ մեծ՝ իր հայրենասիրական ոգիովն ու քաջութեամբը:

Յաբէթ Թեվեֆէլեան, քաջ եւ յանդուզն յեղափոխական մը որ ձերբակալուելով գլխատուած է Խարբերդի մէջ:

Արմենակ Գարակէօզեան, քաջութեան եւ անձնագոհողութեան տիպար յեղափոխականը: Իր քսանըրկու տարեկանին անցած է Պոլիս




مهت تحقیفه رئیس سابق محمد علی مملوق طرفندن ترتیب اولاد
 اشکهاره تحمل ایده میبردک بش آی مقدمه ضابطه توفیقاً سنه
 بتول غازیله و امتراق صورتیه حیات شایسته خاتمه و برن
 ۱۱ تموز ۱۳۰۳ آرمناق قره کوزیان افندی
ԱՐՄԵՆԱԿ ԳԱՐԱԿԷՕԶԵԱՆ
 ԲՆԻԿ Ե. ԳԱՐԱԶՆԱՍՐՅՈՒ
 Հ. Յ. Գաղեակցու յեան եռամիսան գործիչներին
 Պատմ. ՄԷՆՈՒ Այլի կերպով անհրաժեշտն չի կրնալ զխնաման
 Ինչ ամիս առ այ բանին մէջ հարիւրով անմիտապանեղամ իր
 հասնելու ծաղիկ արիւթին մէջ: 1903

ուսանելու: Մտած է Դաշ-
 նակցութեան շարքերուն մէջ
 եւ նուիրուած յեղափոխա-
 կան քարոզչութեան: Օսմ.
 սահմանադրութենէն քիչ ա-
 ոաջ ձերբակալուելով կը
 նետուի բանտ եւ կ'ենթար-
 կուի դժոխային տանջանք-
 ներու: Թուրք դահիճները
 կը քաշեն եղունգները, կու-
 սակցական դադանիքներ
 կորզելու համար իրմէ: Ոս-
 տիկանապետ դադան Մէհ-
 մէտ Ալին իրեն կը զգացնէ
 թէ կախազանի պիտի դա-
 տապարտուի եւ չուանն ալ
 իւղոտուած է, եթէ չկա-
 տարէ կարգ մը խոստովա-
 նութիւններ: Անիկա կը
 մերժէ մատնիչ դառնալ եւ
 կ'որոշէ անձնասպան ըլլալ:

Իր խուցին կանթեղին քարիւղը ինքնիր վրայ սրսկելով, պատրոյգովն
 ալ կրակ տալով, կը ճենճերի դժոխային բոցերու մէջ, զարմանք եւ
 սարսուռ պատճառելով նոյնիսկ իր թշնամիին: Սիամանթօ, քաջն
 Արմենակի եղերական մահէն խորապէս զգացուած, իր բռնկած
 հոգիին խորքէն կ'արձակէ հրաբորբ լաւաներ. « Հայորդիները կամ քի
 մէջ զիւցազն » քերթուածով:

Շ. Գարահիսարի հերոսամարտը իր բացառիկ տեղն ունի հայկա-
 կան բոլոր հերոսամարտներուն մէջ: Այի մը քաջեր, չնչին պաշարով,



ԱՐԱՄ ՀԱՅԿԱԶ

առհասարակ զէնքով ու փամփուշտով, կղղիացած հսկայ բերդի մը մէջ, որուն կողերուն վրայ եկան փշրուելու թուրք խուժանին եւ զինուորներուն դրոհները, մինչեւ որ քանրուի օրուան օրհասական կռիւէ մը ետք, անձնատուր կ'ըլլան :

Ֆիզիքական սլարտուիւն, բայց բարոյական յաղթանակ :

Պանթէոն մը հայկական, որուն վրայ կը սաւառնին հողիները Ղուկասին թէ Շապուհին, Վահանիկին թէ Հմայեակին, որոնք իրենց խաչովը, դրիչովն ու սուրովը կերտեցին փառքը Հայուն մարտական ոգիին եւ բազուկին :

Փա՛ռք եւ սլատիւ հայ ազատագրական սլայքարի անմահներուն :

ՄԱՆՈՒԿ ՔԻՊԱՐԵԱՆ

ԲՆԱԳԱԻԱՌԻ ԵՐԳԵՐ



ԱԻԵՏԻՍ Գ. ՄԵՍՈՒՄԵՆՑ

ԽՕՍՔ ԷՐ ՏՈՒԱԾ (մե'նասպար)

DECISO, 8# = d.

Չու. Օր. Մետուսուրայ

խօսք էր տր սաս. բայց չի տը չիւ, նուշ աչ քե րու
 տա թիւ տը չիւ կէս տ րու կիւ. ին ջու չ'առ մի
 քա ԲԵԼ տը շիւ. քա լէ' Արմեն, քա խիւժ, քա խիւժ,
 Արմեն նա կիւ: քա ջը րու ջը վրա յիւ ա խիւժ: վրա յիւ ա խիւժ:

Ազգիկները գարմանի բանէս,
 Ցաւ յայտնեցին Հայկանոյշին.
 Ազգի', խեղ ես, որ պիտ' առնես
 Այդ դրմդոկած կէս ապուշին:
 Քալէ', Արմեն', փախի'նի, փախի'նի:
 Տանը դուռը վրայէն ախիւնի:
 Չայն մի' հանէ՛ք, ու մի' մտնա՛ք,
 Համբերեցէ՛ք որ պիտ' տեսնա՛ք.
 Խաղ մը խաղամ այդ ախմախին,
 Երթայ պատմէ հանդիպողին:
 Քալէ', Արմեն', փախի'նի, եւայն:
 Հարսանիքին ուրբայ գիշեր,
 Կէս գիշերէն քիչ մը ուշ էր.
 Դուռը ախեց փախաւ ձորը,
 Լուր չի տուաւ նոյնիսկ մօրը:
 Քալէ', Արմեն', փախի'նի, եւայն:
 Հոն կը սպասէր Արմենակը,
 Նժոյգ էր ձին եւ միւսակը,
 Շատ լաւ գտան ժամանակը,
 Հարսը դրաւ ձիուն քունակը:
 Քալէ', Արմեն', փախի'նի, եւայն:
 Նժոյգ քոս'ւ գնաց առան,
 Բարձր փուխ էր, քրքան, սառան.
 Հանուէ՛ Հայկուշ, պառկէ վրան,
 Թող հոնտեղ լայ, կէս ձեր փեսան:
 Պառկէ՛ Հայկուշ, պառկէ՛, պառկէ՛,
 Այդ ալ չեղաւ, մէյ մը գրկէ:

ՊԵՌԱԻՈՆ(*) ՎԱՐԴԸ


(Մենապար)

SCHERZO. 96. d.


Ն. Շ. Մետուսերայ



Պե՛րա լո՛ւ վարձը թա՛յն ու՛ր քե՛զի ջա՛յ, ջա՛յ,
 Ը՛ն տա՛խ թա՛յն ու՛ր պո՛ղիս զօ՛ւ տի՛ն ջա՛յ, ջա՛յ.



Վարձը շո՛ւ շո՛ւ շո՛ւ շո՛ւ հա՛ջ ու՛ր քե՛զի ջա՛յ, ջա՛յ. Նի՛ն, Դո՛ն վարձը,
 հարձա՛կ թա՛յն թա՛յն վա՛յ լո՛ւ քե՛զի ջա՛յ, ջա՛յ.



Գա՛ն, Դո՛ն վարձը, Դո՛ն պա՛ղիս ԿԸ մե՛ղ թա՛յն ա՛ ջո՛ւ:

Ղատիճիկ կըլտըր հագուեր է,
 Փիլիկն երեսը պագեր է,
 Գօտիկը մէջէն փակուեր է,
 Փիլօն սնտուկը պահուեր է:

Ախ, դուն վարդուշ,
 Ջան, դո՛ւն վարդուշ,
 Բո պաշիկը՝
 Մեղրէն անուշ:

Պե՛րա լո՛ւ պոսքան ցանեցին,
 Փիլօն սընտուկէն հանեցին,
 Թուփալ էշուն թերս հեծցուցին,
 Ամբողջ թաղը պտըտցուցին:

Ախ, դուն վարդուշ, Եւայլն:

Դուռ դըրացիք եկան գացին,
 Տէրտէր բերին պոսակեցին,
 Առեալ ըզձեռն վարդուշի,
 Ու կապեցին գործն անուշի:

Ախ, դուն վարդուշ, Եւայլն:

(*) Շ. Գարահիսարի աշխատանքը լուսագոյն մէկ թաղը:

ԵԿՈՒՐ ԵՐԹԱՆՔ

(Շուրջպար)

MODERATO. 132 = ♩; 68 = ♩.

Չու. Գ. Մեհումբերց

հայտնարի

Մոզան) Ե կուր, եր թանք, յա լնց պաղ չան, պզ տիկ հարս.

Խն չոր քա ղեմ, Գօ տիկ շա թեմ, պզ տիկ հարս: պզ տիկ հարս:

հարս) Զհ, ես չեմ գար, յա լնց պաղ չան չար տը ղայ.

Խն չո թը քեզ, կարծիր վարձեալ, շան տը ղայ: շան տը ղայ:

ՏՂԱՆ.— Եարբդ մեռաւ, քող նոր եարբդ
 ես ըլլամ,
 Խօսք տուր ինձի, խօսքիդ դուրպան
 ես ըլլամ:

ՀԱՐՍԸ.— Եարբս մեռաւ, եարբս մ'ըլլար,
 չա'ր տըղայ,
 Խօսքիդ բընաւ չեմ հաւատար,
 շա'ն տըղայ:

ՏՂԱՆ.— Նազ մի' աներ, նազիդ մեռնիմ
 պգտի'կ հարս,
 Ես քու պոյիդ, խալիդ մեռնիմ
 պգտի'կ հարս:

ՀԱՐՍԸ.— Ի՞նչ ես ինկեր իմ ետեւէս,
 չա'ր տըղայ,
 Իմ հանգիստըս մի խանգարեր,
 շա'ն տըղայ:

ՏՂԱՆ.— Վա'յ Աստուծմէն դուն չե՞ս վախնար,
 պգտի'կ հարս,
 Ես քեզ ծընող մօրք դուրպան,
 պգտի'կ հարս:

ՀԱՐՍԸ.— Դո՛ւն իմ խելքս գըլխէս տարիք,
 չա'ր տըղայ,
 Ես քու սիրուն տունէս կ'ըլլամ,
 Չա'ն տըղայ:

ՀԱՐՍԸ ՄԻ՛ ԼԱՐ

(Պարերգ)

DELICATE, 98 = ♩.

Նու. Օր. Մեսսիանց

սի - հար սը մի՛ լար, մի՛ լար, աչքը՛ կը ցաւի.


Քեզ պէտէկ կար գո շին տը նակն աւ ըլ էի,

ՀԱՐՍՆԵՒՈՐՆԵՐԸ .— Հա՛րսը, մի՛ լար, մի՛ լար, աչքը՛ կը ցաւի,
Քեզ պգտիկ կարգողին տնակն աւրբի:

ՀԱՐՍԸ .— Ի՞նչպէս չի լամ, մայրի՛կ, ինձի խաբեցիք.
Սիրածիս չի տըիք, սիրտըս վառեցիք:

ՀԱՐՍՆԵՒՈՐՆԵՐԸ .— Սիրածդ ջահէլ է եւ թէ ազատ է,
Ո՛չ տուն ունի, ո՛չ տեղ, վիճակը վատ է:

ՀԱՐՍԸ .— Ես ի՞նչ բնեմ տունը, տունը՛ բուն մ'ըլլար,
Զիս սիրածիս տայիք, սիրտըս գոհ ըլլար:



ՎԱՐԴԱՎԱՌԻ ԿԻՐԱԿԻՆ

(Շուրջպար)

MODERATO, 132 = ♩: 88 = ♩.
հայե՛վարթ

Նև. Օ. Տետուժենյ

շառ դա՛վա ո՛ր կի թա կին, Քոյ նան ու՛ր տի գը նա չի.

ան զաւ քի տան մը ան գին, սի թուն ապշած մը նա չի.

Նյս տա ո՛ր աշ նան, եր թանձ Սուրբ է հան, ոս կի մա տանին, տամ քեզի նը շան.

Նյս տա թի աշ նան, եր թանձ Սուրբ է հան, ոս կի մա տանին, տամ քեզի նը շան.

Վարդավառի կիրակին

ձոյնան ուխտի գրնացի,

Անցաւ փիտան մը անգին՝

Սիրուն ապշած մընացի:

Այս տարի աշնան, (կրկ.)

Երթանք Սուրբ էհան,

Ոսկի մատանին՝

Տամ քեզի նըշան:

Ծառերուն տակ, մեր թաղէն՝

Երեք բոյրեր գեղանի,

Ահա՛, խնձոր կը քաղեն,

Մէկը միւսին կըլմանի:

Այս տարի, եւայլն...:

Էն պգտիկը երգ ու սէր,

Իւր անունն է՝ վառվառայ.

Այսպէս եար ես ըստեղծեր՝

Իմ աննըման Թամգարայ:

Այս տարի, եւայլն...:

ՀՈՒՆՁՔԻ ԵՐԳ

MODERATO, 80 f. d.

Ս. Չ. ՄԵՍՆԻՍԵՅ

Մեր տանը դէմ, հասամ գարի,
 Բանի քաղեմ հովր տանի:
 Երկու կախա մէջ կը բանի' (4րդ.)
 Մէկն իմ եարիս շատ կըլմանի:

Աչքը, ունքը քառք քաշամ,
 Երեսները վարդ կըլմանի.
 Այդ իմ եարս է սրտով սիրում' (4րդ.)
 Շրթներն ալ կեռաս կըլմանի:

Քովի արտը հասամ ցորեն,
 Պիտի քաղենի ուրք օրէն,
 Մեր յամպարներ պիտի լեցուին' (4րդ.)
 Հատիկներով ոսկի, նորէն:

Թեւեր սոքտամ առիւծի պէս
 Որան քառցամ կալ կը տանի,
 Պոյին մեռնիմ, եարս է, մի տե'ս, (4րդ.)
 Քաջ հայդուկի մ'ան կըլմանի:

Դէմէն ինծի աչօք արաւ,
 Եկաւ քովս, պաշիկ մ'առաւ.
 Բուռը ձեռքէս ինկաւ գետին' (4րդ.)
 Եարքս փախաւ դէզին ետին:

ԿԱՐՄԻՐ ՍՆԴՈՒՍ

(Շուրջպար)

NOBILE, 132 = ♩; 86 = ♩.

Նև. Օ. Մետուժենյ

հայեվարի

Կար միր սն դուա հագեր ես. Լա հո ուի գօ տի կապեր ես.
 Ե տր դու- ու կայ ներ ես. Դուռ իմ սր տի կու խար կեր ես.
 Լա հո ուի գօ տի կա պեր ես. Կար մը տու կու, ձեր մը տու կու.
 Դուռ իմ սր տի կու խար կեր ես. Կար մը տու կու, ձեր մը տու կու.
 Խաա վար դի պես կար մը տու կու. Ե ու շա նի պես ձեր մը տու կու:

Կարմիր սնդուս հագեր ես,
 Լահողի գօտի կապեր ես,
 Ելեր դուռը կայներ ես՝
 Դուն իմ սրտիկըս խարկեր ես:

Կարմրուկըս, ներմրուկըս,
 Խաա վարդի պես կարմրուկըս,
 Շուշանի պես ներմրուկըս:

Զուրը կ'երթաս դուն բոպիկ,
 Քու բերանըդ շատ պըտըլիկ,
 Թուշերդ են մեկ մեկ փոսկիկ՝
 Պաչիկ մ'առի ֆեթիդ մօտիկ:

Կարմրուկըս, եւայլն....:

Առի գայն ինձ արմաղան,
 Գրևա՛, դուն մամայիդ ըսա՛,
 Զիս պաչիկ անող սըղան՝
 Պիտի ըլլայ մեզի փեսայ:

Կարմրուկըս, եւայլն....:

ԵԼԷՔ ԵՐԹԱՆՔ

(Պար)

SCHERZO. 104 = d.

Նու. Պ. Մեսոպետաց


Խարս նեւորներ, ելէք. երթանք ժամտունը.
 Աւրբ պըսա կի ժաժա նազն է ժամտունը.

Հարսնետրնե՛ր, ելէ՛ք, երթա՛նք, ժամտունը,
 Աւրբ պըսակի ժամանակն է, ժամտունը: (Կրկ.)

Կոկոնի պէս Խարս ենի առեր ձեր տունէն,
 Առիւծի պէս փեսայ տըրինի մեր տունէն: (Կրկ.)

Ձեր աղջիկը քէք պի՛ տանինք ժամտունը,
 Ուր որ վերջը գոյգ պի՛ բերենք ձեր տունը: (Կրկ.)

Եկեղեցին երթանք, տեսնանք սուրբ պըսակ,
 Մընաք բարով, խընամիներ շատ մի՛ լաք: (Կրկ.)



ՓԱ՛ՌԲ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

ANDANTE

Ն. Օ. ՏԵՍՈՒՄԵԱԿ

mf

Չբա՛րբա՛ս զա՛ տու՛թեան՝ որ տը՛ ուա՛ մե՛զ, քա՛րտ, զ՛այն լ՛ տու՛կր կը՛ն. քա՛ջ, ող՛ջ ու՛ ան՛ յաղ՛թ

Կ՛այ որ ի՛նն տա՛րին՝ Քա՛րա՛ նի՛ սա՛ թի՛, որ մ՛ի՛ զո՛րկէ՛ի տա՛ս ջը՛ եօ՛թ տա՛ թի՛:

Փա՛րբ ազատութեան որ տուա՛ս մեզ քա՛խտ,
 Վա՛յելել կրկին քա՛ջ, ող՛ջ ու՛ ան՛յաղթ.
 Հա՛յորդին տա՛րին Գարահիսարի,
 Որմէ՛ գուրկ էի տասներկու տարի:

Լե՛ցիր տուն-տեղ, գործը՛ շահաւէտ,
 Կախեցիր սուրբ, մարթիր թեւէ՛դ՝
 Լուծելու վրէժն թափուած հայ արեան,
 Որուն հազարներ անմեղ գոհ եղան:

Կայծակի մը պէս կը հասնէիր միշտ,
 Հուն ուր կ'ըսուէր թէ Թուրքեր ամբարիշտ,
 Կը կողոպտէին հայ ժողովուրդն անզէն,
 Կամ անոր բերնի հացը կը կորզէն:

Ա՛յ Հայն ազա՛տ է, ազատ ես ե՛ւ դուն,
 Ապրէ՛ ասկէ վերջ կեանք մը զըւարթուն,
 Որպէսցի բանտին սեւ օրերդ մոռնաս,
 Ո՛վ դուն անվեհեր Տեօվէթեան Ղուկաս:

Շ. ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ԳԱԻԱՌԱԲԱՐԲԱՌԸ

Ա.

- ԱՓՈՒՃԻԿ = Չեռֆէն քոցնել — յանկարծակոն մեռնիլ
ԱԶՄԶԵԼ = Մուքին մէջ խարխափել, շօշափել
ԱՂԵՏ = Երկրաշարժի դէմ կողովի պէս հիւսուած տուն
ԱՂՈՒՆՈՒԿ = Աղանի
ԱՂՏԱՀԱՆ = Մարձիչ (Թեւաբ)
ԱՆԵԼ = Ընել
ԱՆՕՐԵՄ = Զուտ եւ մաքուր ալիք
ԱՍԱՆԿՈՒՃԻԿ = Այսպէս
ԱՏԱՆԿՈՒՃԻԿ = Այդպէս
ԱՐՏԱԼԱ = Խաշացու կովու ոտքեր
ԱՆԿՃՈՒԿ = Սալոքին որձառք
ԱՅԵԿ Է = Աճօք է

Բ.

- ԲԱԶԿԻ ԹԱՆ = Խոսացած քան բազուկով (նակնդեղ)
ԲԱՂՆԻՑ ՏԵՍՔԸ = Կնոջ վայելչակազմութիւնը՝ դիտուած բազ-
նիքին մէջ
ԲԱՆՃԱՐ ԲՈՒՍՈՒԿ = Գարնան ձիւնախոտն անձրեւ
ԲԵՆԾԱՄՈՑ = Համով
ԲՂԲՂԵԼ = Զուրի աչիւն կարկաչիւնը
ԲՂԵՂՈՒԿ = Գետիւնը փակած հովանաձեւ ծաղիկով խոտ մը
ԲՌԻԿ = Տափուիս մարդ
ԲՈՑՈՒԶԱԳ = Զոր խոտեր հաւաքելով վառել՝ տղոց կողմէ
ԲՐԻՆԿՍԻ ՎԱՐ = Քթին բերնին վրայ պառկիլը, իյնալը

Գ.

- ԳՈՌԵԼ = Անհաւատի մեռել, սատակ

ԳՈՌՆՈՅ = Անհաւատի գերեզմանաց
ԳՈՐՏԱԲՈՒՐԴ = Զրեգերբի մամուռ
ԳՈՒՆՏՈՒՔ = Անպոչ հաւ

Դ.

ԴԱԼՄԱ = Տարեց կանանց շրջագգեստ, գոց կարմրագոյն չուխայով
ԴԱՐՏԱԿ = Զուլիակի եղէգ (*ժասուրա*)
ԴԷՊՁԵՄՍ = Մինչդեռ, երբեմն, քանի որ
ԴԻՏԷՐ = Ցուննի անասնոց
ԴՂՈՒԿ = Զուրի որդ

Զ.

ԶԸՄՓԸՌՏ = Կեդերը ելած կորեկ, կը խաշեն եւ կ'ուտեն

Է.

ԷԼՄԱՆ ԷԼՄԱՆ = Արծաթի պէս ջուրին վագրը
ԷՐԷՏ = Ըրաւ, բերաւ, տուտ (*Գաւառաբարբառ* խամշոնցի
պառաւանքուն՝ ճանիկի մէջ)

Ը.

ԸՂՈՐԴ = Իբաւ, նիշդ

Թ.

ԹԱԹՂՈՒՆ ԼՈՇ = Պահոց անուշեղէն, տեսակ մը *փախլաւա*
ԹԱԹԱԽ = Աղտոտ աման
ԹԱԹԱԻ = Բարակ անձրեւ
ԹԱՆՔԱՄ = Զուրբ քամուած մածուն
ԹԵԹԵՔ = Փրփուր՝ ք-քունքու վրայ (*Թուրչի*)
ԹԻՖԱՆԱ = Ճահէլ-նիւան կին
ԹԽԻԿ = Միեւնոյն խմորէ մարդ
ԹՍՏԱՆՎԱԶ = Սին ըսուած պտուղը (*Իւլէզ*)
ԹՈՆԹՕՇ = Գիրուկ, սիրուն տղայ

ժ .

- ժԱՂ = Բողիկ
- ժԱՇԿ = Երկրաշարժ

լ .

- ԼԱՊԱՏԱ = Լալ բանաբար, նուրիկին մէկ տեսակը (oseille)
- ԼԵՊԼԻԶՈՒԱԾ = Զուրբերու շփումէն մաշած
- ԼԵՎԷՆՏԻ ՊԷՍ = Խոշորակազմ
- ԼԸՖԷ = Տեսակ մը կար (գալաուորիկ)
- ԼՈՂԼԱՆԶԱ = Տեսակ մը օղ հին ժամանակումն

Խ .

- ԽԱՂՐԱԾ = Կեդտին մէջ դեղնած
- ԽԱԶԵՐԿԱԹ = Պտուկի համար շինուած բոնիրի եզերքին
- ԽԱՐԱՊԱ = Գոռում
- ԽԼԷԶ = Խխունջ
- ԽՊԸԼԻԿ = Թիքեռնիկ, նաեւ բերեւտլիկ
- ԽԸԼՏՐԿԱՆ = Հարսանիքի հրաւիրող կին, խնդրկան
- ԽՈՆԶԱՆԱԿԱԼ = Վեգեկ, շապկընկերի կապը անցած տեղը
- ԽՈՆԶԱՆՈՒՆԻ = Շապկընկերի կապ
- ԽՈՏԿՈՒՌ = Խոտէ անկողին, երախաներու օրօրացին համար
- ԽՈՒ = Տղաքը վախցնելու երեսակայական հրէշ, դել

Մ .

- ՄՄՌՆՈՒԿ = Ծիծեռնակ

Կ .

- ԿԱԼԻԿ = Երախաներու ոտնաման
- ԿԱԼԻԶ = Կարուած ֆուրջի կտոր՝ բոնիրի խողովակին ծակը գոցելու համար
- ԿԱՊՐՅԱԽ = Կապար խոտին կանանչ մասը
- ԿԸԼՏԸՐ = Պալֆանեան տեսակ մը տարագ (Տիլթան)
- ԿԸԼՊԸՊԸԽ = Կնկանը խօսքէն դուրս չելլող

- ԿԸ ԿԱԼԱՃԵՍ = Տղա՞յ կը խարես
 ԿԼՈՐ = Սեխ
 ԿԼԿԸԼ = Կորեկ · ջուրի փարչ
 ԵԸՂԶԻԼ = Քէնտի
 ԿՇՏԻ ԲՂՈՒԿ = Փարչ՝ բոնրի եզերքին ջուր տափցնելու համար
 ԿՐԱՊԱԼԱ = Թուփի մը պտուղը գոր բքու շինելու կը գործածեն
 ԿՏԸԼԱՅ = Կովու վէգ
 ԿՏՏԵԼ = Գուլպայ նորոգել, կարկտել
 ԿՈԼԱՆ = Եկեղեցիի բանալի · «Պահեղ մի արեր, Տէրտէրր բերանդ
 կովան կը դնէ»
 ԿՈԹԻԿ = Կենդանիներու յարդին մնացորդը
 ԿՈՎԼԱԿ = Կով կրելու փայտէ սան
 ԿԻԿՏԻԿ = Կովու կամ ուղտի մազէն շինուած գնդակ
 ԿՈԼՈՐ = Խոշոր բուֆ
 ԿՈՇ = Պարպուած չորցած դդում՝ աղ լեցնելու համար
 ԿՈՒԼԱԿ = Քունիքին վարը մազերու հատած տեղը
 ԿՈԼՈԶ = Խոշոր բրիֆ
 ԿՈՏԱԼ = Հերիսա ծեծելու բակ
 ԿՕՊՈՒԿ = Գիրուկ շան լակոտ

Հ.

- ՀԱԻԵՂ = Խաղող
 ՀԱՃԱՐ = Լաւորակը փիլտ եփելու կը գործածուի
 ՀԱՐՍՆՈՒԿ = Պուպրիկ
 ՀԸՊԸ = «Հապա» բառին աղաւաղուածը
 ՀԸՌԵԼ = Զոկել, գատել,
 ՀԻՏՏԱՌԱ = Անմիտ մարդ, փքը ամէն բանի մէջ կոխող
 ՀՈՏՈՒԼԱ = Բոկեղի պէս տեսակ մը հաց
 ՀՈՒՐՊԱ = Սրնագոյն, կծու հոտով բոյս · հացհամեմ
 ՀՈՐԴ = Քացախի վրան կապած լերք

Ձ.

- ՁԹՌԱՄ = Օճիքը իւղէն սեւցած
 ՁԻՆ ԿԸ ՄՌԼՏԱՅ = Ձիւն գալու նախանշան

Ղ.

- ՂԸՍՏԻ = Մանեակ, քանի մը շարք ոսկիով

Ճ.

- ՃԱՂ = Բազրիք. — գուլպայի շիշ՝ փայտէ
 ՃԸԶՎՈՐԻ = Փոքրի ննի, գետնամար
 ՃԶՎՐՏՈՒՔ = Վարդավառին, տղոց իրարու վրայ ջուր նետելը
 սրսկոցով
 ՃԸՃԸԼՄՈՐԹ = Զարչարամահ, բութ դանակով մորթելը
 ՃՆՃՆ = Լալկան մարդ կամ տղայ
 ՃՆՏԻԿ = Շատ մութ, սեւ
 ՃՈՐԱԼ = Հայհոյել
 ՃՊԸԼՏԿԻԼ = Ոտքին կոնք տեղէն ելլել

Մ.

- ՄԱՆՏԻԿ = Հարսանիքի ժամանակ փեսին ընկերները
 ՄԱՌԷ ՄԸՌԻԿ = Վայելուչ, փոքրակազմ
 ՄԱՏԻՄԱԽ = Բանջարեղէն մը. մատի դեղ
 ՄԸԽՆՈՅ = Կիներու գործազգեստ
 ՄԸՌԵԼ = Ընդունիլ, հաւանիլ

Ն.

- ՆՈՆՈՒԼ = Կակուղ խմորեղէն մը (տեսակ մը *դուրապիէ*)

Շ.

- ՇԱԽԱ = Ոչխարի մսին մէկ չորբորդը
 ՇԱՆԹՈՒԹ = Տունկ մը՝ գետինը փակած, քրածել
 ՇԱՆԿՈՐԻԿ = Տունկ մը սեխի տերեւներով և նշածել քունատը
 պտուղով մը
 ՇԻՊ = Ճգմուած քութի մնացորդը
 ՇՈՌ = Աղի ջուր որ չի խմուիք
 ՇՆԹՌԿԻԼ = Շան պտակիլը

Զ.

- ԶԱՏԱՆԱ = Ծառի մը սրնագոյն, իւղոտ մէկ պտուղը, զոր կ'եփեն
 Գարահիսարցիք հացին վրայ կը դնեն սխտորով եւ
 կ'ունենայ խաշի համ

ՉԱՆՇՈՒՐ = Խոշոր սամիրի բերրու պէս խոտ մը, որ արեւա-
դարձին կը դեղնի, հովը կ'անկէ կը տանի: Տղաքը կը
հաւաքեն եւ խարոյկ կը շինեն

ՉԱՐ = Կիներու գլխու ծածկոց, շալ

ՉԱԹԱՆԱՂ = Յօղունով իրարու փակած պտուղ

ՉԹՈՏԻՔ = Թքու խոտ մը, կանեփի հունտ

ՉԻՒՉԻԿ = Կենդանիներու բերին ոսկորը, բիակը

Պ.

ՊԶՏՈՆ = Այծին պոչը. պոչատեղի, առանց ազիի

ՊԷՀՐԸ ԿԸԼՄԱՆԻ = Վայելչակամ է

ՊԸԾԵԿ = Մեղու

ՊԸՊԸԶ ԸՆԵԼ = Երախաներուն միգել տալ

ՊԸՏԸՏՄԱՆ = Բաղնիքի կէօպէկ թաշի

ՊԼՈՐԱԿ = Հակիթին դեղնուցը

ՊԻՆԴ = Օրօրոցի կապ

ՊՈԳ = Սոխին հունտ կապած ցօղունը

ՊՈԼՈԶ = Հակքաճել

ՊՈՂ = Բաղնից ծրար

ՊՈԶԱՏ = Չարախօս կին

ՊՈՆԴԻԿ = Հարուած միջամատով, պլտրիկ

ՊՈՍՏԻԿ = Նորածին հորթերուն ոստումը

ՊՈՏԻՉ = Փայտէ սափոր

ՊՈՒԿ = Կգակին տակ ուռեցի

ՊՈՒՊՈՒՇ Է = Երախան սիրուն է

Ջ.

ՋԻՆՋՈՅ = Սեղանի սրբիչ

ՋԷՕՆԷՄԵՐԿ ԼԻՆԻՍ = Առանց հաղորդութեան մեռնիս (անէծք մը)

ՋՈՒՐՔ = Ոսկեթել բանուածք՝ լաթի վրայ

ՋՐԱՊԿԱԼ = Հարսնետրներու ջահ. — մարիս, անասուններու
ախորը լուսաւորելու համար

ՋՐՊԱՆՏ = Արտերու ջրաբաշխ

ՋՐՋՐԿՆԵԼ = Ջուր ցանել, փոշին արգիլելու համար

Ռ.

ՌԱԲԱԹԱ = Թունիրին մէջ հաց եփելու գործիք

Ս.

- ՍԱՌԼԱԽ = Փայտէ շինուած՝ խոյի եւ մեղրի աման
 ՍԵՄԵՆՏ = Խմոր բանալու սեղան
 ՍՆՏՈՒ = Օդ առնելու ծակ՝ թռնիքի
 ՍՈՒՐՍ = Կարմիր հող, հայ-կաւ

Վ.

- ՎՐԱՔԱՇ = Կապ՝ երախաներու վերմակին անկումը արգիլելու
 համար
 ՎԵՐՔ = Պարտէզին վերջին մասը
 ՎԷՎ Է = Ո՞վ է
 ՎԵՐԵՆ = Վեհանձն

Տ.

- ՏԱՔԴԵՂ = Պղպեղ
 ՏԱՏԱԽԻԿ = Տապկուած ուտելիքներ
 ՏՂԸԼ = Սելի, վարունգի մնացորդ. փոխարեքարար հղնիմ մարդ
 ՏՆՊԸԼ ԿՈՃԻԿ = Գլխու վրայ դառնալ
 ՏԸՌՏՈՇ = Ափեղցփեղ խօսող
 ՏԸՏԸՆ ՏՐՄԱՆ = Նար ոտքի ելած հիւանդ
 ՏՈՆՏՈՒՌԱԿ = Տղոց տուն շինելը
 ՏՈՂԵՆԿԵՌ = Անուշեղէն մը (*սարըլը պուամա*)

Յ.

- ՅԸՅԸԽ = Ճղնիմ կազմուածք
 ՅՈՒՅՈՒԼԱԿ = Ինֆզինֆը ցուցադրող

Փ.

- ՓԱՐՏԻԶ = Թաց ֆուրջ՝ թռնիքը մաքրելու համար
 ՓՈՒՇԻ = Զուտ մետաքսէ գլխանոցի շղարջ
 ՓՈՒԼԼՈՒՓԻՒՐԻԻԿ = Հարսանեկան ֆող մը
 ՓԷՕԶ ԸՆԵԼ = Տղոց խաղը խանգարել
 ՓՈՒՌՁՈՒԼԱԽ = Բոյսի արմատ մը. Մայիսին կը փաղեն, կը
 շորցնեն, իբր լուծողական

Ք.

- ՔԱԼԱ = Պառաւ կիւն
ՔԱԾՈՒՈՐԶ = Տափասի ցարմանդ
ՔԱՇԱՐ = Սալայատակ
ՔԱՐԿՌԱ = Զուտուելիք պտուղ մը, որով տղաքը *փաթլանկոճ*
կը խաղան
ՔԵԼԷՄ = Երկար ու կանանչ կաղամբ, իտալական
ՔԵՐՍԷՆ = Խմորի ու լաքի տաշտ
ՔԼԷՖ = Պտուղներու կեղելը եւ կուտերը
ՔՍՈՒՐ = Մանրավահաններու ապրանքներու կապոցը
ՔՈՒՌ = Զար տղայ
ՔԸՍՔՍՅՆԵԼ = Շուկերը կռուեցնել

Օ.

- ՕՂԻԿ ՕՂԻԿ = Շան լացը, կաղկանձիւն
ՕՌՆԱԿ = Դրան ուռնակը

Ֆ.

- ՖԸՂԵՐԸ ԴՆԵՄ = Հողերը դնեմ (անէժֆ)
ՖԵՐՏ = Հորք
ՖԸՏ ՖԸՏ = Զաւարին մանրուքը
ՖԷՆ = Հոն
ՖԷՍ = Հոս

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Գարահիսարի յուշերուս պատմա-տեղագրական նոթերը քաղած եմ Պ. Յովհ. Պողոսեանի « Հայաստանի Աշխարհագրութիւն »էն, ինչպէս նաեւ «Ռազմիկ»ի բացառիկ թիւէն, որուն հրատարակութեան իմ կարգին համեստ աշխատակցութիւնս բերած եմ:

Գալով 1895ի դէպքերուն, անոնց պատմութիւնը կարդացած եմ Խորայէլ Օզանեանի տունը, մասամբ մըն ալ լսած եմ հին մարդոցմէն:

Իսկ երգերը, ինչպէս արդէն ըսած եմ գրքիս մէջ, իմացած եմ աշուղ Սեկեանիին եւ հօրս բերնէն, մա՛նաւանդ « Հունձֆի Երգը »: Ողորմած հայրս շատ լաւ պատմող, նոյնքան ալ լաւ երգող էր: Ես ալ քիչ շատ երգող եմ, միտքս պահած եմ: Կ'երեւի քէ ասիկա ժառանգութիւն մըն է, որ կուգայ մեծ հօրմէս. անիկա մէկ հատիկ է եղեր քաղաքին մէջ:

Պարերգները հին են, 1875ին այդ եղանակներով կը պարեն եղեր: Անկէ վերջը նորութիւն դարձեր են թրքական եւ լազի պարերը, մենի այդ պարերը կը պարէին վերջին տարիներուն:

Գարահիսարի յուշերուս հրատարակման իր թանկագին աջակցութիւնը բերաւ երիտասարդ գրագէտ Պ. Արամ Պետրոսեան: Զեռագիրներս սրբագրեց, յղկեց, կարգ-կանոնի դրաւ եւ իր օժանդակութիւնը չզրացաւ տպագրական ու արուեստագիտական մարզերուն մէջ: Մեծապէս շնորհակալութիւններս կը յայտնեմ իրեն:

Խորին շնորհակալութիւններս կը յայտնեմ նաեւ Պ. Աւետիս Գ. Մեսումենցի, ժողովրդական երգերու այդ փնտռուած երգահաներաժշտագէտին, որ խղճմտօրէն դասաւորեց, տաղաչափութիւնը կատարեց եւ մա՛նաւանդ դաշնաւորեց մեր Գարահիսարի սքանչելի երգերը:

Յարգելի՛ հայրենակիցներ, այս աշխատութիւնս 1955ին պիտի հրատարակէի, բայց հիւանդութիւն մը անցուցի, վախցայ որ կը մեռնիմ եւ այս գիտցածներս կը փնանան: Այս պատճառով անապարեցի, որովհետեւ 79ին մէջն եմ եւ մէկ ոտքս գերեզմանը: Դեռ ուրիշ նիւթեր ալ ունիմ մեր հայրենիքէն, նոյն եւ այլազան, գորս կարելի չեղաւ գետեղել այս յուշամատենիս մէջ: Եթէ Տէրը կամենայ, անոնք ալ մտադիր եմ ամփոփել տարբեր հատորի մը մէջ:

Դժբախտաբար չյաջողեցայ ձեռք ձգել Ղուկաս աղբօր, Թէօտեր-

կիցի Բարսեղի, Յարէթի, Գալուստ Անդրէասեանի եւ Մկրտիչ Թացեանի նկարները :

Յամենայն դէպս, ինչ որ կուգար ձեռքէս ըրի եւ այս սրտաբուխ նուէրս կ'ընծայեմ սիրելի հայրենակիցներուս : Նախանիւք մըն է ան վերջապէս . ես այդ նախանիւքով պատմութեան հիմնաքարը դրի, դուք ալ տանարը շինեցէք :

ՀԵՂԻՆԱԿԸ

Ներկայ հատորին, ինչպէս նաև երգերուն հեղինակի իրաւունքները վերապահուած են

Մեր պատկերներուն փխշէները պատրաստուած են Գարսնեան տան կողմէ :

- էջ 5, յառաջաբանին երկրորդ տողի ծայրի վանկը յապաւել
 էջ 17, 6րդ տող, խնդրկտուր, պիտի ըլլայ խնրկտուր
 էջ 18, 25րդ տող, 100-150 մեթր, պիտի ըլլայ մօտաւորապէս 50 մեթր
 էջ 18, 26րդ տող, բերդաժայռին շրջազիծը ոչ թէ մէկուկէս, այլ
 5 ֆիլումեթր էր
 էջ 26, 20րդ տող, իր մայրն է որ աղբիւրը շինել տուած է, ոչ թէ ինքը
 էջ 30, 3րդ տող, Ծողեր, կարդալ Ծովեր
 էջ 32, 28րդ տող, 20 քիլօմեթրը կարդալ 30 ֆիլումեթր
 էջ 40, 1րդ տող, Եղնիկը կարդալ Եզիկ
 էջ 40, 5րդ տող, ջնջել «ստաբոպիկ» բառը
 էջ 40, վերջին տողը, Ռէճէպ աղան, կարդալ Ռէնա Էֆէնտի
 էջ 48, 8րդ տողին ծայրը, Վարդնուշը ուղղել Վարդուշ
 էջ 51, 16րդ տող, երկուշաբթի, կարդալ երեքշաբթի
 էջ 58, 28րդ տող, կէօր նիւճէ՝ ուղղել կէօրիւննէ
 էջ 59, 4րդ տող, մահեստին, ուղղել մահտեսի
 էջ 63, առաջին տող, ԺԹ. դարը ուղղել ԺԲ. եւ բժիշկին անունն է
 Սրապիոն
 էջ 64, 9րդ տող, Հէքիմ պապուն խօսքերուն սկիզբը աւելցնել.—
 Բուն դեղը քովս չունիմ: Որչափ հիւանդ եւայլն
 էջ 74, 27րդ տողին ծայրը, Ենքը կարդալ Են
 էջ 83, վերջին հատուածին առաջին նախադասութեան մէջ, չէինը
 ուղղել չեն
 էջ 99, վերջնիցեր հատուածին չորրորդ տողին ծայրը, Չոթուլեանի
 վերջին գիրը յապաւել
 էջ 100, 12րդ տող, Տիգրան Չիվիեանը կը կոչուի նաեւ Քէմալեան
 էջ 112, 2րդ տող, Հոկտ. 14ը ուղղել 12
 էջ 135, 5րդ տող, ընդունելուն ուղղել ընդունելով
 էջ 137, 15րդ տողին ծայրը, սկսեանը ուղղել սկսան
 էջ 138, 29րդ տող, քչել դէպի բերդը՝ ուղղել ետ քչել թշնամին
 էջ 141, 23րդ տող, Օտպաշեանը ուղղել Օտապաշեան
 էջ 147, 20րդ տող, «դաժանացած դէմքերուն վրայ»էն շարունակել
 մոռցուած նախադասութիւնը.— Արդեօ՞ք ծոած պիտեքն են որ
 կուտան այդ անհաւոյ արտայայտութիւնը անոնց դէմքերուն...

- էջ 151, 3րդ տող, կերոնը ուղղել կեդրոն
 էջ 152, 25րդ տող, կ'իշխէ քաղաքին՝ ուղղել կ'իշխէ ամբողջ քաղաքին
 էջ 155, 2րդ տող, Թէչքիլաթը Մախսուսը ուղղել Մախսուսէ
 էջ 158, առաջին տող, Եալթային առջեւ դրուած « եւ »ը զետեղել
 «թէ»ին տեղ
 էջ 159, 9րդ տող վարէն, Եկատորինոտար, պիտի ըլլայ Եալթա
 էջ 164, 1րդ տող, 2-3ի փոխարէն կարդալ 6 ամիս
 էջ 164, 20րդ տող, ուզածն էր ուղղել ուզածը ա՛յն էր
 էջ 167, 4րդ տողին ծայրը, անը յապաւել
 էջ 171, 12րդ տող, հմազգեստը կարդալ համագգեստ
 էջ 190, վերջին հատուածին առաջին տողին ծայրը՝ պսսելը կարդալ
 պսրել, որ Վանայ գաւառաբարբառով կը նշանակէ փշել,
 նետել-բռնել:
 էջ 192, երկրորդ հատուածին առաջին տողը շրջուած. պէտք է կար-
 դալ.— Զօր. Անդրանիկի յուշարձանի Յանձնախումբին գան-
 ձապահի եւայլն:

ՑԱՆԿ ՆԻԻԹԵՐՈՒ

	Էջ
Յառաջարան	5
Ընդհանուր ակնարկ	9
Գարահիսարի տեղագրութիւնը	13
Պատմական դէպքեր	17
Շրջակայ վայրեր եւ գիւղեր	27
Տեղական տիպարներ	34
Գարահիսարի հարսանիքը	43
Նահանգին աշուղները	53
Գարահիսարի բժիշկները	63
Նահատակին գերեզմանը	70
Հայ յեղափոխութեան դրդապատմաւորները	72
Յեղափոխական շարժումը	81
Սեւ օրեր Հայաստանի մէջ	93
Դանիէլ Զավուշի հերոսական մահը	111
Դէպքերը Գարահիսարի մէջ	115
Յարեթի եւ Գալուստի նահատակութիւնը	119
Ղուկաս աղբար	123
Մեծ գոհարերութեան նախօրեակին	128
Հերոսամարտը	134
Արժուերոյնի մը անկումը	143
Բերդին մէջ	145
Գարահիսարը Շարֆիի դէպքերը, ըստ Թուրքերու	151
Յուշեր արտասահմանէն	157
Յաւելուածական էջեր	193
Համառօտ կենսագրութիւն Տ. Վրամշապուհ Արֆ. Քիպարեանի	195
Բնագաւառի երգեր	209
Շ. Գարահիսարի գաւառաբարբառը	219
Ծանօթագրութիւններ	226
Վրիպակ	229

Հեղինակին հասցեն .—

SARKIS DEVLETIAN

23, Rue Jouye Rouve
PARIS - XX^e